2649

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

19 ՅԵՎ 20-ՐԴ ԴԱՐԵՐ.

ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ

ИНСТИТ
ВОСТОКОВЕД
Ленинград
СССР

ՊՐԱԿ Գ.

—

ԿԱԶՄԵՑ Կ. ՂԱԶԱՐՅԱՆ

9(47)
Ղ-15

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ· ՅԵՐԵՎԱՆ – 1927·

Սա 1821
9(47)
Ղ-15
1998 N388
30 MAY 2011
24 JAN 2006

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
19 ՅԵՎ 20-ՐԴ ԴԱՐԵՐ.
ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ

ИНСТИТУТА
Востоковедения
Академии Наук
СССР

ՊՐԱԿ Գ.

—

ԿԱԶՄԵՑ Կ. ՂԱԶԱՐՅԱՆ

1162

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. ՅԵՐԵՎԱՆ—1927.

18 JUN 2013

2649

ՀՀ ԳԱԱ Մատենադարանի Գրադարան
Библиотека
ՀԱՍՀ-ի ԳԱ
им. А. Матенадаран
Գրադարան

4235-91

№ 000 Գրառեպվար № 224 (ը) Տիրաժ 3000

Գետհրատի առաջին տպարան Վաղարշապատում

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Կուս. Խորհրդային դպրոցների ուսումնական ծրագրում տեղ է գտնում դասակարգային պայքարի պատմությունը Ռուսաստանում և Յեվրոպայում իբրև մի անհրաժեշտ առարկա։ Այդ առարկան ավանդվում է,—թեպետ տարբրական ձևով և կուսպատմության հետ միացած,—նայեվ քաղքրագիտական և յերկկոյան կուսխորհրդային դպրոցներում։ Վորոշ չափով անցնում են նայեվ համալսարանում, բանֆակում և միջնակարգ դպրոցներում և այլն։ Բայց և այնպես նա դեռ կայուն և ծրագրված տեղ չի գտնում ուսումնական ծրագրերում, բացի կուսխորդպրոցներից, և ավանդվում է կցկտուր։ Մինչդեռ այդ առարկան հնարավորություն է տալիս յերկու բան պարզել՝ ա) պատմական պրոցեսն ըմբռնել դիալեքտիկորեն և դասակարգային պայքարի պրիդմային տակ և բ) նախապատրաստական նյութ մատակարարել Հ. կ. կ. (բ) պատմությանը, վորն այնքան կարեվոր տեղ է գրնում մեր ուսումնական ծրագրում։ Այս յերկրորդ կողմի ուսուցման տեսակետից անհրաժեշտ է հատկապես և մասնավորապես կանգ առնել 19 և 20 րդ դարերի պատմության վրա, ուսումնասիրել այդ շրջանը, վորպես նախապատրաստական շրջան Հոկտեմբերյան մեծ հեղափոխության

Անհնար է կուսակցության պատմությունն անցնել առանց նախորոք պարզելու և քննելու պատմական այն միջավայրը, վորտեղ ծնվել, աճել և ժասսայական է դարձել նա, առանց պարզելու բանվոր դասակարգի զարգացման և պայքարի ետապների պայմանները, այն դասակարգի, վորի ղեկավարն է հանդես գալիս կոմունիստական կուսակցությունը։ Կուսակցության պատմությունն անցնելիս, իհարկե, պիտի շոշափել նաև այդ պայքարի մոմենտները, բայց այնքան, վորքան անհրաժեշտ է բացատրել կուս-պատմության այս կամ այն կոնկրետ հարցը։ Վոչ ավելին։ Յեվ այդպես էլ պիտի լինի։ Բայց այն ժամանակ բաց է մնում մի շարք կարևորագույն և պատմական խոշոր յերևույթների բացատրությունը, վորն այնքան կարեվոր և անհրաժեշտ է պարզելու համար բանվոր դասակարգի զարգացման վորոշ ետապները։

Վերջերս լույս տեսան կուսպատմության մի քանի աշխատություններ, վորոնք անհրաժեշտ համարեցին պատմությունն սկսել 60-ական

թվականներից և ավելի խորքից, և այդպիսով ծանրաբեռնվեց պատմության անհրաժեշտ մասը նման շրջանների և հարցերի քննության, վորով և ավելի քիչ մատչելի դարձավ այն ընթերցողներին, վորոնց համար գրվել է։ Մի ժամանակ կուսպատմությունն սկսում էր ամենահին ժամանակներից, հետո սկսեցին 80-ական թվականներից («Աշխատանքի ազատագրման» խմբակից), հետո 70-ական և 60-ական թվականներից ու ավելի հեռվից։ Այսպիսով կարիք էր զգացվում հեղաշրջման պատմության մի շարք մոմենտներն ընդգրկել կուսպատմությունը շարադրելիս։ Բայց վորքան հեռու էին գնում, այնքան այս վերջինս բարդանում էր, խճճվում, մի շարք փաստերով լցվում և, հետևաբար, անմատչելի դառնում։

Ահա այդ է պատճառը, վոր վերջին տարիներում քանի գնում այնքան անհրաժեշտ ու կարևոր տեղ է սկսում գրավել ուսումնական ծրագրերում դասակարգային պայքարի պատմությունը։ Ռուսական համալսարաններում և կուսդպրոցներում այդ առարկան առանձին է դասավանդվում (իհարկե, կուսպատմության հետ սերտորեն կապված), մեզ մոտ առայժմ միայն կուսդպրոցներում, իսկ համալսարանում, վորպես նախապատրաստական դասախոսություններ (4—6 ժամ) կուսպատմության մեհենույն դասախոսի ղեկավարությամբ, ինչպես և բանֆակում։

Այսպես թե այնպես՝ այդ առարկան քանի գնում այնքան կարևոր տեղ է գրավում մեր ուսումնական ծրագրերում։ Ահա այս հանգամանքն ի նկատի ունենալով ինչպես և գոյություն ունեցող աճող պահանջը, մենք լույս ենք ընծայում Ռուսաստանի դասակարգային պայքարի պատմության քրեստոմատիան, վոր ընդգրկում է 19 և 20-րդ դարերը։

Քրեստոմատիան կազմված է այնպես, վոր ռուսական բանվոր դասակարգի զարգացման և նրա կուսակցության հիմնական մոմենտներին կարողանա բավարարություն տալ իր նյութերով և բացատրություններով։ Նա սկսվում է ռուսական ֆեոդալականության մեջ ճորտական կարգերի հիմնական գծերի բնորոշմամբ և նրա քայքայման անհրաժեշտության պատճառաբանությամբ, վորպեսզի ավելի հեշտ լինի ըմբռնել արդյունաբերության զարգացման ուղիների բնորոշումը և բանվոր դասակարգի ծագումն ու զարգացումը։

Նյութերը վերցրել ենք գրական շուկայում եղած հայերեն գըրվածքներից, մեծ մասամբ թարգմանական գրականությունից։ Մեծ չափով ոգտագործել ենք ընկ. Լենինի աշխատությունների հայերեն թարգմանությունները։ Նյութերի մի մասը թարգմանվել են ռուսերենից նույն առարկան յերկրորդ աստիճանի կուս-խորհրդային դպրոցում դասախոսելիս իբրև դասախոսության ղեկավար բացատրականներ և պարզաբանումներ, մի մասը թարգմանվել են հատկապես քրեստոմատիայի համար, մյուս մասն անմիջապես վերցրված է եղած թարգմանություններից, ինչպես որինակ՝ Բելոուսովի քրեստոմատիայից, Դրեյերնի քաղգրագիտության դասագրքից և այլն։

Յուրաքանչյուր դեպքում աղբյուրն հիշվում է, այն էլ հայերեն, ի նկատի ունենալով այն հանգամանքը, վոր մեր դպրոցներում շատ ուսանողներ ռուսերեն լեզվին չեն տիրապետում կամ չեն կարող կարդալ, մինչդեռ անհրաժեշտ է աղբյուրն ևս իմանալ։ Միքանի գլուխներ ունեն իրենց նախաբանները, իբրև տվյալ գլխում շոշափած միքանի հարցերի ընդհանուր բնորոշում և բացատրություն։ Այդ նախաբանները նպատակ չունեն խորացնել կամ վերլուծել մանրամասնորեն շոշափվող հարցերը, այլ միայն ակնարկ տալ. վոր չի կարելի գտնել կամ շատ քիչ կարելի է գտնել տվյալ գլխում։

Քրեստոմատիան կազմելիս իբրև որինակ վերցրել ենք յեղած ռուսերեն քրեստոմատիաները։ Այս քրեստոմատիան կազմողի յերկու ուսումնական տարվա աշխատանքների արդյունքն է, մեծ մասամբ յերկրորդ աստիճանի կուսխորհրդային դպրոցի փորձի։

Քրեստոմատիան կարող է ձեռնարկ ծառայել կուսխորհրդային դպրոցներին, համալսարանին և բանֆակին, նայելով մեծահասակների բարձր տիպի քաղլուսավարական դպրոցներին, քաղգրագիտական դպրոցներին, ինչպես և ինքնազարգացման համար, իբրև պատմական նյութեր մատակարարող մի ժամանակ ձեռնարկ։ Քրեստոմատիան հնարավորություն է տալիս, ուրեմն, կուսպատմությունն ու դասակարգային պայքարի պատմությունն անցնելիս դասավանդության և շարադրության հետ միասին հիմք վերցնել հեղինակավոր գրողների և գործիչների մոտեցումները և պատմական փաստաթղթերը։

Ամբողջ քրեստոմատիան բաղկացած է յերեք պրակից։ Առաջին պրակն ընդգրկելու է իր մեջ մինչև 19-րդ դարի վերջը ժամանակաշրջանը, յերկրորդ պրակը՝ առաջին հեղափոխության շրջանը, իսկ յերրորդը՝ փետրվարյան և հոկտեմբերյան հեղափոխությունների շրջանը։

Միշարք հանգամանքներ ստիպեցին մեզ քրեստոմատիան պրակներով հրատարակելու, վորն, ինչ խոսք, թուլացնում է նյութի դարպացման ընթացքը և կապակցությունը։

Առայժմ մենք լույս ենք ընծայում յերրորդ պրակը, վորին կհաջորդի առաջին և յերկրորդ պրակները։

Նյութերի թարգմանությանը մասնակցել են ընկ. ընկ. Ստանիկյան, Կ. Ոհանջանյան, Հ. Տարախչյան, Հ. Հարությունյան, Հուշիկ և յերկրորդ աստիճանի կուսխորհրդային դպրոցի ուսանող ընկ. Դաղնկյանը, վորի համար և շնորհակալություն և հայտնում բոլորին կազմողը։

Կազմող

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ.

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ 1905 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1905 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ.

Ա. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 1905 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Արդյունաբերության հում մթերքի աճումը հետևյալ թվերով է արտահայտվում. 1908 թվին քարածուխի արդյունաբերությունը հավասար էր 1,600 միլիոն փթի, իսկ 5 տարուց հետո, 1913 թ. նա բարձրացավ մինչև $2^1/_4$ միլիարդ փութ. այս է քարածուխի աճումը, այսինքն, այն անունդի, որը կլանում են Ռուսաստանի ֆաբրիկանների շոգեկաթսաները: Դրա համեմատ զարդանում է նաև այդ ֆաբրիկանների արդյունաբերությունը: Յեթե վերցնենք չուգունի ձուլումը միլիոն փթերով՝ կստանանք հետևյալ թվերը: 1900 թվ.—$177^1/_2$ միլիոն փութ, իսկ 1903 թվ. (ճգնաժամի ամենաստուր ժամանակ)—150,2 միլիոն փութ, 1908 թվ.—170,1 միլիոն փութ, 1909—175,3 միլ. փութ, 1910 թվ. ձուլվում էր 186,5 միլ. փութ, 1911 թվ.—219,4 միլ. փ. 1912 թ. 256 միլ. փ., 1913 թվ.—282,4 միլ. փութ: Սա նախապատերազմական վերջին տարին էր: Այնուհետև աճումը ավելի վեր բարձրացավ, բայց այստեղ, ինչպես դուք արդեն գլխի յեք ընկնում, աղդում էր պատերազմական գործիքների ու թնդանոթների պատրաստումը, այն, ինչ հարկավոր էր պատերազմի համար: Բայց նախապատերազմական վերջին տարին ցույց տվեց, այնուամենայնիվ, շատ մեծ աճում, և չնայած այդ բանին, ինչպես հետագայում դուք կիմանաք պատերազմի շրջանի տնտեսության մասին կարդալիք դասախոսություններից, Ռուսաստանում այդ ժամանակ չուգունի կատարյալ սով էր, և չուգունն արտահանվելից էր ներմուծվում: Ահա այս աստիճան ուժեղ էր զարգանում մեր արդյունաբերության հիմքը, վորովհետև մետաղագործությունը կապիտալիստական աշխարհի արտադրության հիմքն է: Արդյունաբերության այդ հիմքը չափազանց արագ էր զարգանում: Սրան համաչափ զարգանում էր նաև սպառման լայն շուկան: Յեթե մենք դարձյալ վերցնենք թվերը, կստանանք՝ 1900 թվ.—համար 18 միլիոն փութ մշակված բամբակ, 1908 թվ.—19,8 միլ. փ., 1909 թվ.—23 միլ. փ.,

1910 թվ.—23,5 միլ. փ., և այլն: Այս դեպքում բամբակը տարավ իր հաղթանակը: Այդչափ բամբակ Ռուսաստանի ֆաբրիկանները հիմնվելու որից յերբեք չեյին մշակած: Դրանք հաղթանակի թվեր եյին այդ ամբողջ դարի համար: Այսպիսով մենք լիովին հնարավորություն ունենք ասելու 1909 և հետագա տարիների մասին, վոր դրանք Ռուսաստանի արդյունաբերության փոթորկալի զարգացման շրջանն են կազմում, ռուսական արդյունաբերության կապիտալիզմի փոթորկալի ծաղկումը, ունենալով այնպիսի հիմք, վորն ստեղծվեց պարադոկսալ կամ դիալեկտիկ ձևով, առաջին հեղափոխության հետևանքներով:

1908 թվին թուլլատրվել եր 108 ռուսական կամպանիա գործյուն ունենալու 103,4 միլիոն ռուբլի կապիտալով, ոտարազգի կամպանիա 12 հատ եր թուլլատրվել 9 միլիոն ռուբլի կապիտալով: 1909 թվին ռուսական կամպանիաների թիվը 116-ի հասավ 95 միլոն ռուբլի կապիտալով, արտասահմանյանը՝ 15, 12,9 միլիոն ռուբլի կապիտալով: 1910 թվին ռուսական կամպանիաների թիվը եր 181,190 միլ. ռուբլի կապիտալով, արտասահմանյանը՝ 17,33 միլ. ռուբլի կապիտալով: 1911 թվին ռուսական կամպանիաների թիվը 222 եր, 220 միլ. ռուբլի կապիտալով, արտասահմանյանը՝ 40,80 միլ. ռուբլի կապիտալով:

1912 թվին ռուսականը 322 եր 371 միլ. ռուբլի կապիտալով, արտասահմանյանը՝ 20,30 միլ. ռուբլի կապիտալով: 1913 թվին ռուսական կամպանիաները՝ 343, 501 միլ. ռուբլի կապիտալով: Համեմատեք թվերի այդ յերկու շարքերը և դուք կտեսնեք, թե ինչ աստիճանի արտասահմանյան կապիտալը ռուսական արդյունաբերության մեջ ավելի ու ավելի թույլ դեր է խաղում, և ավելի ու ավելի մեծ դեր և խաղում ռուսական կապիտալը, այն էլ վոչ թե պետական անդուկի հաշվին և աճում, այլ՝ այսպես ասած, կուլտակման բնական ճամփով: Թե ինչպես և ընթացել այդ կուտակումը մենք կտեսնենք ուրիշ տվյալներից համեմատելով դրանց հետ մեր հացի արտահանման թվերը: Յեթե 1900 թվին փթերի թվի քանակը 100 վերցնենք, 1909 թվին տեսնում ենք 182, 1910 թվին՝ 196, 1911 թվին՝ նույնպես: Իսկ յեթե այդ արտահանման արժեքը վերցնենք իբրև 100, 1900 թվին, այն ժամանակ 1909 թվին կունենանք 299, 1910 թվին՝ 295, 1911 թվին՝ 241. մի խոսքով արտահանման արժեքը մեկ և կես անգամ ավելանում եր ծավալի հետ համեմատած: Այստեղ արդեն դեր են խաղում հացի բարձր գները: Յեվ ահա հենց այդ վոսկե գները, վոր հոսում եր ռուսական կապիտալի գրպանն իբրև առևտրի ակտիվ բալանս (1909 թվին ակտիվ բալանսը մի հսկայական, ռեկորդային թվի հասավ՝ 581 միլ. վոսկե ռուբլիների), ահա այդ ռուսական կապիտալիզմը բեղմնավորեց, վորն աճեց վոչ թե արտասահմանյան կապիտալների հոսանքի հաշվին, ինչպես այդ առաջ եր կատարվում, այլ «տեղական» կուտակման հա-

շվին։ Ցեվ իբրև հետևանք սրան՝ ռուսական կապիտալիզմն ավելի հարմարձակ դարձավ, ավելի հանդուգն և արդեն 1912 թվին հասավ այն ամաիճանին, վոր իր սեփական ընդդիմադիր կուսակցությունը կազմեց, այսպես կոչված պրոգրեսսիվ կուսակցություն, վորի գլուխն եր անցած Ստրուվեն իբրև գաղափարախոս և կոնովալովը, մի խոշոր արդյունագործ, հետագայում ժամանակավոր կառավարության առևտրի և արդյունագործության մինստր։

... Այդ ժամանակաշրջանի վերջին ռուսական եկոնոմիկայի հոլիդոնում արտասահմանից սկսվում են հավաքվել ավելի ու ավելի մեծ քանակությամբ մութ ամպեր։ Ցես արդեն ասել եմ, վոր, ընդհանրապես, ռուսական կապիտալի կուտակումը հիմնվում եր հացի արտահանման վրա, և յես այդ արտահանման թվերն առաջ բերի վորպես հետևան աճող թվեր։ Այժմ յես ուղղում պիտի անեմ։ Այդ աճումը շարունակվեց մինչև 1911 թիվը. այդ տարվանից սկսած նրանք մեծ արագությամբ ընկնում են։ 1911 թվին մենք ունենք 735 միլիոն վոսկե ռուբլիներ, իսկ 1912 թվին միայն 547 միլ. վոսկե ռուբլի. արդեն թիվը ընկնում է։ 1913 թվին 589 միլ. վոսկե ռուբլուց մի քիչ ավել է, բայց 1911 թվականի թվերից շատ ավելի ցածր է։ Ինորոշ է վոր քչանում է վոչ միայն ռուբլիների քանակը (սա կարելի է բացատրել հացերի գների անկմամբ, և դուք կտեսնեք, վոր հացի գներն հենց այդ ժամանակներից ել սկսած կամաց-կամաց ընկնում են), այլ և փթերի թիվը։ 1911 թվին Ռուսաստանը 821 միլիոն փութ հաց արտահանեց, իսկ 1912 թվին 548 միլիոն փութ։ Ի՞նչ է նշանակում սա։ Ի՞նչով բացատրել ռուսական արտահանման այդ անկումը, վորը մեծ ազդեցություն թողեց ռուսական առևտրական բալանսի վրա։ Դուք հիշում եք, վոր 1909 թվին առևտրական ակտիվ բալանսը 581 միլիոն վոսկի ռուբլի եր, 1912 թվին միայն 391 միլ., իսկ 1913 թվին մինչև անգամ 200 միլ., այսինքն՝ պակասումը յերկու անգամից շատ է. անհանգստության մի հանգամանք։ Վոսկե գետակը, վոր հոսում եր ռուսական կապիտալիստների գրպանը՝ այդ ժամանակ, շատ պարզ կերպով սկսում է չորանալ։

Ի՞նչ է պատճառը. իսկ պատճառն այն եր, վոր 1911 թվի սեպտեմբեր ամսին սկսվում է իտալա-տաճկական պատերազմը Տրիպոլիսի պատճառով։ Իտալական նավատորմիղի հարձակումից կոստանդնուպոլիս պաշտպանելու համար Տաճկաստանը նեղուցների՝ Դարդանելի և Բոսֆորի, փակվելու պատճառով մեր արտահանումը սևծովյան նավահանգստաններից միանգամից կրճատվեց և դրա հետևանքով ստացվեցին այն թվերը, վոր մենք վերևում տեսանք։ Իսկ իտալո-տաճկական պատերազմից հետո առաջ յեկավ Բալկանյան պատերազմը, վոր բորբոքեց Ռուսաստանը, բայց վորն այդ բանի հետևանքը լավ չեր հաշվի առել։

Այդ տարիներում նեղուցների փակումը պարբերական է դառնում։ Այս արդեն ռուսական ամբողջ կապիտալին եր խփում։ Սա մի ավելորդ անգամ հիշեցնում եր նրան նրա իմպերիալիստական դերի մասին, վորը նա կարծես թե մոռացել եր յապոնական անհաջողությունից հետո։

Այժմ անցնենք այն պայմանների նկարագրությանը, վորոնք անմիջականորեն 1914 թվականի միջադեպը առաջ բերին և մյուս կողմից ել Ռուսաստանի մասնակցությունը այսպես կոչված համաշխարհային պատերազմին, վորը նորից 1917 թվի հեղափոխական բռնկման հասցրեց, Ռոմանովների անկմանը և իր վերջավորությամբ Հոկտեմբերյան հեղափոխության։ Բիչ թե շատ լավ դիտողականություն ունեցող և վոչ հիմար մարդու համար կասկածից դուրս եր, վոր Ռուսաստանը 1914 թվի պատերազմին խառնվեց նրա համար, վորպեսզի մի անգամ ընդմիշտ իր համար վճռի նեղուցների հարցը, մի կարգինալ հարց ռուսական առևտրի բալանսի համար։ Բոսֆորը և Դարդանելը իր ձեռքը գցելով՝ ռուսական առևտրական կապիտալը հացի առևտրի բնագավառում ամբողջ Արևելյան Ցեվրոպայի հանդեպ մոնոպոլիստ է դառնում, վորովհետև Դունայ գետի շուրջը գտնվող պետությունները Հունգարիան Ռումինյան և այն, վորոնք այդ ասպարեզում նրա միակ մրցակիցներն եյին, նրանից կախված դրության մեջ կհայտնվեին, այնքան, վորքան Դարդանելում ռուսական մաքսատունը կհաստատվեր։ Ցեվ ահա դարդանելյան պատմությունն նրանով և հետաքրքիր, վոր նա մեզ հիշեցնում է, թե ինչպես Ռուսաստանը շարունակում եր իմպերիալիստական պետություն մնալ իմպերիալիստական տենդենցներով այդ ամբողջ ժամանակամիջոցում։

(Մ. Պոկրովսկի «19 և 20-րդ դարերի ռուսական հեղափոխական շարժման պատմություն»։ Ուրվագծեր։ Ուլիեորդ դասախոսություն։ Ռուսերեն)։

Բ. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 1905 ԹՎԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ.

Յապոնական պատերազմի և 1905 թվի հեղափոխության շնորհիվ ապրած կատաստրոֆայից Ռուսաստանն արագորեն վոտքի կանգնեց, կազդուրվեց։ Ա.ո 1-ն հունվարի 1908 թ. ֆինանսներն հավասարակշռվեցին, և դա նշան եր ճգնաժամի վերջանալուն։ Նրա տնտեսական զարգացման տեմպն ել դարձավ ավելի արագ։ 10 տարվա ընթացքում (1905—1915) քաղաքային ազգաբնակությունն աճեց մեկուկես անգամ, ընդհանուր աճման մի քառորդի չրջանակում։ Ամբողջ յերկրում ցանքսի տարածությունն ավելացավ 10 տոկոսով, ըստ վորում Սիբիրի դաշտային շրջաններում հասավ մինչև 140 տոկոսի։

Ջուգունի հալումը 172 մլ. փթից 1913 թ. հասավ մինչև 283 մլ. փութ, իսկ ճախարակների թիվը 7,800,000-ից հասավ 9.000.000-ի։ Գործարանային տեսչության յենթակա ձեռնարկություններում բանվորների թիվը 1907 թ. 1.800.000 ից ած 1913 թ. հասավ 2.300.000-ի։ Ըստ վորում չափազանց կարևոր ե հիշատակել, վոր կապիտալը Ռուսաստանում կազմակերպից ավելի խոշոր ձեռնարկություններ, քան թե Արևմուտքում։ Միջին հաշվով ռուսական ամեն մի ձեռնարկություն ուներ 400 բանվորից ավելի, քան գերմանականը։ Նույնը մենք տեսնում ենք նաև խոշոր ձեռնարկություններում, վորտեղ միջին հաշվով ամեն մեկին Ռուսաստանում ընկնում ե ավելի բանվոր, քան Գերմանիայում (2.300 և 1.900), ասենք հենց այդ հսկաների թիվը Ռուսաստանում ավելի յեր, քան Գերմանիայում։

1905 թ. տնտեսական հարաբերությունների ասպարեզում Ռուսաստանը վերջնականապես բռնեց իսկական վերակազմության ուղին։ Յեթե մինչև այդ սինդիկատներն ու տրեստները մեզ մոտ հազվադեպ եյին, ապա այդ կարճ ժամանակամիջոցում արդյունաբերության կազմակերպության սինդիկատային ձևը դարձավ գերիշխող մեր առևտրա-արդյունաբերական կյանքում։

Ռուսական սինդիկատային կազմակերպությունների գլուխը կանգնած ե Պրոդամետ սինդիկատը (կրճատ՝ մետաղի վաճառք)։ 1911 թ. այդ սինդիկատն իր ձեռքումն ե կենտրոնացրել Ռուսաստանում արտադրվող յերկաթի բոլոր տեսակների վաճառքի 91 տոկոսը, թիթեղյա յերկաթի՝ 74 տոկոսը և առանցքների ու բանդաժների 68 տոկոսը։ Դա բավական ե ամբողջ մետաղագործական արտադրության վրա հսկելու և ըստ իր ցանկության ղեկավարելու համար։

Այդ հզոր սինդիկատի գործունեությունը լրացվում ե «Կրովլյա» և «Պրովոլոկա» սինդիկատների աշխատանքով։ Ածուխի արտադրության մեջ նույնպիսի դեր ե խաղում «Պրոդուգոլ» (Ածխավաճառություն) սինդիկատը։ Այդ սինդիկատը ներկայումս իր ձեռքում ե կենտրոնացնում տարեկան ավելի քան 600 միլիոն փութ ածուխ և կոկս և իր ղեկավարության տակ համախմբում ե Չարավային և Դոմբրովյան ավազանի ամենախոշոր ձեռնարկությունները, վորոնք շուկա յեն հանում Ռուսաստանում արդյունահանվող ամբողջ ածուխի 95-տոկոսից ավելին։

Նավթի արտադրությունը Ռուսաստանում մրացված ե Բագվի, Գրոզնու և անգլիական նավթարդյունաբերական ձեռնարկությունների տրեստով, վորի կենտրոնական վարչությունը գտնվում ե Լոնդոնում։ Այդ տրեստի ստեղծումը գեղեցիկ կերպով նախապատրաստված եր արտադրության այդ ճյուղում կապիտալների կոնցենտրացման բարձր աստիճանով։ Նավթի ամբողջ արտադրանքի 56 տոկոսը իրենց ձեռքին եյին կենտրոնացնում 16 նավթարդյունաբերական ֆիրմաներ։

Կոնցենտրացիան ավելի ուժեղ եր ղարգացած քարյուղի առևտրի ասպարեզում, այն ե՝ յերկու ընկերություններ՝ Նորել յեղբայրների ընկերությունը և Մազութ կամպանիան իրենց ձեռքումն են կենտրոնացրել քարյուղի առևտրի 70 տոկոսը։

«Պղինձ» սինդիկատն այժմս հսկում ե ռուսական պղնձի ամբողջ արդյունաբերության 83 տոկոսի վրա։ Շաքարի սինդիկատն ընդգրկում ե ամբողջ Ռուսաստանն ու Սիբիրը։ Նրա գլխավոր կառավարողներն են հանդիսանում Խարլամովսկի հանքավայրի ներկայացուցիչները, վորը պատկանում ե ֆրանսիական ընկերության, Պետրոս մեծի հանքավայրի ներկայացուցիչները, վորը պատկանում ե հոլլանդական ընկերության, և ռուսական ազարդյունաբերական ընկերության ներկայացուցիչները։ Սառցարարական ընկերության մեջ գործում եր մի իսկական տրեստ 12.500.000 ռուբ. հիմնական կապիտալով։

Բացի դրանից, մեզ մոտ կան ծխախոտի, մոմի, լուցկու, թղթի, ոսլայի, լամպերի, գարեջրի, քաթանե կոճակների, ռետինի, անիլինի ներկերի, սպիտակացնող կրի, գինե քարային թթվի, քացախի, ծծմբաթթվի, ծծմբատի արտադրությունների սինդիկատներ։ Գյուղատնտեսական գործիքների գործարանատերերի «Բիրք» տրեստը սպառնում ե գյուղական տնտեսներին բարձրացնելու գները։ Նավային բազմաթիվ սինդիկատներ, վորոնց մեջ աչքի յեն ընկնում Վոլգայի նոր նավային սինդիկատը, վոր ուժեղ թափով բարձրացնում ե ֆրախտը և այլն և այլն։

Ուրիշ խոսքով, ներկայումս Ռուսաստանում չկա յերկրի տնտեսական կյանքում նշանավոր դեր խաղացող արդյունաբերության և վոչ մի ճյուղ, վոր միացած չլինի զանազան կազմակերպությունների մեջ, սկսած ժամանակավորներից և պարզերից՝ ինչպես են կորներները կամ ռինգները և վերջացրած ամերիկական տիպի ամենակատարելագործված սինդիկատներով և տրեստներով։ Արևմտյան յեվրոպայի նման Ռուսաստանումն էլ նկատվում ե, վոր ֆինանսական կապիտալն ավելի ու ավելի յե սկսում խառնվել յերկրի արդյունաբերական կյանքին։ Ձեռնարկողական կապիտալի մասնավոր սեփականատիրական ֆունկցիաները նրսպրոպրիացիայի յենթարկվելու ուղիով առաջին քայլերն արեցին բանկերը, ընականաբար, ամենից առաջ, առևտրի ասպարեզում, վորտեղ ֆինանսական կապիտալի վարկային գործունեությունները կարող են ավելի հեշտությամբ հարմարվել և առաջին ապրանքը, վորի վրա մեր բանկերն, այդ իմաստով, մեծ ուշադրություն դարձրին, հացն եր, վոր վաղուց արդեն սնում եր նրանց իրրև վարկային հիմնարկություններին։ 1909 թ. Նիկոլաևվի հացի ամբողջ ռքսպորտը հասավ 100 մլ. փթի, և նրանցից 36 միլիոն փութ, այսինքն՝ 36 տոկոսը, արտահանված եր վոչ թե մասնավոր հացի ֆիրմաների կողմից, այլ ուղղակի պետության կողմից։

մից, այլ բանկերի։ Վերջիններէ մէջ ամենաաչքի ընկնող տեղը բռնում էր Ս. Պետերբուրգի Միջազգային բանկը (20 միլ. ռուբ), Հյուսիսային բանկը—8 միլ. ռուբ և արտաքին առևտրի Ռուսական բանկը—7 միլ ռուբ։ Չնայած վոր բանկերն իրենց ձեռքն էին առել միայն եքսպորտի մեկ չերրորդը, բայց և այնպես նրանք ֆինանսավորում էին բոլոր խոշոր ֆիրմաներին և իրենց ձեռքումն ունէին միջնորդական գործի նշանավոր մասը։ Բանկերն առևտրից անցան արդյունաբերութեան, և օրինակ, վերևում հիշված «Պրոդամետը» գտնվում էր չորս խմբակների ձեռքին՝ ֆրանսիական, գերմանական, բելգիական և վերջապես, ռուսական, վորը վերջին հաշվով նորից արտասահմանյան էր, վորովհետև մեր բանկերի մեծ մասը գտնվում էր արևմուտքի համապատասխան հիմնարկութիւնների հսկողութեան տակ։ Հետևանքն այն է լինում, վոր բանկերը շարունակելով իրենց ձեռքում համախմբել արդյունաբերութիւնը, իրենք ևս յենթարկվում են միացման պրոցեսին։ Ահա Պետերբուրգի հինգ կարևորագույն բանկերի գործունեութիւնը—Միջազգային, Ռուս-ասիական, Ազովո-Դոնյան, Զեղջման-վարկային և Ռուսական առևտրարդյունաբերական։ Մեր ֆինանսական կապիտալի լեվիաֆանների մէջ առաջին տեղը բռնում է Միջազգային բանկը, վորը շահագրգռված է արդյունաբերական հետևյալ ձեռնարկութիւններով։ Պետերբուրգի ապրանքային պահեստներ (կապիտալը—4միլ. ռուբլի), ապրանքային պահեստների Արևելյան ընկերութիւն—7,7, փոխադրման և ապահովագրման Ռուսական ընկերութիւն—4,2, «Ռուսական» ապահովագրական ընկերութիւն—5, Մանթաշյանի նավթային ընկերութիւն—20, Լենայի վոսկու արդյունաբերութեան ընկերութիւն—165,5, Ելեքտրականութեան ընդհանուր կոմպանիա—12, Դոնեցկի-Յուրևյան ընկերութիւն—31, վագոնաշինարարական գործարան՝ «Դվինսկ»—6, Կալուժենսկի մեքենագործական—15, հրանոթային գործարանների Ռուսական ընկերութիւն—25, Բրոմլեյի մեխանիկական գործարանները—32, Հարտմանի մեքենաշինարարական գործարան—9, Ռուսական շոգեշինացքային և մեխանիկական ընկերութիւն—8, Սորմովյան գործարանները 10, Բրյանսկի յերկաթուղային—30, Նիկոպոլ Մարյուպոլսկի լեռնային և մետաղագործական ընկերութիւն—13, Մայլցովի գործարանները—12, Ցուլայի փամփուշտի—9, Տուլեռուխանովյան հանքավայրեր—3, ընդամենը 22 ձեռնարկութիւններ, 279 միլիոն ռուբլի կապիտալով։ Սակայն Միջազգային բանկի ազդեցութեան շրջանը դրանով չի սահմանափակվում։ Բացի բանկի ազդեցութեան շրջանը դրանով չի սահմանափակվում։ Բացի Պետերբուրգի յերկու ուրիշ խոշոր բանկերի՝ Ազովո-Դոնյան և Ռուսական արտաքին առևտրի ակցիաներից, նրա ձեռքումն էին հինգ ամենակարևոր մասնավոր յերկաթուղիների ակցիաները. Վլադիկավկազի, Հյուսիսային Դոնեցկի, Հարավ—Արևելյան, Մոսկվա, Վինդա-

վա-Ռյաբինսկի և ստորյերկրյա ճանապարհների առաջին ընկերութեան։ Ընդհանուր առմամբ բոլոր թված ձեռնարկութիւններում Միջազգային բանկը շահագրգռված էր մոտավորապես մինչև կես միլիարդ ռուբ. դումարով։ Ինչ վերաբերվում է մնացած չորս բանկերին, ապա նրանք շահագրգռված էին մի տասրողջ շարք բազմատեսակ ձեռնարկութիւններում, ըստ վորում Ռուս-ասիական բանկը ազդեցութիւն ուներ 200 միլ. ռուբ. կապիտալ ունեցող ձեռնարկութիւնների վրա, Ազովո-Դոնյան,—136 միլ., Զեղջման-վարկային—133 միլ. և Ռուսական առևտրաարդյունաբերականը—6 միլ.։ Ընդհանուր առմամբ՝ միայն այն 5 բանկերը անհամեմատ չափով ազդեցութիւն ունէին 700 միլ. ռուբ. արդյունաբերական կապիտալի վրա և այդպիսով ուղղակի ձևով կանտրոլի էին յենթարկում արդյունաբերութեան կարևորագույն ճյուղերը, աստիճանաբար նախապատրաստելով ռուսական տնտեսական կյանքում բանկային կապիտալի տիրապետութիւնը։

(Ցիպերովիչ։ «Սինդիկատներ և տրեստներ» էջ. 14—15, 94—95, 104—105)։

Գ. ՍՏՈԼԻՊԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻԲՐԵՎ ՅԱՐԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Ստոլիպինը հակահեղափոխութեան կառավարութեան գլուխն էր մոտ հինգ տարի, 1906 մինչև 1911 թ.։ Զարդարար Ստոլիպինն իրան մինիստրական պաշտոնի նախապատրաստեց հայտնապես այն ձևով, ինչպես միայն կարող էին պատրաստվել ցարական նահանգապետները—տանջելով գյուղացիներին, ջարդեր կազմակերպելով, այդ «ասիական» գործնականը կեղծ «յեվրոպականի» վերածած արտաքին փայլով ու խոսքով, կեցվածքով և ժեստերով ծածկելու հնարամտութեամբ։

Յեվ մեր լիբերալ բուրժուազիայի առաջնորդները, վոր խիստ բարոյականորեն դատապարտում են ջարդերը, բանակցութիւնների մէջ էին մտնում ջարդարարների հետ, ճանաչելով նրանց համար վոչ միայն գոյութեան իրավունք, այլ և նոր Ռուսաստանը կառուցելու գործում և այն կառավարելու մէջ հեգեմոնիա վերապահելով նրանց... Ստոլիպինը միայն ճորտատիրական-կալվածատերերի դրկատաուրայի ներկայացուցիչը չէ. գոհանալ նման բնութագրով՝ ասել և վոչինչ չըմբռնել ստոլիպինյան շրջանի ինքնորինակութեունից և նշանակութեունից։ Ստոլիպինն այնպիսի շրջանի մինիստր է, յերբ վոդջ լիբերալ բուրժուազիայի բանակում ընդհուպ մինչև կադետները տիրապետում էր հակահեղափոխական տրամադրութիւն, յերբ ճորտատիրականները կարող էին կոթնել ու կոթնում էին նման տրամադրութեան վրա, կարող էին դիմել և դիմում էին «առաջարկներով» (ձեռքի ու

արտի) այդ բուրժուազիայի առաջնորդներին, կարող էին տեսնել այդ առաջնորդներից անգամ առավել «ձախերի» մեջ նորին մեծության «ոպոզիցիա», կարող էին հիշատակել և հիշատակում էին լիբերալ գաղափարական առաջնորդների շրջադարձն իրանց կողմը, ռեակցիայի կողմը դեմոկրատիայի դեմ պայքարելու և դեմոկրատիան վոտնահարելու կողմը։ Ստոլիպինն այնպիսի շրջանի մինիստր է, երբ ճորտատիրական-կալվածատերերը բոլոր ուժով, խիստ արագացած թափով գյուղացիական հողային կենցաղի նկատմամբ բուրժուական քաղաքականություն վարեցին, հրաժեշտ տալով գեղջուկի «նահապետական» հետ կապված բոլոր ռոմանտիկական պատրանքներին ու հույսերին, իրանց համար դաշնակիցներ վորոնելով Ռուսաստանի ընդհանրապես և գյուղական Ռուսաստանի մասնավորապես նոր բուրժուական տարրերից, շերտերից։ Ստոլիպինը փորձեց հին ակերը նոր պինդ լցնել, հին ինքնակալությունը բուրժուական միապետության վերածել, և ստոլիպինյան քաղաքանության անանկացումը—դա ցարիզմի անանկացումն է այդ վերջին, ցարիզմի համար յենթադրելի վերջին ճանապարհի վրա։ Ալեքսանդր III-ի կալվածատիրական միապետությունը փորձեց կոթնել «նահապետական» գյուղի և առհասարակ ռուսական կյանքի «նահապետականության» վրա,—հեղափոխությունը վերջնականապես ջախջախեց այդ քաղաքականությունը։ Նիկոլա II ի կալվածատիրական միապետությունը հեղափոխությունից հետո փորձեց կոթնել բուրժուազիայի հակահեղափոխական տրամադրության և բուրժուական ազգայնական քաղաքանության վրա, վոր կիրառում էին նույն կալվածատերերը։ այդ փորձերի անհակացումը, վոր անսահման կուսակցի յե անգամ կազմակերպների համար, անգամ հոկտեմբերականների համար, ցարիզմի համար վերջին հնարավոր քաղաքականության անհնարացումն է։

(Վ. Ի. Լենին, Ցերկերի ժողովածու, հ. XI. մ. 2. էջ 362—366 Գրված։ «Լենինյան ուղիով», էջ 307—308։)։

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԵՏԱՓԸ

Ա. ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄՆ ԻԲՐԵՎ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՀԱՏՈՒԿ ՓՈՒԼ (ՍՏԱԴԻԱ).

Իմպերիալիզմն առաջ է եկել իբրև ընդհանրապես կապիտալիզմի հիմնական հատկությունների զարգացում և ուղղակի շարունակություն։ Սակայն, կապիտալիզմը կապիտալիստական իմպերիալիզմ է դարձել իր զարգացման վորոշ, շատ բարձր աստիճանում միայն, յերբ կապիտալիզմի մի քանի հիմնական հատկություններ սկսեցին իրենց հակադրությունը վերածվել, յերբ ամբողջ գծով կերտվեցին ու յերևան յեկան այն անցման դարաշրջանի գծերը, վորը կապիտալիզմից տանում է դեպի

ավելի բարձր հասարակական-տնտեսական կերտվածք։ Այս պրոցեսի մեջ, տնտեսապես հիմնականը՝ կապիտալիստական ազատ մրցումը կապիտալիստական մոնոպոլիաներով փոխարինելն է։ Ազատ մրցումն ընդհանրապես կապիտալիզմի ու ընդհանրապես ապրանքային արտադրության հիմնական հատկությունն է. մոնոպոլիան ազատ մրցման ուղիղ հակադրությունն է, սակայն ազատ մրցումը մեր աչքերի առաջ սկսեց մոնոպոլիա դառնալ՝ ստեղծելով խոշոր արտադրություն, վտարելով մանր արտադրությունը, խոշորը փոխարինելով խոշորագույնով, արտադրության ու կապիտալի կոնցենտրացիան հասցնելով այն կետին, վոր նրանից աճեց և աճում է մոնոպոլիան—կարտելները, սինդիկատները, տրեստներն ու սրանց հետ ձուլվող այն կապիտալը վոր կամ-վում է միլիարդների հետ խաղացող տասնյակ բանկերի կապիտալներից։ Ցեվ մինչդեռ ժամանակ մոնոպոլիաներն աճելով ազատ մրցումից, չեն վերացնում այս մրցումը, այլ գոյություն ունեն մրցումից վեր ու մրցման հետ կող-կողքի, սրանով ստեղծելով մի շարք առանձնապես սուր ու խոշոր հակադրություններ, գժտություններ, ընդհարումներ։ Մոնոպոլիան մի անցում է, վոր տանում է կապիտալիզմից դեպի ավելի բարձր հասարակակարգ։

Ցեթե անհրաժեշտ լիներ իմպերիալիզմի ըստ կարելույն ավելի համառոտ վորոշումը տալ, ապա պետք եր ասել, վոր իմպերիալիզմը կապիտալիզմի մոնոպոլիստական փուլն է։ Այսպիսի վորոշումը կպրունակեր ամենագլխավորը, վորովհետև մի կողմից ֆինանսական կապիտալը միքանի մոնոպոլ խոշորագույն բանկերի բանկային կապիտալն է, վորը միաձուլվել և արդյունաբերողների մոնոպոլիստական միությունների կապիտալի հետ, իսկ մյուս կողմից՝ աշխարհի բաժանումը մի անցում է գաղութային քաղաքականությունից, վորն անարգել կերպով ընդլայնվում է և տարածվում վոչ մի կապիտալիստական պետության ձեռքով չնվաճված մարզերի վրա, դեպի մի այնպիսի գաղութային քաղաքականություն, վորը մոնոպոլ կերպով տիրում է մինչև վերջին հողամասը բաժին-բաժին արած յերկրագնդի աերբիտորիային։

Բայց չափազանց կարճ վորոշումները թեև հարմար էլ են, վորով հետև ամփոփում են գլխավորը, սակայն և այնպես անբավարար են, քանի վոր նրանցից հատկապես պետք է դուրս բերել շատ էական գծեր այն յերևույթի, վորը հարկավոր է վորոշել։ Ուստի չմոռանալով ընդհանրապես բոլոր վորոշումների պայմանական ու հարաբերական նշանակությունը, վորոշումներ, վորոնք յերբեք չեն կարող ընդգրկել յերևույթի բազմակողմանի կապերը նրա լիակատար զարգացման ընթացքում, պետք է իմպերիալիզմի այնպիսի վորոշում տալ, վորը պարունակեր նրա հետևյալ հինգ հիմնական հատկանիշները. 1) արտա-

պրութեյան ու կապիտալի կոնցենտրացիան, վորը հասել է զարգացման այնպիսի բարձր աստիճանի, վոր այս կոնցենտրացիան առեղծել է մոնոպոլիաներ, վորոնք վճռական դեր են կատարում տնտեսական կյանքում. 2) բանկային կապիտալի ձուլումն արդյունաբերական կապիտալի հետ և «ֆինանսական կապիտալի» բազայի վրա հիմնված ֆինանսական օլիգարխիայի ստեղծումը. 3) տարբերելով ապրանքների արտահանումից՝ կապիտալի արտահանումն առանձնապես կարևոր նշանակություն է ստանում. 4) առաջ են գալիս կապիտալիստական միութեյունները, վորոնք իրենց միջազգային մոնոպոլիստական տիրական միութեյուններ, վորոնք բաժանում են աշխարհը, և 5) խոշորագույն կապիտալիստական պետութեյունների կողմից ավարտված է աշխարհի տերրիտորիալ բաժանումը։ Իմպերիալիզմը կապիտալիզմն է զարգացման այն աստիճանում, յերբ հաստատվել է մոնոպոլիաների ու ֆինանսական կապիտալի տիրապետութեյուն, աչքի ընկնող նշանակութեյուն է ստացել կապիտալի արտահանումը, սկսվել է աշխարհի բաժանումը միջազգային արհեստների ձեռքով և ավարտվել է աշխարհի ամբողջ տերրիտորիայի բաժանումը խոշորագույն կապիտալիստական յերկրների կողմից։

(Վ. Ի. Լենին, «Իմպերիալիզմ», եջ 75—77, հայերեն)

Բ. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՊԱՐԱԶԻՏԻԶՄՆ ՈՒ ՓԹՈՒՄԸ

Իմպերիալիզմի ամենախոր տնտեսական հիմքը մոնոպոլիան է։ Այս մոնոպոլիան կապիտալիստական է, այսինքն՝ առաջացել է կապիտալիզմից և գոյվում է կապիտալիզմի ապրանքային արտադրութեյան մրցման ընդհանուր պայմաններում, այս ընդհանուր պայմանների հակասութեյան մեջ։ Նկատմամբ յեղած մշտական ու անելանելի հակասութեյան մեջ։ Սակայն, այնուամենայնիվ, ինչպես յուրաքանչյուր մոնոպոլիա, այս մոնոպոլիան էլ անխուսափելիորեն առաջ է բերում լճանալու ու փտելու ձգտում, վորչափով վոր, թեկուզ ժամանակավորապես, սահմանվում են մոնոպոլ գներ, վորչափով վոր մինչև մի վորոշ աստիճան չքանում են տեխնիկական, հետևաբար և ամեն մի այլ առաջադիմութեյան դրդապատճառները, վորչափով այնուհետև տնտեսական հնարավորութեյուն է առաջ գալիս տեխնիկական առաջադիմութեյունն արվեստական յեղանակով խափանելու։ Որինակ՝ Ամերիկայում վոմն Ռուենս հնարեց շշերի մեքենա, վորը հեղափոխութեյուն առաջ բերեց շշերի պատրաստելու գործի մեջ։ Շշերի գործարանատերերի գերմանական կարտելը գնում է Ռուենսի պատենտները և գնում է մահուդի տակ, նրանց կիրառումը հետաձգում։ Իհարկե, կապիտալիզմի ժամանակ մոնոպոլիան յերբեք չի կարող լիովին և շատ յերկար ժամանակով մրցումը վերացնել համաշխարհային շուկայից։ Իհարկե, տեխնիկական բարելավումը

նների միջոցով արտադրութեյան ծախքերը պակասեցնելու ու վաստակը շատացնելու հնարավորութեյունը գործում է հօգուտ փոփոխութեյունների։ Սակայն, լճացման ու փտութեյան տենդենցը, վոր հատուկ է մոնոպոլիային, իր հերթին շարունակում է ազդել, և արդյունաբերութեյան առանձին ճյուղերում, առանձին յերկրների մեջ վորոշ ժամանակամիջոցներում այս տենդենցը հաղթող է հանդիսանում։

Առանձնապես ընդարձակ, հարուստ ու հարմար դիրքով ընկած գաղութներին տիրանալու մոնոպոլիան գործում է միևնույն ուղղութեյամբ։

Այնուհետև։ Իմպերիալիզմը սակավաթիվ յերկրներում տեղի ունեցող վիթխարի կուտակումն է դրամական կապիտալի, վորը, ինչպես տեսել ենք, 100—150 միլիարդ ֆրանկ արժեթղթերի չի հասնում։ Այս տեղից առաջ է գալիս ռանտյեների դասակարգի կամ, ավելի ճիշտն ասած՝ ռանտյեների շերտի անխուսափելի աճումը, այսինքն՝ բազմաթվի այն անհատների, վորոնք ապրում են «կտրոններ (կուպոններ) խուզելով», այն անհատների, վորոնք միանգամայն կտրված են վորևե ձեռնարկութեյան մեջ մասնակցութեյուն ունենալուց, այն անհատների, վորոնց զբաղմունքը գործարկապորտութեյունն է։ Կապիտալի արտահանումը, վոր իմպերիալիզմի ամենից բնական տնտեսական հիմքերից մեկն է, էլ ավելի չի սասեկացնում ռանտյեների շերտի արտադրութեյունից կատարելապես կտրված լինելը, պարազիտիզմի դրոշմ է դնում ամբողջ յերկրի վրա, վոր ապրում է միքանի անդրովկիանյան յերկրների ու գաղութների աշխատանքի շահագործումով։

«1873 թվին,—գրում է Հոբսոնը,—արտասահմանում գտեղած բրիտանական կապիտալը կազմում էր Միացյալ Թագավորութեյան ամբողջ հարստութեյան մոտ 15%-ը»[88]։ Հիշեցնենք, վոր 1915 թվին այս կապիտալը մեծացել էր մոտ $2\frac{1}{2}$ անգամ։ «Հարձակողական իմպերիալիզմը,—կարդում ենք այնուհետև Հոբսոնի գրքում,—վորն այնքան թանգ է նստում հարկեր վճարողներին և վորն այնքան փոքր նշանակութեյուն ունի արդյունաբերողի ու առևտրականի աչքում... մեծ վաստակների աղբյուր է կապիտալիստի համար, վորը գտեղում է փընտռում իր կապիտալին» (անգլիերեն այս գաղափարն արտահայտվում է հետևյալ մեկ բառով—«ինվեստոր», վոր նշանակում է «գտեղող», ռանտյե)... Տարեկան այն բոլոր հարստութեյը, վոր Մեծ Բրիտանիան ստանում է իր արտաքին ու գաղութային ամբողջ առևտրից, նավարկութեյունից ու արտահանութեյունից, վիճակագիր Գիֆֆենը հաշվում էր 1899 թվի համար 18 միլիոն ֆունտ-ստերլինգ (մոտ 170 միլիոն ռուբլի)՝ համարելով, վոր ամբողջ 800 միլիոն ֆունտ-ստերլինգ շրջանառութեյունից $2\frac{1}{2}$% է ստացվում։ Վորքան էլ վոր մեծ է այս գումարը, այս չի կարող բացատրել Մեծ Բրիտանիայի հարձակողական իմպեր-

խալիզմը։ Վերջինս բացատրվում է 90—100 միլիոն ֆունտ-ստերլինգ գումարով, որ հանդիսանում է «զետեղած» կապիտալի հասույթը, ռանտյեների շերտի հասույթը։

Ռանտյեների հասույթը ճիգապատիկ գերազանցում է այն հասույթից, որ ստանում է աշխարհիս ամենից «առևտրային» յերկիրը արտաքին առևտրից։ Ահա իմպերիալիզմի ու իմպերիալիստական պարազիտիզմի էությունը

Այս պատճառով «ռանտյե-պետություն» (Rentnerstaat) կամ վաշխառու-պետություն գաղափարը իմպերիալիզմին վերաբերող տնտեսագիտական գրականության մեջ ընդհանուրի կողմից գործածական է դառնում։ Յերկրագունդը բաժանվել է մի բուռ վաշխառու-պետությունների ու վիթխարի մեծամասնություն կազմող պարտապան-պետությունների։ «Կապիտալի՝ արտասահմանում կատարած զետեղումների մեջ,—գրում է Շուլցե—Գեվերնիցը,—առաջին տեղը գրավում են այնպիսի զետեղումները, որոնք ընկնում են քաղաքականապես կախյալ կամ դաշնակից յերկրներին. Անգլիան փոխառություններ է կախյալ Յեգիպտոսին, Յապոնիային, Չինաստանին, Հարավային Ամերիկային։ Նրա ռազմատորմիղը, ծայրահեղ դեպքում, դառնալու կան կատարածուի դեր է խաղում։ Անգլիայի քաղաքական ուժը նրան պաշտպանում է պարտապանների վրդովմունքից» [89]*։ Սարտորիուս ֆոն. Վայլտերսհաուզենը «կապիտալն արտասահմանում զետեղելու ժողովայլտերսհաուզենը «կապիտալն արտասահմանում զետեղելու ժողովրդատնտեսական սիստեմը» վերնագրով իր աշխատության մեջ իրեն «ռանտյե-պետության» տիպար՝ հանդես է բերում Հոլլանդիան և մասնանշում է, որ այժմ նման պետություն են դառնում Անգլիան ու Ֆրանսիան* [90]*։ Շելդերը կարծում է, որ 5 արդյունաբերական պետություններ—Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Բելգիան ու Շվեյցարիան «որոշ կերպով արտահայված վարկատու-յերկրներ» են հանդիսանում։ Նա Հոլլանդիան սրանց շարքում չի դնում միայն այն դիտանում։ Նա Հոլլանդիան սրանց շարքում չի դնում միայն այն դիտանումով, որ այս յերկիրը «քիչ արդյունաբերական» է։ Միևցյալ պատճառով, որ այս յերկիրը «քիչ արդյունաբերական» է։ Միևցյալ պատճառով, որ այս յերկիրը «քիչ արդյունաբերական» է։ Միևցյալ Նահանգները վարկատու յեն հանդիսանում միայն Ամերիկայի նկատմամբ»* [91]*։*

«Անգլիան,—գրում է Շուլցե—Գեվերնիցը,—արդյունաբերական պետությունից դառնում է վարկատու պետություն։ Չնայած որ արդյունաբերական արտադրությունն ու արդյունաբերական արտահանումը մեծանում է բացարձակորեն, սակայն ամբողջ ժողովրդական տնտեսության համար աճում է հարաբերական նշանակությունն այն հասույթների, որոնք ստացվում են տոկոսներից ու դիվիդենդներից, եմիսսիոններից ու սպեկուլյացիայից։ Իմ կարծիքով, հենց այս փաստն է հանդիսանում իմպերիալիստական վերելքի տնտեսական հիմք։ Վարկատուն ավելի ամուր է կապված պարտապետական հետ, քան վաճառորդը՝ գնորդի հետ» [92]*։ Բերլինի «Բանկ» հանդեսի հրատարակիչ Ա. Լանսբուրգը «Գերմանիան իբրև ռանտյե պետություն» վերնագրով հոդվածում 1911 թվին հետևյալն էր գրում Գերմանիայի մասին. «Գերմանիայում սիրով ծիծաղում են ռանտյե դառնալու այն հակման վրա, որ նկատվում է Ֆրանսիայում, բայց ընդհակառակն ժողովուրդը ավելի ու ավելի յեն նախանձում ֆրանսիական պայմաններին»* [93]*։*

Ռանտյե-պետությունը պարազիտային, փտող կապիտալիզմի պետություն է, և այս հանգամանքը չի կարող չանդրադառնալ թե տըվյալ յերկրների սոցիալ-քաղաքական բոլոր պայմանների վրա ընդհանրապես, և թե բանվորական շարժման յերկու հիմնական հոսանքների վրա հատկապես։ Այս ըստ կարելույն ավելի ակնառու կերպով ցույց տալու համար խոսքը տանք Հոբսոնին, որն ամենից ավելի հուսալի յե իբրև վկա, որովհետև չի կարելի կասկածել, թե նա «մարքսիստական ուղղափառության» մոլությամբ է տոգորված, իսկ մյուս կողմից՝ նա անգլիացի յե, լավ ծանոթ այն յերկրի գործերի դրությանը, որն ամենից հարուստ է թե գաղութներով, թե ֆինանսական կապիտալով, թե իմպերիալիստական վորձով։

Անգլո-բոյերական պատերազմի կենդանի տպավորության տակ նկարագրելով իմպերիալիզմի ու «ֆինանսիստների» շահերի կապը, կապալներից, մատակարարումներից ստացած վաստակների աճելու կապը՝ Հոբսոնը գրում էր. «Վորոշակի պարազիտային այս քաղաքականության ուղղություն տվողները կապիտալիստներն են, սակայն նույն այս ժոռիթները ազդում են բանվորների հատուկ խմբերի վրա յեվ։ Բազմաթիվ քաղաքներում արդյունաբերության ամենակարևոր ճյուղերը կախումն ունեն կառավարական պատվերներից. մետաղագործական ու նավաշինարարական արդյունաբերության կենտրոնների իմպերիալիզմը քիչ կախում չունի այս փաստից»։ Հեղինակի կարծիքով յերկու կարգ հանգամանքներ են թուլացրել հին կայսրությունների ուժը. 1) «տնտեսական պարազիտիզմը» ու 2) կախյալ ժողովուրդների ոգին։ «Առաջինը տնտեսական պարազիտիզմի տարրերից զորք կազմելը։ «Առաջինը տնտեսական պարազիտիզմի տարրերից զորք կազմելը։ թյունն է, որի շնորհիվ իշխող պետությունն ոգտագործում է իր գավառները, գաղութներն ու կախյալ յերկրները, իր տիրող դասակարգը հարստացնելու ու իր տարին դասակարգերը կաշառելու համար, որպեսզի վերջիններս հանդարտ մնան»։ Մեր կողմից ավելացնենք, որ այսպիսի կաշառքի տնտեսական հնարավորության համար, ինչ ձևով էլ որ ուզում է կատարվի այս կաշառելը, անհրաժեշտ է մոնոպոլիստական բարձր վաստակ։

Յերկրորդ հանգամանքի մասին Հոբսոնը գրում է. «Իմպերիա-

լիզմի կուրուքյան ամենատարօրինակ հայտանիշներից մեկն այն անփութքյունն է, վորով Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և մյուս իմպերիալիստական ազգերը վոտք են դնում այս ուղին։ Մեծ Բրիտանիան ամենից առաջ է անցել։ Այն ճակատամարտերից մեծ մասը, վորոնցով մենք նվաճել ենք մեր հնդկական կայսրությունը, մղել են մեր այն զորքերը, վորոնք կազմված են տեղացիներից։ Հնդկաստանում, ինչպես և վերջին ժամանակ Եգիպտոսում էլ, մշտական մեծ բանակները բրիտանացիների հրամանատարության տակ են գտնվում. համարյա այն բոլոր պատերազմները, վորոնք կապ ունեն Աֆրիկան, բացի սրա հարավային մասից, մեր ձեռքով նվաճելու հետ, մեզ համար մղել են տեղացիները»։

Չինաստանի բաժանման հեռանկարն այսպիսի գնահատության է առաջ բերում Հոբսոնի կողմից. «Այն ժամանակ Արևմտյան Եվրոպայի մեծ մասը կարող եր ընդունել այնպիսի տեսք ու բնույթ, վորպիսին այժմ ունեն այս յերկրների վորոշ մասերը միայն, այն է՝ Անգլիայի հարավը, Ռիվիերան, Իտալիայի ու Շվեյցարիայի այն վայրերը, ուր ամենից ավելի յեն հաճախում ճանապարհորդները, և վորոնց բնակիչները հարուստներն են, այսինքն՝ կլինի հարուստ արիստոկրատների մի փոքրիկ խմբակ, վորը դիվիդենդներ ու կենսաթոշակներ և ստանում Հեռավոր Արևելքից, վորոնց հետ կլինեն մի քիչ ավելի բազմաթիվ պրոֆեսիոնալ ծառայողների ու առևտրականների վորոնք, վորոնք կզործեն վերնադրական արդյունաբերության ասպարիզում ու ֆաբրիկատների վերջնական մշակումով զբաղվող արդյունաբերության մեջ։ Իսկ արդյունաբերության գլխավոր ճյուղերը կչքանային և սնման ամենայական արդյունքները, մասնայական կիսաֆաբրիկատներն, իրրև տուրք, Ասիայից ու Աֆրիկայից կհոսեին դեպի Եվրոպա»։

Անհրաժեշտ է նկատել, վոր Անգլիայում իմպերիալիզմի բանվորներին յերկու մասի բաժանելու և նրանց միջև ոպորտունիզմը սաստկացնելու տենդենցը, բանվորական շարժման ժամանակավոր փուլում առաջ բերելու տենդենցը, 19-րդ դարի վերջից ու 20-րդ դարի սկզբից շատ ավելի առաջ և արտահայտվել վորովհետև իմպերիալիզմի յերկու խոշոր տարբերիչ գծերը—գաղութային տիրապետություններն ու համաշխարհային շուկայում մոնոպոլ դիրք գրավելն—Անգլիայում տեղի ունեներ 19-րդ դարի կեսից սկսած։ Մարքսն ու Ենգելսը մի շարք տասնամյակների ընթացքում սիստեմատիկ կերպով քայլ առ քայլ հետազոտել են այս կապը, վոր ունի բանվորական շարժման ոպորտունիզմի իմպերիալիստական առանձնահատկության անգլիական կապիտալիզմի հետ։ Ենգելսը գրում եր Մարքսին, որինակ, 1858 թվի հոկտեմբերի 7-ին. «Անգլիական պրոլետարիատը իրապես ավելի ու ավելի յե բուրժուականանում, այնպես վոր բոլոր ազգերից ամենաբուրժուական այս ազգը, ըստ յերևության, կամենում է բանը վերջը վերջո այնտեղ հասցնել, վոր ունենա բուրժուական արիստոկրատիա ու բուրժուական պրոլետարիատ՝ բուրժուազիայի հետ կողք-կողքի։ Հասկանալի յե, ամբողջ աշխարհը շահագործող այսպիսի մի ազգի կողմից այս ցանկությունը մինչև մի վորոշ աստիճան որինաչափ է»։ Համարյա քառորդ դար անց՝ 1881-թվի ոգոստոսի 11-ի նամակում Ենգելսը խոսում է անգլիական վատթարագույն տրեդ-յունիոնների մասին, վորոնք թույլ են տալիս, վոր իրենց ղեկավարեն այնպիսի մարդիկ, վորոնք վաճառված են բուրժուազիային կամ, համենայն դեպս, վորոնց վճարում է բուրժուազիան»։ Իսկ 1882 թվի սեպտեմբերի 12-ին կարգուկան ուղղած նամակում Ենգելսը գրում եր. «Դուք հարցնում եք ինձանից, թե անգլիական բանվորներն ինչ են մտածում գաղութային քաղաքականության մասին։ Հենց նույնը, ինչ վոր մտածում են ընդհանրապես։ Այստեղ չկա բանվորական քաղաքականության մասին ընդհանրապես։ Այստեղ կա պահպանողական ու լիբերալ կուսակցություն, այլ կան պահպանողական ու լիբերալ առաջնորդներ միայն, իսկ բանվորներն ամենայն հանգստությամբ նրանց հետ միասին ոգտվում են Անգլիայի գաղութային մոնոպոլիայից ու նրա՝ համաշխարհային շուկայում ունեցած մոնոպոլիայից»[100] (Ենգելսը նույնը կրկնել է մամուլի համար «Բանվոր դասակարգի դրությունն Անգլիայում» գրքի II հրատարակության առաջաբանում 1892 թվին)։

Այստեղ պարզ մատնանշված են պատճառները ու հետևանքները։ Պատճառներն են՝ 1) Անգլիայի յերկրի կողմից ամբողջ աշխարհը շահագործելը, 2) սրա մոնոպոլ դիրքը համաշխարհային շուկայում, 3) նրա գաղութային մոնոպոլիան։ Հետևանքներն են՝ 1) անգլիական պրոլետարիատի մի մասի բուրժուականացումը, 2) այս բանվորության մի մասը թույլ է տալիս, վոր իրեն ղեկավարեն այնպիսի մարդիկ, վորոնք վաճառված են բուրժուազիային կամ, համենայն դեպս, վորոնց վճարում է բուրժուազիան։ 20-րդ դարի իմպերիալիզմն ավարտեց աշխարհի բաժանումը մի քանի պետությունների միջև, վորոնցից յուրաքանչյուրն այժմ շահագործում է (գեր-վաստակ կորզելու իմաստով) ամբողջ աշխարհի միքիչ ավելի փոքր մաս, քան Անգլիան 1858 թվականին. յուրաքանչյուրը մոնոպոլ դիրք է գրավում համաշխարհային շուկայում տրեստների, կարտելների, ֆինանսական կապիտալի շնորհիվ, այլ և վարկատուի՝ դեպի պարտապանն ունեցած հարաբերությունների շնորհիվ. յուրաքանչյուրն ունի վորոշ չափով գաղութային մոնոպոլիա (մենք տեսանք, վոր աշխարհիս բոլոր գաղութների 75 միլիոն քառ. կիլոմետրից 65 միլիոնը, այսինքն 86%-ը կենտրոնացած է 6 պետությունների ձեռքում, 61 միլիոնը, այսինքն 81%- կենտրոնացած է 3 պետության ձեռքում)։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՐՔԱՏՈՒՆ
Гос. Библиотека
2007
42 35-91

Այժմյան դրության տարբերությունը կազմում են այնպիսի տնտեսական ու քաղաքական պայմաններ, վորոնք չեյին կարող չսաստկացնել ոպպորտյունիզմի անհաշտելիությունը բանվորական շարժման ընդհանուր ու արմատական շահերի հետ. իմպերիալիզմը սաղմային դրությունից աճել, դարձել է իշխող սիստեմ. կապիտալիստական մոնոպոլիաներն առաջին տեղն են գրավել ժողովրդական տնտեսության ու քաղաքականության մեջ. աշխարհի բաժանումը հասցրած է մինչև վերջ, իսկ մյուս կողմից Անգլիայի անբաժան մոնոպոլիայի փոխարեն՝ մենք տեսնում ենք մի կռիվ, վոր մղում են սակավաթիվ իմպերիալիստական պետություններ՝ մոնոպոլիայի մեջ մասնակցություն ունենալու համար և վորը բնորոշում է 20-րդ դարի ամբողջ սկիզբը: Ոպպորտյունիզմը չի կարող այժմ լիովին հաղթող դուրս գալ յերկրներից մեկի բանվորական շարժման մեջ յերկար շարք տասնամյակների ընթացքում, ինչպես հաղթել եր ոպպորտյունիզմն Անգլիայում 19-րդ դարի 2-րդ կեսին. սակայն ոպպորտյունիզմը վերջնականապես հասունացել, գեր-հասունացել ու փտել է մի շարք յերկրներում՝ լիովին միաձուլվելով բուրժուական քաղաքականության հետ՝ իբրև սոցիալ շովինիզմ[101]:

(Վ. Ի. Լենին: «Իմպերիալիզմ», եջ 86-90. 93—95):

Գ. ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԸ.

Մենք տեսանք, վոր իր տնտեսական եյությամբ իմպերիալիզմը մոնոպոլիստական կապիտալիզմ է: Սրանով արդեն վորոշվում է իմպերիալիզմի պատմական տեղը, վորովհետև ազատ մրցման ու հենց հատկապես ազատ մրցման հողի վրա աճող մոնոպոլիան մի անցում է, վոր կապիտալիստականից տանում է դեպի ավելի բարձր հանրային տնտեսական կերտվածք: Հատկապես պետք է նշել մոնոպոլիաների չորս գլխավոր տեսակ կամ մոնոպոլիստական կապիտալիզմի չորս գլխավոր արտահայտություններ, վորոնք բնորոշ են քննելի դարաշրջանի համար:

Առաջին՝ մոնոպոլիան ծագել է արտադրության կոնցենտրացիայից, նրա զարգացման շատ բարձր աստիճանի ժամանակ: Կապիտալիստների մոնոպոլիստական միություններն են սրանք—կարտելները, սինդիկատները, տրեստները: Տեսանք, թե ինչ վիթխարի դեր են կատարում սրանք արդի տնտեսական կյանքում: 20-րդ դարի սկզբում սրանք լիակատար գերակշռություն ստացան առաջավոր յերկրներում, և, յեթե կարտելացման ճանապարհին առաջին քայլերն ավելի վաղ արին այն յերկրները, վորոնք ունեյին հովանավորական բարձր տարիֆ, ապա Անգլիան ազատ առևտրի իր սիստեմով մինչև ավելի ուշ

ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ

միայն ցուցահանեց նույն հիմնական փաստը՝ մոնոպոլիաների ծնունդը արտադրության կոնցենտրացիայից:

Յերկրորդ՝ մոնոպոլիաների հետևանքը յեղավ այն, վոր հում նյութի կարևորագույն աղբյուրները զորեղ թափով նվաճվեցին հատկապես կապիտալիստական հասարակության հիմնական ու ամենից ավելի կարտելացրած արդյունաբերության—քարածխային ու յերկաթագործական արդյունաբերության—համար: Հումնյութեղենների կարևորագույն աղբյուրներին մոնոպոլ տիրելը սարսափելի մեծացրեց խոշոր կապիտալի իշխանությունը և սրեց կարտելացրած ու չկարտելացրած արդյունաբերության միջև յեղած հակասությունը:

Յերրորդ՝ մոնոպոլիան առաջացել է բանկերից: Վերջիններս միջնորդային համեստ ձեռնարկություններից դարձել են ֆինանսական կապիտալի մոնոպոլիստներ: Ամենաառաջավոր կապիտալիստական ազգերից ամեն մեկի՝ ընդամենը վոչ ավելի քան 3—5 խոշորագույն բանկեր իրականացրել են արդյունաբերական ու բանկային կապիտալների «անձնական ունիան», իրենց ձեռքումն են կենտրոնացրել տնօրինությունը բազմաթիվ միլիարդների, վորոնք կազմում են մի ամբողջ յերկրի կապիտալների ու դրամական հասույթների մեծ մասը: Ֆինանսական օլիգարխիան, վորը կախման հարաբերությունների խիտ ցանցն է փռում արդի բուրժուական հասարակության տնտեսական ու քաղաքական հիմնարկների վրա առանց բացառության,—ահա այս մոնոպոլիայի ամենացայտուն արտահայտությունը:

Չորրորդ՝ մոնոպոլիան առաջացել է գաղութային քաղաքականությունից: Գաղութային քաղաքականության բազմաթիվ «հին մոտիվներին» ֆինանսական կապիտալն ավելացրել է մի կռիվ, վոր մղվում է հում նյութի աղբյուրների համար, կապիտալի արտահանության համար, «ազդեցության շրջանների» համար, այսինքն՝ ձեռնտու գործարքների, կոնցեսիաների, մոնոպոլիստական վաստակների և այլն, վերջապես տնտեսական տերրիտորիայի համար ընդհանրապես: Որինակ՝ յերբ յեվրոպական պետությունները իրենց գաղութներով բռնում եյին Աֆրիկայի մեկ տասներորդ մասը, ինչպես վոր եր դեռ 1876 թվին, այն ժամանակ գաղութային քաղաքականությունը կարող եր զարգանալ վոչ մոնոպոլ կերպով, հողերը, այսպես ասած՝ «ազատորեն տիրանալով» գրավելու տիպի համաձայն: Սակայն, յերբ Աֆրիկայի $^{9}/_{10}$-ը նվաճվեց արդեն (1900 թվի մոտերքը), յերբ բանից դուրս յեկավ, վոր ամբողջ աշխարհը բաժանված է, անխուսափելիորեն վրա հասավ գաղութները մոնոպոլ կերպով տիրելու դարաշրջանը, հետևաբար և աշխարհը բաժանելու ու վերաբաժանելու համար մղվող հատկապես սուր կռվի դարաշրջանը:

Թե մոնոպոլիստական կապիտալը վորքան է սրել կապիտալիզմի

բոլոր հակասութիւնները,— հանրահայտնի չէ։ Բավական է մատնանշել թանգութիւնն ու կարտելների ճնշումը։ Հակասութիւնների այս սրումն ամենահզոր շարժիչ ուժն է պատմական անցման ժամանակաշրջանի, որն սկսվել է համաշխարհային ֆինանսական կապիտալի վերջնական հաղթանակի որերից։

Մոնոպոլիանները, ոլիգարխիան, տիրապետութեան ձգտումը ազատութեան ձգտման փոխարէն, ավելի ու ավելի բազմաթիվ ժանր ու թուլլ ազգերի շահագործումը մի փոքրիկ բուռ ամենահարուստ ու ամենազորեղ ազգերի ձեռքով,—այս բոլորն առաջացրել են իմպերիալիզմի այն յաբբերիչ գծերը։ Որոնք հարկադրում են իմպերիալիզմը բնորոշել իբրև պարազիտային կամ փտող կապիտալիզմ։ Իբրև իմպերիալիզմի տենդենցներից մեկը, ավելի ու ավելի ցայտուն է հանդես գալիս այն, որ ստեղծվում է «ռանտյե-պետութիւն», վաշխառու-պետութիւն, որի բուրժուազիան ապրում է կապիտալ արտահանելով և «կտրոներ խուզելով»։ Սխալ կլիներ կարծել, թե փտութեան այս տենդենցը ժխտում է կապիտալիզմի արագ աճումը, վոչ, իմպերիալիզմի դարաշրջանում արդյունաբերութեան առանձին ճյուղերը, բուրժուազիայի առանձին շերտերը, առանձին յերկրներն ավելի կամ պակաս ուժով յերևան են հանում այս տենդենցներից մերթ մեկը, մերթ մի ուրիշը։ Ընդհանուր առմամբ կապիտալիզմն անչափ ավելի արագ է աճում, քան առաջ, սակայն այս աճումն ընդհանրապես վոչ միայն ավելի ու ավելի անհամաչափ է դառնում, այլ և անհամաչափությունը յերևան է գալիս մասնավորապես նրանով, որ փտում են կապիտալով ամենից հարուստ յերկրներն էլ (Անգլիան)։

Գերմանական խոշոր բանկերին նվիրված ուսումնասիրութեան հեղինակը—Ռիսսերը—Գերմանիայի տնտեսական զարգացման արագացման մասին ասում է. «Գերմանիայի նախընթաց դարաշրջանի (1848—1870) վոչ չափազանց դանդաղ առաջադիմութիւնը՝ տվյալ դարաշրջանում (1870—1905) նրա ամբողջ տնտեսութեան ու մասնավորապես նրա բանկերի զարգացման արագութեանը հարաբերում է մոտավորապես այնպես, ինչպես որևէ յալ հին ժամանակվա պոստի կառքի շարժման արագութիւնը հարաբերում է այժմյան ավտոմոբիլի արագութեանը, որը սլանում է այնքան արագ, որ վտանգավոր է դառնում թե անհոգ քայլող վոտավորի ու թե հենց իրենց, ավտոմոբիլով գնացող մարդկանց համար»։ Արտասովոր արագութեամբ աճած այս ֆինանսական կապիտալը, հենց այն պատճառով, որ այսպես արագ է աճել, իր հերթին հոժարութեամբ դիմում է ավելի «հանդարտ» կերպով տիրանալու այն գաղութներին, որոնք պետք է խլվեն ավելի հարուստ ազգերից, այն էլ վոչ միայն խաղաղ միջոցներով։ Իսկ Միացյալ Նահանգներում տնտեսական զարգացումը վերջին տասնամյակների ընթացքում էլ ավելի արագ է ընթացել, քան Գերմանիայում։ Ցեվ հենց այս հանգամանքի շնորհիվ ամերիկյան նորագույն կապիտալիզմի պարազիտային գծերը հանդես են յեկել առանձին պայծառութեամբ։ Մյուս կողմից՝ թեկուզ հանրապետական ամերիկյան բուրժուազիայի համեմատությունը միապետական յապոնական կամ գերմանական բուրժուազիայի հետ՝ ցույց է տալիս, որ խոշորագույն քաղաքական տարբերությունն իմպերիալիզմի դարաշրջանում վերին աստիճանի թուլանում է վոչ այն պատճառով, որ այս տարբերությունն ընդհանրապես անկարևոր է, այլ այն պատճառով, որ այս բոլոր դեպքերում խոսքը վերաբերում է պարազիտիզմի վորոշ գծեր ունեցող բուրժուազիային։

Արդյունաբերության բազմաթիվ ճյուղերից մեկի, բազմաթիվ յերկրներից մեկի և այլն կապիտալիստների՝ մոնոպոլ բարձր վաստակ ստանալն այս կապիտալիստներին տնտեսական հնարավորություն է տալիս կաշառելու բանվորների առանձին շերտիկները, իսկ ժամանակավորապես նաև նրանց բավական զգալի թիվ կազմող փոքրաժասնությունը՝ բանվորներին գրավելով տվյալ ճյուղի կամ տվյալ ազգի բուրժուազիայի կողմը, ընդդեմ մնացած բոլորի։ Ցեվ իմպերիալիստական ազգերի աշխարհի բաժանման համար տեղի ունեցող սաստկացած հակամարտությունն ուժեղացնում է այս ձգտումը։ Այս կերպով կապ է ստեղծվում իմպերիալիզմի ու ոպպորտյունիզմի միջև, որն ամենից վաղ ու ամենից պարզորոշ յերևան է յեկել Անգլիայում, շնորհիվ այն հանգամանքի, որ զարգացման միքանի իմպերիալիստական գծեր այս տեղ շատ ավելի վաղ են նկատվել, քան այլ յերկրներում։

Իմպերիալիզմի տնտեսական էության մասին վերը բոլոր ասածներից բղխում է, թե իմպերիալիզմը պետք է բնորոշել իբրև անցման շրջանի կապիտալիզմ կամ, ավելի ճիշտ, մեռնող կապիտալիզմ։

(Վ. Ի. Լենին, «Իմպերիալիզմ» էջ. 107—110)։

Գ. ՌՈՒՍԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄ.

Ռուսական իմպերիալիզմը գլխավորապես չէի իմպերիալիզմ է։ 20-րդ դարի առաջին տասնամյակում անկվածային արդյունաբերությունը հասավ չտեսնված ծավալի։ Բացի կարճատև դժվարություններից, որ առաջացավ պատերազմի և հեղափոխության շնորհիվ, նա վոչ մի ճգնաժամ չտեսավ։ Այժմս Ռուսաստանն ապրում է հետևյալ որն այն անհաջող փորձն, որ աշխատում եր փոխել նրա պետական իրավակարգը։ Այլ կերպ ասած, մի փորձ՝ սպառելու նրա արտադրական ուժերը, որոնք սեղմված էին հնացած պետական իրավակարգի ճիրաններում։

Բայց արտադրական ուժերի զարգացման դանդաղումը հավասարազոր է և ներքին շուկայի զարգացման դանդաղեցմանը. այդ շատ լավ զգում եր հենց անկվածագործական արդյունաբերությունը, որի գլխավոր գնողը ժողովրդական մասսաներն են։ Արտադրությունն ավելի արագ է աճում, քան ներքին շուկան, նշանակում է՝ անհրաժեշտ է արտաքին շուկա։ Ստալիպինի ազգայնականությունը (նացիոնալիզմը) բղխում է հեղափոխության վրա տարած հաղթանակից։

Մինչև վերջին որերս ժողովրդի ամենամեծ ուշադրությունը իր վրա չէ գրավում ռուսական իմպերիալիզմի Հեռավոր-Արևելքի թատերաբեմը։ Մոնղոլիայի մասին այնքան շատ աղմկեցին, որ զարմանալի կլիներ, չեթե մարդ այդ մասին բան չլսեր։ Մանջուրիայում և Մոնղոլիայում շատ հարուստ հեռանկարներ կան, բայց առձեռն կարծես թե դեռ վոչինչ չկա։ Ռուսական առևտուրը Չինաստանի հետ ընդհանուր առմամբ առաջվա նման ճնում է պասսիվ, առաջվա պես մենք Չինաստանից ավելի շատ ենք գնում, քան թե ծախում ենք նրան։ Բոլորովին այլ է մերձավոր Արևելքում, բայց այստեղ ձեռք բերած հետևանքները, գոնե մի կետում, չի կարելի հակայական չանվանել։ Ներկայումս պարսկական շուկան ամբողջովին ռուսների ձեռքին է, Պարսկաստանի հետ ունեցած իր շրջանառություններով Ռուսաստանը գրավում է առաջին տեղը, և այն էլ յեվրոպական պետությունների մեջ շատ առաջնակարգ տեղը։ Տաճկական շուկայում առջին տեղը գրավում է դեռևս Անգլիան, ինչպես և ամբողջ 19-րդ դարի ընթացքում։ Բայց վոչ միայն տաճկական ներմուծման նրա բաժինը, այլև անգլիական ներմուծանքի (Տաճկաստանի) բացարձակ մեծությունն արագորեն նվազում է. դրա փոխարեն թե բացարձակ և թե հարաբերականորեն աճում են ռուսական և գերմանական ներմուծումը, բայց վորում առաջինը, թե բացարձակորեն մեծ է և թե արագ է աճում։ Ռուսաստանը Տաճկաստանում հանդիսանում է իբրև Գերմանիայի մրցակիցներից մեկը, վորպես հավակնող անգլիական ժառանգության, և այժմ՝ վոչ դժբախտ մրցակից։ Այստեղից մինչև ժառանգության բաժանման հարցը մի քայլ է։

Այստեղ բուրժուական հայրենասիրական շարժման կենտրոնը, անկասկած, հանդիսանում է Մասկվան, վոր մի ժամանակ և ռուսական անկվածային արդյունաբերության կենտրոնն է, Սրանից է բղխում ռուսական պատմության մեջ գերի կ. Պոլիս ձգտելու գերը։ Ճնե՛ ինձ թույլ կամ պատասխանել մի համեմատությամբ. Ինչ գեր են խաղում մեր գյուղացիական տնտեսության մեջ գերի Սիբիրը կատարած գաղթուկները։ Արդյոք նշանակում են, թե գյուղացիական հին հողաբաժիններ վրա այլևս չի կարելի ինտենսիվ տնտեսություն վարել։ Բոլորովին վոչ. բայց գյուղացիները չեն կարողանում կազմակերպել այդ ավելի ինտենսիվ տնտեսությունը, և դրա համար էլ գաղթում են։ Ի՞նչու ռուսական արդյունաբերությունը ոտաբերկրյա շուկան են վորոնում։ Արդյոք նշանակում է, թե ներքին շուկան արդեն սպառվում է։ Բոլորովին վոչ. այդ ներքին շուկային խանգարում են զարգանալու հին սոցիալ-քաղաքական պայմանները, վորոնք համապատասխանում են կալվածատիրական տնտեսության հնացած կառուցվածքին։ Իսկ կալվածատերերը չեն ցանկանում հրաժարվել այդ պայմաններից։ Ամբողջ տարբերությունը հենց այդ «կարող են» և «ուզում են»-ի այդ սուբյեկտիվ նրբության, յերանդի մեջ է։ Որյեկտիվորեն թե տաճկական պատերազմները, և թե գյուղացիական տեղափոխումները ծառայում եյին մի նպատակի՝ պահպանել ժողովրդական տնտեսության հին տիպը. թե մեկը և թե մյուսները ծառայում եյին տնտեսական, նրա հետ էլ նաև ուրիշ ամեն տեսակ դադարի համար իբրև գործիք։

Ահա թե ինչու դեպի Ցարգրադ (Պոլիս) ձգտելու յերեք փորձերն էլ սերտորեն կապված են վոչ միայն իր ժամանակվա միջազգային հանգամանքների դասավորման, այլ նաև էլ ավելի սերտորեն կապված են Ռուսաստանի ներկայիս ներքին վիճակի հետ։ Ահա թե ինչու Ստալիպինի ժամանակ էլ ռուսական բուրժուազիան սկսեց յերազել իր ատն բալանիքների—նեղուցների մասին, և իզուր չեր, վոր Ստալիպինի արտաքին քաղաքականությունը կատարելապես քաջալերվում եր կադետների, այսինքն, լիբերալ բուրժուազիայի առաջնորդ Միլյուկովի կողմից։ Նա միայն դանում եր, վոր այդ քաղաքականությունը խիստ մեղմ է, պակաս ռազմակողական։

(Պակրովսկի։ «Արտաքին քաղաքականություն» եջ. 157 և հետև. ռուսերեն)։

Դ. ԹԵԶԻՍՆԵՐ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՑԵՎ ԱԶԴԱՅԻՆ ՃՆՇՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Իմպերիալիզմն իրենից ներկայացնում է ֆինանսական կապիտալի տենդենցն իր աճումով դուրս գալու ազգային պետության եջից, նվաճելու անդրովկիանոսյան կալվածներ, վոր է աղբյուր հում մթերքի, ազգային կապիտալի գործադրման վայր և սպառման շուկա, այլև ներկայացնում է տենդենց խոշոր պետական մարմիններ կազմավորելու Ցեվրոպայում, ձուլելով սահմանակից, տնտեսապես իրար լրացնող շրջանները, անկախ նրանց բնակչության ազգային կազմից։ Այդ վերջին տենդենցը հենվում է նաև ռազմագիտական բնույթ ունեցող նկատառումների վրա. վորովհետև իմպերիալիզմը, սրելով հակությունը պետությունների մեջ, ծնունդ է տալիս հարձակողական և պաշտպանողական ձեռնարկների կարիքին։

Այդ իմպերիալիստական տենդենցները գաղութային և կոնտինենտ-

տալ ծավալման ուղղությամբ նշանակում են ազգային հարստահարության ուժեղացումն յեվ ընդհանրացումն, վորը մինչև այժմ միայն պատահում եր խայտաբղետ բնակչություն ունեցող առանձին պետություններում (այսպես կոչված ազգությունների պետություններում), ուր պատմական և աշխարհագրական պատճառներով մի ազգ իշխում եր մյուսների վրա։

2. Այդ ազգային հարստահարությունը ներհակում է բանվոր դասակարգի շահերին։ Նույն իմպերիալիստական բյուրոկրատիան, վոր ազգային հարստահարության որգան է հանդիսանում, դառնում է սեփական ազգի պրոլետարիատի դասակարգային հարստահարության կրող. տիրապետող ազգության պրոլետարիատի դեմ մղվող պայքարում նա գործադրում է այն բոլոր միջոցները, վոր կիրառության են ընդունված հարստահարված ժողովուրդների դեմ։ Ինչ վերաբերում է հարստահարվող ժողովրդի բանվոր դասակարգին՝ ազգային ճնշումը վոչ միայն կասեցնում է նրա դասակարգային պայքարը, կաշկանդելով նրա կազմակերպվելու ազատությունը և իջեցնելով նրա կուլտուրական մակարդակը, այլև նրա մեջ զարթեցնում է համերաշխության զգացում դեպի իր ազգային բուրժուազիան։ Վոտն ու ձեռքը կապած, քաղաքականորեն անբարոյացված նացիոնալիզմով, հարստահարված ժողովրդի պրոլետարիատը դառնում է շահագործման անպաշտպան օբյեկտ և դրա հետ միասին տիրապետող ազգության բանվորների վտանգավոր մրցակիցը (աշխատավարձն իջեցնող, շտրայկբրեխեր)։

Ազգայնորեն խորթ մասերի ստիպողական ձուլումը հաղթական պետության շրջանակի մեջ ստեղծում է պատերազմի նոր օջախներ, վորովհետև պարտված պետությունը ձգտում է հետ նվաճել այդ մասերը—կամ այն պատրվակով, թե նրանք անհրաժեշտ են իրան տնտեսական և ռազմագիտական պատճառներով, կամ նրա համար, վոր ազգային ֆրազները միշտ լավ են քողարկում պարտված պետության իմպերիալիստական քաղաքականությունը։

3. Այս պատճառով սոց.-դեմ. կուսակցությունը պիտի յեռանդագին պայքարե իմպերիալիզմի աննեկսիոնական քաղաքականության և նրա հետևանք՝ ազգային հարստահարության քաղաքականության դեմ։

Իմպերիալիստների այն պնդումին, թե գաղութներ ունենալն անհրաժեշտ է կապիտալիզմի զարգացման համար, սոցիալ.-դեմոկրատիան հակադրում է այն փաստը, թե միջին և Արևմտյան Յեվրոպայում ու Հյուսիս. Ամերիկայի Միաց. Նահանգներում հասել է ժամանակը, վոր կապիտալիզմը սոցիալիզմի փոխանցվի։ Իսկ սոցիալիզմը գաղութների կարիք չի զգում, վորովհետև նա հետամնաց ժողովուրդներին պիտի ցույց տա վոչ յեսասիրական կուլտուրական աջակցություն այնպիսի չափով, վոր առանց տիրապետություն անելու նրանց

վրա, ազատ փոխանակության միջոցով կստանա այն ամենը, ինչ ի վիճակի չե արտադրելու աշխարհագրական դիրքի հետևանքով։ Վոչ թե կապիտալիզմի, զարգացումը, վոչ թե նրա հարատևումը, այլ նրա հաղթահարումն է այժմ հանդիսանում պրոլետարիատի պատմականորեն իրագործելի անելիքը։

Այն պնդումին, թե Յեվրոպայում աննեկսիաներն անհրաժեշտ են հաղթական իմպերիալիստական պետության ռազմագիտական ապահովության և դրա հետ միասին խաղաղության ապահովության համար,—սոցիալ.-դեմոկրատիան հակադրում է այն փաստը, վոր աննեկսիաները սրում են ներհակությունները և դրանով իսկ ավելացնում պատերազմի վտանգը։ Բայց յեթե խնդիրն այդպիսի կերպարանք էլ չունենար, սոց.-դեմոկրատիան չեր կարող ձեռք մեկնել մի հաշտություն կնքելու, վոր հիմնված լիներ ժողովուրդների ճնշման վրա։ Վորովհետև ճանաչելով նման հաշտությունը՝ նա անդունդ կփորեր տիրապետող յեվ հարստահարվող ժողովուրդների պրոլետարիատի միջեվ։ Այն ժամանակ, յերբ տիրապետող ազգության պրոլետարիատն աննեկսիաների ճանաչման հետևանքով հանձն կառներ իմպերիալիստական քաղաքականության պատասխանատվությունը, և հետևաբար, պիտի այնուհետև այն պաշտպաներ, վորով և կդառնար իմպերիալիզմի ստրուկը, ճնշված ազգի պրոլետարիատը կմիանար իր բուրժուազիայի հետ յեվ հանձինս տիրող ազգի պրոլետարիատի իր թշնամին կտեսներ։ Փոխարեն պրոլետարիատի միջազգային դասակարգային պայքարի ընդդեմ միջազգային բուրժուազիայի՝ կստեղծվեր պառակտումն պրոլետարիատի միջեվ, կստացվեր բանվորների գաղափարական անբարոյացում, բանվոր դասակարգն իսպառ կկաշկանդվեր իր ամենօրյա պայքարում, ինչպես և իր պայքարում հանուն սոցիալիզմի, ընդդեմ իմպերիալիզմի։

4. Սոցիալ.-դեմոկրատիայի պայքարի յելակետն ընդդեմ աննեկսիաների, ընդդեմ հարստահարված ժողովուրդներին աննեկսիակատար պետության սահմաններում բռնությամբ պահելուն,—հանդիսանում է հայրենիքի ամեն մի պաշտպանության մերժումը, վորն իմպերիալիզմի եպոխայում պաշտպանություն է իր բուրժուազիայի իրավունքների՝ ճնշելու և կողոպտելու օտար ժողովուրդներ։ Սոցիալ.-դեմոկրատիայի անելիքը կայանում է նրանում, վոր խարանե ազգային հարստահարությունը քանի վոր այն տիրապետող ազգության պրոլետարիատի շահերի դեմ ուղղված մի հարված է։ Այդ անելիքը կայանում է նրանում, վոր հարստահարվածների համար պահանջվեն բոլոր դեմոկրատիկ իրավունքները, իթիվս վորոնց նաև ագիտացիայի ազատությունը քաղաքական անջատման համար, վորովհետև դեմոկրատիկ սկզբունքները պահանջում են ամեն մի ագիտացիայի հակադրել հոգևոր զենք, այլ վոչ բռնություն։ Հետ վանելով այսպիսով ամեն մի պատասխանա-

թյուն հարստահարության իմպերիալիստական քաղաքականության համար, որի դեմ սոց.-դեմ. բուռն պայքար է մղում, նա վոչ մի դեպքում կողմնակից չի ճանդիսանում, որ նոր սահմանապահներ տնկվեն Եվրոպայում, նա կողմնակից չե իմպերիալիզմի կողմից վոչնչացրած սահմանների վերականգնման։ Ուր կապիտալիզմը զարգացել է առանց ինքնուրույն պետության, պատմական զարգացումը ցույց է տվել, որ անկախ պետությունը վոչ մի դեպքում արտադրական ուժերի զարգացման և սոցիալիստական կարգերի մուծման անհրաժեշտ նախադրյալը չի կազմում։ Ուր իմպերիալիզմի անիվը փշրում է արդեն կազմավորված կապիտալիստական պետությունը, այնտեղ իմպերիալիստական հարստահարության բիրտ բռնարար կաղապարներում կատարվում է կապիտալիստական աշխարհի կոնցենտրացիան, որ սոցիալիզմն է նախապատրաստում։ Հենվելով այդ վերլուծմունքը հարուցանող ազգային և տնտեսական հարստահարության հետևանքներին՝ սոցիալ.-դեմոկրատիան պիտի դատապարտե թե հարստահարված, թե հարստահարող ազգությունների մասսաները տոգորվելու համերաշխ պայքարով, որը մեն-միայն իվիճակի կ՚վոչնչացնելու ազգային ճնշումը տնտեսական շահագործման հետ միասին,—առաջնորդելով մարդկությունը իմպերիալիզմի միջով դեպի սոցիալիզմ,

Ցեթե կապիտալիստորեն զարգացած յերկրներում սոցիալ.-դեմոկրատիան իմպերիալիզմի հաղթահարումն չի կարող տեսնել այն բանականորեն հին ազգային պետությունները, յերե, ընդհակառակը,—կորչեն սահմանները—լոգունգով նա պիտի հարթե սոցիալիզմի ուղին վորի տնտեսական նախադրյալներն արդեն հասունացել են,—ապա սոց.-դեմոկրատիայի այս անելիքից բղխում է նաև պահանջ՝ դո՛ւրս գաղութներից,—մի պահանջ, վոր իմպերիալիստական ազգային հարստահարության դեմ մղվող մեր պայքարի պահն է հանդիսանում։ Գաղութները աղբյուրներ են հանդիսանում կապիտալի նոր շահերի համար, վորոնք պիտի յերկարեցնեն նրա կյանքը։ Կապիտալիզմը ջանում է գաղութներից քաղել նույնիսկ ֆիզիքական ուժ, բնիկներից բանակներ կազմակերպելով, վորոնց հարկը պահանջած դեպքում՝ կուղղե հեղափոխական պրոլետարիատի դեմ, ինչպես այժմ—համաշխարհային պատերազմում – նրանց գործադրում է իր մրցակիցների դեմ։ Այդ միջոցային հրաժարիվքը գաղութային ծավալումից (եքսպանսիա), վոր պրոլետարիատը կարող է նվաճել միայն հեղափոխական պայքարի միջոցով, – վոչ մի դեպքում կապիտալիստորեն չզարգացած յերկրների համար չի կարող նշանակել դարձ դեպի բարբարոսություն, ինչպես այդ պնդում են սոցիալ.-իմպերիալիստները։ Արևելքի կարևորագույն յերկրներում (Թյուրքիա, Չինաստան, Հնդկաստան) շատ տարիների

ընթացքում նկատվում է բուրժուական տարրերի աճումն, վորոնք իվիճակի յեն այնտեղ ինքնուրույնաբար կատարելու կապիտալիզմին վերապահված անելիքը, վոր է արտադրողական ուժերի զարգացումն։ Պահանջելով, վոր յեվրոպական կապիտալիզմը հրաժարվի գաղութային ծավալումից՝ սոցիալ.-դեմոկրատիան՝ Եվրոպայում հեղափոխական կրիզիսը սրելու նպատակով՝ պիտի ոգտագործի գաղութային մասաղ բուրժուազիայի պայքարն ընդդեմ յեվրոպական իմպերիալիզմի։ Սոցիալ.-դեմոկրատիան գաղութային յերկրներում պիտի պաշտպանե պրոլետարական պայքարն ընդդեմ յեվրոպական տեղական կապիտալի, նպատակ ունենալով արագացնելու այն մոմենտը, յերբ սոցիալիզմի ժամը կհնչե և Եվրոպայից դուրս. նա նույնպես պիտի ջանա տարածելու և գաղութային պրոլետարիատի մեջ այն գիտակցությունը, թե նրա տեսական շահերը պահանջում են համերաշխանալու չե թե ազգային բուրժուազիայի, այլ սոցիալիզմի համար պայքարող յեվրոպական պրոլետարիատի հետ։

5. Ինչպես վոր անհնարին է ներկայումս կապիտալիստական հիմունքների վրա համապատասխան բավոր դասակարգի շահերին վերակազմել իմպերիալիզմը և վերջ դնել սպառազինություններին, նույնպես անհնարին է նաև գերծ պահել ազգային հարստահարության տեղացիներից, խոնարհեցնել նրան ճանաչելու ազգային իրավունքը։ Այս պատճառով պայքարն ընդդեմ ազգային հարստահարության պետք է վարել իբրեվ պայքար ընդդեմ իմպերիալիզմի, հանուն սոցիալիզմի։

Ազգայնորեն հարստահարվածմասսաների ազատագրության նպատակին հասնելու համար՝ սոցիալ դեմոկրատական պայքարը պետք է սոցիալ-հեղափոխական դառնա, պետք է հետապնդե կապիտալիստական տիրապետության վոչնչացումն։ Վորովհետև՝ միմիայն վոչընչացնելով կապիտալիստական մասնավոր սեփականությունը՝ բանվոր դասակարգը վոչնչացնում է ազգային հարստահարության շահագրգռությունը, վոր լոկ դասակարգային տիրապետության մի մասնիկն է հանդիսանում։ Սոցիալիստական հասարակությունը չպիտի իմանա վորևե ճնշում. նա բոլոր ժողովուրդներին նրանց բոլոր կարիքները միասնաբար լուծելու իրավունքը կընձեռե, ազատություն կրաշխե յուրաքանչյուր քաղաքացու մասնակցել այն խնդրի վորոշման մեջ, վոր ինքը պիտի կատարե ուրիշների հետ միասնաբար։

Ազգային ճնշումը ժխտող պայքարի միախառնումը՝ մասսաների հանուն սոցիալիզմի մղվող հեղափոխական կռվի լայն հեղեղատին չի ճանապարհում այդ պայքարի հետաձգումն անորոշ ժամանակով կամ ապագայի հուսով մխիթարություն ճնշված ժողովուրդների համար։ Վորովհետև

իմպերիալիստական եպոխայի փոթորկալից, ամեն հարաբերություն հեղափոխականացնող հետեվանքները նրան միաժամանակ դարձնում են սոցիալիստական հեղափոխությունների եպոխա, յերբ պրոլետարիատը խուրտակում է բոլոր ուղթաները։

(Վ. Ի. Լենին, «Ազգային հարցը», ժողվածու, հայերեն, եջ. 330—334)։

Ջ. ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ—ՄԱՀԱՑՈՂ ԿԱՊԻՏԱԼԻԶՄ.

Լենինը իմպերիալիզմը անվանում էր «մեռնող կապիտալիզմ»։ Ինչո՞ւ։ Վորովհետև իմպերիալիզմը կապիտալիզմի հակասությունները հասցրեց իր ամենավերջին կետին, ամենավերջին սահմաններին, վորից այն կողմն սկսվում է հեղափոխությունը։ Այդ հակասություններից ամենից կարևորը պետք է համարել յերկաքը։

Առաջին հակասությունը—դա աշխատանքի և կապիտալի հակասությունն է։ Իմպերիալիզմը, արդյունագործական յերկրներում, մոնոպոլիստական տրեստների և սինդիկատների, բանկերի և ֆինանսական ոլիգարխիայի ամենակարողությունն է։ Այդ ամենակարողության դեմ մղած պայքարում բանվոր դասակարգի կովի սովորական մեթոդները՝ արհեստակցական միությունները, կոոպերատիվները, պարլամենտական կուսակցությունները և պարլամենտական պայքարը, բոլորովին անբավարար հանդիսացան։ Իմպերիալիզմը հարյուր միլիոնավոր մասսաների առաջ այսպիսի հարց դրեց՝ կամ նախկին ժամանակների պես անձնատուր յեղիր կապիտալի վողորմության, քարշ տուր քո գոյությունը, սոսրացիր, կամ նոր զենք վերցրու կովի համար։ Իմպերիալիզմը բանվոր դասակարգին մոտեցրեց հեղափոխությանը։

Յերկրորդ հակասությունը—դա ֆինանսական խմբավորումների և իմպերիալիստական պետությունների միջև յեղած հակասությունն է, վոր դրսևորվում է նրանց պայքարում՝ հում նյութերի աղբյուրներ և ոտար յերկրամասեր ձեռք բերելու համար։ Իմպերիալիզմը կապիտալի արտահանությունն է դեպի հում նյութերի աղբյուրները, այդ աղբյուրները մոնոպոլ ձևով տիրապետելու համար մղվող խենթ պայքարն է. պայքար, վոր վարվում է արդեն բաժանված յերկրի պայքարն է. պայքար, վոր մղվում է աշխարհը նորից վերաբաժանելու համար, պայքար, վոր մղվում է առանձին կատաղությամբ «արևի տակ տեղ» փնտրող նոր ֆինանսական խմբավորումների և պետությունների կողմից հին խմբավորումների և պետությունների դեմ, վորոնք շատ ամուր կպած են իրենց գողությունին։ Կապիտալիստների զանազան խմբավորումների միջև այդ խելագար պայքարը նշանակալից է նրանով, վոր պարփակում է իր մեջ, վորպես անխուսափելի մի տարր՝ իմպերիալիստական պատերազմները. պատերազմներ՝ վորոնք մղվում են ոտար տերիտորիաներ

գրավելու համար։ Այդ հանգամանքն իր հերթին նշանակալից է նրանով, վոր նա տանում է իմպերիալիստներին դեպի փոխադարձ թուլացումը և ընդհանրապես թուլացնում է կապիտալիզմի դիրքը, ժոռեցնում է պրոլետարական հեղափոխության մոմենտը և այդ հեղափոխության գործնական անհրաժեշտությունը։

Յերրորդ հակասությունը—դա մի բուռն տիրապետող «քաղաքակիրթ» ազգերի և նրանցից կախում ունեցող յերկրագնդի հարյուր միլիոնավոր գաղութային ժողովրդների միջև յեղած հակասությունն է։ Իմպերիալիզմը, կախումն ունեցող յերկրների և ամենալայն գաղութների հարյուր միլիոնավոր ժողովրդների ամենալիրը և անմարդկային շահագործումն է։ Այդ շահագործման և ճնշման նպատակը գերշահույթ քամելն է։ Բայց շահագործելով այդ յերկրները, իմպերիալիզմը ստիպված է այստեղ կառուցել յերկաթուղային ճանապարհներ, գործարաններ, առևտրական և արդյունագործական կենտրոններ։ Պրոլետարիատի յերևան գալը, ինտելիգենցիայի ծագումը, ազգային ինքնագիտակցության արթնանալը, ազատագրման շարժման ուժեղացումը—այսպիսին են այդ «քաղաքականության» անխուսափելի հետևանքները։ Այդ մասին ակնհայտորեն վկայում է գաղութներում և կախումն ունեցող յերկրներում առանց բացառության հեղափոխական շարժման ուժեղացումը։ Այդ հանգամանքը պրոլետարիատի համար նշանակալից է այն իմաստով, վոր նա արմատից խախտում է կապիտալիզմի դիրքերը, վերափոխելով գաղութները և կախումն ունեցող յերկրները իմպերիալիզմի ռեզերվից պրոլետարական հեղափոխության ռեզերվի։

Այսպիսին են, ընդհանրապես, իմպերիալիզմի գլխավոր հակասությունները, վորոնք փոխարկել են հին «ծաղկող» կապիտալիզմը մեռնող կապիտալիզմի։

Տասը տարի առաջ տեղի ունեցած իմպերիալիստական պատերազմի նշանակությունը, իմիջի այլոց, կայանում է նրանում, վոր նա հավաքելով այդ բոլոր հակասությունները մի հանգույցի մեջ, զգեց նրանց կշեռքի թաթը, արագացնելով և հեշտացնելով պրոլետարիատի հեղափոխական ճակատամարտները։

Ուրիշ կերպ ասած. իմպերիալիզմը վոչ միայն հասցրեց այն բանին, վոր հեղափոխությունը դարձավ գործնական անխուսափելիություն, այլ և այն, վոր ստեղծեց բարենպաստ պայմաններ՝ կապիտալիզմի ամրություններին գրոհ տալու համար։

Այսպես եր լենինիզմը ծնող միջազգային դրությունը։

(Տասլին «Լենինի և լենինիզմի մասին», եջ 29—32)։

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ 1905 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ.

Ա. ՄՈՄԵՆՏԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ

Միանգամայն հասկանալի չէ, որ յուրաքանչյուր անկեղծ հեղափոխական տրամադրիչ և ավելի շատ կարճ ժամկետներ նշանակելու, քան չերկար։ Համենայն դեպս, մեր պրոգնոզն ընդհանրապես ճիշտ եր. հեղափոխությունը չի վերջացել, նրա հիմնական պահանջներն օրյեկտիվորեն չեն իրագործված, պրոլետարիատը և գյուղացիությունը չեն բավարարված, նոր ճակատամարտներն անխուսափելի չեն. վոչ մի պրուսական ուղի մենք չենք ուննենա, այլ կունենանք ռուսական ուղի՝ մեծ սոցիալական հեղաշրջումներով հղի։ Մեր այս գուշակությունները արդարացան։ Այս բոլորը պարզ չեզավ և այն էլ բավական շուտ։

Ստոկհոլմի համագումարը զուգադիպեց կադետական՝ լիբերալ բուրժուազիայի, կուսակցության շքմեղնող հաղթանակի հետ առաջին Պետական Դումայի ընտրությունների ժամանակ։ Նա Դումայում մեծ քանակությամբ տեղ ստացավ և դրա հետ միասին առաջին ռուսական պարլամենտի քաղաքական ղեկավարությունը՝ վորպես նրա նախագահ անցկացնելով տերահռչակ Մուրոմցևին։ Կադետական կուսակցությունն առաջինն եր Պետական Դումայում, իսկ նրա ղեկավարները՝ Նաբոկովը և ուրիշները՝ գլխավոր պարլամենտական հռետորները։ Վերջին հաշվով, առաջին Դուման ռուսական լիբերալ-բուրժուական կուսակցության խոշոր հաղթանակն եր, վորն իրեն կոնստիտուցիոն-դեմոկրատիկ եր անվանում (կ.-դ., այսահղից և՝ «կադետ» բառը)։ Չրապարակի վրա յեր շատ լուրջ քաղաքական ֆակտոր, և բանվորական կուսակցության առաջ հարց հարուցվեց, թե ինչպիսի վերաբերմունք պետք է ունենալ դեպի այդ փաստը։

Մենշևիկյան կենտրոնական կոմիտեն, վոր այն ժամանակ կուսակցության ղեկավարն եր, հիացած եր կադետների հաղթանակով։ Նա այն կարծիքին եր, վոր Ռուսաստանում նոր դարաշրջան է սկսվում, և վոր կոնստիտուցիոն-դեմոկրատիկ կուսակցության հաղթանակը՝ հաստատելով նրա հայացքները՝ կոգնի յերկրին խաղաղությամբ լուծելու հողային և շատ այլ արմատական հարցերը։ Ցավ ահա մենշևիկները հռչակեցին հետևյալ լոզունգը.—կադետական կամ, ինչպես այն ժամանակ եին արտահայտվում, պատասխանատու մինիստրություն, այսինքն այնպիսին, վորը պատասխանատու կլինի վոչ թե ցարի, այլ Պետական Դումայի առաջ։ Այս առհասարակ բոլոր բուրժուական պարլամենտների դասական ֆորմուլան է։ Նրանք միշտ այդպես են վարվում. մինիստրությունը կարծես թե պատասխանատու յե պարլամենտի առաջ, իսկ իրականության մեջ նա պատասխանատու յե մի խումբ

քանկիրների առաջ։ Հենց վոր մենշևիկյան սոցիալ-դեմոկրատիան հրաժարվեց հետևյալ լոզունգը, նրա կողմնակիցները բանվորական թաղերում պատասխանատու մինիստրության ագիտացիա սկսեցին։ Ինչպես տեսնում եք, մենշևիկները տրամաբանորեն եին դատում և, իրենք իրենց հավատարիմ, այստեղ էլ նրանք իրենց սիրելի բուրժուազիային ոժանդակելու հող եին փնտռում։ Բայց այստեղ նրանք տանուլ տվին. այս լոզունգը տապալեց մենշևիկներին և ոգնեց մեզ Պետերբուրգում մեծամասնություն գրավելու։ Հիշում եմ, վոր Վիբորգի թաղը, վորտեղ այն ժամանակ շատ գործարաններ եին աշխատում, ամբողջովին մենշևիկյան եր։ Մեզ՝ մեղավոր բայշևիկներիս բանվորներն այնտեղ հազիվ-հազ եին լսում, բայց հենց վոր գործը հասավ պատասխանատու կադետական մինիստրության լոզունգին, նրանց համար էլ պարզ յեղավ, վոր մենշևիկյան տաքտիկան հանգեց բուրժուական մինիստրության ոժանդակության. պատկերը փոխվեց։ Այդ րոպեից սկսած մենշևիկներն սկսեցին Վիբորգի թաղում գործարան գործարանի յետևից կորցնել։ Շուտով Պետերբուրգի քաղաքային կոնֆերանսն էլ մենշևիկյան լոզունգին հակառակ արտահայտվեց։ Այդ կոնֆերանսը տեղի ունեցավ Ֆինլանդիայում, վորն այն ժամանակ համեմատաբար ազատ եր ապրում։ Հիշում եմ, շաբաթ որը լրտեսների մի ամբողջ բանդայի հայացքների տարափի տակ, մենք գնացք նստեցինք Ֆինլանդական կայարանում և մեկնեցինք Տերիոկի։ Ամբողջ կիրակի որն այնտեղ կոնֆերանս եր տեղի ունենում, և լինում եին րոպեներ, յերբ գործը քիչ եր ճում վոր մենշևիկների և բայշևիկների միջև տուր ու դմփոցի հասներ։ Վերջապես, չնայած մենշևիկյան կենտրոնական կոմիտեի ճնշմանը, մեզ հաղթվեց առաջին անգամ Պետերբուրգում մեծամասնություն ստանալ, իսկ հետո նաև մի շարք այլ քաղաքներում։ Այս փաստն արդեն կիսով չափ հանում եր մատուսական ժաշտաթով հաղթանակ եր, վորովհետև Պետերբուրգը յերկրի քաղաքական կենտրոնն եր։ Մենշևիկյան կենտրոնական կոմիտեն բայշևիկյան Պետերբուրգյան կոմիտեի առաջ անզոր եր, և բուժական լրագրերն այն ժամանակ սիրում եին կատակել՝ ասելով, վոր մանր բայշևիկյան Պետերբուրգյան կոմիտեն հաղթեց մեծ մենշևիկյան կենտրոնական կոմիտեին։

Առաջին Պետական Դուման՝ չնայած նրան, վոր նրա մեջ քաղաքական ղեկավարությունը կադետներին եր պատկանում, պետք է արձանագրի հեղափոխական, ժանավանդ գյուղական շարժման, վոր գնալով աճում եր, և ստիպված եր, թեև բավական անվճռողաբար, հողային հարցը դնել։ Այս հողի վրա նրա և ցարական կառավարության միջև կոնֆլիկտ առաջացավ։ Առաջին Դուման ցրեցին։ Կադետական կուսակցությունը նույնպես Ֆինլանդիա գնաց անլեգալ կոնֆե-

բանս գոժարելու և այնտեղ հրատարակեց տխրահռչակ վիբորգյան կոչը, որը հետո անվանում էին «վիբորգյան կարկանդակ»։ Այս դուման կամենար բնակչությանը կոչ ներ անուն հարկերը չտալ և ըստ էության այն հեղափոխական ժեստի կրկնությունն եր, որը թույլ տվին իրենց լիբերալները 1848 թվի հեղափոխության ժամանակ, յերբ նրանք գրպանների մեջ բռունցք էին ցույց տալիս այն ժամանակվա միապետությանը՝ չհամարձակվելով լրջորեն ոժանդակել հեղափոխական պայքարին և առաջուց գիտենալով, որ հարկեր չվճարելու նրանց կոչին վոչ վոք չի պատասխանի։ Ցարական միապետությունը լուրջ բանի տեղ չընդունեց, իհարկե, «վիբորգյան կարկանդակը» և թխողներին յերեք ամսվա բանտարկության դատապարտեց—շատ դարտակ պատիժ։

Առաջին Պետական Դուման գրումը փոքրիկ ապահարզան եր ցարիզմի և լիբերալ բուրժուազիայի միջև։ Բայց նա շուտով մոռացվեց, և յերկրորդ Դումայում յերկու կողմերի միջև ընդհանուր առմամբ բավականի բարեկամական հարաբերություններ սահմանվեցին, իսկ լիբերալ բուրժուազիայի մի մասն սկսեց ուղղակի ջատագովել Ստալիպինին։

Յերկրորդ Պետական Դուման գրելուց հետո ցարական միապետությունը յերրորդի հարցը դրեց՝ «թեթև» ուղղումներ մտցնելով ընտրական որենքի մեջ, այն ել չափազանց հետաքրքիր ձևով։ Գլխավոր ուղղումն այն եր, վոր գյուղացիներն ընտրական իրավունքներից զրկվում էին։ (Բանվորները զրկվելու վոչինչ չունեյին, վորովհետև առանց այն ել նրանք գրեթե վոչ մի ընտրական իրավունք չունեյին)։ Այս միջոցը միանգամայն հասկանալի յեր։ Մինչև յերրորդ Դուման վատում եր նույնիսկ ցարական միապետության այնպիսի խելացի ներկայացուցիչը, ինչպիսին եր Պաբեդոնոսցևը։ Միապետականները կարծում էին, թե պետք է հենվել, գյուղացու վրա. նա չի դավաճանի, նրա հետ կարելի յե լեզու գտնել, գյուղացին հավատում է հայր-ցարին և նրա դեմ չի գնա։ Սակայն յերկրորդ Դուման ցույց տվեց ցարիզմին, վոր գյուղացին ել կորցնում է իր հավատը դեպի ցարը։ Յեվ ահա ընտրական որենքի նկատմամբ կատարված գլխավոր վիրահատությունն այն եր, վոր գյուղացիներից խլվեց ընտրական իրավունքը։ Յեվ այդ բավական հմուտ կերպով կատարվեց։ Գյուղացի ընտրողները պետք է կալվածատերերի ժողի միջով անցնեյին, վորոնք մեծամասնություն ունեյին և ընտրում էին այն գյուղացուն, վորը նրանց ավելի յեր դուր գալիս։ Այսպիսով, յերկրորդ և յերրորդ Դումայի ընթացքում միապետության գլխավոր եվոլյուցիան այն եր, վոր նա կորցրեց դեպի գյուղացին ունեցած իր հավատը և, իհարկե, այն պատճառով, վոր գյուղացին ինքը կորցրեց իր հավատը դեպի նա։

Կուսակցության առաջ հարց հարուցվեց. պե՞տք է, արդյոք, մասնակցել յերրորդ Պետական Դումային, վորը, պարզ է, վոր սև հարյուրակային և լինելու։ Այստեղ բայլևիկների մեջ սկսվեցին լուրջ տարաձայնություններ։ Նրանց մեծ մասն արտահայտվեց մասնակցելու դեմ և հոդուտ Պետական Դումայի բոյկոտի՝ հուսալով, վոր նույնը կհաջողվի անել, ինչ վոր 1905 թվին բուլիգինյան Դումայի նկատմամբ արվեց։ Բայլևիկյան ֆրակցիայում ուժեղ պայքար սկսվեց։ Ընկ. Լենինը շատ քիչ թվով կողմնակիցների հետ պաշտպանում եր յերրորդ Դումային մասնակցելու տեսակետը, սակայն բայլևիկների գլխավոր մասը դրան հակառակ եր։ Հանդես յեկան բրոշյուրներ, վորոնք ապացուցում էին վոր յեթե Լենինը ցանկանում է, վոր բանվորները մասնակցեն այն-պիսի սև հարյուրակային Դումային, ինչպիսին յերրորդը կլինի, ուրեմն նա աջացել է։ Սրանց նա պատասխանում եր.—Յերրորդ Դուման փա-րա է. սակայն յեթե բանվոր դասակարգի շահը պահանջում է, վոր մենք վորոշ ժամանակ փարախում նստենք, մենք այդ կանենք։ Ընկ. Լենինի պատճառաբանությունն հետևյալն եր. 1905 թվին ուժե-րի հարաբերությունն այնպես եր, վոր այսոր կամ վաղը հեղափոխու-թյունը կբռնկվի, և մենք կհաղթենք թե ցարական միապետությանը և թե Բուլիգինյան Դումային։ 1907 թվին այսպիսի հարաբերություն գոյություն չուներ, և պարզ եր, վոր ցարական միապետությունը ևս մի քանի տարվա ապահով կյանք ուներ, վոր այժմ նրան մեջտեղից վերացնել մենք չենք կարող, յեթե մենք բոյկոտի յենթարկենք Դու-ման, նա, այնուամենայնիվ, կգումարվի, և մենք պետք է մի քանի տարվա ծանր ռեակցիայի պատրաստվենք. սև հարյուրակային Դու-ման փարախ կլինի, բայց այնտեղ ել մենք կարող ենք բանվոր դա-սակարգին վորոշ ոգուտ բերել Դումայի ամբիոնն ագիտացիայի գենք դարձնելով։

(Գ. Զինովև։ «Ռ.կ.կ. (բ.) պատմությունը», եջ 129—135)։

Բ. ՌԵԱԿՑԻԱՅԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

1907 թվի, հունիսի 3-ին արձակվում է յերկրորդ Դուման. հակա-ռակ իր սեփական սահմանադրության՝ ցարական կառավարությունը քամահաճ կերպով փոխում է ընտրական որենքը, վորպեսզի Դումայի մեջ կալվածատերերի և քաղաքային խոշոր բուրժուազիայի համար ապահովի ամուր ու հաստատուն մեծամասնություն։ Այդ ժամանակ-ներն արդեն յերկրի մեջ մասսայական հեղափոխական շարժումը հա-մարյա բոլորովին մարում է։

Այդ ժամանակ Լենինի հետ ընդհարվում են՝ սեփական ցնորքների և իր ուժերի գնահատության մեջ վրիպել և ասելով. միևնույն ժամանակ

բանս գուժարելու և այնտեղ հրատարակեց տխրահռչակ վիբորգյան կոչը, որը հետո անվանում եին «վիբորգյան կարկանդակ»։ Այս դուկումենտը բնակչությանը կոչ եր անում հարկերը չտալ և ըստ եության այն հեղափոխական ժեստի կրկնությունն եր, որը թույլ տվին իրենց լիբերալները 1848 թվի հեղափոխության ժամանակ, յերբ նրանք գրպաններում բռունցք եին ցույց տալիս այն ժամանակվա միապետությանը՝ չհամարձակվելով լրջորեն ոժանդակել հեղափոխական պայքարին և առաջուց գիտենալով, որ հարկեր չվճարելու նրանց կոչին վոչ վոք չի պատասխանի։ Ցարական միապետությունը լուրջ բանի տեղ չընդունեց, իհարկե, «վիբորգյան կարկանդակը» և թխողներին յերեք ամսվա բանտարկության դատապարտեց—շատ դարտակ պատիժ։

Առաջին Պետական Դումայի գրումը փոքրիկ ապահարզան եր ցարիզմի և լիբերալ բուրժուազիայի միջև։ Բայց նա շուտով մոռացվեց, և յերկրորդ Դումայում յերկու կողմերի միջև ընդհանուր առմամբ բավականի բարեկամական հարաբերություններ սահմանվեցին, իսկ լիբերալ բուրժուազիայի մի մասն սկսեց ուղղակի չատագովել Ստալիպինին։

Յերկրորդ Պետական Դուման ցրելուց հետո ցարական միապետությունը յերրորդի հարցը դրեց՝ «թեթև» ուղղումներ մտցնելով ընտրական որենքի մեջ, այն ել չափազանց հետաքրքիր ձևով։ Գլխավոր ուղղումն այն եր, որ գյուղացիներն ընտրական իրավունքներից զրկվում եին։ (Բանվորները զրկվելու վոչինչ չունեին, վորովհետև առանց այն ել նրանք գրեթե վոչ մի ընտրական իրավունք չունեին)։ Այս միջոցը միանգամայն հասկանալի յեր։ Մինչև յերրորդ Դուման ինքնակալությունը դեռևս վորոշ հույսեր ուներ գեղջուկից։ Նրան հավատում եր նույնիսկ ցարական միապետության այնպիսի խելացի ներկայացուցիչը, ինչպիսին եր Պաբեդոնոսցևը։ Միապետականները կարծում եին, թե պետք է հենվել, գյուղացու վրա. նա չի դավաճանի, նրա հետ կարելի յե լեզու գտնել, գյուղացին հավատում է հայրցարին և նրա դեմ չի գնա։ Սակայն յերկրորդ Դուման ցույց տվեց ցարիզմին, որ գյուղացին ել կորցնում է իր հավատը դեպի ցարը։ Ցեվ ահա ընտրական որենքի նկատմամբ կատարված գլխավոր վիրահատությունն այն եր, որ գյուղացիներից խլվեց ընտրական իրավունքը։ Ցեվ այդ բավական հմուտ կերպով կատարվեց։ Գյուղացի ընտրողները պետք է կալվածատերերի ժողի միջով անցնեին, որոնք մեծամասնություն ունենային և ընտրում եին այն գյուղացուն, որը նրանց ավելի յեր դուր գալիս։ Այսպիսով, յերկրորդ և յերրորդ Դումայի ընթացքում միապետության գլխավոր եվոլյուցիան այն եր, որ նա կորցրեց դեպի գյուղացին ունեցած իր հավատը և, իհարկե, այն պատճառով, որ գյուղացին ինքը կորցրեց իր հավատը դեպի նա։

Կուսակցության առաջ հարց հարուցվեց.պե՞տք է,արդյոք,մասնակցել յերրորդ Պետական Դումային, որը, պարզ է, որ սև հարյուրակային է լինելու։ Այստեղ բայլևիկների մեջ սկսվեցին լուրջ տարաձայնություններ։ Նրանց մեծ մասն արտահայտվեց մասնակցելու դեմ և հոգուտ Պետական Դումայի բոյկոտի՝ հուսալով, որ նույնը կհաջողվի անել, ինչ որ 1905 թվին բուլիգինյան Դումայի նկատմամբ արվեց։ Բայլևիկյան ֆրակցիայում ուժեղ պայքար սկսվեց։ Ընկ. Լենինը շատ քիչ թվով կողմնակիցների հետ պաշտպանում եր յերրորդ Դումային մասնակցելու տեսակետը, սակայն բայլևիկների գլխավոր մասը դրան հակառակ եր։ Հանդես յեկան բրոշյուրներ, որոնք ապացուցում եին վոր յեթե Լենինը ցանկանում է, վոր բանվորները մասնակցեն այնպիսի սև հարյուրակային Դումային, ինչպիսին յերրորդը կլինի, ուրեմն նա աջացել է։ Սրանց նա պատասխանում եր.—Յերրորդ Դուման փարախ է. սակայն յեթե բանվոր դասակարգի շահը պահանջում է, վոր մենք վորոշ ժամանակ փարախում նստենք, մենք այդ կանենք։ Ընկ. Լենինի պատճառաբանությունն հետևյալն եր. 1905 թվին ուժերի հարաբերությունն այնպես եր, վոր այսոր կամ վաղը հեղափոխությունը կբռնկվի, և մենք կհաղթենք թե ցարական միապետությանը և թե Բուլիգինյան Դումային։ 1907 թվին այսպիսի հարաբերություն գոյություն չուներ, և պարզ եր, վոր ցարական միապետությունը ևս մի քանի տարվա ապահով կյանք ուներ, վոր այժմ նրան մեջտեղից վերացնել մենք չենք կարող, յեթե մենք բոյկոտի յենթարկենք Դուման, նա, այնուամենայնիվ, կգումարվի, և մենք պետք է մի քանի տարվա ծանր ռեակցիայի պատրաստվենք. սև հարյուրակային Դուման փարախ կլինի, բայց այնտեղ ել մենք կարող ենք բանվոր դասակարգին վորոշ ոգուտ բերել Դումայի ամբիոնն ագիտացիայի գենք դարձնելով։

(Գ. Զինովև։ «Ռ.կ.կ. (բ.) պատմությունը», եջ 129—135)։

Բ. ՌԵԱԿՑԻԱՅԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

1907 թվի, հունիսի 3-ին արձակվում է յերկրորդ Դուման. հակառակ իր սեփական սահմանադրության՝ ցարական կառավարությունը քմահաճ կերպով փոխում է ընտրական որենքը, վորպեսզի Դումայի մեջ կալվածատերերի և քաղաքային խոշոր բուրժուազիայի համար ապահովի ամուր ու հաստատուն մեծամասնություն։ Այդ ժամանակներն արդեն յերկրի մեջ մասսայական հեղափոխական շարժումը հաժարյա բոլորովին մարում է։

Այդ ժամանակ Լենինի հետ ընդհարվում են՝ սեփական ցնորքների և իր ուժերի գնահատության մեջ վրիպել և ասելով. միևնույն ժամանակ

մեղադրում են և իրենց, վոր պրոլետարիատի բռնկումներին բավարար դիմադրություն ցույց չավին։

Մյուս հակառակորդը սեփական ֆրակցիայի ներսումն եր։ Այնտեղ դեռ բոլորը բավարար ճկունություն չունեյին, վորպեսզի պատմական շրջումներն անեյին իր ժամանակին։ Մեծ է թեքության, իներցիայի, սերտած ֆորմուլաների ուժը։

Բայց Վ. Ի. Լենինը կարողանում է վոչ միայն շրջել, այլ և ղեկավարել իր ֆրակցիան։ 1907 թվի հուլիսին կուսակցական կոնֆերենցիայում, վորը քննվում եր յերրորդ Դումայի բոյկոտի հարցը, Լենինը բոյշևիկյան պատգամավորներից մեկն եր, վոր արտահայտվեց հակառակ բոյկոտի։ Կոնֆերենցիայից հետո նա իր տեսակետն անց է կացնում Պետերբուրգի կազմակերպության մեջ, վորը բանվորական բոյշևիզմի լավագույն մասն եր հանդիսանում։ 1907 թվի վերջերին ֆրակցիայի այն աննշան մասն է մնում միայն բոյկոտի կարծիքին, վորը իր ավարտն է գտնում ոտզովիզմի և ուլտիմատիզմի մեջ։

1908 թվականի դեկտեմբերին կուսակցական կոնֆերենցիայում Լենինը վճռական ճակատամարտ է տալիս լիկվիդատորության։ Այստեղ պարզվում է, վոր պահպանված կուսակցական կազմակերպություններ հակայական մեծամասնությունը կանգնած է բոյշևիկյան տեսակետի վրա։ «Ընթացիկ մոմենտի գնահատության մասին» հոդվածի մեջ Վ. Ի. Լենինը տալիս է քաղաքական վիճակի բնութագիրը, խստորեն սահմաններ գծելով և առանձնանալով հեղափոխության մենշևիկական լիկվիդատորությունից։

> «Ինքնակալության և նրա՝ Դումայում, ինչպես և Դումայից ոգնությամբ վարած ընդհանուր քաղաքականության թեքումը դեպի բոնապարտիզմը և դեպի հողային քաղաքականությունը սրացնում և ընդարձակում է այն հակասությունը, վոր գոյություն ունի մի կողմից սև՝ հարյուրակային ինքնակալության և վայրի կալվածատերերի տիրապետության, իսկ մյուս կողմից՝ բուվանդակ յերկրի տնտեսական և հասարակական զարգացման պահանջների միջև։ Ագրարային հարցում (կալվածատիրական հողերի զրավում) սոցիալ-դեմոկրատիայի կողմից հեղափոխական-դեմոկրատիկ պահանջների վրա պնդելն հատկապես անհրաժեշտ է մի այդպիսի մոմենտում։ Գյուղի աղքատանալը, արդյունաբերության մեջ տեղի ունեցող ճնշումները, տվյալ քաղաքական վիճակի անելանելիության և տխրահռչակ խաղաղ-սահմանադրական ճանապարհի անհուսալիության ընդհանուր գիտակցությունը ծնում են հեղափոխական ճգնաժամի նորանոր տարրեր։ Մեր անելիքն այժմ այն չե, վոր արհեստական յեղանակով ստեղծագործենք ինչ վոր նոր լոզունգներ (ինչպես որինակ՝ «Կորչի Դուման» լոզունգը—«Կորչի ինքնակալությունը» լոզունգի փոխարեն), այլ կուսակական անլեգալ կազմակերպության ամրացումը (հակառակ մենշևիկների ռեակցիոն վոռնոցին) և լայն հեղափոխական սոցիալ-դեմոկրատական ագիտացիայի զարգացումը. մի ագիտացիա, վորը սերտորեն շաղկապում է կուսակցությունը պրոլետարիատի մասսաների հետ ու մոբիլիզացիայի յե յենթարկում այդ մասսաները։ («Պրոլետարի», № 38, 1908 թ.)։

1908 թվականի վերջին ամիսների և 1909 թվականի առաջին ամիսների ընթացքում բոյշևիկյան ֆրակցիայի ներսում ստեղծված հասունանում են պառակտման հիմքերը։

«Բոյշևիկների մեծամասնությունը, վոր անկեղծորեն տարված եր հունիսի 3-ի հերոսների հետ անմիջորեն և անհապաղ կռվելու ցանկությամբ, հակվեց յերրորդ Դումայի բոյկոտի գաղափարին, սակայն շատ շուտով կարողացավ հաղթահարել ստեղծված նոր դրությունը։ Նրանք սերտած բառեր չեյին կրկնում, այլ ուշադիր կերպով դիտում եյին պատմական նոր պայմանները, խորհում եյին այն մասին, թե ինչո՞ւ կյանքը ընթացավ այսպես, և վոչ այլ կերպ, աշխատում եյին գլխով և վոչ թե միայն լեզվով. նրանք տանում եյին լուրջ և տոկուն պրոլետարական աշխատանք, և նրանք արագ կերպով ըմբռնեցին ոտզովիզմի բովանդակ անմտությունը, նրա ամբողջ վողորմելիությունը։ Ուրիշները կառչում եյին բառերին, սկսում եյին անմարսելի բառերից կազմել իրենց «գիծը», սկսում եյին աղաղակել բոյշևիզմի, ուլտիմատիզմի, ոտզովիզմի մասին, սկսում եյին այդպիսի աղաղակներով փոխարինել պրոլետ-հեղափոխական աշխատանքը, վորը նախ և առաջ թելադրված եր տվյալ պատմական պայմանների կողմից, սկսում եյին նոր ֆրակցիայի մեջ առնել բոյշևիզմի ամեն տեսակ խակ և տհաս տարրերին։ Ձեզ ազատ ճանապարհ, սիրելիներս։ Մենք արեցինք ամեն բան, ինչ կարող եյինք, վորպեսզի ձեզ սովորեցնենք մարքսիզմը և ընտելացնենք սոցիալ-դեմոկրատական աշխատանքին։ Մենք այժմ ամենաանհաշտ և վճռական կռիվ ենք հայտարարում աջ ու ձախ լիկվիդատորներին, վորոնք բանվորական կուսակցությունը այլասերում են տեսական ըմբռնումով ու քաղաքականության և տակտիկայի մեղչանական մեթոդներով»։ («Լենին—Պրոլետարիյ», № 77—48)։

Վ. Ի. Լենինը չվախեցավ իր ֆրակցիայի պառակտումից, կանգ չառնելով վոչ այսպես կոչված դիվանագիտական նկատառումների և վոչ մենշևիկների չարախնդ հռհռոցների առաջ, վորոնք «բոյշևիզմի քայքայումը» տեսնելու բավականությունից իրենց ձեռքերն եյին տրորում... Սակայն չե՞ վոր պատահական ու աննշան բանի մասին

չեր խոսքը։ Ոտզովիստների ֆրակցիայի պարագլուխը Մոսկվայի աշխատավոր աչքի ընկնող և տաղանդավոր Ստանիսլավ Վոլսկին եր, հետագայում Խորհրդային Իշխանության հասցեին գրված նենգամիտ պասկվիլների հեղինակը։ Իսկ իրենց ուլտիմատումների շարքն եյին դասում Վ. Ի. Լենինի 1905—06 թ. թ. շրջանի ամենամոտիկ գինակիցները՝ Ա. Բոգդանով (Կ. Կոմիտեսի միքանի կազմերի անդամ). Լ. Կրասին (նուլնը), Շանցեր—Մարատ (1905 թվականի վերջերում տեղի ունեցած Մոսկվայի զինված ապստամբության կազմակերպողը), Ա. Լունաչարսկի («Հառաջ» և «Պրոլետարի» թերթերի խմբագրության անդամ)։ Վ. Ի. Լենինը կարողանում եր մեծ զոհաբերություններ անել, յերբ այդ պահանջում եր գործի շահը...

Ֆրակցիայի ղեկավարությունը նա ստիպված եր այժմ բաժանել 1905—06 թ. թ. հեղափոխության առաջ քաշած և այնուհետև Վ. Ի. Լենինի հետ կողք կողքի աշխատող մյուս ընկերների հետ։ Սրանցից առաջիններն եյին Լ. Բ. Կամենևը և Գ. Զինովյևը։

Բայլշևիկյան ֆրակցիայի ներսում կատարված պառակտումի հետ զուգորդվում և Վ. Ի. Լենինի հետևյալ փիլիսոփայական աշխատանքի լույս տեսնումը. «Մատերիալիզմ և Եմպիրիոկրիտիցիզմ։ Մի րեակցիոն փիլիսոփայության մասին»։ Այս գիրքը ուղղված և Մախի և Ավենարիուսի փիլիսոփայության դեմ, վոր Բոգդանովի և Լունաչարսկու շնորհիվ մի ժամանակ շատ տարածված եր կուսակցական և մասնավորապես բայլշևիկական շրջաններում և նույնիսկ հավակնություն ուներ բայլշևիզմի պաշտոնական փիլիսոփայությունը դառնալու։ Վ. Ի. Լենինն իր գրքով մեանգամ ընդմիշտ վերջ դրեց այդ չհիմնավորված հավակնությանը և Բոգդանովի շարադրած Մախի փիլիսոփայությունը վերադարձրեց անեության այն վիճակին, վորի մեջ նա դատապարտվեցավ մնալ մինչև իր ժամանակ մեծ աղմուկ հանած և այժմ բոլորովին մոռացված. Ա. Բոգդանովի «Եմպիրիմոնիզմի մասին» շարադրած գրքի յերևան գալը։

1909 թվականի Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական բանվորական կուսակցությունը հասավ կազմակերպչական տարրալուծման իր վերջին աստիճանին։ Ռուսաստանում, բացի միքանի խոշոր կենտրոններից, կուսակցական աշխատանքն համարյա բոլորովին մեռավ։ Վոր ոշ կենտրոններում նա ելի մի կերպ առաջ եր գնում՝ ամեն կողմից շրջապատված լինելով վոստիկանական պրովոկացիայի ցանցերով։ Ինչ վերաբերում և արտասահմանին, այստեղ համարյա որ չեր անցնում առանց մի վորևե նոր ֆրակցիայի հանդես գալու։ Համակուսակցական կենտրոնի ուժը համարյա բոլորովին չքացավեց։

Կ. Կոմիտեսի բազմաթիվ անդամները, վորոնք ընտրվել եյին Լոնդոնի համագումարում, կուսակցական աշխատանքներից բոլորովին հեռացան։

Մնացել եյին հետևյալ ֆրակցիաները (աջից ձախ). 1) Պաշտոնական մենշևիկական կենտրոնը, վոր հրատարակում եր «Սոցիալ-Դեմոկրատի ձայն» թերթը և վորի ղեկավարները Մարտովը, Դանը և Ակսելրոդն եյին։ Թերթն իր եջերում տեղ եր տալիս լիկվիդատորական հոդվածներին, պաշտոնապես պաշտպանում եր բայլշևիկական հարձակումներից լիկվիդատորությունը և վարում եր ամենակատաղի հալածանք բայլշևիկների դեմ։ 2) Տրոցկու հաշտարար խմբակը Վիեննայում, վորի մեջ բացի Տրոցկուց մտնում եյին Իոֆֆե, Ուրիցկի և ուրիշները,—և վորը հրատարակում եր «Պրավդա» թերթը։ «Պրավդան» ցույց եր տալիս վոր բայլշևիկների ու մենշևիկների միջև անհաշտ հակասություններ չկան, խոսքերով մեղադրում եր լիկվիդատորությունը, սակայն մենշևիկական պաշտոնական տեսակետը չեր համարում լիկվիդատորական։

Տրոցկու «Պրավդա»-ն արտահայտվում եր հոգուտ բոլոր ֆրակցիաների հաշտեցման և միավորման և խիստ կերպով հարձակվում եր բայլշևիկների վրա, վոր նրանք չեյին ցանկանում այդպիսի միավորում։ 3) Մենշևիկ—կուսակցականների մի խմբակ, Պլեխանովի գլխավորությամբ, վորը դեռ 1908 թվի վերջերից խզել եր իր կապերը պաշտոնական մենշևիզմի հետ, իսկ 1909 թվի աշնանը վերսկսել «Սոցիալ-Դեմոկրատի որագիրը», թերթի հրատարակությունը։ Այս խմբակը խիստ կերպով դուրս եր գալիս լիկվիդատորների դեմ, պահանջելով նրանց հեռացումը կուսակցությունից։ Այստեղ աշխատակցում եյին Դենևկինցկի, Ալեքսեյ Մոսկովսկին (Ռուդնև) և միքանի ուրիշները։ 4) Բայլշևիկ-կուսակցականների խմբակ՝ Ա. Լոզովսկու գլխավորությամբ վոր մոտ եր կանգնած մենշևիկ-կուսացականներին և համաձայներ Վ. Ի. Լենինի կազմակերպչական քաղաքականությանը 5) Բայլշևիկական պաշտոնական կենտրոն՝ ղեկավարությամբ Լենինի, Դուբրովսկու, Կամենևի, Զինովյևի և ուրիշների։

(Ծակ. Ա. Ցակովլև և Ն. Ն. Պապով։ «Լենին և լենինիզմ», եջ 28—34)։

Գ. ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ԼԻԿՎԻԴԱՏՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Լիկվիդատորությունը խոսքի նեղ իմաստով, մենշևիկների լիկվիդատորությունը կայանում է սոցիալիստական պրոլետարիատի հեղափոխական դասակարգային պայքարի բացառման մեջ ընդհանրապես և մասնավորապես պրոլետարիատի հեգեմոնիայի բացառումով մեր բուրժուա դեմոկրատական հեղափոխության մեջ։ Այդ բացառումը, հարկավ, տարբեր ձևեր և ընդունում, տեղի յե ունենում ավելի կամ պակաս գիտակցաբար, սաստիկ, հետևողաբար...

կազմակերպչորեն լիկվիդատորությունն անլեգալ սոց.-դեմ. կուսակցության անհրաժեշտության բացասումն է և հարակից դրան հրաժարվում Ռ. Ս. Դ. Բ. կ.-ից, հեռացում նրանից, պայքար նրա դեմ լեգալ մամուլի էջերում, լեգալ բանվորական կազմակերպություններում, արհեստակցական միություններում, կոոպերատիվներում, համագումարներում, ուր բանվորական պատգամավորներ են մասնակցում և այլն։ Մենշևիկների նման լիկվիդատորության որինակներով է լի Ռուսաստանի կուսակցական կազմակերպություններից յուրաքանչյուրի պատմությունը վերջին յերկու տարիներում։

Մենշևիկները գումար չեն տալիս լիկվիդատորության այդ բոլոր արտահայտություններին։ Նրանք մասամբ ծածկում են այդ, մասամբ իրանք են ժոլորվում, չգիտակցելով առանձին փաստերի նշանակությունը, ժճգճվելով մանրուքի, այլանդակություններին, անձնավորությունների մեջ, չկարողանալով հանրացնել, չըմբռնելով տեղի ունեցող յերևույթի իմաստը։

Իսկ այդ իմաստը կայանում է նրանում, որ բանվորական կուսակցության ոպպորտյունիստական թևը բուրժուական հեղափոխության շրջանում, յերբ տիրում է կրիզիս, փլուզում և քայքայում, անխուսափելիորեն պիտի կամ գլխովին լիկվիդատորական լինի կամ լիկվիդատորների գերին։ Բուրժուական հեղափոխության շրջանում անխուսափելի յերևույթ է, որ պրոլետարական կուսակցության միևնույն ժանր-բուրժուական ուղեկիցները (գերմաներեն դա Mitläuter), որոնք ամենից քիչ են ընդունակ յուրացնելու պրոլետարական թեորիան ու տակտիկան, ամենից քիչ են ընդունակ տոկուն ձևալուր փլուզումի շրջանում, ավելի շատ են հակված ոպպորտյունիզմը վախճանին հասցնելու։ Փլուզում է, և մենշևիկ-ինտելիգենտների, լիկվիդատոր-մենշևիկների մասսան փաստորեն լքեցրել է դարձել։ Ինտելիգենցիան յետ խուժեց կուսակցությունից, հետևաբար ամենից ավելի քայքայվեցին մենշևիկական կազմակերպությունները։ Այն մենշևիկները, որ անկեղծորեն համակրում էին պրոլետարիատին և պրոլետարական դասակարգային պայքարին, պրոլետարական հեղափոխական թեորիան (իսկ այդպիսի մենշևիկները միշտ յեղել են—հեղափոխության մեջ իրանց ոպպորտյունիզմն արդարացնող մի ցանկությամբ՝ հաշվառել սիտուացիայի բոլոր շրջադարձերը, մճգճված պատմական ուղիի բոլոր կեռմաններըը), «մի անգամ ել փոքրամասնության մեջ» մնացին, փոքրամասնության մեջ մենշևիկների (փոքրամասնականները) շարքերում առանց վճռականության՝ պայքար մղելու լիկվիդատորների դեմ, առանց ուժի՝ վարելու համար այդ պայքարը հաջողությամբ։

(Վ. Լենին, Յերկերի ժողովածու, հ. XI մ. 1, էջ 272—275)։

Դ. «ԹԱՐՍ» ԼԻԿՎԻԴԱՏՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՅՐԵՎԻԿՆԵՐԻ ՄԵՋ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Բայրևիկների վրա յի բարդվում կուսակցությունն առաջնորդելու գործը։ Առաջնորդելու համար պիտի ճանաչել ուղին, պիտի վերջ տալ տատանումներին, պիտի դադարել ժամանակ վատնելուց. համոզում ես տատանվողներին, պայքար ես վարում ֆրակցիայի մեջ անհամաձայն յեղողների դեմ։ Ոտզովիզմը և նրա գիրկը գլորվող ուլտիմատիզմը չեն ներդաշնակվում այն աշխատանքի հետ, ինչ տվյալ պարագաներն այժմ պահանջում են հեղափոխական սոց.-դեմոկրատներից։ Հեղափոխության ընթացքում մենք սովորել ենք «ֆրանսերեն խոսել», այսինքն շարժման մեջ մուծել առաջ խթանող լոզունգների ծայրագույն չափը, բարձրացնել անմիջական մասսայական պայքարի յեռանդն ու թափը։ Մենք այժմ անշարժության, ռեակցիայի, փլուզումի պահուն պիտի սովորենք «գերմաներեն խոսել», այսինքն գործել դանդաղորեն (այլ կերպ չի կարելի, քանի նոր վերելք չկինի), սիստեմատիկորեն, համառորեն, շարժվելով քայլ առ քայլ, նվաճելով վերշոկը վերշոկի յետևից։ Ում համար ցանկալի յի այս աշխատանքը, ով չի ըմբռնում սոց.-դեմ. տակտիկայի հեղափոխական հիմքերի պահպանության ու զարգացման անհրաժեշտությունը և այս ճանապարհին, ճանապարհի այս շրջադարձի վրա, նա իզուր է իր վրա առնում մարքսիստի անունը։

Մեր կուսակցությունը չի կարող առաջ ընթանալ առանց նրան, վոր վճռականորեն լիկվիդացիայի յենթարկի լիկվիդատորությունը։ Իսկ լիկվիդատորությանն է վերաբերում վոչ միայն մենշևիկների ուղղակի լիկվիդատորությունը և նրանց ոպպորտյունիստական տակտիկան։ Սրան է վերաբերում և թարս մենշևիզմը։ Սրան է վերաբերում ոտզովիզմը և ուլտիմատիզմը, վորոնք հակազդում են, վորպեսզի կուսակցությունը կատարե հերթական խնդիրը, վորը մոմենտի ինքնորինակ առանձնահատկությունն է կազմում, մի խնդիր, վորը նպատակ ունի ոգտագործելու դումայի ամբիոնը և հենակետներ ստեղծելու բանվոր դասակարգի ամեն տեսակի կիսալեգալ ու լեգալ կազմակերպություններից։ Սրան է վերաբերում աստվածաշինարարությունը և աստվածաշինարար տենդենցների պաշտպանությունը, վոր արժատի մեջ իր կապերն է խզում մարքսիզմի հիմունքներից։ Սրան է վերաբերում բայրևիկների կուսակցական խնդիրների անըմբռնումը, խնդիրներ, վորոնք 1906—1907 թ. թ. կայանում եյին մենշևիկական կ. կ. տապալելու մեջ, վորը չեր կոթնում կուսակցության մեծամասնության վրա (չե թե լեհերն ու լատիշները, անգամ բունդիստները չեյին պաշտպանում այն ժամանակ դուտ մենշևիկական կ. կ.), խնդիրներ, վորոնք

այժմ կայանում են կուսակցական տարրերի համբերատար դաստիարակության, նրանց համախմբման, իսկապես միասնական և կուռ պրոլետարական կուսակցություն ստեղծելու մեջ։ Բայլշևիկները հակակուսակցական տարրերի դեմ 1903—1905 և 1906—1907 թվականներին մեծ իրանց անհաշտ պայքարով հող էին հարթել կուսակցականության համար։ Բայլշևիկներն այժմ պիտի կուսակցություն կառուցեին, ֆրակցիայից կուսակցություն կառուցեին, կուսակցություն կառուցեին այն դիրքերի ոգնությամբ, որոնք նվաճված են ֆրակցիոն պայքարով։

(Վ. Լենին, Ցերկերի ժողովածու, հ. XI, մ. 1, եջ 276—279)։

Ե. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ.

Արդյունաբերության վերելքի հետ և կապված նայիվ հեղափոխության նոր վերելքը բանվորների մեջ, որի սկիզբը կարելի է համարել մոտավորապես 1911 թիվը։ Այդ վերելքը տեղի ունեցավ այնպիսի պայմաններում, որոնք եյապես տարբերվում էին այն վերելքի պայմաններից, որոնք 1905 թվի հեղափոխությունն առաջ բերին։

Բանն այն եր, որ չնայած ռեյակցիայի կատաղի գործունեության՝ այնուամենայնիվ որոշ հնարավորություն եր ծագել բանվորների մեջ լեգալ կազմակերպչական աշխատանք տանելու։ Ճիշտ է, մինչև անգամ այն մարդիկ, որոնք աշխատում էին իսկական լեգալ (օրինական) շրջանակում, նրանք էլ վոստիկանական հալածանքի, ձերբակալության էին ենթարկվում։ Բայց և այնպես այդ հալածանքներն ավելի թույլ էին, քան կուսակցության անլեգալ կազմակերպության անդամների հալածանքը։ Ցեվ մինչև ձերբակալությունը մարդ կարողանում եր մի որևե բան անել վոչ թե անլեգալ նեղ խմբակում, այլ բանվորության ավելի լայն շերտերում։

Այդպիսով լեգալ հնարավորություններ էին (այն էլ սարսափելի խուզված) պետական դումաև, արհեստակցական միությունները, բանվորական ակումբները, լուսավորական միությունները, յերեկոյան դասախոսությունները, բուրժուական համագումարներին մասնակցելը, բանվորական լեգալ մամուլը և հետագայում էլ բանվորական ապահովագրական (հիվանդանոցային) դանձարկղները։

«Լեգալ հնարավորություններին» նկատմամբ կուսակցության մեջ յերեք հոսանքներ նկատվեցին։

Բայլշևիկների մի մասը ընդունում եր, որ Պետական Դումաև և մյուս լեգալ հնարավորություններն ու կազմակերպությունները բոյկոտի պիտի ենթարկել։ Յերրորդ Դումաև անցան սոցիալ—դեմոկրատների պատգամավորները, դրա համար էլ բոյկոտիստները պահանջում

էին վոր կուսակցությունը պատգամավորներին դուրսից յետ կանչի։ Այս հոսանքի կողմնակիցները «ոտղովիստներ» մականունն ստացան։ Մի քանի տարի հետո, բանվորական շարժման նոր վերելքի հետ միասին ոտղովիզմը ինքնստինքյան հալվեց։

Բայլշևիկների մեծամասնությունը և մենշևիկների մի մասը լեգալ հնարավորությունների ոգտագործման կողմն էին կանգնած, բայց մի պայմանով՝ կուսակցության անլեգալ գոյության պայմաններում, վորը կհամախմբի և կլրացնի լեգալ կազմակերպության գործունեությունը, ղեկավարելով հեղափոխական Ս.-Դ.-ի լայն խնդիրներով։

Վերջապես յերրորդ հոսանքը, մեծ մասամբ, մենշևիկների շարքերում, պահանջում եր, վոր կուսակցությունը լիկվիդացիայի ենթարկվի։ Այդ հոսանքն սկսեց բացարձակ պայքար մղել կուսակցության անլեգալ գոյություն ունենալու դեմ։ Լիկվիդատորների առաջնորդները և հրահրողներն էին Ա. Պոտրեսովը, Ֆ. Դանը և մենշևիկական ուրիշ դրականագետներ՝ այդ ուղղության որգան «Նաշա Զարյա»-ի միջոցով։ Ս.-Դ. կուսակցության նկատմամբ լիկվիդատորների արտահայտած ամենացայտուն լոզունգն եր Դանի ասած խոսքերը. «հակալիկվիդատորությունը (այսինքն, պայքարը կուսակցության գոյության համար) նրանց առաջ է կանգնած դեմ առ դեմ՝ (բանվորական շարժման) իբրև անհաշտելի հակառակորդ, վորին պիտի բացարձակ կռվում հաղթահարել... Հակալիկվիդատորությունը հավիտենական արգելակ է, հավիտենական քայքայում... պետք է ամբողջ ուժով աշխատել նրան սպանել հենց այժմ»։

Կուսակցության վոչնչացման այդ լոզունգի պայմաններում բնական է, վոր արդեն չեր կարող լինել կուսակցության այն միասնական դոյությունը, վոր տեղի ունեցավ 1906 թվին Ստոկհոլմի միացյալ համագումարում և հաստատվեց 1907 թվին Լոնդոնի համագումարում։ Պայքարելով հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի դեմ՝ մենշևիկները 1912 թվին ոգոստոսին իրենց սեփական կենտրոնը կազմեցին՝ կազմակերպչական կոմիտե, վորը Պետական դուման Ս.-Դ. ֆրակցիայի ներսում ստեղծեց անտանելի փոխհարաբերություն, վորը և հաստցրեց պառակտման և բալշևիկների կողմից Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական ֆրակցիայի, կազմակերպման և կանգնեց իբրև պաշտպան չխուզված լոզունգների, իսկ դրանք հանդում էին հետևյալ յերեք «կետ»-երին (հայհոյական մականուն, վոր տվել էին մենշևիկները)։

1. Դեմոկրատական կազմակերպություն (գրաքննիչի պատճառով լեգալ թերթերում տպվում եր «իսկական և բազմակողմանի քաղաքական դեմոկրատիա»)։

2. 8—ժամյա բանվորական որ (պարզվեց, վոր այս պահանջն

առաջադրվում եր վորպես պրոլետարիատի մյուս բոլոր տնտեսական նվաճումների հիմք)։

3. Կալվածատիրական հողերի հանձնումը գյուղացիներին առանց մի վորև վճարի։

Սրա փոխարեն լիկվիդատորները առաջադրեցին կոալիցիաների (միությունների) ազատություն և քաղաքական ուրիշ առանձին իրավունքներ։

(Ոլմինսկի, Մ. «Զվեզդայի» և «Պրավդայի» եղոխայեց», հատոր 1-ին, ռուսերեն)։

Զ. ԼԵՆԱՅԻ ՑՈՒՑԵՐԸ
(15 ապր. 1912 թ.)

Լենայի հեռավոր հանքերում վորոտացին կապիտալի վարձկանների համազարկերը, և այդ համազարկերով շարքից դուրս բերվեցին վիրավոր և սպանված 500 բանվոր։ Սրանց դատավճիռը հուղեց բանվոր մասսաներին մինչև հոգու խորքերը։ Բողոքի աղաղակը արագությամբ տարածվեց ամբողջ Ռուսաստանում՝ ցնցելով գործարանների և արտարածվեց ամբողջ Ռուսաստանում՝ ցնցելով գործարանների և արտադրամասերի հեստանոցների կանգ առած մթնոլորտը։ Լիկվիդատորական վերքով ջարդված, բզկտված, քայքայված պրոլետարիատը տարերայնորեն վոտքի յելավ։

Քաղաքի ինչպես կենտրոնը, նույնպես և ծայրամասերը լիքն եյին տասնյակ հազարավոր ցուցարարներով։ Նրանք կապել եյին վողջների. այս ու այն տեղ թնդում եր մարսելյոզը, լսվում մահվան քայլերգի յեղանակը և կամ հնչում՝ «Հավերժ հիշատակ»։ Այս ու այն կողմը բազմության գլխին ծածանվում եյին կարմիր դրոշակներ, վորոնց վրա կատաղորեն նետվում եյին վոստիկանության և ժանդարմների հրանոթները, կազակների չոկատները։ Ժանդարմների և վոստիկանների հրանոթները խիտ շղթաներով փակել եյին առանձին փողոցները և, շղթայելով ցուցարարների բազմությունը, հեռացնում եյին նրանց կենտրոնից, կամ ցուցարարների սոսկալի ծեծ յեր տեղի ունենում։

Լենայի սպանդանոցի և Լենայի հսկայական ցույցի արձագանքները արագությամբ տարածվեցին Ռուսաստանում։ Ընդհարումներ բռնկվեցին Մոսկվայում, Կիյևում, Վարշավայում *...

Այս շարժումը չեր կարող կանգ առնել, յերբ 3 րդ դումայում

*) «Կառավարական պաշտոնական հաշվետվություններն, ինչպես սրանց մասին հաղորդում է «Правда»-ն, 1913 թ. փետրվարի 12-ի №. 239-ում, ցույց են տալիս, վոր ընդհարումներին մասնակցողների թիվը 1912 թ. ընթացքում հասնում եր 6,837,361 բանվորի, ընդհարումների թիվը մինչին հաշվով 1918 եր, վորոնցից քաղաքական, 1216—511,300 մասնակցողներով՝ այս ընդհարումներից 90-ն յեղան Լենայի և մայիսյան ընդհարումների ժամանակամիջոցում» (Բ. Իվանով)։

ոպպոզիցիայի կողմից Լենայի գնդակահարության մասին արված հարցումին ներքին գործոց մինիստր Մակարովի բերանով հնչեց կատարյալ ծաղր ու ծանակ բանվոր պասակարդի հասցեին, վորպես պատասխան. «Այդպես յեղել ե, այդպես էլ կլինի»,—այսինքն՝ դնդակահարում եյինք և կդնդակահարենք...

Լենայի սպանդանոցը կյանքի կոչեց կուսակցական կենտրոնները. ամենուրեք միություններում յերևան յեկան կուսակցական խմբակներ, կուսակցության կենդանի կապը հասավ գործարաններին, արհեստանոցներին, լիկվիդատորության համար որստորե աճում եր բալշևիկյան ազդեցության ուժեղացման մեծ վտանգը...

Յեռում եր բալշևիկների կուսակցական խմբերի անկուսակցական ակտիվ բանվորների աշխատանքը։ Կազմակերպում եյին բանվորական ակտիվ խմբեր, արհեստանոցների և գործարանների ներկայացուցիչների գաղտնի ժողովները, ուր դնում եյին ընդհարման հարցը։ Վոստիկանությունն ու պահնորդական բաժինն էլ իրենց հերթին նույնպես հավաքում եյին իրենց ուժերը.—տեղի եյին ունենում մասսայական ձերբակալություններ ու խուզարկություններ...

Այս որերը վերջապես իրականացրին Ռուսաստանի բանվոր դասակարգի վաղեմի իղձերը. ապրիլի 22-ին լույս տեսավ վաղուց սպասվող բանվորական «Պրավդա» լրագիրը...

(Բ. Իվանով—«Զվեզդան» և «Պրավդան»—և 1908—1913 թ. թ. բանվորական շարժումը», ռուսերեն)։

Ը. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՆՈՒԹՅՈՒՆԸ

1910 թվին, հունվար ամսին, գլխավորապես ընկ. Ինոկենտիի ջանքերի հետևանքով, բալշևիկյան կենտրոնը համաձայնություն կնքեց միացած բոլոր ֆրակցիոնական կազմակերպություններին, ինչպես և ազգային սոցիալ.-դեմոկրատ կուսակցությունների հետ (Լետներ, Լատիշներ, Բունդ). այս համաձայնությունը դատապարտում եր ամեն տեսակ աջ ու ձախ շեղում և ընդունում եր մի ընդհանուր կենտրոնական կոմիտեի հեղինակությունը։ Լենինի վերաբերմունքը բացասական եր այդ համաձայնության նկատմամբ։ Վորոշում են կ. կոմիտեը Ռուսաստան տեղափոխել, սակայն կ. կոմիտեի մենշևիկ թեկնածուները հրաժարվում են նրա մեջ մտնել ակնհայտնի լիկվիդատորական պատճառաբանությամբ (նրանք միասակար եյին համարում անվնգալ կ. կոմիտեի գոյությունը)։ Համաձայնությունը վիժում է։ Դրանից հետո, բալշևիկյան կենտրոնը՝ Լենինի գլխավորությամբ՝ բանակցություններ է սկսում Պլեխանովի խմբակի և Լետների հետ (1911 թվին), նրանց հետ միասին կազմելով այսպես կոչված արտասահմանյան

յան կազմակերպչական Հանձնաժողով։ Հանձնաժողովը կենսունակ չի դուրս գալիս և շուտով լուծվում, քայքայվում է։ Այն ժամանակ բայլշեիկները ստեղծում են անկախ, ինքնուրույն «Ռուսաստանի Կազմակերպչական Հանձնաժողով», որին և հաջողվում է Պրագայում, 1912 թվի հունվար ամսին, ընդհանուր կուսակցական կոնֆերենցիա հրավիրել։ Այս կոնֆերենցիան մեր կուսակցության պատմության մեջ պատմական մի շրջադարձ հանդիսացավ։ Այդ որից կուսակցությունը թողնում է ֆրակցիաների իր ֆեդերատիվ բնույթը և դառնում է ուսբայլշեիկական։ Ուրիշ խոսքով, ընկ. Լենինն իր յերկաթե ձեռքերի մեջ է վերցնում մի նոր կուսակցության կառուցումը, ուսբայլշեիկական հիմքերի վրա։ Նրա առաջարկությամբ կոնֆերենցիան իրան է վերապահում կուսակցության համագումարի իրավունքները, նոր Կ. Կոմիտետ է-ընտրում և լիկվիդատորականությունը կուսակցությունից դուրս է հայտարարում։ Փոքրիկ կրճատումներով առաջ բերենք 1912 թվականի հունվարյան կոնֆերենցիայի պատմական ռեզոլյուցիան լիկվիդատորականության մասին. Ինկատի ունենալով։

1. Վոր Ռուսաստանի Սոցիալ.-դեմոկրատական բանվորական կուսակցությունը արդեն չորս տարի յե վճռական կռիվ է մղում լիկվիդատորականության դեմ, վորը դեռ 1908 թ. դեկտեմբերյան կոնֆերենցիայում հայտարարված եր, վորպես կուսակցական ինտելիգենցիայի մի մասի ձգտում՝ լիկվիդացիայի յենթարկել Ռ. Ս. Դ. Բ. Կ. գոյություն ունեցող կազմակերպությունը և նրա փոխարեն՝ ինչ գնով ել վոր լինի՝ առաջ բերել անձև, անբովանդակ միավորություն՝ որինական նության շրջանակի մեջ, թեկուզ և դա ձեռք բերվեր կուսակցության ծրագրից, նրա գործնականից և ավանդություններից հրաժարվելու գնով։

2. Վոր Կ. Կոմիտետի պլենումը 1910 թվի հունվարին, շարունակելով կռիվը այդ հոսանքի դեմ, միաձայն ընդունել է, վոր դա բուրժուազիայի ազդեցության մի արտահայտությունն է պրոլետարիատի վրա և վորպես իրական կուսակցական միության մի պայման՝ վորոշել է լիակատար անջատում և կապերի խզում լիկվիդատորականության հետ և վերջնական հաղթահարում սոցիալիզմի նկատմամբ կատարված բուրժուական այդ շեղումների։

3. Վոր հակառակ կուսակցության բոլոր վորոշումներին և 1910 թվին պլենումի մեջ բոլոր ֆրակցիաների ներկայացուցիչների տված պարտավորությանը, «Наша Заря» և «Дело Жизни» ժուռնալների շուրջը խմբված սոցիալ.-դեմոկրատների մի մասը բացարձակ կերպով պաշտպան է կանգնում այն հոսանքին, վորը ամբողջ կուսակցության կողմից պրոլետարիատի վրա բուրժուազիայի ունեցած ազդեցության արդյունք է ճանաչվել։

4. Վոր Կ. Կ.-ի նախկին անդամները վոչ միայն հրաժարվեցին

1910 թվի գարնանը Կ. Կ.-ի մեջ մտնել, այլ և հրաժարվեցին նույնիսկ մի նիստի գալ ներկայանալ, վորպեսզի հնարավոր լիներ նոր անդամներ կոոպտացիա անել, և բացարձակ հայտնեցին, վոր կուսակցության Կ. Կոմիտեյի գոյությունն իսկ ժամանակավոր են համարում։

5. Վոր լիկվիդատորների հիշյալ գլխավոր հրատարակությունները՝ «Наша Заря» և «Дело Жизни», հատկապես 1910 թվի պլենումից հետո, իրանց ամբողջ գծով դարձան դեպի լիկվիդատորականությունն, վոչ միայն նվաստացնելով անլեգալ կուսակցության նշանակությունը այլ ուղղակի բացասելով նրան, հայտարարելով կուսակցությունը մի դիակ, համարելով նրան արդեն վերջացած, հայտարարելով անլեգալ կուսակցության վերահաստատումը վորպես մի ռեակցիոն ուտոպիա, լեգալ ժուրնալների էջերից անլեգալ կուսակցության հասցեին հայհոյանքներ և զրպարտություններ թափելով, հրավիրելով բանվորներին կուսակցության բջիջներն ու նրա կազմակերպությունը արդեն մեռած համարել և այլն։

6. Վոր այն ժամանակ, յերբ ամբողջ Ռուսաստանում կուսակցականները՝ առանց ֆրակցիաների խորության՝ միացան կուսակցական կոնֆերենցիա հրավիրելու հերթական գործում, լիկվիդատորները, անջատվելով ու կազմելով միանգամայն անկախ խմբակներ, զատվեցին գավառներում, նույնիսկ այնպիսի վայրերում, վորտեղ գերակշռում են կուսակցական մենշևիկները և վերջնականապես հրաժարվեցին Ռ, Ս. Դ.-Բ. Կ. տեղական կազմակերպությունների հետ վորևե կապ ունենալուց—կոնֆերենցիան գնում է, վոր «Наша Заря» և «Дело Жизни» ժուրնալների (վորոնք փաստորեն մենշևիկական ֆրակցիայի պաշտոնական որգաններն էին) խմբակը իր վարմունքով իրան վերջնականապես դուրս է արել կուսակցությունից...

Արտասահմանում գոյություն ունեցող բազմաթիվ ֆրակցիոնական կենտրոնները (մենշևիկները, Պլեխանովի խմբակը, Տրոցկու խմբակը, «Հառաջ»-ի խմբակը) հունվարյան կոնֆերենցիայի վորոշումների դեմ ամենակատաղի կռիվ հայտարարեցին, հրաժարվեցին ընդունել այդ կոնֆերենցիայի և նրա ընտրած Կ. Կոմիտետի իրավազորությունը։ Բայց դրա փոխարեն Ռուսաստանում կուսակցական դեկավարող կենտրոնի վերահաստատության և ֆրակցիոնական յերկպառակությունների արմատական լիկվիդացիայի լուրերը հրճվանքով ընդունվեցին։

Դրանից հետո արդեն կուսակցության անլեգալ ապարատի վերահաստատումն արագ քայլերով առաջ է գնում Ռուսաստանում։ Նրա դեկավարությամբ տեղի ունեցան չորրորդ Դումայի ընտրությունները, ըստ վորում այն բոլոր վեց նահանգներում, վորտեղ թույլ եր տրվում

բանվորներից հատուկ ներկայացուցիչներ ունենալ, բացառապես բոլշևիկ պատգամավորներ են անցնում։ 1912 թվի մայիսից սկսում է լույս տեսնել բանվորական ամենօրյա թերթ «Правда» անունով, հետզհետե բոլշևիկների ձեռքն են անցնում բոլոր բանվորական լեգալ կազմակերպությունները, մասնավորապես արհեստակցական միությունները (սկսած Պետերբուրգի մետալիստների միությունից) և ապահովագրական որգանները։ Այս ամբողջ աշխատանքը կատարվում է ընկ. Լենինի սիստեմատիկ ղեկավարության տակ։ Նա այդ նպատակով Պրիպից տեղափոխվում է Կրակով, այնտեղ բնակություն հաստատում, գտնվելով այսպիսով Ռուսաստանի անմիջական սահմանին մոտ։

1912 թվից սկսած արդեն արագ կերպով բարձրանում է Ռուսաստանում քաղաքական կյանքի տեմպը՝ մասնավորապես բանվորական շարժման աճումը։ Կուսակցությունն իր ազդեցությունը տարածում է պրոլետարիատի այն նոր սերունդի վրա, որը 1905-6 թվականների հեղափոխությունից հետո եր գալիս։ Շարունակվում և ամենաանխնա կռիվը լիկվիդատորության, ինչպես և նրան պաշտպանող դանազան մանր ֆրակցիոնական կազմակերպությունների դեմ, մի կռիվ, որը վերջ ի վերջո լիկվիդատորականությունը մեկուսացնում և բանվորական դասակարգի բոլոր քիչ թե շատ հեղափոխական տարրերից և նրան քաղաքական կղզիացման դատապարտում։ Լիկվիդատորների ջանքերը՝ կուսակցության հետ մրցման մտնելու, թեկուզ լեգալ ասպարեզում, չեն հաջողվում։ Բավական է ասել, որ «Правда»-ն տասնյակ հազար որինակներով և լույս տեսնում, ամենաջերմ աջակցության և համակրության հանդիպելով շարքային բանվորների կողմից, մինչդեռ լիկվիդատորներին չի հաջողվում իրանց թերթի տիրաժը տաս հազարից բարձրացնել, չնայած այն զգալի ֆինանսական ոժանդակությանը որ նրանք ստանում եյին բուրժուազիական աղբյուրներից։

Այսպիսով կուսակցությունը Վլադիմիր Իլյիչի յերկաթե ձեռքերով դուրս բերվելով ճգնաժամից, աշ կողմից ազատագրվելով լիկվիդատորականությունից և ձախից՝ հեղափոխական ֆրազների ուտոպիստներից—չնայած ամենայն տեսակ պատակտումների և անջատումների—բանվոր դասակարգի հեղափոխական մասսայական շարժման հենց սկզբից գլուխ է կանգնում այդ շարժմանն ու բանվորական խավերին, կարողանում և վերահաստատել իր անլեգալ ապարատը և նրա ոգնությամբ իրան յենթարկել բանվորական դասակարգի բոլոր լեգալ ձևերը, վերջապես կարողանում է իր հին կենտրոնների շուրջը միացնել այն հազարավոր առաջավոր բանվորներին, վորոնք հանդես եյին յեկել հեղափոխական նոր հարձանքների որերին և վորոնք կազմեցին այնուհետև այն նոր կուսակցական հիմնական մասսան, վորի հետ կուսակցությունը դիմեց դեպի յերկրորդ հեղափոխությունը։

(Ն. Ն. Պապով և Յակ. Ա. Յակովլև։ «Լենին և Լենինիզմ», էջ. 35—39)։

---

4. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ II-ՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

Ա. ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ ՅԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ.

Գաղութային քաղաքականությունը ներկայումս հետևյալ նպատակների յի հետապնդում։ Տալ իր յերկրին, կամ ավելի ճիշտ, նրա կապիտալիստներին ապրանքներ վաճառելու համար մոնոպոլ շուկա, կապիտալիստներին ապրանքներ վաճառելու համար մոնոպոլ շուկա, հում նյութ ստանալու համար մոնոպոլ աղբյուր (կաուչուկ, նավթ, քամքակ) և ամեն տեսակի արդյունաբերական կամ գյուղատնտեսական ձեռնարկություններ կառուցելու մոնոպոլ իրավունքը, ինչպես նաև տեղափոխելու այնտեղ իր «ավելորդ» ազգաբնակությունը, վորն ավելորդ է միայն այն պատճառով, վոր տանը նա արտադրության միջոցներ չունի կամ աշխատանք չի գտնում այն պատճառով, վոր կապիտալի տերերը իրենց համար ավելի շահավետ են գտնում նոր ձեռնարկություններ բանալ գաղութներում։

Կապիտալի բոլոր յերեք տեսակներից էլ (առևտրական, արդյունաբերական և դրամական) վերջին մրցումը ոտար շուկաներում իր պետության արտաքին քաղաքականությունից առանձնապես պահանջում եր ընդարձակել գաղութները և ազդեցության շրջանները։

Մի ժամանակ հողային կապիտալն ակցիոներական և բանկային կապիտալի ձևով, իրեն մոտ, տանն, իրեն՝ է յենթարկում արդյունաբերությունն և առևտուրը, վորի շնորհիվ և պետության մեջ նրա դերը մեծանում է։ Նա դառնում է ազգի առաջնորդ և նրա վզին և փաթաթում իր իդեալներն ու նպատակները։ Գաղութների ընդարձակման այդ ձգտումը քաղաքականության մեջ բաց է անում իմպերիալիզմի նոր դարաշրջան։

Շնորհիվ Անգլիայի գաղութային տիրապետությունների տերիտորիալ մեծության և խիտ ազգաբնակության, վորոնք ձեռք են բերված շատ ավելի վաղ, քան այժմ առաջացած մինչազգային հարաբերությունները, անգլիական իմպերիալիզմը յեվրոպական ուրիշ պետությունների նկատմամբ չեր կարող ագրեսիվ բնավորություն ունենալ։ Անգլիական իմպերիալիզմի խնդիրը վոչ թե նոր գաղութներ ձեռք բերելն է, այլ հները իր ձեռքում ամրացնելը։ Այդ պատճառով էլ անգլիական իմպերիալիզմը, գլխավորապես, կրում է պաշտպանողական բնույթ։

Այստեղից է բղխում Անգլիական արտաքին քաղաքականության հիմնական խնդիրը՝ խանգարել ուրիշ ուժեղ պետությունների կազմվելուն, վորոնք կկարողանան ձեռք գարնել իր տիրապետություններին։

Գերմանիայում հանգամանքները բոլորովին այլ կերպ դասավորվեցին։ Այն ժամանակ, յերբ Գերմանիան բռնեց գաղութների ընդար-

ձակման ուղին, ամբողջ աշխարհն հավաբյա թե բաժանված եր մյուս պետությունների միջև, և Անգլիայի առյուծի բաժինն ապահովված եր նրա տիրապետությունների վաղեմիությամբ։ Դեռևս ելի ՃՈւմ եր միքանի մեծ շրջաններ, վորտեղ «խաղաղ ընդարձակման» ճանապարհներով կարելի յեր հասնել նշանակալից հետևանքների։ Այդ շրջաններն եյին— Տաճկաստանը, Մարոքկոն, Պարսկաստանը և Չինաստանը Հին աշխարհում և հարավ ամերիկյան հանրապետությունները՝ Նորում։ 20-րդ դարի սկզբին գերմանական արտաքին քաղաքականության համաշխարհային խնդիրները վորոշվում եյին այսպես. թույլ չտալ, վոր առանց իրեն կոնպհնսացիա տալու ուրիշ պետություններ նոր հողամասեր ձեռք բերեն, և միաժամանակ ամեն մի հնարավոր բան անել իր գաղութներն ու կիսագաղութները ընդարձակելու համար։

Այս հողի վրա յեր, վոր ծագեց պատերազմը, և ահա համառոտակի ի մի բերենք այն, ինչ բանի վոր այս սպանդանոցում ձգտում եյին մեծ պետությունները։

Այժմյան պատերազմում տաճկական հարցը առաջնակարգ դեր եր խաղում։ Տաճկաստանի բաժանումը—ահա պատերազմող պետությունների խմբավորումներից մեկի ծրագրային գլխավոր կետերից մեկը։ Տաճկաստանին վերջնականապես իր կողմը պահել—ահա մյուս խմբավորման ծրագիրը։

Հարուստ վաստակը, վոր տաճկական պատառը խոստանում է յերկու կոալիցիաների բուրժուազիային էլ՝ արբեցնում են կառավարող շրջաններին, մթագնում համաշխարհային քաղաքագետների գլուխները, բորբոքում նրանց ախորժակները, ստեղծում կապիտալի մրցությունը։

Գերմանիան ձգտում է ստանալ Փոքր Ասիան, Միջագետքը, Բելգիական և ֆրանսիական Կոնգոն, Նիդերլանդական Հնդկաստանը, պորտուգալական գաղութները, Մարոքկոն, միացնել մի տերիտորիայի մեջ իր հարավ արևմտյան և հարավ աֆրիկական տիրապետությունները և յեթե կարելի յե խլել Անգլիայից նրա աֆրիկական գաղութների մի մասը։ Հետո Գերմանիան կուվում է նրա համար, վորպեսզի ամրացնի իր անբաժան իշխանությունը Տաճկաստանի վրա։ Բացի դրանից Գերմանիան դեմ չե «ուղղելու» իր սահմանները ինչպես ռուսական Լեհաստանի և յենթարկելու իրեն Բելգիայի այն մասը, վորն իրեն անհրաժեշտ և իբրև մի սարճանակ՝ ուղղված Անգլիայի դեմ։

Ֆրանսիան ձգտում եր ստանալ Սիրիան, վուլր Ասիայի մի մասը, գերմանական տիրապետությունները Աֆրիկայում։ Բայի դրանից, նրա պատերազմում Ֆրանսիայի համար վճռվում եր այն հարցը, թե արդյոք նա պահելու յե այն ընդարձակ գաղութային տիրապետությունները, վոր նա ձեռք և բերել վերջին տասնամյակի ընթացքում։ Ամ-

տահանության շուկաների համար հայրենի կապիտալի մրցությունը, կապիտալի գործադրության համար լավ պայմաններ ստեղծելու պայքարը հակայական դեր և խաղում նաև Ֆրանսիայում։

Ցեվ վերջապես Ֆրանսիայի համար պատերազմի շարժիչ ուժն և հանդիսանում 1870—71 թ. ռևանշի գաղափարը, Ելզաս-Լոտարինգիան վերադարձնելու ձգտումը, իսկ դրա հետ միասին և Հռենոսի այն մյուս ափում վորևե կտոր խլելու ցանկությունը։

Անգլիան կուվում և ամբողջ Աֆրիկան գրավելու, խլելու համար։ Նրա ձգտումն և՝ միացնել մի տիրապետության մեջ Աֆրիկայի ամբողջ տարածությունը՝ Բարեհուսո Հրվանդանից դեպի հարավ և հյուսիս մինչև Յեգիպտոս։ Իսկ այնտեղից Սուեզի ջրանցքով իր ձեռքն առնել Փոքր Ասիան, Միջագետքը, Արաբիան, Պարսկաստանը, Աղվանստանը և այդ ամբողջ տերիտորիան միացնել Բրիտանական Հնդկաստանին։

Ռուսաստանը ձգտում և դեպի Բալկանները, Կոստանդնուպոլիս, դեպի Նեղուցները, Փոքր Ասիա, Պարսկաստան, Մոնղոլիա։ Նա ցանկանում և, յեթե այդ հնարավոր և, նավահանգիստներ ստանալ նաև Ատլանտյան ովկիանոսում։ Հետո Ռուսաստանին անհրաժեշտ և ստանալ Գալիցիան, վորպեսզի իր ժող, ներսում իսկական ռուսական ֆևով լուծի ուկրայնական ու լեհական հոդերը։

Գերմանիան, Ֆրանսիան, Անգլիան, Ռուսաստանը, Ցապոնիան, և Միացյալ նահանգները իրենց ապագա վորսն են համարում Չինաստանը։

Ավստրիայի համար կարևոր են Ադրիատիկի արևելյան ափերը։ Նրան հարկավոր և իրեն յենթարկել Սերբիան՝ ամրանալ Բալկաններում, հետ մղել Իտալիային։

Իտալիան ուզում և ընդարձակվել Աֆրիկայում, վորպեսզի կարգավորի իր տրիպոլիտանական տիրապետությունները, հետո էլ՝ հույս ունի վորևե բան ստանալ Փոքր Ասիայում։ Բացի դրանից, նա ուզում և ստանալ Տրենտինոն, Իստրիան, Դալմացիան, Ալբանիան, Աղրիատիկի նավահանգիստները։

Բելգիան ձգտում եր պահպանել իր Աֆրիկական կալվածքները (Կոնգոն), վորը Գերմանիայի հաղթանակի դեպքում նա անխուսափելիորեն պետք և կորցներ։ Իսկ վերջինի պարտության դեպքում՝ բելգիական իմպերիալիստներին դուրս հաջողվի կլորացնել իրենց տիրապետությունները Աֆրիկայում։ Ցեվ այլն, և այլն, և այլն...

Աշխարհը բաժանելու այս հոդի վրա ստեղծվեցին պետությունների յերկու խմբավորումները, մի խմբավորության գլուխը կանգնեց Անգլիան (Անտանտա), իսկ մյուսինը՝ Գերմանիան։

Ներկայի միությունն (Գերմանիա, Ավստրիա, և Իտալիա) առաջ յեկավ գերմանո-ռուսական դաշնակցության ավերակների վրա։ Առաջ յեկավ նրանից, վոր Գերմանիան չկն անգամ այս անջատումը առաջ նրանից, վոր Գերմանիան

ձգտեց վերջնականապես խեղդել Ֆրանսիային 1775 թ., վորը ռուսական դիպլոմատիային դուր չեր գալիս։ Այստեղից և ծագում Ռուսաստանի ձգտումը դեպի Ֆրանսիան։ Բայց վճռական նշանակություն ունեցող դեպքեր տեղի ունեցան 1876—78 թ. Բալկանյան դեպքերի շնորհիվ։ Գերմանիան չցանկացավ աջակցել Ռուսաստանի տաճկական քաղաքականությանը։ Նա մշակում եր իր սեփական տաճկական քաղաքականությունը։ Նա Տաճկաստանն ընտրեց իբրև բազմակողմանի շահագործման օբյեկտ։ Ուստի 1879 թ. կնքվեց Գերմանիայի և Ավստրիայի յերկյակ դաշնակցությունը, վորին 1882 թ. միացավ Իտալիան, շնորհիվ այն բանի, վոր Ֆրանսիան գրավեց Թունիսը։

Յերրյակ համաձայնությանը (Անտանտային) նախորդեց Ֆրանս-ռուսական դաշնակցությունը, ճիշտ այնպես, ինչպես վոր և յերրյակ դաշնակցությանը նախորդել եր ավստրո-գերմանական դաշնակցությունը։

Ֆրանս-ռուսական դաշնակցության համար իբրև կարևոր նախադրյալներ ծառայում եյին հետևյալ յերկու ֆակտորները. 1. Ֆրանսիայի և Գերմանիայի թշնամությունը և 2—Ֆրանսիայի և Անգլիայի իմպերիալիստական մրցությունը։ Այդ յերկու ֆակտորները հրում եյին Ֆրանսիային Ռուսաստանի գիրկը։

Ռուսական կողմից ել գործում եյին յերկու ֆակտորներ. 1—Ռուսաստանի և Անգլիայի միջև յեղած իմպերիալիստական մրցությունը և 2—Ռուսաստանի և Ավստրիայի մրցությունը Բալկաններում։ Այդ յերկու ֆակտորները Ռուսաստանին մղում եյին Ֆրանսիայի գիրկը։

Բացի դրանից Ֆրանսիայի կապիտալի համար Ռուսաստանը գործադրության մի հրաշալի հրապարակ եր, իսկ ռուսական կառավարության և ռուսական արդյունաբերության համար Ֆրանսիական կապիտալը հանդիսանում եր վորպես մի անհատնում վոսկու ամբար, վորից կարելի յեր վոսկին հավաքել բռերով։

Յերրյակ համաձայնության մեջ Անգլիան խաղում եր և խաղում է առաջնակարգ դեր, ինչպես և Գերմանիան՝ յերրյակ դաշնակցության մեջ։ Բայց Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի այդպիսի դաշնակցությունը, վորի մեջ Անգլիան դիվակատարի դեր կարող եր խաղալ, կարող եր իրականանալ միայն այն ժամանակ, յերբ իմպերիալիստական պայքարի դաշտում Անգլիան հաղթեր Ֆրանսիային և Ռուսաստանին՝ իր յերկու խոշորագույն ախոյաններին։

Իսկապես հենց այդպես ել յեղավ։ Անգլիան նախ իրեն յենթարկեց Ֆրանսիային (վորին Յեգիպտոսում վերջնական պարտության հասցրեց (Ֆաշոդի ինցիդենտը), հետո պարտության հասցրեց (Յապոնիայի ձեռքով) Ռուսաստանին և հետո միայն կապվեց իր յերկու ախոյանների հետ անգլիական գերակշռության սկզբունքներով։

(Վլ. Ռոզանով. «Պատերազմի ծագումը», ռուսերեն, եջ 16 և հետ.)։

Բ. Ր. Ս.-Դ. Բ. Կ. ԿԵՆՏԿՈՄԻ ՄԱՆԻՖԵՍՏԸ

Տասնամյակների ընթացքում բոլոր յերկրների կառավարությունների և բուրժուական կուսակցությունների կողմից նախապատրաստած յեվրոպական պատերազմը պայթեց։ Սպառազինումների աճումը, առաջավոր յերկրների կապիտալիզմի զարգացման նորագույն իմպերիալիստական շրջանում՝ շուկաների գրավման համար մղվող պայքարը, ամենահետամնաց արևելա-յեվրոպական միապետությունների դինաստիական շահերն անխուսափելիորեն պետք և հանգեյին և հանդան այս պատերազմին։ Հողերը բռնագրավել և ոտար ազգերին նվաճել, մրցող ազգին քայքայել, նրա հարստությունները թալանել, աշխատավոր բանվոր ժողովրդի ուշադրությունը Ռուսաստանի, Գերմանիայի, Անգլիայի և այլ յերկրների ներքին քաղաքական ճգնաժամից հեռացնել, բանվորներին ջլատել և ազգայնական մթքերով հիմարացնել և պրոլետարիատի հեղափոխական շարժումը թուլացնելու նպատակով նրա ավանգարդը վոչնչացնել—ահա ժամանակակից պատերազմի միակ իսկական բովանդակությունը, նշանակությունն ու իմաստը։

Սոցիալ-դեմոկրատիայի պարտականությունն և նախ և առաջ պարզել պատերազմի այս իսկական նշանակությունը և անխնա կերպով մերկացնել տիրապետող դասակարգերի՝ բուրժուազիայի և կալվածատերերի պատերազմի պաշտպանության համար տարածած խաբկությունը, սոփեստությունը և «հայրենասիրական ֆրազները»։

Պատերազմող ազգերի մի խմբի գլուխ կանգնած և գերմանական բուրժուազիան։ Նա հիմարացնում է բանվոր դասակարգին և աշխատավորական ժողովրդին՝ հավատացնելով, վոր պատերազմը մղում է հանուն հայրենիքի, ազատության և կուլտուրայի պաշտպանության, հանուն ցարիզմի լծի տակ ճնշված ժողովուրդների ազատագրման, հանուն ռեակցիոն ցարիզմի տապալման։ Իսկ իրականության մեջ հենց այդ բուրժուազիան է, վոր լակեյություն անելով պրուսական յունկերների առաջ՝ Վիլհելմ II ի գլխավորությամբ միշտ ել ցարիզմի ամենահավատարիմ դաշնակիցն է յեղել և Ռուսաստանի բանվորների և գյուղացիների հեղափոխական շարժման թշնամին։ Իրականում այդ բուրժուազիան յունկերների հետ իր բոլոր ջանքերը գործ դրեց և հակաթուրքյան և պարտության դեպքում ցարական միապետությունը պաշտպանելու ընդդեմ Ռուսաստանի հեղափոխության։

Իրականում գերմանական բուրժուազիան թալանչիական արշավանք սկսեց Սերբիայի դեմ, ցանկանալով գրավել այն և հարվածին սլավոնության ազգային հեղափոխությունը խեղդել, միաժամանակ իր ռազմական ուժերի խոշոր մասն ավելի ազատ յերկրների դեմ դուրս բերել։ Ինչպիսին են Բելգիան և Ֆրանսիան, վորպեսզի կարողանա

վողոպտել իր ավելի հարուստ մրցակիցին։ Գերմանական բուրժուազիան, հեքյաթներ տարածելով այն մասին, թե ինքը պաշտպանողական պատերազմ է մղում, իրականության մեջ իր տեսակետից պատերազմի համար ամենալավ մոմենտ ընտրեց, ոգտագործելով ռազմական տեխնիկայի իր վերջին կատարելագործությունները և ցանկանալով Ռուսաստանի և Ֆրանսիայի կողմից ծրագրված նոր սպառազինումները կանխել։

Պատերազմող ազգերի մյուս խմբերի զլուխն է կանգնած անգլիական և ֆրանսիական բուրժուազիան, վորը մոլորեցնում է բանվոր դասակարգին ու աշխատավորական մասսաներին՝ հավատացնելով, թե պատերազմ է մղում հանուն հայրենիքի, ազատության և կուլտուրայի, ընդդեմ Գերմանիայի միլիտարիզմի և դեսպոտիզմի։ Իսկ իրականության մեջ այդ բուրժուազիան վաղուց արդեն իր միլիարդներով վարձում է ռուսական ցարիզմի՝ Եվրոպայի ամենառեակցիոն և բարբարոս միապետության զորքերը և պատրաստվում էր Գերմանիայի վրա հարձակվելու։

Անգլիական և ֆրանսիական բուրժուազիայի սկսած պայքարի իսկական նպատակն է գերմանական գաղութների բռնագրավումը և տնտեսական ավելի արագ զարգացող մրցակից ազգերի վոչնչացումը։ Յեվ այս բարձր նպատակի համար «առաջավոր» դեմոկրատական ազգերն ոգնում են հին վայրենի ցարիզմին ավելի ևս խեղդելու Լեհաստանին, Ուկրաինային և այլն, ավելի ևս ճնշելու Ռուսաստանի հեղափոխությունը։

Պատերազմող յերկու կողմերն էլ բոլորովին իրարից յետ չեն հետում թալանների, գաղանությունների և պատերազմի անվերջ վայրագությունների հարցում, սակայն նպատակ ունենալով պրոլետարիատին մոլորեցնել և նրան հեռու պահել միակ իսկական ազատագրական պատերազմից, այն է՝ քաղաքացիական պատերազմից՝ ընդդեմ ինչպես «իր» յերկրի, նույնպես և «ոտար» յերկրների բուրժուազիայի, այս բարձր նպատակի համար յուրաքանչյուր յերկրի բուրժուազիան հայրենասիրության մասին կեղծ ֆրազներ տարածելով, ձգտում է վսեմացնել «իր» ազգային պատերազմի նշանակությունը և հավատացնել, վոր նա ձգտում է հակառակորդին հաղթել վոչ թե թալանի և նրա յերկրները գրավելու համար՝ այլ բոլոր այլ ժողովուրդների ազատագրման համար՝ բացի իր սեփական ժողովրդից։

Սակայն վորքան ավելի մեծ յեռանդով բոլոր յերկրների կառավարությունները ու բուրժուազիան աշխատում են ջլատել բանվորներին և նրանց իրար դեմ լարել, վորքան ավելի մեծ կատաղությամբ և կերարկվում այս բարձր նպատակի համար ռազմական դրության հերը (վորը նույնիսկ այժմ՝

պատերազմի ժամանակ, ավելի շատ «ներքին», քան թե արտաքին թշնամուն է հալածում),—այնքան ավելի ստիպողական է դառնում գիտակից պրոլետարիատի համար՝ պաշտպանել իր դասակարգային հավատքը, իր ինտերնացիոնալիզմը, իր սոցիալիստական համոզմունքները բոլոր յերկրների բուրժուական վոհմակի «հայրենասիրական» շունչը վինիմի սանձարձակության դեմ։ Այս խնդիրներից հրաժարվել—կնշանակեր, վոր գիտակից բանվորները պիտի հրաժարվեն իրենց ազատագրական, դեմոկրատական, յեթե այլևս չասենք սոցիալիստական ձգտումներից։

Սրտի մեծ դառնությամբ ստիպված ենք արձանագրել, վոր գլխավոր յեվրոպական յերկրների սոցիալիստական կուսակցություններն իրենց այս խնդիրը չկատարեցին, իսկ այդ կուսակցությունների ղեկավարների վարկը, առանձնապես գերմանական կուսակցության, պատերազմի սոցիալիզմի դավաճանության և։ Հսկայական համաշխարհային պատերազմական կարևորություն ունեցող այս րոպեին, ներկայիս, յերկրորդ (1889—1914) սոցիալիստական Ինտերնացիոնալի ղեկավարներից շատերը փորձում են սոցիալիզմը վեր ածել նացիոնալիզմի։ Նրանց ընթացքի շնորհիվ այս յերկրների բանվորական կուսակցությունները չդիմադրեցին կառավարությունների հանցագործ գործությանը, այլ կոչ արին բանվոր դասակարգին իրենց դիրքերը միանելության, այլ կոչ արին բանվոր դասակարգին իրենց դիրքերը միանելության, նույնացնել իմպերիալիստական կառավարությունների դիրքերի հետ։ Ինտերնացիոնալի ղեկավարները դավաճանեցին սոցիալիզմին՝ ռազմական վարկերի ոգտին ձայն տալով, կրկնելով «իրենց» յերկրների շովինիստական («հայրենասիրական») լոզունգները, իրենց բուրժուազիայի շովինիստական («հայրենասիրական») լոզունգները, իրենց բուրժուազիայի շովինիստական («հայրենասիրական») լոզունգները, իր բուրժուազիայի շովինիստական («հայրենասիրական») լոզունգները, արդարացնելով և պաշտպանելով պատերազմը, մտնելով պատերազմող պետությունների բուրժուական մինիստրությունների մեջ, և այլն և այլն։ Ամենաազդեցիկ սոցիալիստական ղեկավարները և ժամանակակից Յեվրոպայի սոցիալիստական մամուլի ամենաազդեցիկ որգանները՝ շովինիստական բուրժուական և լիբերալ, միանգամայն վոչ սոցիալիստական տեսակետի կողմնակից են։ Սոցիալիզմի այս խայտառակության պատասխանատվությունը նախ և առաջ ընկնում է գերմանական սոցիալ-դեմոկրատների վրա, վորոնք II Ինտերնացիոնալի ամենաուժեղ և ազդեցիկ կուսակցությունն էին կազմում։ Սակայն չի կարելի արդարացնել նաև ֆրանսիական սոցիալիստներին, վորոնք մինիստրական պաշտոններ են ստանում այն բուրժուազիայի կառավարության մեջ, վորը իր հայրենիքն էր ժամանում և կոմունան ճնշելու համար բիսմարկի հետ էր միանում։

Գերմանական և ավստրիական սոցիալ-դեմոկրատները փորձում են պատերազմին ցույց տված իրենց ոժանդակությունը նրանով արդարացնել, վոր իբր թե իրենք դրանով իսկ ռուսական ցարիզմի դեմ

են պայքարում։ Մենք՝ ռուս սոցիալ-դեմոկրատներս հայտարարում ենք, որ նման ձևի արդարացումը սոփեստություն ենք համարում։ Ցարիզմի դեմ ուղղված հեղափոխական շարժումը վերջին տարիների ընթացքում մեր յերկրում նորից հսկայական չափեր ընդունեց։ Այդ շարժման գլուխն ե յեղել կանգնած շարունակ Ռուսաստանի բանվոր դասակարգը։ Վերջին տարիների միլիոնավոր գործադուլները տեղի յեին ունենում ցարիզմի տապալման և դեմոկրատական հասարակապետության լոզունգի տակ։ Վոչ շատ շուտ, քան պատերազմի նախորյակին ֆրանսիական հանրապետության նախագահ Պուանկարեն Նիկոլայ II-ին այցելության յեկած ժամանակ բարբրիկադներ կարող եր տեսնել Պետերբուրգի փողոցներում, որոնք կառուցված եյին ռուս բանվորների ձեռքով։ Ամբողջ մարդկությունը ցարական միապետության խայտառակությունից ազատելու համար Ռուսաստանի պրոլետարիատը վոչ մի դոհի առաջ կանգ չի առել։ Սակայն մենք պետք է ասենք, որ յեթե վորևե բան կարող է հետաձգել ցարիզմի անկումը, յեթե վորևե բան կարող է ոչնչել ցարիզմին ամբողջ Ռուսաստանի դեմոկրատիայի դեմ պայքարելու գործում, այդ՝ այժմյան իսկ պատերազմն է, որ ցարիզմի ռեակցիոն նպատակներին տրամադրեց անգլիական, ֆրանսիական և ռուսական բուրժուազիայի դրամական պարկը։ Յեվ յեթե վորևե բան կարող է դժվարացնել Ռուսաստանի բանվոր դասակարգի հեղափոխական պայքարն ընդդեմ ցարիզմի, այդ հենց գերմանական և ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի ընթացքն է, որն անդադար, վորպես որինակ, մեզ հիշեցնում է Ռուսաստանի շովինիստական մաժուլը։

Յեթե նույնիսկ յենթադրենք, որ գերմանական սոցիալ դեմոկրատիայի ուժն այնքան փոքր եր, որ կարող եր նրան ստիպել հրաժարվել վորևե հեղափոխական գործողությունից, ապա այդ դեպքում եյլ չեր կարելի մեզանում շովինիստական բանակին, չեր կարելի այնպիսի քայլեր անել, որոնց առթիվ իտալական սոցիալիստներն իրավամբ հայտարարում եյին, որ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի դեկավարներն անպատվում են Ինտերնացիոնալի պրոլետարական դրոշը։

Մեր կուսակցությունը՝ Ռուսաստանի Սոցիալ Դեմոկրատական Բանվորական Կուսակցությունը, արդեն կրեց և դեռ ելի կկրի հսկայական զոհեր պատերազմի պատճառով։ Մեր ամբողջ լնգալ մամուլը վոչնչացված է։ Շատ միությունները փակված են, մեր ընկերներից շատերը ձերբակալված և աքսորված են։ Սակայն պարլամենտական մեր ներկայացուցչությունը՝ Պետական Դումայի սոցիալ դեմոկրատական ֆրակցիան, իր բացարձակ սոցիալիստական պարտականությունը համարեց ձայն չտալ ռազմական վարկերի ոգտին և նույնիսկ՝ վորպես իր բողոքի ավելի բուռն արտահայտություն՝ թողնել Դումայի նիստերի

դահլիճը։ Նա իր պարտականությունը համարեց յեվրոպական կառավարությունների քաղաքականությունը դրոշմել վորպես իմպերիալիստական։ Յեվ չնայած ցարական կառավարության տանապատական ճնշմանը, Ռուսաստանում ընկեր բանվորներն արդեն հրատարակում են պատերազմի դեմ ուղղված առաջին անլեգալ կոչերը՝ իրենց պարտքը կատարելով դեմոկրատիայի և Ինտերնացիոնալի հանդեպ։

Յեթե հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչները՝ հանձինս գերմանական սոցիալ-դեմոկրատիայի փոքրամասնության և նեյտրալ յերկրների լավագույն սոցիալ-դեմոկրատիայի՝ ամոթ են զգում II Ինտերնացիոնալի այս փլուզումի առթիվ, յեթե և՛ Անգլիայում և՛ Ֆրանսիայում լսվում է սոցիալիստների ձայնն ընդդեմ սոցիալ-դեմոկրատիայի մեծամասնության շովինիզմի, յեթե ոպպորտյունիստները՝ հանձինս, որինակ, գերմանական «Սոցիալիստական ամսագրի» («Sozialistische Monatshefte»), վաղուց արդեն ազգային լիբերալ դիրքերում կանգնած, ամենայն իրավամբ յեվրոպական սոցիալիզմի դեմ տարած իրենց հաղթանակն են տոնում,—ապա ամենավատ տեսակի ծառայություն են մատուցանում պրոլետարիատին նրանք, ովքեր տանվում են ոպպորտյունիզմի և հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի միջև (ինչպես գերմանական սոցիալ-դեմոկրատիայի «կենտրոնն» է) և փորձում են II Ինտերնացիոնալի փլուզումը քողարկել դիպլոմատիական ֆրազներով և կամ լռել նրա մասին։

Ընդհակառակը, պետք է բացարձակ կերպով ընդունել այդ փլուզումը և հասկանալ նրա պատճառները, վորպեսզի կարելի լինի բոլոր յերկրների բանվորների նոր, ավելի կայուն սոցիալիստական միություն հիմնել։ Ոպպորտյունիստները զանց արին Շտուտգարդի, Կոպենհագենի և Բազելի կոնգրեսների վորոշումները, վորոնք բոլոր յերկրների սոցիալիստներին պարտավորեցնում եյին ամեն տեսակի պայմաններում եվ շովինիզմի դեմ պայքարել և բուրժուազիայի և կառավարությունների սկսած ամեն մի պատերազմին պատասխանել քաղաքական պատերազմի և սոցիալիստական հեղափոխության ուժեղ քարոզով։ II Ինտերնացիոնալի փլուզումը—այդ ոպպորտյունիզմի փլուզումն է, որն աճում եր անցած (այսպես կոչված «խաղաղ») պատմական շրջանի յուրահատուկ պայմաններում և վերջին տարիներում փաստորեն իշխում եր Ինտերնացիոնալում։ Վաղուց եյին ոպպորտյունիստները այդ փլուզումը նախապատրաստում. նրանք բացատում եյին սոցիալիստական հեղափոխությունը և այն փոխարինում եյին բուրժուական ռեֆորմիզմով, նրանք բացատում եյին դասակարգային պայքարը, վորը պիտի անխզելիորեն մղեր պրոլետարներին քաղաքացիական պատերազմի վերածվելու, և դասակարգերի համագործակցություն եյին քարոզում. նրանք բուրժուական շովինիզմ եյին քարոզում. հայրենասիրու-

թյան և հայրենիքի պաշտպանության անվան տակ և արհամարհում կամ բացասում եյին դեռևս «Կոմունիստական Մանիֆեստում» շարադրված սոցիալիզմի այն հիմնական ճշմարտությունը, թե բանվորները հայրենիք չունեն։ Միլիտարիզմի դեմ պայքարելիս նրանք սահմանակվում եյին սենտիմենտալ-մեղչանական տեսակետներով, փոխանակ բոլոր յերկրների պրոլետարների հեղափոխական պայքարի անհրաժեշտությունն ընդունելու ընդդեմ բոլոր յերկրների բուրժուազիայի։ Նրանք բուրժուական պարլամենտարիզմից և բուրժուական լեգալությունից ոգավելու անհրաժեշտությունը դարձնում եյին այդ լեգալության ֆետիշականացում և մոռացության եյին տալիս, վոր ճգնաժամերի շրջանում անհրաժեշտ են կազմակերպության անլեգալ ձևեր և ագիտացիա։ Ոպպորտյունիզմի բնական «լրացումը» պրոլետարական, այսինքն մարքսիստական տեսակետին նույնքան թշնամական անարխո-սինդիկալիստական այդ հոսանքը վոչ պակաս խայտառակ ձևով հավերժացավ, ժամանակակից ճգնաժամերի ընթացքում ինքնագոհ կերպով կրկնելով շովինիզմի լոզունգները։

Առանց ոպպորտյունիզմի հետ վճռականապես ամեն մի կապ կտրելու և մասսաներին նրա պատրաստության անխուսափելիությունը բացատրելու, անկարելի յե ներկայումս իրագործել սոցիալիզմի խնդիրները, անկարելի յե իրագործել բանվորների իսկական ինտերնացիոնալիստական միավորումը։

Յուրաքանչյուր յերկրի սոցիալ-դեմոկրատիայի անելիքն առաջին հերթին պետք է լինի պայքարել տվյալ յերկրի շովինիզմի դեմ։ Այդ շովինիզմը Ռուսաստանում ամբողջովին համակից բուրժուական լիբերալներին («կադետներ») և մասամբ նարոդնիկներին, մինչև իսկ սոցիալ-հեղափոխականներին և «աջ» սոցիալ-դեմոկրատներին (առանձնապես անհրաժեշտ է հիշել Յա. Սմիրնովի, Ֆ. Մասլովի և Գ. Պլեխանովի շովինիստական յելույթները, վորը լայն կերպով ոգտագործեց բուրժուական «հայրենասիրական» մամուլը)։

Ներկա դրությունը հնարավորություն չի տալիս վորոշելու, թե մի ջազգային պրոլետարիատի տեսակետից պատերազմող ազգերի յերկու խմբերից վորի պարտությունը փոքրագույն չարիք կլիներ սոցիալիզմի համար։ Սակայն մեզ համար՝ ռուս սոցիալ-դեմոկրատների համար կասկածից դուրս է, վոր Ռուսաստանի բանվոր դասակարգի և բոլոր ազգերի աշխատավորական մասսաների տեսակետից վոքրագույն չարիքը կլիներ ցարական միապետության՝ Յեվրոպայի և Ասիայի ավելի մեծ թվով ազգաբնակչություն և ազգեր ճնշող ամենառեակցիոն և բարբարոս կառավարության պարտությունը։

Յեվրոպայի սոցիալ դեմոկրատիայի մոտակա քաղաքական լոզունգը պետք է լինի Յեվրոպայի հանրապետական Միացյալ Նահանգների

կազմակերպումը, միաժամանակ, տարբերվելով բուրժուազիայից, վորը պատրաստ է ամեն ինչ «խոստանալ», միայն թե պրոլետարիատին զրավի և շովինիզմի ընդհանուր հոսանքի մեջ առնի, սոցիալ-դեմոկրատները կբացատրեն այս լոզունգի ամբողջ ստահոդությունն ու անիմաստությունը՝ առանց դերմանական, ավստրիական և ռուսական միապետությունների հեղափոխական տապալման։

Ռուսաստանում, ինքատ ունենալով այս յերկրի խոշոր հետամնացությունը, վոր դեռ չի վերջացրել իր բուրժուական հեղափոխությունը, սոցիալ-դեմոկրատիայի անելիքն առաջվա նման պետք է լինի ստեղծել ամենաճանապարհային դեմոկրատական բարեփոխման յերեք հիմնական պայման՝ դեմոկրատական հանրապետություն (բոլոր ազգերի ինքնորոշմամբ և իրավահավասարությամբ), կալվածատիրական հողերի բռնագրավում և 8 ժամյա բանվորական որ։ Սակայն բոլոր առաջավոր յերկրներում էլ պատերազմը հերթական հարց և դարձնում սոցիալական հեղափոխության լոզունգը, վորն այնքան ավելի հրատապ է դառնում, վորքան ավելի յեն պրոլետարիատի ուսերին ընկնում պատերազմի դժվարությունները, վորքան ավելի ակտիվ պետք է դառնա նրա դերը խոշոր կապիտալիզմի հսկայական տեխնիկական հաջողությունների պայմաններում մղվող ժամանակակից «հայրենասիրական» բարբարոսության արհավիրքներից հետո Յեվրոպան վերականգնելու գործում։

Այն հանգամանքը, վոր, շնորհիվ զինվորական դրության, բուրժուազիան կարողանում է ոգտագործել բոլոր որենքները պրոլետարիատի բերանը բոլորովին փակելու համար, այդ հանգամանքը նրա առաջ է դնում ագիտացիայի և կազմակերպության անլեգալ ձևեր ստեղծելու ստիպողական պահանջը։ Թող ոպպորտյունիստներն էլ իրենց համոզմունքներին դավաճանելու միջոցով «պահպանեն» լեգալ կազմակերպությունները,—հեղափոխական սոցիալ-դեմոկրատները կոգտագործեն բանվոր դասակարգի կազմակերպչական փորձառությունն ու կապերը սոցիալիզմի համար մղվող պայքարի ճգնաժամերի շրջանին համապատասխան անլեգալ ձևեր ստեղծելու և բանվորներին վոչ թե իրենց յերկրի շովինիստական բուրժուազիայի, այլ բոլոր յերկրների բանվորների հետ միավորելու համար։ Պրոլետարական Ինտերնացիոնալը չի կործանվել և չի յել կործանվի։ Բանվորական մասսաները բոլոր խոչընդոտները հաղթահարելով՝ նոր Ինտերնացիոնալ կստեղծեն. ոպպորտյունիզմի այսորվա հաղթանակը յերկարատև չի։ Վորքան ավելի զոհեր լուի պատերազմը, այնքան ավելի պարզ կլինի բանվորական մասսաների համար ոպպորտյունիստների դավաճանությունը բանվորական գործին և զենքը՝ յուրաքանչյուր յերկրի կառավարությունների բուրժուազիայի դեմ դարձնելու անհրաժեշտությունը։

Ժամանակակից իմպերիալիստական պատերազմը քաղաքական պատերազմի վերածելը մեկ ճիշտ պրոլետարական լոզունգն է, որը մատնանշում է կոմունայի փորձը, որը ցույց է տրված Բազելի (1912 թ.) բանաձևում և բղխում է բարձր զարգացում ունեցող բուրժուական յերկրների միջև մղվող իմպերիալիստական պատերազմի բոլոր պայմաններից։ Վորքան էլ այս կամ այն րոպեին կատարվելիք փոփոխության դժվարությունները մեծ լինեն, սոցիալիստները յերբեք չեն հրաժարվի այս ուղղությամբ սիստեմատիկ, համառ և անշեղ նախապատրաստական աշխատանք կատարելուց, յերբ պատերազմն արդեն փաստ է դարձել։

Միայն այս ճանապարհով պրոլետարիատը կարող է ազատվել շովինիստական բուրժուազիայից կախում ունենալուց, և այս կամ այն ձևով, քիչ թե շատ արագ կերպով վճռական քայլեր անել դեպի ժողովուրդների իսկական ազատությունը և դեպի սոցիալիզմը։

Կեցցե բանվորների միջազգային յեղբայրությունն ընդդեմ բոլոր յերկրների բուրժուազիայի շովինիզմի ու հայրենասիրության։

Կեցցե ոպպորտյունիզմից ազատագրված պրոլետարական Ինտերնացիոնալը։

Ռուսաստանի Ս.-Դ. Բանվորական Կուսակցության Կենտրոնական Կոմիտե։

Գ. ԻՆՉ՞Ի ՀԱՄԱՐ Ե ԿՌՎՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ.

Ռուսաստանում նորագույն տիպի կապիտալիստական իմպերիալիզմը լիովին իրան ցույց տվավ ցարիզմի քաղաքականության մեջ Պարսկաստանի, Մանջուրիայի, Մոնղոլիայի նկատմամբ, բայց ընդհանրապես Ռուսաստանում դերակշռում է ռազմական և ֆեոդալական իմպերիալիզմը։ Աշխարհում վոչ մի տեղ յերկրի բնակչության մեծամասնության այնպիսի հարստահարում չկա, ինչպես Ռուսաստանում. վելիկառուսները կազմում են բնակչության միայն 43%, այսինքն կեսից պակաս, իսկ բոլոր ճնացածները՝ իբրև այլազգիներ՝ իրավազուրկ են։ Ռուսաստանի 170 միլիոն բնակչությունից մոտ 100 միլիոնը հարստահարված ու իրավազուրկ է։ Ցարիզմը պատերազմ է մղում՝ զավթելու Գալիցիան և վերջնականապես խեղդելու ուկրաինցիների ազատությունը, զավթելու Հայաստանը, կ.Պոլիսը և այլն։ Ցարիզմը պատերազմի մեջ տեսնում է մի միջոց, որ կարելի կլինի շեղել դժգոհության աճումը յերկրի ներսում և ճնշել աճող հեղափոխական շարժումը։ Այժմ Ռուսաստանում յերկու վելիկառուսին ընկնում է յերկուսից մինչև յերեք իրավազուրկ «այլազգի». պատերազմի միջոցով ցարիզմը ձգտում է ավելացնել Ռուսաստանի ձեռքով հարստահարվող ազգերի քանակը, կայունացնել նրանց հարստահարումը և դրանով բուն

վելիկառուսների մեջ խախտել ազատության համար մղվող պայքարը։ Ուրիշ ժողովուրդների հարստահարելու և կողոպտելու հնարավորությունն ամրացնում է տնտեսական անշարժությունը, վորովհետև արտադրական ուժերի զարգացման փոխարեն հազվադեպ չէ, վոր յեկամուտի աղբյուր է հանդիսանում «այլազգիների» կիսա-ֆեոդալական շահագործումը։ Այսպիսով Ռուսաստանի կողմից մղվող պատերազմն ավելի քան հետադիմական և հակաազատարար բնույթ ունի։

(Վ. Ի. Լենին, Յերկերի ժողովածու, հ. XII, եջ 99, ռուսերեն)։

Դ. Ո՞Վ ՈԳՏՎԵՑ 1914 ԹՎԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ.

....Յերիտասարդությունը և մանր բուրժուազիան կարդալով լրագրերը և փողոցներում հայրենասիրաբար ճղճղալով՝ խոշոր բուրժուազիայի առաջից ելին գնում, իսկ խոշոր բուրժուազիան հայրենասիրականն ճանապարհին հայտնվեց միայն կամաց-կամաց, յերբ պարզվեց՝ թե ինչ աստիճանի պատերազմը ձեռնտու ձեռնարկություն է և հանդիսանում, թե ինչ աստիճանի պատերազմը վոչ այլ ինչ է, յեթե վոչ մի հսկայական շուկա, մի շուկա, վոր թեպետ, ճիշտ է, կարճ ժամանակով, իր գոյության ընթացքում բավականին կարճատև, բայց միևնույն ժամանակ այնքան ձեռնտու, վոր կարճ ժամանակվա ընթացքում մի շարք տարիների հարստություն կարելի յե կուտակել։

Ցես այստեղ ձեզ կհայտնեմ միքանի ձեռնարկությունների պատերազմի առաջին տարիներում ունեցած վաստակը։ Տուլայի գործատերերի ակցիոներական ընկերությունը պատերազմից առաջ տարեկան միջին թվով ունենում եր 1,860,000 ռուբլի վաստակ, պատերազմի հենց առաջին տարում նա վաստակ ստացավ 8,390,000 ռուբլի։ Կալուգինի գործարանը մինչև պատերազմը 2,170,000 ռուբլի վաստակ ուներ, իսկ պատերազմի առաջին տարում՝ 4,720,000 ռուբլի։ Սորմովի գործարանը մինչև պատերազմը նույնպես 2,170,000 ռուբլի վաստակ ուներ, բայց պատերազմի առաջին տարում 3,790,000 ռուբլի վաստակ ստացավ, ելեքտրական լարերի գործարանը մինչև պատերազմը՝ 1,400,000 ռուբլի, պատերազմի առաջին տարում՝ 3,340,000 ռուբլի, բնական և վոր սրա հետ միասին նոր ձեռնարկություններ, նոր գործարաններ և նոր ակցիոներական կամպանիաներ եյին ընտում, ինչպես սունկեր։ 1915 թվականի ընթացքում 136 ակցիոներական նոր կամպանիաներ են հիմնվում 189,000,000 վոսկի ռուբլիների կապիտալով։ 1916 թվականի ընթացքում, միայն մինչև հոկտեմբերի 1-ը, 159 ակցիոներական նոր կամպանիաներ են հիմնվում 210 միլ. ռուբլի կապիտալով։ Շատ բնորոշ է թե ինչպես է բաշխվում կապիտալը զանազան տեսակի ձեռնարկությունների մեջ։ Ահա 1916 թվին ծնված ակցիոներական կամպանիաների աղյուսակը։ Այդ աղյուսակում կան ինչպես նոր հիմնված կամ-

թյան և հայրենիքի պաշտպանության անվան տակ և արհամարհում կամ բացասում եյին դեռևս «Կոմունիստական Մանիֆեստում» շարադրված սոցիալիզմի այն հիմնական ճշմարտությունը, թե բանվորները հայրենիք չունեն։ Մի լիտարիզմի դեմ պայքարելիս նրանք սահմանափակվում եյին սենտիմենտալ-մեղչանական տեսակետներով, փոխանակ բոլոր յերկրների պրոլետարների հեղափոխական պայքարի անհրաժեշտությունն ընդունելու ընդդեմ բոլոր յերկրների բուրժուազիայի։ Նրանք բուրժուական պարլամենտարիզմից և բուրժուական լեգալությունից օգտվելու անհրաժեշտությունը դարձնում եյին այդ լեգալության ֆետիշականացում և մոռացության եյին տալիս, որ ճգնաժամերի շրջանում անհրաժեշտ են կազմակերպության անլեգալ ձևեր և ագիտացիա։ Ոպպորտյունիզմի բնական «լրացումը» պրոլետարական, այսինքն մարքսիստական տեսակետին նույնքան թշնամական անարխո-սինդիկալիստական այդ հոսանքը վոչ պակաս խայտառակ ձևով հավերժացավ, ժամանակակից ճգնաժամերի ընթացքում ինքնագոհ կերպով կրկնելով շովինիզմի լոզունգները։

Առանց ոպպորտյունիզմի հետ վճռականապես ամեն մի կապ կտրելու և մասսաներին նրա պարտության անխուսափելիությունը բացատրելու, անկարելի յե ներկայումս իրագործել սոցիալիզմի խնդիրները, անկարելի յե իրագործել բանվորների իսկական ինտերնացիոնալիստական միավորումը։

Յուրաքանչյուր յերկրի սոցիալ-դեմոկրատիայի անելիքն առաջին հերթին պետք է լինի պայքարել մեջ յերկրի շովինիզմի դեմ։ Այդ շովինիզմը Ռուսաստանում ամբողջովին համակեց բուրժուական լիբերալներին («կադետներ») և մասամբ նարոդնիկներին, մինչև իսկ սոցիալ-հեղափոխականներին և «աջ» սոցիալ-դեմոկրատներին (առանձնապես անհրաժեշտ է հիշել Յե. Սմիրնովի, Պ. Մասլովի և Գ. Պլեխանովի շովինիստական յելույթները, վորը լայն կերպով ոգտագործեց բուրժուական «հայրենասիրական» մամուլը)։

Ներկա դրությունը հնարավորություն չի տալիս վորոշելու, թե միջազգային պրոլետարիատի տեսակետից պատերազմող ազգերի յերկու խմբերից վորի պարտությունը փոքրագույն չարիք կլիներ սոցիալիզմի համար։ Սակայն մեզ համար՝ ռուս սոցիալ-դեմոկրատների համար՝ համար կասկածից դուրս է, վոր Ռուսաստանի բանվոր դասակարգի և բոլոր ազգերի աշխատավորական մասսաների տեսակետից փոքրագույն չարիքը կլիներ ցարական միապետության՝ Յեվրոպայի և Ասիայի ամենամեծ թվով ազգաբնակություն և ազգեր ճնշող ամենառեակցիոն և բարբարոս կառավարության պարտությունը։

Յեվրոպայի սոցիալ-դեմոկրատիայի մոտակա քաղաքական լոզունգը պետք է լինի Յեվրոպայի հանրապետական Միացյալ Նահանգների

կազմակերպումը, միաժամանակ, տարբերվելով բուրժուազիայից, վորը պատրաստ է ամեն ինչ «խոստանալ», միայն թե պրոլետարիատին պահի զինվի և շովինիզմի ընդհանուր հոսանքի մեջ առնի, սոցիալ-դեմոկրատները կբացատրեն այս լոզունգի ամբողջ ստահոդությունն ու անխտաստությունը՝ առանց գերմանական, ավստրիական և ռուսական միապետությունների հեղափոխական տապալման։

Ռուսաստանում, ինքատի ունենալով այս յերկրի խոշոր հետամնացությունը, վոր դեռ չի վերջացրել իր բուրժուական հեղափոխությունը, սոցիալ-դեմոկրատիայի անելիքն առաջվա նման պետք է լինի ստեղծել աստիճանական դեմոկրատական բարեփոխման յերեք հիմնական պայման՝ դեմոկրատական հանրապետություն (բոլոր ազգերի ինքնորոշմամբ և իրավահավասարությամբ), կալվածատիրական հողերի բռնագրավում և 8 ժամյա բանվորական որ։ Սակայն բոլոր առաջավոր յերկրներում էլ պատերազմը հերթական հարց և դարձնում սոցիալիստական հեղափոխության լոզունգը, վորն այնքան ավելի հրատապ է դառնում, վորքան ավելի յեն պրոլետարիատի ուսերին ընկնում պատերազմի դժվարությունները, վորքան ավելի ակտիվ պետք է դառնա նրա դերը խոշոր կապիտալիզմի հսկայական տեխնիկական հաջողությունների պայմաններում մղվող ժամանակակից «հայրենասիրական» բարբարոսության արհավիրքներից հետո Յեվրոպան վերականգնելու գործում։

Այն հանգամանքը, վոր, շնորհիվ զինվորական դրության, բուրժուազիան կարողանում է ոգտագործել բոլոր օրենքները պրոլետարիատի բերանը բոլորովին փակելու համար, այդ հանգամանքը նրա առաջ է դնում ագիտացիայի և կազմակերպության անլեգալ ձևեր ստեղծելու անհրաժեշտություն։ Թող ոպպորտյունիստներն էլ իրենց համոզմունքներին դավաճանելու միջոցով «պահպանեն» լեգալ կազմակերպությունները,—հեղափոխական սոցիալ-դեմոկրատները կոգտագործեն բանվոր դասակարգի կազմակերպչական փորձառությունն ու կապերը սոցիալիզմի համար մղվող պայքարի ճգնաժամերի շրջանին համապատասխան անլեգալ ձևեր ստեղծելու և բանվորներին վոչ թե իրենց յերկրի շովինիստական բուրժուազիայի, այլ բոլոր յերկրների բանվորների հետ միավորելու համար։ Պրոլետարական Ինտերնացիոնալը չի կործանվել և չի յել կործանվի։ Բանվորական մասսաները բոլոր խոչընդոտները հաղթահարելով՝ նոր Ինտերնացիոնալ կստեղծեն. ոպպորտյունիզմի այսօրվա հաղթանակը յերկարատև չի։ Վորքան ավելի զոհեր լուի պատերազմը, այնքան ավելի պարզ կլինի բանվորական մասսաների համար ոպպորտյունիստների դավաճանության բանվորական գործին և զենքը՝ յուրաքանչյուր յերկրի կառավարությունների դեմ դարձնելու անհրաժեշտությունը։

Ժամանակակից իմպերիալիստական պատերազմը քաղաքական պատերազմի վերածելը միակ ճիշտ պրոլետարական լոզունգն է, վորը մատնանշում է կոմունայի փորձը, վորը ցույց է տրված Բազելի (1912 թ.) բանաձևում և բղխում է բարձր զարգացում ունեցող բուրժուական յերկրների մեջ մղվող իմպերիալիստական պատերազմի բոլոր պայմաններից։ Վորքան էլ այս կամ այն բոպեին կատարվելիք փոփոխության դժվարությունները մեծ լինեն, սոցիալիստները յերբեք չեն հրաժարվի այս ուղղությամբ սիստեմատիկ, համառ և անշեղ նախապատրաստական աշխատանք կատարելուց, յերբ պատերազմն արդեն փաստ է դարձել։

Միայն այս ճանապարհով պրոլետարիատը կարող է ազատվել շովինիստական բուրժուազիայից կախում ունենալուց, և այս կամ այն ձևով, քիչ թե շատ արագ կերպով վճռական քայլեր անել դեպի ժողովուրդների իսկական ազատությունը և դեպի սոցիալիզմը։

Կեցցե՛ բանվորների միջազգային յեղբայրությունն ընդդեմ բոլոր յերկրների բուրժուազիայի շովինիզմի ու հայրենասիրության։

Կեցցե՛ ոպպորտյունիզմից ազատագրված պրոլետարական Ինտերնացիոնալը։

Ռուսաստանի Ս.-Դ. Բանվորական Կուսակցության Կենտրոնական Կոմիտե։

Գ. ԻՆՉո՞Ի ՀԱՄԱՐ Ե ԿՌՎՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ.

Ռուսաստանում նորագույն տիպի կապիտալիստական իմպերիալիզմը լիովին իրան ցույց տվավ ցարիզմի քաղաքականության մեջ Պարսկաստանի, Մանջուրիայի, Մոնղոլիայի նկատմամբ, բայց ընդհանրապես Ռուսաստանում դեռևս շրում է ռազմական և ֆեոդալական իմպերիալիզմը։ Աշխարհում վոչ մի տեղ յերկրի բնակչության մեծամասնության այնպիսի հարստահարում չկա, ինչպես Ռուսաստանում. վելիկռուսները կազմում են բնակչության միայն 43%, այսինքն կեսից պակաս, իսկ բոլոր մնացածները՝ իբրև այլազգիներ՝ իրավազուրկ են։ Ռուսաստանի 170 միլիոն բնակչությունից մոտ 100 միլիոնը հարստահարված ու իրավազուրկ է։ Ցարիզմը պատերազմ է մղում՝ զավթելու Գալիցիան և վերջնականապես խեղդելու ուկրայինցիների ազատությունը, զավթելու Հայաստանը, Կ.-Պոլիսը և այլն։ Ցարիզմը պատերազմի մեջ տեսնում է մի միջոց, վոր կարելի կլինի շեղել դժգոհության աճումը յերկրի ներսում և ճնշել աճող հեղափոխական շարժումը։ Այժմ Ռուսաստանում յերկու վելիկռուսին ընկնում է յերկուսից մինչև յերեք իրավազուրկ «այլազգի». պատերազմի միջոցով ցարիզմը ձգտում է ավելացնել Ռուսաստանի ձեռքով հարստահարվող ազգերի քանակը, կայունացնել նրանց հարստահարումը և դրանով բուն

վելիկռուսների մեջ խախտել ազատության համար մղվող պայքարը։ Ուրիշ ժողովուրդների հարստահարելու և կողոպտելու հնարավորությունն ամրացնում է տնտեսական անշարժությունը, վորովհետև արտադրական ուժերի զարգացման փոխարեն հազվադեպ չե, վոր յեկամուտի աղբյուր և հանդիսանում «այլազգիների» կիսա-ֆեոդալական շահագործումը։ Այսպիսով Ռուսաստանի կողմից մղվող պատերազմն ավելի քան հետադիմական և հակաազատարար բնույթ ունի։

(Վ. Ի. Լենին, Յերկերի ժողովածու, հ. XII, եջ 99, ռուսերեն)։

Դ. Ո՞Վ ՈԴՏՎԵՑ 1914 ԹՎԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ.

....Յերիտասարդությունը և մանր բուրժուազիան կարդալով լրագրերը և փողոցներում հայրենասիրաբար ճղճղալով՝ խոշոր բուրժուազիայի առաջից եյին գնում, իսկ խոշոր բուրժուազիան հայրենասիրական ճանապարհին հայտնվեց միայն կամաց-կամաց, յերբ պարզվեց՝ թե ինչ աստիճանի պատերազմը ձեռնտու ձեռնարկություն է և հանդիսանում, թե ինչ աստիճանի պատերազմը վոչ այլ ինչ է, յեթե վոչ մի հսկայական շուկա, մի շուկա, վոր թեպետ, ճիշտ է, կարճ ժամանակով, իր գոյության ընթացքում բավականին կարճատև, բայց միևնույն ժամանակ այնքան ձեռնտու, վոր կարճ ժամանակվա ընթացքում մի շարք տարիների հարստություն կարելի յե կուտակել։

Ցես այստեղ ձեղ կհայտնեմ միքանի ձեռնարկությունների պատերազմի առաջին տարիներում ունեցած վաստակը։ Տուլայի գործարանների ակցիոներական ընկերությունը պատերազմից առաջ տարեկան միջին թվով ունենում եր 1,860,000 ռուբլի վաստակ, պատերազմի հենց առաջին տարում նա վաստակ ստացավ 8,390,000 ռուբլի։ Կալչուգինի գործարանը մինչև պատերազմը 2,170,000 ռուբլի վաստակ ուներ, իսկ պատերազմի առաջին տարում՝ 4,720,000 ռուբլի։ Սորմովի գործարանը մինչև պատերազմը նույնպես 2,170,000 ռուբլի վաստակ ուներ, բայց պատերազմի առաջին տարում 3,790,000 ռուբլի վաստակ ստացավ, ելեքտրական լարերի գործարանը մինչև պատերազմը՝ 1,400,000 ռուբլի, պատերազմի առաջին տարում՝ 3,340,000 ռուբլի, բնական և վոր սրա հետ միասին նոր ձեռնարկություններ, նոր գործարաններ և նոր ակցիոներական կամպանիաներ եյին բանում, ինչպես սունկեր։ 1915 թվականի ընթացքում 136 ակցիոներական նոր կամպանիաներ են հիմնվում 189,000,000 վոսկի ռուբլիների կապիտալով։ 1916 թվականի ընթացքում, միայն մինչև հոկտեմբերի 1-ը, 159 ակցիոներական նոր կամպանիաներ են հիմնվում 210 միլ. ռուբլի կապիտալով։ Շատ բնորոշ է թե ինչպես է բաշխվում կապիտալը զանազան տեսակի ձեռնարկությունների մեջ։ Ահա 1916 թվին ծնված ակցիոներական կամպանիաների աղյուսակը։ Այդ աղյուսակում կան ինչպես նոր հիմնված կամ-

պանիաներ, այնպես և իրեն կապիտալը մեծացրած հին կամպանիաներ։ Ցեթե մենք վերցնենք տեքստիլ արդյունագործությունը, այն ժամանակ կտեսնենք, որ նոր կամպանիաներ կան 3, իրենց կապիտալը մեծացրած՝ միայն 12։ Այդ կապիտալի հարաբերությունն այսպես է. նոր ձեռնարկությունների մեջ է անցկացված 2,6 միլ., իսկ հներին, այսինքն՝ ավելացված է 31 միլ., իսկ յեթե վերցնենք մետաղագործական ձեռնարկությունները՝ կտեսնենք նոր ձեռնարկություններ 17, հին իրենց կապիտալը ավելացրած է 21։ Նոր է դրված 25,5 միլ., իսկ հներին է ավելացված 38,5 միլ. այսինքն, ավելի շատ, քան տեքստիլում։ Հետո գալիս են հանքային ձեռնարկությունները՝ կապված մետաղագործության հետ։ Այստեղ մենք ունենք այսպիսի թվեր. 20 նոր, 23 մեծացրած կապիտալով, նորերի մեջ է անցկացված 45 միլ., հներին է ավելացված 63 միլ.։ Ցեվ, վերջապես, քիմիական գործարանները, որոնք վառոդ, պայթուցիկ և այլ նյութեր են պատրաստում. նոր բացվում են 7, հները, ավելացված կապիտալով՝ 10, նորերին ավելացված է 14,4 միլ., իսկ հներին՝ 6 միլ։

Դուք տեսնում եք, որ լայն ընդլայնություն-սպառման շուկան պատերազմից ավելի քիչ ոգտվեց, բայց այդ էլ ոգտվեց, որովհետև գինվորներին պիտի մատակարարելին վոչ միայն հրացաններ, ռումբեր, փամփուշտներ և այլն, այլ պետք եր նրանց նաև հագցնել։ Ինտենդանտստվոն հյուսվածքների մի այնպիսի հսկայական քանակություն պահեստներ եր պատրաստել, որ 1918 թվի գարնանը Մոսկվայի խորհրդում լուրջ մտածողության առարկա դարձավ, թե հյուսվածքների այդ պաշարները բնակչությանը բաց չթողնել, որովհետև այն ժամանակ մանուֆակտուրային մեծ սով կար, բոլորը մերկ եյին մնում գալիս, պատառոտված, բայց գինտենդանտային պահեստներում, միայն Մոսկվայինը», պահած եյին 10 միլ. արշին զանազան հյուսվածքներ՝ չափազանց մեծ քանակությամբ։ Բայց այս բոլորը հետո կարմիր բանակի մատակարարման անցան և, ըստ յերևույթին, պաշարը դեռ յերկար ժամանակ կբավականացներ։ Բայց և այնպես տեքստիլ գործարանները պատերազմի հետևանքով ավելի քիչ կենդանություն ձեռք բերին, մինչդեռ մետաղագործությունը, հանքագործությունը, քիմիան արտաքին կարգի զարգացման հասան։ Ռուսական արդյունաբերության արտադրողականությունն ընդհանուր առմամբ այսպիսի չափերի հասավ։ Ցես վերցնում եմ 1913 թիվը, իբրև նորմալ տարի. 1913 թվին, ամբողջ արտադրությունը գնահատվում եր 5,620,000,000 վոսկի ռուբ., այնուհետև 1915 թվին, յերկու տարուց հետո արդեն 6,250,000,000, իսկ 1916 թ. 6,831,000,000։

Չափազանց հետաքրքիր է այդ. չափազանց հետաքրքիր նաև հայրենասիրական ամբողջ տրամադրության գնահատման տեսակետից,

ինչպես և պատերազմի քաղաքական պատմության համար շատ կարեվոր է նշել այն, վոր այդ ամբողջ բարիքը թափվում եր բուրժուազիայի վրա վոչ այնքան անմիջականորեն պատերազմից, վորքան ռուսական բանակի պարտությունից։ Բանն այն է, վոր պատերազմի առաջին տարում մեր մետաղագործությունը վոչ միայն չաշխուժացավ, այլ, ընդհակառակն, մեռավ, այս վկայում է ի միջի այլոց, բանվորների քանակը Պետերում։ 1914 թ. մարտի մեկին Պետերում հաշվվում եր ընդհանրապես 280,000 բանվոր, իսկ 1914 թ. սեպտեմբերին արդեն՝ 197,300. բանվորները նշանակալից քանակությամբ զորահավաքի յենթարկվեցին, իսկ գործարանատերերը սրան շատ չդիմադրեցին, վորովհետև իրենց գործը սկսվեց լուծությամբ անցնել։ Բուրժուազիան գինվորական եկոնոմիկայի անտեսուհին դարձավ և փաստացի ղեկավարող ուժը 1915 թվի ամառվանից։—

(Մ. Պակրովսկի—«19 և 20-րդ դարերի հեղափոխական շարժման պատմությունը», ուրվագծեր։ Իններորդ դասախոսություն)։

Ե ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.

1913 թվին, և մանավանդ 1914 թվի սկզբին, բանվորական շարժումն իր նոր փուլը թևակոխեց՝ գործադուլներից նորից դեպի ցույցերն ու բացարձակ ընդհարումներն անցնելով։ Կասկածից դուրս է, վոր պատերազմն սկզբում կասեցնում եր այս շարժումը։ Արդեն 1914 թվի սկզբում Պետերբուրգում առանձին բարրիկադներ կառուցվեցին, իսկ գործադուլներն այնպիսի լայն և փոթորկոտ ալիքով եյին զարգանում, վոր այլևս չկար այն ուժը, վոր կարողանար այս վաղուց հասունացած շարժումը կասեցնել։ Կրկնում եմ, յեթե պատերազմը չլիներ, յերևի 1915 թվին դուք կտեսնեյիք 1905 թվին շատ նման դեպքեր, այն տարբերությամբ միայն, վոր այս անգամ գյուղացիությունը շատ ավելի գիտակից կերպով հանդես կգար։ Բայց, մյուս կողմից, յեթե իմպերիալիստական պատերազմը վորոշ չափով կասեցրեց հեղափոխությունը, սակայն հետո այս պատերազմի հետևանքները հեղափոխականացրին Ռուսաստանը և մեզ համար հնարավորություն դարձրին «դեմոկրատական հեղափոխությունը» բանաձևը փոխել «պրոլետարական հեղափոխություն» բանձևով։

1914 թվի սկզբում մեր կուսակցությունը բանվոր դասակարգի հեգեմոններ՝ բառիս ամենալայն իմաստով։ Կուսակցությունն այդ ժամանակ անլեգալ եր։ Նրա կենտրոնական կոմիտեի զգալի մասն արտասահմանումն եր գտնվում։ Ընկ. Լենինը և մի քանի այլ ընկերներ տեղափոխվեցին Կրակով։ Այնտեղից նրանք «Պրավդան» և «Զվեզդան» եյին ղեկավարում, և Պետերբուրգից էլ այդտեղ եյին գալիս տասնյակ

ընկերներ՝ կարևորագույն հարցեր քննելու համար։ Միաժամանակ մենք ունեցինք մեր շտաբները Պետերբուրգում և Մոսկվայում, վորոնք աշխատում եյին լեգալ և անլեգալ հողի վրա։ Ինչքանի յեր հասնում կուսակցության թիվը այն ժամանակ, դժվար ե ասել։ Վերջին անգամ, յերբ կուսակցությունը կիսալեգալ եր, և մեզ հաջողվեց հաշվառում կատարել 1907 թվին Լոնդոնի համագումարում, բոլոր ֆրակցիաներում միասին վերցրած՝ բոլշևիկյան, մենշևիկյան և ազգային՝ մոտ 150,000 մարդ կար։ 1914 թվին մենք չեյինք կարող ճշտությամբ ասել, թե վորքան անդամ ունենք, բայց մենք հաստատ գիտեյինք, վոր մեզ հետևում եր կազմակերպված բանվորների խոշոր մեծամասնությունը։ Նույն թվին, ինչպես նոր ասացի, բանվորական շարժումը փողոց ե դուրս գալիս։ Առաջին բարրիկադները հենց պատերազմի հայտարարման նախորյակին եյին։ Այն ժամանակ դրությունն այն աստիճանի սրվեց, վոր, ամենայն հավանականությամբ, մեր ֆրակցիան կձերբակալվեր, վորովհետև Դումայի մեր ներկայացուցիչները Պետրովսկու, Մուրանովի և Բադայեվի գլխավորությամբ իսկական հեղափոխական ոջախ եյին դառնում։ Նրանց անընդհատ բռնոտում եյին՝ Բադայեվին Պուտիլովի գործարանում, անլեգալ մասսայական ժողովներում, իսկ Պետրովսկուն Դոնի ավազանի ածխահանքերի անլեգալ ժողովներում։ Այս բոլորը պարզ կերպով ապացուցում եր, վոր հեղափոխական շարժումը հսկայական քայլ ե արել։ Ոգոստոսյան բլոկն անզոր դուրս յեկավ, սկսեց քայքայվել և ջլատվել, և քանի այդ պրոցեսը զարգանում եր, նրա լավագույն մասն աստիճանաբար մեր կողմն եր անցնում։ Մենշևիկ-լիկվիդատորները, չնայած վոր լայն ժողովրդականություն ստացած մարդիկ և հռետորներ ունեյին (ինչպես Չխեիձեն Դումայում), այնուամենայնիվ բանվորական մասսաների մեջ չնչին փոքրամասնություն եյին կազմում։

Այսպիսի դրության մեջ եյինք մենք իմպերիալիստական պատերազմի սկզբին։

Նրան հետևեց կուսակցության գրեթե կատարյալ քայքայումը։ Նախ և առաջ ձերբակալվեց Դումայի մեր ֆրակցիան՝ հինգ պատգամավորներ։ (Մենշևիկներին ձեռք չտվին)։ Նրանց ձերբակալեցին Պետրոգրադի մոտ գտնվող գյուղերից մեկում ուրիշ ընկերների հետ, անլեգալ ժողովի ժամանակ։ Ձերբակալված պատգամավորների մոտ գըտան մեր Կենտրոնական Կոմիտեյի կոչը իմպերիալիստական պատերազմի առթիվ, վոր գրել եր ընկ. Լենինն արտասահմանում։ Այս կոչի մեջ մենք առաջին անգամ իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական դարձնելու լոզունգն եյինք առաջադրում։ Այս լոզունգն այժմ լայն բանվորական մասսաների սեփականությունն ե կազմում և մի ինչ-վոր ինքնըստինքյան հասկանալի բան ե թվում։ Սակայն այն ժամանակ այդ այդպես չեր, և II Ինտերնացիոնալի բանակում մեզ վրա նայում

եյին, բռնացիորեն, վորպես ժանտախտով վարակվածների վրա։ Յերբ մենք հայտարարեցինք, վոր այդ պատերազմը պետք ե քաղաքացիական դարձնել, ուղղել ընդդեմ բուրժուազիայի, մեզ լուրջ կերպով սկսեցին ակնարկել թե ակներև ե, վոր «մեր գլխում ինչ-վոր բան պակաս ե»։ Մենք դիմեցինք II Ինտերնացիոնալում գտնվող ձախերից ամենաձախին՝ Ռոբերտ Գրիմմին՝ խնդրելով, վորպեսզի նա մեր կոչից համառոտ քաղվածքներ տպի, սակայն նա մեզ վրա դառն խղճահարությամբ նայեց, վորպես հոգեպես հիվանդ մարդկանց վրա, և ասաց, վոր չի կարող քաղաքական զառանցանք հիշեցնող դոկումենտներ տպագրել։ Իսկ յերբ մենք համարձակություն ունեցանք ասելու, վոր II Ինտերնացիոնալը սնանկացավ և կործանվեց, մեզ սկսեցին պարզապես մատով ցույց տալ։ Հանաք բան եր․ չե՞ վոր II Ինտերնացիոնալը խոշոր հեղինակություն ուներ և, ինչպես ասում եյին, իր շարքերում մինչև 25 միլիոն կազմակերպված բանվոր ուներ։ «Ճիշտ ե, նրան չհաջողվեց,—վշտանում եյին այն ժամանակվա ավգուրները՝ II Ինտերնացիոնալի ղեկավարները, ինչպես որինակ Կաուցկին,—պատերազմի առաջն առնել, սակայն ինչ կարելի յե անել։ Չե՞ վոր Ինտերնացիոնալը խաղաղ ժամանակի գործիք ե, և վոչ թե պատերազմի միջոց, վորի ժամանակ դասակարգային պայքարը պետք ե դադարեցվի»։ Յեվ այս բոլոր պարոնները կարծես թե պայմանավորվել եյին իրար հետ փոխադարձ ամնիստիայի վերաբերմամբ․ թող գերմանական սոցիալ-դեմոկրատիան պաշտպանի իր կառավարությունը, ֆրանսիականը՝ իրենը, անգլիականը՝ իրենը, իսկ յերբ պատերազմը կվերջանա, այն ժամանակ բոլոր սոցիալ-դեմոկրատները կհավաքվեն միասին և իրար մեղքերի թողություն տալով, կասեն․ «Վոչինչ չի կարելի անել․ մի փոքր թյուրիմացություն պատահեց՝ միքանի միլիոն բանվոր մորթոտեցին, սակայն այդ այլևս չի լինի»։ Յեվ ահա, յերբ այս բոլորից հետո բոլշևիկները՝ II Ինտերնացիոնալի մեջ մտնող տասնյակ կուսակցությունների թվում մեր անլեգալ կուսակցության ներկայացուցիչները՝ նրանց յերեսին ասացին, վոր նրանք դավաճաններ են, վոր II Ինտերնացիոնալը խայտառակ սնանկություն կրեց, վոր նրանք բանվոր դասակարգի դավաճաններ են, մեզ բարոյական բոյկոտ հայտարարեցին և մեծ ջանքով լռում եյին այն բոլորի մասին, ինչ մենք գրում եյինք։ Մեր յելույթների վրա ուշադրություն դարձնողներից առաջինները, ինչքան ել վոր այդ տարորինակ ե, բուրժուական քաղաքագետներն եյին։ Մի գերմանացի պրոֆեսոր հիշյալ կոչի և նրանից հետո լույս տեսած «Սոցիալիզմ և պատերազմ» բրոշյուրների առթիվ հանդես յեկավ գիտական ուսումնասիրությամբ, վորի մեջ նա ասում եր․ «Չի կարելի, սակայն, չգնահատել այս յերևույթը։ Կարելի յե մխիթարվել նրանով, վոր այս մարդիկ խելագար են, բայց պետք ե ինկատի ունենալ նաև այն, վոր սո-

ցխալիզմի, միջազգային բանվորական շարժման մեջ ինչ-որ նոր հոսանք և հաստատել, և որ մենք՝ բուրժուաներս պետք է այդ ականջի յետև չգցենք»։ Ինչպես եվ որ լինի, II Ինտերնացիոնալը յենթարկեց մեզ բարոյական խեղդատութեան, լռում եր մեր յեղուլթների և մեր մասին, վորպես ֆանատազյորների, վորոնց յետևից վոչ վոք չի գնում, և վորոնք պարզապես զառանցանքների յետևից են ընկած։

Բավական է ասել, վոր այն ժամանակ նույնիսկ այնպիսի մարդիկ, ինչպիսին Լիբկնեխտն է, վոր հենց սկզբից պատերազմի դեմ արտահայտվեց, չեյին համարձակվում, այնուամենայնիվ, պատերազմական վարկերի դեմ քվեարկել՝ այնքան դեռ ուժեղ եր հին կուսակցական սոցիալ-դեմոկրատական դիսցիպլինայի և բուրժուական հասարակական կարծիքի ճնշումը՝ հանձինս նրա բազմալեզու մամուլի։ Ուստի և պարզ է, թե ինչ ընդունելության հույս կարող եր ունենալ մեր կենտրոնական կոմիտեյի կոչը։ Կոմիտեն ամբողջովին արտասահմանում չեր գտնվում։ Նրա մի մասը Պետրոգրադում եր գտնվում, ձերբակալվեց հեշյալ դոկումենտի հետևանքով և դատի հանձնվեց։ Պետք է ասել, վոր այդ դատավարության ժամանակ վոչ բոլոր ընկերներն իրենց վայել հաստատակամություն ցույց տվին, սակայն մեր մի շարք ընկերները՝ առանձնապես Մուրանովը, Պետրովսկին և Բադաևը ցույց տվին, թե ինչ և հեղափոխական պարլամենտարիզմը։ Դատարանում կարդում եյին Պետրովսկու հուշատետրը, վորն իր ամենորյա գործունեյությունն արձանագրելու թույլտվությունն ուներ։ Անլեգալ աշխատանքի ժամանակ այդ, իհարկե, պետք չեր անել, սակայն Պետրովսկին իր պատգամավորական անձեռնմխելիության վրա հույս ուներ, և կարծում եր, թե այդ շռայլությունը կարող է իրեն թույլ տալ։ Այս իրային ապացույցը ժանդարմերիայի ձեռքն ընկավ և կարդացվեց դատավարության ժամանակ։ Սակայն չկա չարիք առանց բարիքի։ Պետրովսկու հուշատետրը ցույց տվեց ամբողջ աշխարհի բանվորներին, վորոնք ջերմ հետաքրքրություն եյին ցույց տալիս դեպի այդ գործը, թե ինչպես պետք է աշխատի պարլամենտում բանվորական պատգամավորը։ Յերևաց, վոր Պետրովսկին որեցոր վոչ թե Դումայում հեռատորական վարժությունների յեր նվիրվում, այլ անլեգալ աշխատանքի՝ հավաքույթների, ժողովների և անլեգալ խորհրդակցությունների, այսինքն՝ վորպես պարլամենտական պատգամավոր անլեգալ աշխատանքը միացնում եր լեգալ աշխատանքի հետ։ Այս իմաստով Դումայի ֆրակցիայի այս դատավարությունն անպայման խոշոր նշանակություն ուներ և բայշևիկյան աշխատանքի որինակ է ցույց տալիս։

Բայշևիզմն ընդհանրապես, իրաց առյալ միքանի զուտ անձնական բացառություններ, կանգնեց ինտերնացիոնալիստական և հակաշովինիստական տեսակետի վրա, այսինքն՝ ընդդեմ պատերազմի։ Մենշևիկները և, իրաց առյալ միքանի բացառություններ (որինակ՝ Մարտովի պես, վորը վճռականություն չուներ վորոշակի կերպով այո կամ վոչ ասելու), պատերազմի կողմնակիցներ եյին։ Նրանց հայացքին եյին նաև եսերները։

Պատերազմն, իհարկե, ամենալուրջ փորձն եր ամբողջ կուսակցության համար։ Այդ մի իսկական քուրա յեր, վորի միջից նա ստիպված յեղավ անցնելու։ Սակայն նա այդ փորձին դիմացավ և մինչև վերջը շարունակեց իր ինտերնացիոնալիստական ուղղությունը՝ գործով ցույց տալով իր նվիրվածությունը բանվոր դասակարգին։ Պատահական չե այն, վոր մենշևիկները և եսերները պատերազմի կողմնակից դուրս յեկան։ Այստեղ դեպքերի տրամաբանական կապ կար։ Մենշևիկներն անցան իրենց ուղին՝ սկսելով լեգալ մարքսիզմի աջ թևից և հասնելով մինչև եկոնոմիզմ, լիկվիդատորություն, պատսպանովշչից և հասնելով մինչև եկոնոմիզմ, լիկվիդատորություն, պատսպանողականություն և սոցիալ-շովինիզմ։ Գրեթե, նույնը տեղի ունեցավ նաև եսերների հետ։ Իսկ բայշևիկներն անցան «հակրայից» դեպի բայշևիզմ, հակալիկվիդատորություն, ինտերնացիոնալիզմ և կոմմունիզմ։

(Գ. Զինովև։ «Ռ. կ. կ. (բ.) պատմությունը», եջ 160—164)։

Ա. ԲԱՅՇԵՎԻԶՄԻ ՏԱԿՏԻԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Միայն այդ հոսանքները, բայշևիկական ու մենշևիկական, միայն իրանք արտահայտեցին իրանց մասսաների քաղաքականության մեջ 1904—1908 թ. թ., ինչպես և հետո, 1908—1914 թ. թ.։ Ինչո՞ւ։ Վորովհետև միայն այդ հոսանքներն ունեյին ամուր դասակարգային արմատներ. առաջինը՝ պրոլետարական, յերկրորդը՝ լիբերալ-բուրժուական։

Այժմ մենք նորից դեպի հեղափոխություն ենք գնում։ Այդ տեսնում են բոլորը։ Ինքը Խվոստովն է խոսում գյուղացիների տրամադրության մասին, վոր հիշեցնում է 1905—1906 թ. թ.։ Յեվ կրկին մեր առաջ հեղափոխության նույն յերկու գիծն է, դասակարգերի նույն հարաբերությունը, միայն ձևափոխված շնորհիվ միջազգային փոփոխված կացության։ 1905 թվականին ամբողջ յեվրոպական պետությունների կողմնակիցն եր և ոգնում եր նրան—վորը մյուս երկրներում (Ֆրանսիացիները), վորը հակահեղափոխական բանակ պատրաստելով (գերմանացիները)։ 1914 թվականին բռնկվեց յեվրոպական պատերազմը. բուրժուազիան ամենուրեք ժամանակավորապես հաղթեց պրոլետարիատին, նացիոնալիզմի ու շովինիզմի պղտոր վտակներով ողողեց նրան։ Ռուսաստանում մանր-բուրժուական ժողովրդական մասսաները, գլխավորապես գյուղացիությունը՝ առաջվանպես բնակչու-

թյան մեծամասնությունն են կազմում։ Նրանք առաջին հերթին ճնշված են կալվածատերերի կողմից։ Նրանք քաղաքականորեն մասամբ նիրհում են, մասամբ տատանվում են շովինիզմի («հաղթություն Գերմանիայի դեմ», «հայրենիքի պաշտպանություն») և հեղափոխության միջև։ Այդ մասսաների և այդ տատանումների քաղաքական արտահայտիչներն են հանդիսանում մի կողմից նարոդնիկները (աշխատավորական՝ և սոցիալիստ-հեղափոխականներ), մյուս կողմից ոպպորտյունիստ սոցիալ-դեմոկրատները («Նաշե Դելո»—Պլեխանով, Զխեյձեի, Ֆրակցիան, Կազմկոմիտեն), որոնք 1910 թվականից վճռականորեն դուրս են սկսել լիբերալ բանվորական քաղաքականության արահետով և 1915 թվականին հասել են պ. պ. Պոտրեսովի, Չերևանինի, Լեվիցկու, Մասլովի սոցիալ-շովինիզմին կամ նրանց հետ «միասնականության» պահպանելու պահանջին։

Այդ փաստական վիճակից ակներևորեն բղխում է պրոլետարիատի անելիքը։ Անձնվեր խիղախ հեղափոխական պայքար միապետության դեմ (1912 թ. հունվարի կոնֆերենցիայի լոզունգները, «յերեք կետ ձկները»). պայքար, որ իր յետևից քաշում է բոլոր դեմոկրատիկ մասսաները, այսինքն գլխավորապես գյուղացիությունը։ Ցեվ դրա հետ միասին անողոք պայքար շովինիզմի դեմ, պայքար Ցեվրոպայի սոցիալիստական հեղափոխության համար դաշնակցած ուրա պրոլետարիատի հետ։ Մանր բուրժուական տատանումները պատահական չեն, այլ անխուսափելի. նրանք բղխում են նրա դասակարգային վիճակից։ Ռազմական կրիզիսն ուժեղացրել է տնտեսական և քաղաքական գործոնները, որոնք հրում են նրան—և գյուղացիությունն այդ թվում—դեպի ձախ։ Դրա մեջ է կայանում օբյեկտիվ հիմքը, թե դեմոկրատական հեղափոխությունը լիակատար հնարավորություն ունի հաղթություն շահելու Ռուսաստանում։ Վոր Արևմտյան Ցեվրոպայում լուծին հասունացել են սոցիալիստական հեղափոխության օբյեկտիվ պայմանները,—դա ապացուցելու մենք կարիք չունենք այստեղ. դա պատերազմից առաջ ճանաչել են բոլոր ազդեցիկ սոցիալիստները բոլոր առաջավոր յերկրներում։

... Պրոլետարիատը պայքարում է և պիտի անձնվիրաբար պայքարի իշխանությունը նվաճելու համար, հանրապետության համար, հողերը գրավելու համար, այսինքն նրա համար, վոր գյուղացիությունն իր կողմը գրավի, պիտի պայքարի նրա հեղափոխական ուժերն սպառելու համար, պիտի պայքարի նրա համար, վոր «վոչ պրոլետարական ժողովրդական մասսաներին» մանակից դարձնե բուրժուական Ռուսաստանը ռազմա-ֆեոդալական «իմպերիալիզմից» (=ցարիզմից) ազատագրելու գործին։ Ցեվ բուրժուական Ռուսաստանի ցարիզմից, կալվածատերերի հողի իշխանությունից ազատագրվելու այդ հանգամանքից պրոլետարիատն անհապաղ ոգուտ կքաղե չե թե աջակցելու ենթ. ո վոր գյուղացիներին գյուղական բանվորի դեմ մղած նրանց պայքարի մեջ, այլ սոցիալիստական հեղափոխություն կատարելու դաշնակցած Ցեվրոպայի պրոլետարների հետ։

(Վ. Ի. Լենին, Ցերկերի ժողովածու, հ. XIII, եջ 212—214։ «Հեղափոխության յերկու գծի մասին» հոդվածը, ռուսերեն)։

Ը. ՆՈՐԻՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՑԵՎ ՍՈՑԻԱԼ-ԴԱՎԱՃԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Պատերազմը ծնունդ է պետությունների միջև գոյություն ունեցող իմպերիալիստական հարաբերությունների, այսինքն՝ ավարը բաժանելու համար մղած կռվի, այն բանի համար, թե ով պետք է կուլ տա այս կամ այն գաղութները և մանր պետությունները, ըստ վորում այս պատերազմում առաջին տեղը բռնում են յերկու ընդհարում։ Առաջինը՝ Անգլիայի և Գերմանիայի մեջ։ Յերկրորդը՝ Գերմանիայի և Ռուսաստանի։ Այդ յերեք մեծ պետությունները—մեծ ճանապարհի այդ յերեք մեծ ավազակները ներկայիս պատերազմի ամենագլխավոր մեծությունները են. մնացածները ինքնուրույնությունից զուրկ դաշնակիցներ են։

Այդ ընդհարումները նախապատրաստվում էին պատերազմին նախորդող միևնոյն տասնամյակների ընթացքում այդ պետությունների վարած ամբողջ քաղաքականությամբ։ Անգլիան կռվում է Գերմանիայի գաղութները թալանելու և իր գլխավոր մրցակցին քանդելու, ավերելու համար, այն մրցակցին, վորն անխնայորեն հարվածում եր նրան իր գերազանց տեխնիկայով, կազմակերպությամբ առևտրական յեռանդով, հարվածում եր և հարվածեց այնպես, վոր Անգլիան առանց պատերազմի չեր կարող պահպանել իր համաշխարհային տիրապետությունը։ Գերմանիան կռվում է նրա համար, վորովհետև իր կապիտալիստներն համարում են, և կատարելապես իրավացիորեն, վոր իրենք համաշխարհային առաջնության «սրբազան» բուրժուական իրավունք ունեն՝ գաղութները և կախում ունեցող յերկրները թալանելու գործում, մասնավորապես կռվում է Բալկանյան յերկիրներն ու Տաճկաստանն իրեն յենթարկելու համար, Ռուսաստանը պատերազմում է Գալիցիայի համար, վորը կլնելու համար, Ռուսաստանը պատերազմում է Գալիցիայի համար, վորը նրան առանձնապես անհրաժեշտ է ուկրայնական ժողովրդին խեղդելու համար (այդ ժողովուրդն բացի Գալիցիայից աղատության այլ անկյուն չունի և չի կարող ունենալ իհարկե, համեմատաբար), Հայաստանի և Կոնստանդնուպոլսի համար, հետո՝ նույնպես Բալկանյան յերկրները իրեն յենթարկելու համար։

Գերմանիայի և Ռուսաստանի ավազակային «շահերի» ընդհարման հետ միասին գոյություն ունի վոչ պակաս—յեթե վոչ ավելի—խոր

ընդհարում Ռուսաստանի և Անգլիայի միջև։ Ռուսաստանի իմպերիալիստական քաղաքականության խնդիրը, որ որոշվում է մեծ պետությունների դարավոր մրցակցությամբ և նրանց միջազգային օբյեկտիվ փոխհարաբերությամբ, համառոտ կերպով այսպես կարելի է ձևակերպել. Անգլիայի և Ֆրանսիայի ոգնությամբ Եվրոպայում ջարդել Գերմանիային, որպեսզի Թալանի Ավտարիան (իսկ Գալիցիան) և Տաճկաստանը (իսկ Հայաստանը և մանավանդ Կոստանդնուպոլիսը)։ Եվ հետո՝ Ցապոնիայի և նույն Գերմանիայի ոգնությամբ՝ Ասիայում ջարդի Անգլիային, որպեսզի իսկ ամբողջ Պարսկաստանը, ավարտի Չինաստանի բաժանումը և այլն։

Թե Պոլիսը և թե Ասիայի ավելի մեծ մասը նվաճելու համար ցարիզմը ձգտում էր դարերով, սիստեմատիկ կերպով կլերառելու համապատասխան քաղաքականություն և այդ նպատակի համար ոգտագործելով մեծ պետությունների մեջ յեղած ամեն տեսակի հակասությունները և ընդհարումները։ Այդ ձգտումների դեմ, իրըև ավելի ուժեղ հակառակորդ, ավելի յերկար ժամանակ և ավելի համառորեն հանդես էր գալիս Անգլիան, քան Գերմանիան։

1878 թվից սկսած, յերբ ռուսական զորքերը մոտենում էին Կոնստանդնուպոլսին և անգլիական նավատորմիղը յերևաց Դարդանելի առաջ սպառնալով գնդակահարել ռուսներին հենց վոր նրանք յերևան «Ցարգրադում», մինչև 1885 թ., յերբ մաղ էր ճնում, վոր Մի֊ջին Ասիայի ավարի համար (Աղվանստան, ռուսական զորքերի շարժումը դեպի Մի֊ջին Ասիայի խորքը սպառնում էր Անգլիայի տիրապետությանը՝ Հնդկաստանին) Ռուսաստանի և Անգլիայի միջև պատերազմ ծագեր և մինչև 1902 թ., յերբ Անգլիան դաշն կապեց Ցապոնիայի հետ, նախապատրաստելով պատերազմ Ռուսաստանի դեմ—այդ ամբողջ ժամանակընթացքում Անգլիան ամենահզոր թշնամին էր Ռուսաստանի թալանչիական ավազակային քաղաքականության, վորովհետև Ռուսաստանը սպառնում էր ջարդել Անգլիայի տիրապետությունը՝ մի շարք ոտար ժողովուրդների վրա։

Իսկ այժմ։ Տեսնք, թե ինչ է կատարվում ներկա պատերազմում։ Ուշադրի անտանելի յեն լսել պրոլետարիատի շարքերից բուրժուազիայի կողմն անցած «սոցիալիստներին», վորոնք դատում, քննում են Ռուսաստանի գործը ներկա պատերազմում «հայրենիքի պաշտպանության» մասին (Զխեյիձե)։ Անտանելի յեն լսել քաղցրախոս Կաուցկուն և կամալանիային, վորոնք դեմոկրատական հաշտության մասին այնպես են խոսում, կարծես թե այժմյան և ընդհանրապես բուրժուական կառավարությունները կարող են այդ անել։

Վորովհետև այդ կառավարություններն իրոք գաղտնի պայմանագրերի ցանցով կապված են միմյանց հետ, իրենց դաշնակիցների հետ և ընդդեմ դաշնակիցների, ըստ վորում այդ պայմանագրերի բովանդակությունը չի վորոշված, պատահաբար, վոչ միայն «չար կամքով», այլ կախված է իմպերիալիստական արտաքին քաղաքականության ամբողջ ընթացքից և զարգացումից։ Այդ «սոցիալիստները», վորոնք բանվորների աչքերն ու ուղեղը թող են փչում ընդհանրապես լավ բաների մասին՝ (հայրենիքի պաշտպանություն, դեմոկրատական խաղաղություն) դատարկ ֆրազներ ասելով, առանց մերկացնելու իրենց կառավարության գաղտնի պայմանագրերը ուրիշի յերկրները թալանելու մասին, այդպիսի «սոցիալիստները» կատարելապես դավաճանում են սոցիալիզմին։

Թե գերմանական, թե անգլիական և թե ռուսական կառավարությունների համար ձեռնտու յե, վոր սոցիալիստների բանակից նման ճառեր լսվեն բարի հաշտության մասին, վորովհետև դրանով, նախ՝ հավատ և ներշնչվում, թե ժամանակակից կառավարության որոք նման հաշտությունը հնարավոր է, յերկրորդ՝ ուշադրությունը նույն կառավարությունների ավազակային քաղաքականությունից այլ կողմն է ուղղվում։

Պատերազմը քաղաքականության շարունակությունն է։ Ցեվ քաղաքականությունն էլ նույնպես շարունակվում է պատերազմի ժամանակ։ Գերմանիան ունի գաղտնի պայմանագրեր Բուլղարիայի և Ավստրիայի հետ ավարը բաժանելու մասին և շարունակում է նման բանակցություններ վարել։ Ռուսաստանն ունի կնքված գաղտնի պայմանագրեր Անգլիայի, Ֆրանսիայի հետ և այլն։ Ցեվ այդ բոլորն էլ պատճառ թալանի համար են, ուղղված են Գերմանիայի դեմ նրա գաղութները թալանելու, Ավստրիան թալանելու, Տաճկաստանը բաժանելու համար և այլն։ Այն «սոցիալիստը», վորն իրերի այդպիսի դրության ժամանակ ժողովրդին և կառավարության համար ճառեր է ասում արդար հաշտության մասին, լիովին նման է այն տերտերին, վորը յեկեղեցում առաջին շարքում տեսնում է հասարակաց տուն պահող կնոջն ու գավառական պրիստավին, վորոնք լարված են միմյանց դեմ, և նրանց ու ժողովրդին «քարոզում է» սեր դեպի մերձավորը և հորդորում է պահպանել քրիստոնեական պատվիրանները։

Ռուսաստանի և Անգլիայի միջև անկասկած գոյություն ունի գաղտնի պայմանագիր, ի միջի այլոց, նաև Կ. Պոլսի մասին։ Հայտնի յե, վոր Ռուսաստանը հույս ունի Պոլիսը ստանալու, իսկ Անգլիան չի ուզում տալ, իսկ, յեթե տա էլ, կամ հետո կաշխատի հետ խլել, կամ այդ «դիջումը» այնպիսի պայմաններով կպատի, վորոնք ուղղված կլինեն Ռուսաստանի դեմ։ Գաղտնի պայմանագրի բովանդակությունը հայտնի չե, բայց վոր Ռուսաստանի և Անգլիայի միջև կռիվը հենց այդ հարցի շուրջն է պտտվում, այդ կռիվը մղվում է և հիմա, դա վոչ միայն

հայտնի չէ, այլև կասկածելու վոչ մի տեղիք չի տալիս։ Միևնույն ժամանակ հայտնի է, վոր Ռուսաստանի և Ցապոնիայի միջև, իլբացումն նախկին պայմանագրերի (որինակ 1910 թ. պայմանագրի, վորով Ցապոնիային թույլ է տրվում «կուլ տալ» Կորեյան, իսկ Ռուսաստանին՝ Մոնղոլիան) այժմ, նորա պատերազմի ժամանակ, նոր գաղտնի պայմանագիր է կնքված, ուղղված վոչ միայն Չինաստանի դեմ, այլ վորոշ չափ նայելով Անգլիայի դեմ։ Դա անկասկած է, թեև պայմանագրի բնագիրը հայտնի չէ։ Ցապոնիան 1904—1905 թ. թ. Անգլիայի ոգնությամբ հաղթեց Ռուսաստանին, իսկ այժմ զգուշությամբ հնարավորություն է նախապատրաստում, վորպեսզի Ռուսաստանի ոգնությամբ ջարդի Անգլիային։

...Եթե նախկին սոցիալիստ պ. Պլեխանովը գործն այնպես է պատկերացնում, վոր իբր թե Ռուսաստանում ռեակցիոներներն ընդհանրապես ուզում են Գերմանիայի հետ հաշտություն կնքել, իսկ «պրոգրեսիվ բուրժուազիան»՝ կործանել՝ «պրուսական միլիտարիզմը» և բռնկամանալ «դեմոկրատական» Անգլիայի հետ, ապա դա լոկ մանկական հեքյաթ է, հարմարեցրած քաղաքական մանուկների իմացության մակարդակին։ Սակայն գործով թե ցարիզմը, թե Ռուսաստանի ռեակցիոները, թե ամբողջ «պրոգրեսսիվ» բուրժուազիան (հոկտեմբերականներն ու կադետները) միայն մի բաց են ուզում. Ցեվրոպայում թալանել Գերմանիային, Ավստրիային և Տաճկաստանին, Ասիայում՝ հաղթել Անգլիային (խլել ամբողջ Պարսկաստանը, ամբողջ Մոնղոլիան, ամբողջ Տիբեթը և այլն)։ Այդ «սիրելի բարեկամների» մեջ, վեճն այն մասին է տարվում միայն, թե յերբ յեվ ինչպես շուռ գան Գերմանիայի դեմ կըռվելուց հետո Անգլիայի դեմ՝ կռվելու համար։ Միայն այդ բանի համար, թե՝ յերբ և ինչպես... Այս պատերազմն արդյոք մոտ ապագայում կվերջանա, թե՞ Ռուսաստանը ավելի յերկար «կդիմանա» Գերմանիային հաղթելու և Ավստրիային ավելի շատ թալանելու ձգտման մեջ, սերտ հաշտություն կնքելու բանակցությունները արդյոք ճարպիկ շանտաժիստ մանյովրի դերը կխաղան (ցարիզմն Անգլիային ցույց կտա Գերմանիայի հետ կնքվելիք պայմանագրի նախագիծը և կասի՝ այսքան միլիարդ ռուբլի և այսինչ դիջումները կամ յերաշխիքները, հակառակ դեպքում յես վաղն ևեթ կստորագրեմ այս պայմանագիրը)—համենայնդեպս իմպերիալիստական պատերազմը չի կարող վերջանալ ուրիշ կերպ, բացի իմպերիալիստական հաշտությունից, յեթե միայն այդ պատերազմը չվերածվի պրոլետարիատի և բուրժուազիայի մեջ քաղաքացիական պատերազմի՝ հանուն սոցիալիզմի։ Համենայն դեպս, բացի այդ վերջին յելքից, իմպերիալիստական պատերազմը կուժեղացնի իմպերիալիստական յերկրներ հզորագույն պետություններից՝ Անգլիայից, Գերմանիայից, և Ռուսաստանից, մեկին կամ մյուսին իհարկե թույլերի

(Սերբիա, Տաճկաստան, Բելգիա և այլն), ըստ վորում կատարելապես հնարավոր է, վոր պատերազմից հետո բոլոր այդ յերեք ավազակները կուժեղանան թալանածը (գաղութները, Բելգիան, Սերբիան, Հայաստանը) բաժանելուց հետո, և միայն այն մասին կկասեն վիճել, թե ինչ հարաբերությամբ պետք է բաժանեն այդ ավարը։

Համենայնդեպս, անխուսափելիորեն և անկասկածորեն կհիմարացնեն թե ամբողջական ու—ափշկարա սոցիալ-շովինիստներին, այսինքն՝ այն սուբյեկտներին, վորոնք այս պատերազմում ուղղակի ընդունում եյին հայրենիքի պաշտպանությունը և թե թերի, կիսատ ու քողարկված սոցիալ-շովինիստներին, այսինքն կուսակցականներին, վորոնք քարոզում եյին «խաղաղություն» ընդհանրապես «առանց հաղթողների և հաղթվածների» և այլն։ Աժեն մի խաղաղություն, վոր կկնքեն այս պատերազմն սկսող կամ նույն չափ բուրժուական կառավարությունները՝ պարզորոշ կերպով ցույց կտան բոլոր ժողովուրդներին, թե ինչպես իմպերիալիզմի սարուկների դերը խաղացին թե այս և թե այն սոցիալիստները։ Այս պատերազմն ինչպիսի յելք էլ վոր ունենա, ճիշտ կլինեն նրանք, ովքեր ասում եյին, թե այս պատերազմից սոցիալիզմի՝ քաղաքացիական պատերազմի կանցնի։ Ճիշտ դուրս կգան այն սոցիալ-դեմոկրատները, վորոնք ասում եյին, թե ցարիզմի պարտությունը, նրա ռազմական կատարյալ չախչախումը «համենայն դեպս» ամենափոքր չարիքն է։ Վորովհետև պատմությունը յերբեք մի տեղում կանգնած չի լինում. նա առաջ եր չարժվում նաև այս պատերազմի ժամանակ և, յեթե Ցեվրոպայի պրոլետարիատն այժմ չի կարող առաջ գնալ դեպի սոցիալիզմ, չի կարողանա իր վրայից թափել սոցիալ-շովինիստների և կաուցկիականների լուծն առաջին իմպերիալիստական մեծ պատերազմի ժամանակ, ապա Արևելյան Ցեվրոպան և Ասիան յոթ ժղնյա քայլերով առաջ դեպի դեմոկրատիան կգնան միայն այն դեպքում, յեթե ռազմականորեն լիովին չախչախվի ցարիզմը և նրանից հետո կիսաֆեոդալական տիպի իմպերիալիստական քաղաքականություն դործադրելու ամեն մի հնարավորություն։

Պատերազմը կսպանի, կվհատեցնի վերջնականապես այն ամենը, ինչ վոր թույլ է, նրանց թվում նաև սոցիալ շովինիզմը և կաուցկիականությունը։ Իմպերիալիստական հաշտությունն այդ թուլությունները կդարձնի ևս ավելի ցայտուն, տեսանելի, ևս ավելի ամոթալի, ևս ավելի զզվելի։

Ռ. Լենին.—«Սեպարատ հաշտության մասին». «Սոցիալ-դեմոկրատ» № 56 Նոյեմբերի 6-ին 1926 թ., Յերկերի ժողովածու, հատ. 13, էջ 366, յերկրորդ տպրաժ)։

Թ. 2-ՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՍՆԱՆԿԱՑՈՒՄԸ

1912 թ. Բազելի կոնգրեսը, վոր հրավիրված եր կանխելու համար Բալկանյան պատերազմի պատճառով Ցեվրոպային սպառնացող համաշխարհային պատերազմի վտանգը, կոչ արեց ամբողջ աշխարհի պրոլետարիատին՝ կովելու պատերազմի դեմ հետևյալ կերպ. «Յեթե այնուամենայնիվ պատերազմ ծագի, բանվոր դասակարգի պարտքն է հանդես գալ այն շուտափույթ կերպով վերջացնելու համար և ամենայն ուժերով ձգտել ոգտագործելու պատերազմից առաջացած տնտեսական և քաղաքական ճգնաժամը՝ ժողովրդին վոտքի կանգնեցնելու համար և դրանով վերացնելու կապիտալիստական դասակարգային տիրապետությունը»։

Կարողացավ, արդյոք, 2-րդ Ինտերնացիոնալը դիմանալ պատերազմի փորձությանը։ Վոչ. նա կործանվեց։ Միջազգային պրոլետարիատը դեռ ևս իվիճակի չեր համաձայնեցրած մասսայական գործողություններով խանգարելու պատերազմի առաջացումը։ Բայց դա քիչ է. բանվորների մեծամասնությունը դուրս եկավ, վոր խաղաղության և բանվորների միջազգային եղբայրության գաղափարները դեռ ևս բավականաչափ չեն թափանցել պրոլետարական մասսաների գիտակցության մեջ, ազգային զգացումը և հայրենիքի գաղափարը հաղթեցին միջազգայինին։ Դավաճանելով մեծ պատգամին—«պրոլետարներ բոլոր յերկրներուց միացեք»—սոցիալիստների մեծամասնությունը բոլոր յերկրներում (բացի Սերբիայից, Իտալիայից և Ռուսաստանից) կանգնեցին ազգային տեսակետի վրա. պատերազմին արագացվում եր հանուն հայրենիքի պաշտպանության, քարոզում եին դասակարգային հաշտություն բուրժուազիայի հետ, սոցիալիստները քվեարկում եին պատերազմական վարկերի ոգտին, մտնում եին բուրժուական մինիստրությունների կազմի մեջ։ Պատերազմող յերկրների բանվորների համար անհնարին դարձավ վոչ միայն միասին գործելը, այլև նույնիսկ միասին խորհրդակցելը։ Պատերազմը կործանեց Յերկրորդ Ինտերնացիոնալը։ Միայն պրոլետարիատի վորձված առաջնորդներից մի քանիսը, քչերը, հավատարիմ մնացին միջազգային սոցիալիզմի գաղափարներին, բայց նրանց խրոխտ կոչերը խեղդվում եին հայրենասիրական ձայների ծովում։

Իսկ ինչո՞վ կարելի յե բացատրել բուրժուազիայի հետ կնքված այս հաշտությունը։ Որինակի համար, վերցնենք գերմանական պրոլետարիատին։ Համեմատական, և այն էլ ժամանակավոր հանգամանքներում պայմանավորված բարեկեցիկ վիճակը գերմանական պրոլետարիատին դարձրեց ավելի խաղաղասեր, կարծես թե ընտելացրեց նրան բուրժուական պետության։ Մասսաների մեջ առաջ յեկավ և ամրացավ այն հավատը, թե հնարավոր է կապիտալիստական իրավակարգի

շրջանակներում բարելավել բանվորների դրությունը։ Սոցիալիզմն սկսեց թվալ մի ինչ վոր հեռավոր և, դուրս, պրոլետարիատի համար վոչ այքան էլ անհրաժեշտ բան։ Առանձնապես պայծառ, վառ կերպով մասսաների այդ տրամադրությունը արտահայտվեց արհմիություններ քի քաղաքականության մեջ։ Արհմիությունները ուժգին թափով սկսեցին կուտակում իրենց գանձարկղներում, ընդարձակում իրենց կազմակերպությունները և ավելի ու ավելի քիչ յեին վերածում կազմակերպել թանգ և մեծ ռիսկի հետ կապված գործադուլներ։

Նրանք իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացրին ընթացիկ պայքարի վրա, անտարբերությամբ վերաբերվելով այն բոլորին, ինչ վոր դուրս է գալիս որվա սահմաններից։ Նույն չափավորության վոգին ավելի ու ավելի թափանցում, համակում եր և սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը։ Ճիշտ է, միքանի առաջնորդների (ռեֆորմիստների կամ ռեվիզիոնիստների) փորձը՝ ուղղելու և մեղմացնելու Մարքսի հեղափոխական ուսմունքը, հանդիպեց պատշած դիմադրության, բայց ըստ իր գործելակերպի գերմանական սոցիալ-դեմոկրատիան—պառնում եր ավելի ու ավելի քիչ հեղափոխական։ Կուսակցությունն ոգտվում և փառաբանում եր միայն պայքարի պարլամենտական, լեգալ ձևերը, ուղղելով իր ամբողջ էներգիան ռեյխստագում և լանդտագներում վորքան կարելի յե շատ տեղեր նվաճելուն։ Պատգամավորական տեղերի հետևից ընկնելը և հավատը դեպի պարլամենտական պայքարի փրկարարությունը անխուսափելիորեն նրանց մոտեցնում եր բուրժուական կուսակցություններին, տանում եր դեպի ընտրական համաձայնությունների քաղաքականությունը, վերջքվերջ կուսների ժամանակ սոցիալիստական ագիտացիայի «իջեցմանը» վերջապես տանում եր դեպի զիջումների ուղին՝ հարկերիև միլիտարիզմի հարցերում։

(Ն. Անտոնով։ «Գերմանական Ս-Դ. և պատերազմը». ռուսերեն, էջ 5—8)։

Ժ. ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԴԵՊԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

2-րդ Ինտերնացիոնալի սնանկացումն ավելի ցայտուն և վրդովեցուցիչ կերպով արտահայտվեց նրանով, վոր Ցեվրոպայի պաշտոնական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների մեծամասնությունը աղաղակող կերպով դավաճանեց իրեն համոզմունքներին, Շտուտգարդի ու Բազելի հանդիսավոր բանաձևերին։ Բայց այդ սնանկությունը, վոր ոպորտյունիզմի լիակատար հաղթանակն եր նշանակում, վոր նշանակում եր, թե սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները վերածվել

են նացիոնալ-լիբերալ բանվորական կուսակցություններին,—հետեվանք է միայն 2-րդ Ինտերնացիոնալի ամբողջ պատմական եպոխայի՝ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Այդ դարաշրջանին,—որը անցողական և Արևմտյան Յեվրոպայի բուրժուական և ազգային հեղափոխությունների տապալումից դեպի սոցիալիստական հեղափոխությունները,— օբյեկտիվ պայմանները ծնեցին և սնեցին ոպպորտյունիզմը: Այդ ժամանակաընթացքում Յեվրոպայի մի քանի յերկրներում մենք բանվորական սոցիալիստական շարժման մեջ անջատում ենք նկատում, որը ընդհանուր առմամբ, ընթանում է հենց ոպպորտյունիզմի գծով (Անգլիա, Իտալիա, Հոլանդիա, Բուլղարիա, Ռուսաստան), իսկ ուրիշ յերկրներում՝ հոսանքների յերկարատև և հաստատ պայքար նույն գծով (Գերմանիա, Ֆրանսիա, Բելգիա, Շվեդիա, Շվեյցարիա): Մեծ պատերազմի ստեղծած ճգնաժամը բացեց քողը, դեն շպրտեց պայմանավորությունները, բացեց խոցը, որը վաղուց արդեն հասունացել էր, և ոպպորտյունիզմը ցուցաբերեց իր իսկական դերի մեջ՝ իբրև բուրժուազիայի դաշնակցի: Բանվորական կուսակցություններից այդ տարի լիովին, կազմակերպչորեն բաժանելը դարձավ անհրաժեշտ: Իմպերիալիստական եպոխան չի հաշտվում այն մտքի հետ, որ մի կուսակցության մեջ կողք-կողքի գոյություն ունենան հեղափոխական պրոլետարիատի առաջավոր տարրերը և բանվոր դասակարգի կիսամեշչանական արիստոկրատիան, որն ոգտվում է «իր» ազգի «գերիշխանական» դրությունից, բղխող արտոնությունների փշրանքներից: Հին թեորիան ոպպորտյունիզմի՝ իբրև միակ «ծայրահեղություններից» զուրկ կուսակցության «օրինական յերազի մասին՝ դարձավ բանվորների համար «մեծագույն խաբեբայություն և մեծագույն խոչընդոտ» բանվորական շարժման համար: Բայց, չքողարկված ոպպորտյունիզմը, որը միանգամից վանում է իրենից բանվորական մասսային, այնպես սարսափելի չէ, որքան վոսկե միջին այդ թեորիան, որ մարքսիստական բառերով արդարացնում է ոպպորտյունիստական պրակտիկան, մի շարք առիթաստություններով ապացուցում է հեղափոխական գործողությունների անժամանակ լինելը և այլն: Այդ տեսության ամենաաչքի ընկնող ներկայացուցիչը և միաժամանակ 2-րդ Ինտերնացիոնալի ամենաակնավոր հեղինակությունը, Կաուցկին, հայտնաբերեց իրեն, վորպես առաջնակարգ կեղծավոր և մարքսիզմը պրաստիտուցիայի յենթարկելու մեջ վորպես վիրտուոզ: Գերմանական միլիոնավոր կուսակցության մեջ չմնացին քիչ թե շատ աղնիվ և գիտակից հեղափոխական սոցիալ դեմոկրատներ, վորոնք վրդովմունքով յերես չդարձնելին այդ տեսակ «հեղինակությունից», վորին բուռն կերպով պաշտպանում են Զյուդեկումները և Շեյդեմաննները:

Պրոլետարական մասսաները, վորոնցից հավանորեն հին դեկավա-

րող շերտի իննը տասերորդ մասը անցավ բուրժուազիայի կողմը, ճնացին անոգնական ու բաժան յեղած շովինիզմի արշավի հանդեպ ազնվորական դրության և ազնվորական ցենզուրայի ճնշման տակ: Բայց պատերազմի ստեղծած, և շարունակ ընդարձակվող ու խորացող օբյեկտիվ հեղափոխական սիտուացիան անխուսափելիորեն ստեղծում է հեղափոխական տրամադրություններ, կուտում և լուսավորում է բոլոր լավագույն և ավելի գիտակից պրոլետարիատին: Մասսաների տրամադրության մեջ վոչ միայն հնարավոր է, այլ և ավելի ու ավելի հավանական է դառնում արագ վոլտ-փոխություններ, նման այն բանին վորը կապված է 1905 թվի սկզբին Ռուսաստանում—«Գապոնադայի» հետ, յերբ մի քանի ամսում, յերբեմն էլ մի քանի շաբաթվա մեջ, պրոլետարների հետամնաց խավերից առաջացավ պրոլետարիատի հեղափոխական ավանգարդի հետևից ընթացող միլիոնանոց բանակը:

Անկարելի չի իմանալ, թե այս պատերազմից հետո շուտով, կամ հենց պատերազմի ընթացքում և այլն, արդյոք կծավալվի հեղափոխական հզոր շարժումը, թե՞ վոչ. համենայն դեպս միայն այդ ուղղությամբ կատարված աշխատանքն արժանի կլինի սոցիալիստական աշխատանքի անունը կրելու: Միակ լոզունգը, վորն ընդհանրացնում և ուղղություն է տալիս այդ աշխատանքին, ոգնում է համախմբելու և ձուլելու նրանց, վորոնք ընդդեմ իրենց կառավարության և իրենց բուրժուազիայի կցանկանան ոգնել պրոլետարիատի հեղափոխական պայքարին՝ հանդիսանում է քաղաքացիական պատերազմի լոզունգը:—

Վ. Ի. Լենին: «Ինտերնացիոնալի մանկացումը»:
Յերկերի ժողովածու, հատ. 13-րդ, յերկրորդ տիրաժ՝ 1925 թ. էջ 179—180:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՅԵՐԿՐՈՐԴ (ՓԵՏՐՎԱՐՅԱՆ) ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՏԱՓԸ

Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն Ա Կ Ն Ա Ր Կ.

Փետրվարյան հեղափոխության դասակարգային բնույթը.

Մինչև Փետրվարյան հեղափոխությունը Ռուսաստանի եկոնոմիկան իր զարգացման ճանապարհին յերկու խնդիր ուներ առաջադրած՝ ա) հնարավորություններ այդ զարգացումը շարունակելու և բ) այդ զարգացումը խանգարող արգելքները վերացնելու։

Զարգացող կապիտալիզմը Ռուսաստանում իր դիմաց ուներ ճորտատիրական—կալվածատիրական իշխանությունը և մտայնությունը։ Կապիտալիստական արտադրական ուժերի զարգացումն այնպիսի միջավայրում էր տեղի ունենում, յերբ «վերնաշենքը» պատրաստ չէր և չէր էլ ցանկանում համապատասխան ուղիներ հաստատել՝ այդ զարգացումը կանոնավոր հունի մեջ դնելու համար։ Ուրիշ խոսքով՝ կալվածատիրական արտադրական հարաբերությունները ճնշում էին այդ զարգացման շրջանակը։

Դասակարգային փոխհարաբերությունն էլ նույն ուղիով էր ընթանում։ Տիրող դասակարգը՝ ազնվականությունը հանձինս իր պետության չէր ըմբռնում զարգացման ուղին և չէր էլ ցանկանում հնարավորություններ ստեղծել մի շարք հասունացած հարցերին բավարարություն տալու և համառ բթությամբ մինչև հեղափոխության որերը ելի շարունակում էր կառչած մնալ հին կարգերին։ Բացառություն էր այն ազնվականությունը, որ քաշվել էր առևտրական և արդյունաբերական կապիտալի շրջանառության մեջ և արագությամբ կորցնում էր իր իսկական «ազնվական» բնույթը։ Մյուս կողմից արդյունաբերության զարգացումը Ռուսաստանում կազմակերպել էր, առաջացրել էր մի նոր դասակարգ՝ բուրժուազիան։ Ռուսական բուրժուազիան նույն խնդիրներն և առաջադրում, ինչ որ Արևմտյան Ցեվրոպայի բուրժուազիան իր ժամանակին։ Բայց նա վերջինիս փորձը և մի շարք հեղափոխու-

թյուններ, պրոլետարիատի ակտիվության և իշխանությունը գրավելու ձգտումներն ի նկատի ունենալով՝ ավելի լավ համարեց ցարիզմի հետ դաշն կապել և այդպիսի ճանապարհով իր առաջ դրված հարցին լուծում տալ՝ առաջին հերթին դաշնակցելով «բուրժուացած ազնվականության հետ»։ «Վորքան դեպի արևելք, այնքան վախկոտ և բուրժուազիան» և հետու վճռական մինչևցների դիմելուց՝ յերկրի զարգացման ուղիները ապահովելու համար։

Այդպիսի պայմաններում էր աճում և զարգանում ռուսական պրոլետարիատը։ Նա իր հերթին ուներ մի շարք հեղափոխությունների փորձը Արևմուտքում, 1905 թ. հեղափոխությունը և ընդհանրապես ամբողջ բանվորական շարժումն 19 և 20-րդ դարերում։ Այսպիսի պայմաններում աճում էին իրենց հերթին ոպոզիցիոն տրամադրությունները լիբերալ բուրժուազիայի և մանր-բուրժուազիայի կողմից և հեղափոխական տրամադրությունները բանվոր դասակարգի և գյուղացիության կողմից, վորը նույնպես տիրող դասակարգից՝ կալվածատեր ազնվականությունից վոչինչ չէր ստացել՝ հակառակ 1861 թ. փետրվարի 19-ի մանիֆեստի, «Մեծ ռեֆորմների» և «ազատության որերի» 1905 թ. հեղափոխության ժամանակ։

Դրությունն այսպես էր, յերբ վրա հասավ համաշխարհային 1914 թվի պատերազմը, վոր քայքայեց յերկրի տնտեսությունը և իր հերթին ուժեղացրեց ոպոզիցիոն և հեղափոխական տրամադրությունները։

1917 թ. Ռուսաստանի բանվոր դասակարգը գյուղացիության լայն շերտերի աջակցությամբ ջախջախեց և խորտակեց բոլորին առելի ցարական կառավարությունը։ Հեղափոխության առաջին ետապում ցարական իշխանական բանակը՝ թեպետ ջախջախված էր, բայց վոչ վերջնական, նա շարունակում էր ամեն կերպ իր իշխանությունը վերականգնել և հին դիրքերին տեր դառնալ։ Մոշոր բուրժուազիան ձգտում էր ցարին փոխել մի ուրիշ ցարով և այդպիսով փաստացի վերականգնել նույն դրությունը, բայց արդեն իրեն չենթարկված։

Պետական իշխանությունն անցնում է նոր դասակարգին՝ բուրժուազիային։ Այժմ բուրժուազիայի առաջ դրված է յերկու խնդիր՝ դադել և խորտակել հեղափոխական պրոլետարիատի բոլոր ձգտումները և սպասելիքները հեղափոխությունից, ինչպես և խեղդել գյուղացիական շարժումները իր բնի մեջ, և փրկել «գահը», ապահովել իր իշխանությունը և իր սեփականությունը, սպասելիքները պատերազմից։

Այսպիսով բուրժուական դեմոկրատական հեղափոխությունը փաստացի շարունակեց ցարական կառավարության քաղաքականությունը՝ հաշտության, հողի, բանվորական հարցերի նկատմամբ հատկապես։ Ուրեմն, Փետրվարյան հեղափոխության հենց այս առաջին ետապը վերջացավ բուրժուական դեմոկրատական հեղափոխությամբ։

Իր դեմոկրատիայի սահմաններում բուրժուազիան ուժեղացնում է հակահեղափոխական պայքարը հեղափոխական մասսաների դեմ։ Հնաբավորությունները և վորոնում պատերազմը շարունակելու, հաշտության հարցի քննությունը ձգձգելու, չի վճռում մի շարք հիմնական հարցեր՝ բանվորական, հողային և այլն։ Հիմնադիր ժողովը չի հրավիրում։

Մյուս կողմից շարունակում է կենտրոնացնել իր շուրջը հակահեղափոխական ուժերին, ակնհայտնի մխապետականներին, չքաշվելով նրանց հանձնելու մինիստրությունների ղեկավարությունը և բանակի հրամանատարությունը հակահեղափոխական գեներալների ձեռքում թողնելով։ Գաղտնի բանակցություններ և վարում միապետությունը նորից հաստատելու համար։

Լիբերալ բուրժուազիան քարշ և գալիս խոշոր բուրժուազիայի հետևից և միաժամանակ աջակցում նրան, ժոռանալով իր լիբերալ թոթովանքները։ Մանր բուրժուական կուսակցությունների ներկայացուցիչները մտնում են ստեղծված ապարատի մեջ և թեթև աշխատանքներ ստանձնում, վորպեսզի, այսպիսով, ավելի լավ կերպով թող փչվի մասսաների աչքերին և մյուս կողմից դատարկահնչյուն ճառերով նրանք կարողանան վոգեվորել հասարակությանը և ճանապարհ բանալ բուրժուական հաղթանակի համար։

Այսպիսով բուրժուական նոր կառավարությունը հեղափոխական մասսաների նկատմամբ հակառակ ընթացք բռնեց։ Այդպիսի պայմաններում հեղափոխական պրոլետարիատը, վոր Փետրվարյան հեղափոխության օրերին իր թափած արյունով ներկեց Պետրոգրադի փողոցները և ամբողջ ծանրությունն իր ուսերի վրա եր տանում՝ չեր կարող չնկատել բուրժուական կառավարության քաղաքականության իմաստը և աստառը։ Նա այժմ իր առաջ մի ուրիշ խնդիր եր տեսնում չվստահել նոր կառավարությանը, չաջակցել նրան և պատրաստվել իշխանությունը գրավելու։ Փետրվարյան հեղափոխության առաջին ետապի վերջում նոր խնբավորումներ առաջացան՝ յերկրորդ ետապին անցնելու համար։ Որակարգի հարցն է՝ զինվել, ավելի լավ կազմակերպվել, նոր կառավարությանը հակադրել իր կառավարությունը («Յերկիշխանության մասին»—Լենին), ավելի լավ կապ հաստատել հեղափոխական գյուղացիության հետ իշխանությունը գրավելու համար ճանապարհը հարթելու։

Կ Ա Զ Մ Ո Ղ.

Ա. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՅԵՎ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՐՈԳՐԱԴՈՒՄ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ.

... Բանվորական շարժումը 1911 թվից սկսած, հատկապես 1912 թվի ապրիլ ամսից (Լենայից), հսկայական չափերի հասավ։ 1900 թվին մենք 222 գործադուլ ունեցանք 46.000 գործաթողներով, 1911 թվին մենք ունեցինք 422 գործադուլ և 250.000 գործաթողներ, 1912 թ. մենք ունեցինք 2.132 գործադուլ և 750.000 գործաթողներ, իսկ 1913 թվին՝ 2.142 գործադուլ և 861.000 գործաթողներ։ Զորս տարվա ընթացքում գործաթողներին մասնակցող բանվորների թիվը 20 անգամ շատացավ։ Ահա թե ինչպես մեծացավ բանվորական շարժումը։ 1914 թվի ամռանը այդ շարժումը բարձր աստիճանի հասավ։ 1905 թ. սկսած սա չտեսնված յերևույթ եր։ Հատկապես Պետերում, վորտեղ շարժումը 1914 թվի ամռանը հիշեցնում եր իր ձևերով 1905 թ. շարժումը, իր տեմպով, իր ջերմությամբ իսկական հեղափոխական պոռթկում եր զգացվում։ 1914 թ. մեզնից ավելի պեսսիմիստորեն տրամադրվածները հասկանում էին, վոր յերկրորդ հեղափոխությունը հեռու չե, վոր նա այնքան հեռու չե, ինչպես թվում եր այդ առաջին հեղափոխությունից հետո։

Իհարկե, այս նկատում էին վոչ միայն բոլշևիկները այս կողմում յեղածները, այլ և այն։ Ահա թե ինչու ռուսական բուրժուազիան իր ձեռքը գցելով պատերազմի եկոնոմիկան, անմիջապես ձգնեց այնպես անել, վոր իր կողմը քաշի բանվորական մասսաներին։ Բուրժուազիայի նախաձեռնությամբ կազմակերպված ռազմա-արդյունաբերական կոմիտեները մտան բանվորների ներկայացուցիչները. միաժամանակ կուսակցությունը պայքար եր մղում բանվորներին այդ կոմիտեները մտցնելու դեմ։ Մենք ցույց էինք տալիս, վոր իմպերիալիստական պատերազմին մասնակցելը պրոլետարիատի համար անթույլատրելի բան է։ Միայն պրոլետարիատի ավելի առաջավոր մասերում՝ Պետերի պրոլետարիատի, մեզ հաջողվեց ռազմա-հեղափոխ. կոմիտեների մասնակցությունը խանգարել, այն էլ վոչ բոլորովին։ Այնտեղ հակապատերազմական ագիտացիան սկզբից եր տարվում, իսկ Վիբորգյան շրջանը դեռ մինչև Պետական Դումայի հրավիրվելը, անմիջապես պատերազմին հայտարարելուց հետո հանդես յեկավ պատերազմի դեմ իր կոչով, իսկ հետո սրան հետևեց կուսակցության Պետերի կոմիտեն։ Ջնայած այդ ագիտացիային, միայն Պետերում, այն էլ փոքրաթիվ մեծամասնությամբ՝ 91-ով դեմ 80-ի, հաջողվեց բանվորներին ռազմա-արդյունագործական կոմիտեներն ընդունվելու հրաժարվելն անցկացնել։ Այդպիսի ագիտացիայի Մոսկվայի պրոլետարիատին չհաջողվեց յեն-

թարկել և նա մասնակցեց ռազմա-արդյունագործական կոմիտեներին։ Բուրժուազիան, այսպիսով, բանվորական կուսակցության տրամադրության հակառակ, կարելի չե ասել նրա դեմ, վորովհետև բանվորական կուսակցությունը՝ հանձինս դումայի իր ֆրակցիաների՝ ձերբակալվել եր և պետք և գնդակահարման պատրաստվեր, իրականացրեց բանվորների հետ այդ զոդումը, վորին նա չերազել եր 1905 թ. սկսած։ Ինքնակալության և բանվոր դասակարգի նկատմամբ բուրժուազիան, կարծես թե, 1905 թվից հետո իր ռեվանշն եր հանդիսավոր տոնում։ Իսկ այդ ռեվանշը կարճատև չեղավ նրա համար։

Բոլոր իրերի հիմքը, հատկապես մեզ մոտ Ռուսաստանում, վորտեղ շնորհիվ մեր ընդարձակ տարածությունների և չերկաթուղային ցանցի համեմատական նոսրության տրանսպորտը հատկապես վորոշ դեր և խաղում, մեզ մոտ, շարժական կազմի ծանրաբեռնությունն ավելի մեծ և, քան ուրիշ տեղերում։

Ցեվ ահա, չեթե մենք պատերազմի ազդեցությունը, ինչպես և պատերազմական եկոնոմիկայի ազդեցությունն այդ ծայրից վերցնենք, այն ժամանակ մենք հետևյալ պատկերը կստանանք։ Պատերազմն ստիպեց տրանսպորտի աշխատանքները չափազանց մեծ չափերի հասցնել, այնքան, վորքան պատերազմական յուրաքանչյուր խոշոր գործողություն անխուսափելիորեն պահանջում և զորքերի տեղափոխություն։ Ըստ էության, այդ ժամանակ ամբողջ պատերազմը վոչ միայն ռուսական ճակատում, այլ և մի վորևե ուրիշ տեղ, չերկաթուղային խաղ եր, վորով, որ՝ գերմանացիք ոգտվում եյին ինչպես վիրտուոզներ։ Շնորհիվ չերկաթուղային ցանցի, վորը գերմանացիների մոտ ավելի զարգացած և, քան մեզ մոտ, թշնամու ամբողջ զինվորական կորպուսները բանում եյին ցանկացած մոմենտին, ինչպես սունկերը 2—3 որվա ընթացքում հարյուրավոր վերստ հեռավորությունից տեղափոխություններ եր լինում։ Չերկաթուղային ճանապարհները մանակակից ստրատեգիայի մեջ են ընդունում իրրև անհրաժեշտ ժամանակակից ստրատեգիայի մեջ են ընդունում իրրև անհրաժեշտ ժամ, բայց սա շարժական կազմի, վառելանյութի մեծ ծախս եր պահանջում, չերկաթուղային ճանապարհներից մեծ աշխատանք եր պահանջում, չերկաթուղային վագոնների վաղվում, քան խաղաղ ժամանակ։ Ցեթե չերկաթուղային վագոնների վաղը վերցնենք միլիարդ վագոն վերստ, այն ժամանակ մենք այսպիսի թվեր կստանանք... 1913 թվի համար՝ 1, 9, 1914 թ. համար, պատերազմի առաջին տարվա, այն ել վոչ թե պատերազմական ամբողջ տարին, այլ միայն չերկրորդ կեսը՝ 2, 2, 1915 թ. համար՝ 2, 5 և 1916 թվի համար՝ 3 միլիարդից մի բան ավել։ Այսպիսով մենք մեկ ու կես անգամից ավելի ունենք։ Ահա ձեզ պատերազմի ազդեցությունը տրանսպորտի նկատմամբ։ Տրանսպորտը ստիպված եր ավելի ինտենսիվ աշխատել։ Դրա համապատասխան ավելանում եր, իհարկե, նաև վագոնների բեռնավորումը։ Մի որում բեռնվում եր 1913 թվին 58 հազար վագոն, 1914 թ.՝ 43 և կես հազար վագոն, 1915 թ. 71 հազար վագոն և 1917 թվին՝ 91 և կես հազար վագոն։ Նման հարաբերությամբ ավելանում եր, իհարկե, վագոնների մի որյա միջին վազքը. 1913 թվին՝ 268 հազար վագոն վերստ, 1914 թ.՝ 412 հազար վ. վ., 1915 թ.՝ 630 հազարով. և 1916՝ թ. մինչև 800 հազար։ Այսպիսով տրանսպորտն ավելի կենդանի չեր աշխատում։ Բոլորովին իրավացի և սպասել, վոր աճում և նույնպես տրանսպորտին ծառայող արդյունագործությունը նույն չափով։

Բայց այստեղ դուք կտեսնեք բոլորովին ուրիշ պատկեր։ Ինչ ել վոր լինի, պատերազմի ժամանակ ամենակարևորը ռումբերն են։ Մեր բոլոր մեքենագործական գործարանները, վոր մինչ այդ վորոշ աստիճանի տրանսպորտին եյին ծառայում, անցան ռումբեր պատրաստելու գործին։ Հետևանքն ահա թե ինչ և ստացվում։ Սորմովի գործարանի գնացքների կառուցումը 1913 թ. 117-ի չեր հասնում, 1914 թվին՝ 107, 1915 թ.՝ 110, և մեքենչ ավել, 1916 թ. արդեն 64 և 1917—55։ Արդյունագործությունը, վոր ծառայում եր տրանսպորտին, վագոններ եր կարկատում, գնացքներ եր կառուցում և կարկատում, և այլ գործեր, կրճատվեց. այն ժամանակ, չերբ այդ տրանսպորտի աշխատանքն ավելի ու ավելի ուժեղանում եր, բնական և, վոր այդ շատ ծանր պատ ազդեր չերկաթուղային շարժման նորմալ դրության վրա։

Ցեթե 1913 թվին ամսական միջին բեռնավորումը հաշվենք հարյուր, 1914 թ. հուլիսին 72 տոկոս հացի բեռ և շարժվել՝ 1913 թվի հուլիսի ամսվա համեմատությամբ, ոգոստոսին միայն 35 տոկոս, սեպտեմբերին՝ 47 տոկոս, հոկտեմբերին՝ 88 տոկոս, նոյեմբերին՝ 53 տոկոս։ Վոչ մի անգամ հացի բեռի շարժումը չերկաթուղային ճանապարհներով խաղաղ ժամանակվա նորմային չի հասել. մինչև 60 տոկոս եր չեղել։ Ահա ձեզ մի իրական փաստ՝ ապացուցելու համար, թե տրանսպորտը քայքայման ինչ ազդեցություն և թողնում բնակչության անմիջական մատակարարման գործի վրա։ Սրա հետևանքը լինում և այն, ինչպես դուք դուշակում եք, վոր գները պիտի բարձրանային և նրանք բարձրացան խորտակվող արագությամբ։ Ցեթե մենք վերցնենք Մոսկվայի շուկան և մսի գները՝ այն ժամանակ մի այսպիսի պատկեր ենք ստանում։ 1915 թվի հունվարի 27-ի գները 100 ընդունելով՝ մենք փետրվարի 3-ի համար ստանում ենք 119, իսկ փետրվարի 5-ի համար՝ 144։ Գինը մի ամսից քիչ ժամանակամիջոցում մեկ ու կես անգամ բարձրացավ։ Ահա թե ինչպես պատերազմը ազդեց մթերքների գների վրա. ձվի գինը 1914 թվի ապրիլից մինչև 1915 թ. ապրիլը բարձրացավ 61 ու կես տոկոսով, շաքարի գինը 1919 թ. սեպտեմբերին 5 ռ. 65 կ. եր փութը, 1914 թ. նոյեմբերին՝ 5 ռ. 40 կ.,

1915 թ. մայիսին՝ 6 ռ. 40 կ.։ Ամեն ամիս շաքարի գինը բարձրանում է։ Հացի գները, աննդի ամենահիմնական մթերքի գինը՝ հետևյալն եր. 1914 թ. հուլիսին հաճարի ալյուրն արժեր 1 ռ. 15 կ., ոգոստոսին՝ 1 ռ. 22 կ., սեպտեմբերին՝ 1 ռ. 18 կ, նոյեմբերին՝ 1 ռ. 15 կ. (այս տեղ ազդել է բերքը), իսկ արդեն հուլիսին 1915 թ. 1 ռ. 43 կ. 1915 թ. ոգոստոսին՝ 1 ռ. 48 կ., սեպտեմբերին՝ 1 ռ. 64 կ։ Դուք տեսնում եք, որ մինչև անգամ 1914 թվի բերքն էլ չոգնեց և բերքի ամիսները՝ սեպտեմբերին, որինակ, նույնպես գինը բարձրանում է։ Ահա թե ինչ աստիճանի տրանսպորտի խառնափնթորությունը և հացի բևեռակերման կրճատումն ազդեցին քաղաքների մատակարարման գործի վրա։

Սրա շնորհիվ, ամենից առաջ, պակասեց քաղաքներն ուղարկվող ալյուրի տեղափոխությունը և 1916 թվի նոյեմբերին մենք կենինգրադի համար ունեցինք միայն նորմալ տեղափոխման 91 տոկոս., 1916 թ. դեկտեմբերին՝ 47 տոկոս, և միայն 1917 թվի հունվարին արհեստական միջոցներով հաջողվեց այդ թիվը 57 տոկոսի հասցնել։ Բնական է որ այդ փաստերը պիտի վորոշակի կերպով ազդեյին նայիվ բանվորական մասսաների տրամադրության վրա։ Մի տարի հետո, մինչև անգամ մի տարուց պակաս, ապրիլ ամսին, 1915 թվին, բանվորները ահա թե ինչպես պատասխանեցին քաղաքագլխի ոգնականին։ «Պրեաբրաժենյան շուկայում թանգության առթիվ կանանց բարձրացրած աղմուկի պատճառով ամբոխ հավաքվեց։ Բարձրացած տրամադրությունը անմիջապես ընկնում է վոստիկանության վրա, և յերբ պ. Մոդլը խիստ տոնով սկսեց ամբոխի հետ խոսել՝ մի կին նրան քարով խփեց և հենց այդտեղ ամբոխը նրան ավտոմոբիլից վայր քաշեց, ծեծեց և դեպի դատն եր քաշում։ Մինչ պ. Մոդլը խնդրում եր. «Ցես ձեզ ինչ եմ արել, յեղբայրներ, ներեցեք»... և այլն, զորքեր կանչվեցին։ Բայց կանայք զինվորներին բոլորովին մոտիկ գնացին և սկսեցին ճչալ, «Մի թող դուք կանայք չունեք, նրանց համար էլ այնպիսի վատ դրություն կա, ինչպես և մեզ։ Գնդակահարեցեք մեզ և ձերոնցն էլ կը գնդակահարեք»։ Այսպիսի տեսարաններ եյին տեղի ունենում նայիվ Պրեսնայում, Դրուզինինայում, Սիվցով Վրաժում, վորտեղ Զիչկինի խանութի բոլոր ապակիները ջարդվեցին այն բանի պատճառով, վոր միքանիսին մերժեցին կաթ բաց թողնել, իսկ մյուսներին տալիս եյին։

Արդեն 1915 թվի գարնանը բանվորական մասսաների մեջ, պատերազմի այդ հակառակ եկոնոմիկայի աղետության տակ, բոլորովին վորոշ տրամադրություն առաջ յեկավ։

Պատերազմի այդ հակառակ եկոնոմիկան բնականաբար կանգնած եր բուրժուազիայի այն քաղաքականության ճանապարհին հակառակ վորը կարծես թե իրեն հաջողվել եր ռազմաարդյունագործական կոմիտեների միջոցով գլուխ բերել։ 1916 թվի աշնանը լուրվա-

ծությունն այնպիսի սահմանի հասավ, վոր մինչև անգամ պաշտպանողական մամուլը, այսինքն սոցիալ-դեմոկրատական պաշտպանողական մամուլը, սկսեց խոսել այսպես թե այնպես պատերազմը վերջացնելու անհրաժեշտության մասին՝ նախապես ինքնակալությունը տապալելով։ 1917 թվի հունվարին սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների բաց թողած թռուցիկները կոչ եյին անում, վոր ժողովուրդն ինքը պատերազմը վերջացնի, վորովհետև ակնհայտնի յե, վոր ինքնակալությունը չի կարող վերջացնել։ Պաշտպանողականների այդ տրամադրությունը շատ բնորոշ է և այդ անհրաժշտ է շեշտել։ Ջընհամարձակվելով ուղղակի պատերազմի դեմ դուրս գալ, նրանք կամաց-կամաց սկսեցին հեղափոխական պաշտպանողականության ուղին բռնել։ Բայց ինչ եր ներկայացնում իրենից Պետերբի բանվորական մասսան մեզ մոտ. բանվորական մասսայի մեջ ավելի հեղափոխական տարրերն եյին մի կողմից՝ մետաղագործները, մյուս կողմից՝ աչքի ընկնող խոշոր ձեռնարկությունների բանվորները։ Նախ Պետերբի բանվորական ընդհանուր մասսաների ճաման մասին. 1914 թվի սեպտեմբերին՝ 197,3000, 1915 թ. սեպտեմբերին՝ 248,000, 1916 թ. սեպտեմբերին՝ 297,000, 1916 թ. հոկտեմբերին՝ 305,000 և 1917 թ. հունվարի մոտերքին մինչև 400.000, այսինքն յերկու անգամից բավականին ավել, 1914 թվի սեպտեմբերի հետ համեմատելով։ Ինչպես եյին բաշխված այդ բանվորները. ի հարկե, իր մասսայով մետաղագործներն եյին։ Դժվար չե սա ընդունելը, քանի վոր Պետերը մետաղագործական արդյունագործության գլխավոր կենտրոնն է։ Մետաղագործների տոկոսը շատ բարձր եր. բանվորական ամբողջ մասսայի մոտ 70 տոկոսն եյին կազմում։ Տոկոսները ըստ ձեռնարկությունների. հազար բանվորներից ավելի ունեցող ձեռնարկություններում՝ հսկա ձեռնարկություններում զբաղված եր 75,7 տոկոսը, 10,000-ից ավելի բանվորներ ունեցող ձեռնարկություններում, այսինքն ավելի հսկաներում՝ 22,8 տոկոս։ Այսպիսով բանվորների այդ վիթխարի մասսայի մեծամասնությունը, վոր կենտրոնացած եր Պետերում, պատկանում եր ավելի հեղափոխական շարքին, դրանք մետաղագործներն եյին և ամենախոշոր ձեռնարկությունների բանվորները։ Ահա այս եր բանվորական այն շարժման հողը, վորը 1917 թվին, փետրվար ամսին վերջնականապես պայթեց և վորը վորոշակի զգացվում եր դեռ 1916 թվի աշնանը։

(Մ. Պավլովսկի—«19 և 20-րդ դարերի հեղափոխական շարժման պատմությունը Ռուսաստանում»։ Ուրվագծեր)։

Բ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ.

Փետրվարի յերկրորդ կեսին, 18-ին, Պուտիլովյան գործարանի արհեստանոցներից մեկում գործադուլ ծագեց։ Գործադուլի պատճառը համերաշխության գիտակցությունն եր, իբրև բողոք և ժամանդակու-

թյուն վարչության կողմից արձակվող բանվորներին։ 22-ին աշխատանքը վերսկսվեց, բայց վարչությունը բանվորներին լոկաուտ հայտարարեց։

Փետրվարի 23-ին (կանանց օրը) միտինգներ կազմակերպվեցին շատ գործարաններում, որտեղ կանանց աշխատանքն էր շահագործվում։ Ժողովները ամեն տեղ անցնում էին մեծ հաջողությամբ, վճռվորությամբ և մեր (բալշևիկական) հեղափոխական և հակապատերազմական պահանջներով։ Վերջին օրերի լարված մթնոլորտը արտահայտվում էր մարտական առաջարկություններով։ Մեր կողմից հրապարակ նետած պայքարի լոզունգը՝ «Դեպի Նևսկի»—պատվաստվում էր լայն մասսաների գիտակցության մեջ։ Վիբորգի կողմի հին աշխատավորուհիները մեր այդ վորոշման առաջին ակտիվ կիրարկողներն էին։ Միտինգները վերջանում էին աշխատանքների դադարեցմամբ և աշխատողներին աշխատանքներից հանելով։ Վիբորգի փողոցներով անցնում էին բանվորների ցուցարար խմբերը։ Քաղաքի ճանապարհին նրանք գործից հանում էին աշխատողներին և «կորչի պատերազմը» և «հաց» կոչերով դիմում էին դեպի քաղաքի կենտրոն։ Տեղ-տեղ վոստիկանության հետ ընդհարումներ էղան։

Վիբորգյան կողմը քաղաքի մյուս մասերի հետ միացնող կամուրջների վրա կենտրոնացած էին վոստիկանության ուժեղացրած խմբեր, վորոնք բանվորներից վոչ վոքի քաղաք չէին թողնում։ Տեղի էին ունենում ձերբակալումներ։ Քաղաքի վրա, մանավանդ նրա բանվորական թաղամասերի վրա, ծանրացավ վոստիկանական տերրորը։

Ուրբաթ, փետրվարի 24-ին, ամբողջ Վիբորգի գործարաններում և զավոդներում կազմակերպվեցին միտինգներ։ Բանվորներին կոչ էին անում գործադուլ հայտարարել ու քաղաքի կենտրոնը գնալ դեմոնստրացիայի։ Մեր ընկերները հանդես էին գալիս զինվորների հետ յեղբայրանալու, նրանց զորանոցները մտնելու առաջարկություններով։ Բանվորական մասսան բուռն վոգևորությամբ վողջունում էր այդ առաջարկություններին և իր հերթին անմիջապես կիրառում կյանքում։ Զինվորների զորանոցների, պահակների և շղթաների շուրջը խումբ խումբ կանգնած էին բանվորներն ու բանվորուհիները և ընկերաբար խոսքեր էին նետում զինվորներին։

Պուտիլովյան գործարանի լոկաուտի լուրը տարածվեց ամբողջ քաղաքում, առաջացնելով ընդհանուր վրդովմունք բոլոր ռայոնների բանվորների մեջ։ Գործադուլները, միտինգներն ու ցույցերն սկսեցին ծավալվել բոլոր ռայոններում։ Վիբորգի ռայոնն ու Պուտիլովյան գործարանն այլևս մենակ չէին կառավարության դեմ սկսած կռվում։

Փետրվարի 25-ին շարժումն ստացավ Պետերբուրգյան պրոլետարիատի

ընդհանուր գործադուլի բնավորություն։ Շարժմանը միացան ամենահետամնաց գործարանները, տրամվայի պարկերը, տրամվայը, բոլոր տպարանները, մանր արհեստանոցները և առևտրական հիմնարկությունները։

Վաղ առավոտվանից բանվորական ռայոնները գտնվում էին անսովոր կենդանության և հուզված վիճակում։ Անհատ վոստիկանները այլևս չէին յերևում։ Ռեակցիայի սև ուժերը կենտրոնացած էին առանձին քաղաքամասերում, անցնում էին խմբերով և ամբողջ վաշտերով։

Միտինգները, ժողովները, խոսակիցների խմբերը ծածկվեցին ամբողջ արվարձանները։ Իշխանությունը ձեռք առավ բոլոր միջոցները, վորպեսզի փոթորկվող պրոլետարական տարերքի ալիքները չանցնեն քաղաքի կենտրոնը։ Բայց իզուր էին վոստիկանական բոլոր պատնեշները ու զինվորների սվինները։ Ճաշվա ժամանակին մոտ ռայոններից ուժգին կերպով սկսվեց մի ձգտում դեպի քաղաքի կենտրոնը հավաքվելու։ «Այսօր Կազանսկի տաճարի մոտ»,—լսվում էր բանվորական բոլոր ռայոններում։ Յեվ բանվորները, բանվորուհիների և իրենց կանանց հետ միասին, անցնելով բոլոր խոչընդոտները, սառույցների ժիջով նոր ճանապարհ բանալով, հազարներով մտան քաղաքի կենտրոնը։ Տասներկու տարվա ռեակցիայի և պայքարից հետո Պետրոգրադի առաջին անգամ էր տեսնում բանվորների այդպիսի ժասսայական հոսանք դեպի քաղաքի կենտրոնը։ Հազարավոր ամբոխը բոլոր ռայոններից, բոլոր փողոցներով և անցքերով ձգտում էր մտնել մարտական հավաքավայրը՝ Կազանսկի տաճարի մոտ։

Չնայած թե ձիավոր և թե հետևակ վոստիկանության ամբողջ յեռանդին՝ նրան չհաջողվեց զսպել մեր բանվորներին, և ճաշվա ժամին, Կազանսկի տաճարի մոտ հավաքվեց հսկայական ամբոխ։ Ինչ չէին այնտեղ և վոստիկանության ուժերը։

Ամենահավատ դիմադրություն ցույց տալով ժանդարմներին և վոստիկանությանը, այդ ծախու հոգիներին, ինչպես բանվորները բնորոշում էին ցարական իշխանության հիմնական ուժը, նրանք ամեն կերպ խուսափում էին զինվորների հետ ընդհարվելուց։ Ամենքն աշխատում էին մոտենալ հետևակազորին, և լինում էին դեպքեր, յերբ սպաների հրամանով զինվորները հրացանները պատրաստ էին պահում ամբոխը ցրելու համար, բայց նրանց հրացաններից բռնում էին կանայք և մի այնպիսի աղմուկ էին բարձրացնում, վոր զինվորները շփոթվում էին. այդ վայրկյաններին ամբոխը բաժանում էր նրանց, զորաժասը գարձնում էր վիճող, հուզվող, մեկյանց հանդիմանող զինվորների և բանվորների կուլտեր։

Պետերբուրգի փողոցներում փետրվարի 25-ին (շաբաթ) և 26-ին (կիրակի) տեղի ունեցած առաջին զնդակահարությունները վրդովեցրին

խորը ակոսեց հողը, արմատախիլ արեց դարավոր նախապաշարումները քաղաքական կյանքի և քաղաքական պայքարի, բարձրացրեց միլիոնավոր բանվորների ու տասնյակ միլիոնավոր գյուղացիների, փոխադարձաբար միմյանց—և ամբողջ աշխարհին—ցույց տվեց ռուս հասարակության բոլոր դասակարգերին (և բոլոր գլխավոր կուսակցություններին), նրանց իսկական բնույթը, նրանց շահերի, նրանց ուժերի, նրանց գործունեության յուրահատկությունների, նրանց մերձավոր ու հեռավոր նպատակների իսկական հարաբերությունը։ Առաջին հեղափոխությունը և նրան հաջորդող հակահեղափոխական շրջանը (1907—1914) յերևան հանեց ցարական միապետության էությունը, հասցրեց նրան «վերջին սահմանին», մերկացրեց նրա ամբողջ փտածությունը, նողկալիությունը, ցարական վոհմակի ամբողջ ցինիզմն ու ապականությունը հրեշավոր Ռասպուտինի գլխավորությամբ, Ռոմանովների ընտանիքի բոլոր դաշնությունները, Ռոմանովների,—Ռուսաստանը հրեաների, բանվորների ու հեղափոխականների արյունով վողողած այդ ջարդարարների, այդ «հավասարների մեջը առաջին կալվածատերերի», վորոնք տիրում էին միլիոնավոր դեսյատին հողի և վորոնք ամեն տեսակ գաղանություն, ամեն տեսակ վոճրագործություն էին կատարում, անհամար թվով քաղաքացիների էին քայքայում ու խեղատում իսեր իրենց և իրենց դասակարգի այդ «սրբազան սեփականության» պահպանման։

Առանց 1905—1907 թ. թ. հեղափոխության, առանց 1903—1914 թ. թ. հակահեղափոխության անհնարին կլիներ ռուս ժողովրդի և Ռուսաստանում ապրող ազգերի բոլոր դասակարգերի այդպիսի ճիշտ «ինքնորոշումը», չեր կարող վորոշվել այդ դասակարգերի փոխադարձ հարաբերությունը և նրանց վերաբերմունքը դեպի ցարական միապետությունը. այդ հարաբերությունը յերևան յեկավ 1917 թ. փետրվար մարտ ամիսների հեղափոխության 8-որում։ Այդ ուղի որյա հեղափոխությունը, յեթե թույլատրելի յե այսպես այլաբանորեն արտահայտվել, «խաղացվեց» կարծես տասնյակ գլխավոր ու յերկրորդական փորձերից հետո. «դերասանները» ըստ ամենայնի, բոլոր մանրամասնությամբ ճանաչում էին միմյանց, գիտեին իրենց դերը, իրենց տեղը, խաղի պարագաները, նույնիսկ քաղաքական ուղղությունների ու գործակերպի քիչ-շատ նկատելի ամեն մի տարբերություն, ամեն մի նրբություն։

Սակայն, յեթե առաջին՝ 1905 թ. մեծ հեղափոխությունը, վոր պարոնայք Գուչկովների և Միլյուկովների ու նրանց արբանյակների կողմից դատապարտվեց վորպես «մեծ խռովություն», 12 տարի հետո բերեց, հասցրեց 1917 թ. «փայլուն, փառավոր» հեղափոխության, վորը Գուչկովներն ու Միլյուկովներն անվանում են «փառավոր», վորովհետև այդ հեղափոխությունը նրանց (առայժմ) իշխանություն տվեց,—ապա

անհրաժեշտ եր լա՛ մի մեծ, հզոր ամենազոր «ռեժիսյոր», վորը մի կողմից, հնարավորություն ունենար հսկայական չափերով արագացնելու համաշխարհային պատմության ընթացքը, իսկ, մյուս կողմից, ստեղծելու չտեսնված չափեր ընդունող համաշխարհային տնտեսական, քաղաքական, ազգային և միջազգային ճգնաժամեր։ Բացի համաշխարհային պատմության արտակարգ արագացումից, անհրաժեշտ եյին այդ պատմության առանձնապես սուր վոլորաններ (повороты), վորպեսզի պատմության առանձնապես սուր վոլորաններից մեկում Ռոմանովների միապետության արյունով ու կեղտով շաղախված սայլը միանգամից շրջվեր։

Այդ ամենակարող «ռեժիսյորը», պատմության ընթացքն արագացնող այդ հզոր ուժը հանդիսացավ համաշխարհային իմպերիալիստական պատերազմը։

Այժմ արդեն անվիճելի յե, վոր այդ պատերազմը—համաշխարհային ե, քանի վոր Մ. Նահանգներն ու Ջինաստանը, վորոնք այսորկիսով չափ արդեն մասնակից են նրան, վաղն ամբողջովին կմասնակցեն նրան։

Այժմ արդեն անվիճելի յե, վոր այդ պատերազմը իմպերիալիստական ե յերկու կողմից։ Միայն կապիտալիստներն ու նրանց արբանյակները, սոցիալ-պատրիոտներն ու սոցիալ-շովինիստները, կարող են հերքել կամ քողարկել այդ փաստը։ Պատերազմը մղում ե և գերմանական, և անգլո-ֆրանսիական բուրժուազիային ոտար յերկրներ կողոպտելու համար, վորպեսզի ազգություններին խեղտելու, ամբողջ աշխարհի վրա ֆինանսապես իշխելու, գաղութները բաժան-բաժան անելու և միմյանց մեջ բաշխելու համար, զանազան յերկրների բանվորներին հիմարացնելու միջոցով՝ կործանվող կապիտալիստական հասարակարգը փրկելու համար։

Իմպերիալիստական պատերազմը պետք ե օբյեկտիվ անխուսափելիությամբ չափազանց արագացներ և չտեսնված չափերով սրեր պրոլետարիատի դասակարգային պայքարն ընդդեմ բուրժուազիայի, պետք ե վերածվեր քաղաքացիական կռվի թշնամի դասակարգերի միջև։

Իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու պրոցեսն սկսվել ե 1917 թ. փետրվար-մարտ ամիսների հեղափոխությամբ, վորի առաջին հատվածը մեզ ցույց տվեց, վոր նախ՝ ցարիզմին միատեղ հարվածեցին յերկու ուժ. մի կողմից՝ ամբողջ բուրժուական և կալվածատիրական Ռուսաստանն իր բոլոր անգիտակից արբանյակների ու բոլոր դիտակից ղեկավարների հետ միասին, հանձինս անգլո-ֆրանսիական դեսպանների ու կապիտալիստների, և մյուս կողմից՝ Բանվորների ու Զինվորների Պատգամավորների Խորհուրդը։

Այդ յերկու քաղաքական բանակները, այդ յերկու հիմնական քաղաքական ուժերն եյին.—1) ցարական միապետությունը—ճորտատեր-

կալվածատերերի, հին չինովնիկության ու գեներալիտետի դուխը, 2) բուրժուական և կալվածատիրական ակտյաբրիստական-կադետական Ռուսաստանը, որի հետևից քարշ էր գալիս մանր բուրժուազիան, 3) Բանվորների ու Զինվորների Պատգամավորների Խորհուրդը, որին դաշնակիցները և փնտռում ամբողջ պրոլետարիատի ու ամենաքան ուժերը լիակատար պարզությամբ յերևան յեկան նույնիսկ «առաջին ետապի» 8 որվա ընթացքում, նույնիսկ դեպքերից հեռու գտնվող, արտասահմանյան թերթերի աղքատիկ հեռագրերով բավարարվող այնպիսի մի դիտողի համար, ինչպես տողերիս գրողն է։

Սակայն նախ քան այս առթիվ մանրամասն խոսելը, յես պետք է անդրադառնամ իմ նամակի այն մասին, որը նվիրված է առաջնակարգ ուժ հանդիսացող գործոնին, համաշխարհային իմպերիալիստական պատերազմին։

Պատերազմը յերկաթե օղակներով միմյանց կապից կուվող պետությունները, կապիտալիստների կուվող խմբերին, կապիտալիստական սոցկուբության սոցկատերերին։ Արյան մի գուշդ—ահա թե ինչ է մեր ապրած պատմական ժամենտի հասարակական-քաղաքական կյանքը։

Պատերազմի սկզբում բուրժուազիայի կողմն անցած սոցիալիստները, այդ բոլոր Դավիթները և Շեյդեմանները Գերմանիայում, Պլեխանովները, Պոտրեսովները, Գվոզդեվները ու ընկ. Ռուսաստանում, յերկար ժամանակ իրենց ամբողջ կոկորդով բղավում, աղմկում էին հեղափոխականների «սին հույսերի», Բազելի մանիֆեստի «սին հույսերի» և իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու «ցնորք-ֆարսի» դեմ։ Նրանք ամեն կերպ յերգում, գովաբանում էին այն ուժը, կենսունակությունն ու հարատևելու ընդունակությունը, որը թե յերևան եր հանել կապիտալիզմը,—նրանք, ովքեր ոգնեցին կապիտալիստներին «հարմարեցնել», ընտելացնել, հիմարացնել և ջլատել զանազան յերկրների բանվոր դասակարգերին։

Բայց «լավ է ծիծաղում նա, ով վերջն է ծիծաղում»։ Բուրժուազիային հաջողվեց կարճ ժամանակով հետաձգել պատերազմի արդյունք հեղափոխական ճգնաժամը։

Այդ ճգնաժամն անդուսպ թափով աճում, զարգանում է բոլոր յերկրներում՝ սկսած Գերմանիայից, որտեղ վերջերս, այդ յերկրին այցելած մի դիտողի արտահայտությամբ, տիրում է «հանճարեղ կերպով կազմակերպված սով», և վերջացրած Անգլիայով ու Ֆրանսիայով, որտեղ սովը նույնպես մոտենում է և որտեղ նա ավելի պակաս «հանճարեղ» կերպով է կազմակերպված։

Բնական է, որ ցարական Ռուսաստանում, որտեղ քայքայումն ամենահրեշավոր չափերի յեր հասել, և որտեղ պրոլետարիատն ամենահե դափոխականն եր (վոչ թե շնորհիվ նրա առանձին հատկությունների այլ՝ շնորհիվ «հինգ» թվականի կենդանի տրադիցիաների),—հեղափոխական ճգնաժամը սկսվեց ամենից ուժգին։ Այդ ճգնաժամն արագացավ մի շարք ամենածանր պարտությունների շնորհիվ, որ կրեցին Ռուսաստանն ու նրա դաշնակիցները։ Այդ պարտությունները ցնցեցին վողջ պետական հին մեխանիզմը և ամբողջ հին կարգը, այդ կարգի դեմ զայրույթով լցրեցին բնակչության բոլոր դասակարգերին, գազազեցրին բանակը, մեծ չափերով վոչնչացրին նրա հին, նեղ-ազնվական և առանձնապես փտած չինովնիկական ծագում ունեցող հրամանատարական կազմը, որը փոխարինեցին յերիտասարդ, թարմ, առավելապես բուրժուական, այլատեսակ (разночинский) մանր բուրժուական կազմով։

Սակայն յեթե պատերազմում կրած պարտությունները բացասական գործոնի դեր խաղացին և արագացրին պայթյունը, ապա անգլո-ֆրանսիական ֆինանսական կապիտալի, անգլո-ֆրանսիական իմպերալիզմի և Ռուսաստանի ակտյաբրիստ-կադետական կապիտալի միջև ստեղծված կապը այդ ճգնաժամն արագացնող գործոն հանդիսացավ։

Գործի այս ամենակարևոր կողմը, հասկանալի պատճառներով, լռության է տալիս անգլո-ֆրանսիական մամուլը, և չարախնդորեն ընդգծում է գերմանական մամուլը։ Մենք, մարքսիստներս, պետք է զգաստորեն նայենք ճշմարտության ճակատին, իր ամբողջ մերկությամբ, չվիրթվելով վոչ կուվող իմպերիալիստների առաջին խմբի դիվանագետների ու մինիստրների պաշտոնական քաղցր-դիվանագիտական ստերից, վոչ կուվողների մյուս խմբում նստած՝ նրանց ֆրանսիական ու ռազմական մրցակիցների աչքով անելուց ու հրդռոցից։ Փետրվարմարտ ամիսների հեղափոխության ամբողջ ընթացքը պարզ ցույց է տալիս, որ անգլիական ու ֆրանսիական դեսպանություններն իրենց գործակալներով ու «կապերով», որոնք ամենահուսահատական ջանքեր եյին գործ դնում խանգարելու Նիկոլայ յերկրորդի ու Վիլհելմ 2-ի միջև կայանալիք «սեպարատ» հաշտությանը (սակայն հուսանք և աշխատենք, որ այդ տեղի ունենա), անմիջականորեն աշխատում եյին Նիկոլայ Ռոմանովին փոխարինել մի ուրիշով։

(Վ. Ի. Լենին (Վ. Ուլյանով)։ «Նամակներ հեռվից», 1925 թ., հայերեն, եջ. 5—13)։

Դ. ՀՐԱԺԱՐՄԱՆ ԱԿՏ

Ասպվածային վողորմությամբ մեեք՝ Նիկոլայ յերկրորդ Համառուսական կայսր յեվ ինքնակալ, լեհական թագավոր, Ֆինլանդիայի մեծ իշխան, յեվ այլն յեվ այլն.

Արտաքին թշնամու հետ ունեցած մեծ պայքարի որերին, յերբ այդ թշնամին մոտ յերեք տարի ձգտում եր ստրկացնել մեր յերկիրը,

տեր աստծուն հաճելի թվաց Ռուսաստան ուղարկել նոր ծանր փորձանք։ Սկսված ժողովրդական ներքին հուզումները սպառնում են աղետաբեր անդրադառնալ հետագա համառ պատերազմը տանելիս։ Ռուսաստանի բախտը, մեր հերոսական բանակի պատիվը, ժողովրդի բարիքը, մեր սիրելի հայրենիքի ամբողջ ապագան պահանջում են, ինչ գնով էլ լինի, պատերազմը հասցնել հաղթական վախճանի։ Դաժան թշնամին լարում է բոլոր ուժերը, և արդեն մոտ է ժամը, յերբ մեր կորովի բանակը մեր փառավոր դաշնակիցների հետ միասին կարող է վերջնականապես կոտրել թշնամուն։

Ռուսաստանի կյանքի այս վճռական որերին մենք խղճի պարտք համարեցինք հնարավորություն տալ մեր ժողովրդին սերտ միաբանություն ստեղծելու և համախմբելու ժողովրդական բոլոր ուժերը հաղթությանը շուտափույթ կերպով հասնելու համար և, պետական Դումայի հետ համաձայնության գալով՝ հանուն բարիքի, մենք հանձն առանք հրաժարվել ռուսական պետության գահից և վայր դնել մեզանից բարձրագույն իշխանությունը։ Զգանկանալով բաժանվել մեր սիրելի վորդուց՝ մենք մեր գահաժառանգությունը հանձնում ենք մեր յեղբայր մեծ իշխան Միխայել Ալեքսանդրովիչին և որհնում նրան ռուսական պետության գահակալության համար։ Պատվիրում ենք մեր յեղբորը պետական գործերը վարել որենսդրական հիմնարկներում յեղած ժողովրդական ներկայացուցիչների հետ լրիվ և անխախտ միությամբ՝ այն հիմունքներով, վորոնք սահմանված կլինեն նրանց կողմից՝ բերելով անխախտ յերդում հանուն ջերմագին սիրելի հայրենիքի։ Կոչ ենք անում հայրենիքի հավատարիմ բոլոր վորդիներին իրենց սըրբազան պարտքը կատարելու նրա հանդեպ՝ համաժողովրդական փորձությունների ծանր րոպեին հնազանդվելով ցարին և ժողովրդի ներկայացուցիչների հետ միասին ոգնել Ցարին Ռուսական Պետությունը հաղթության, բարեկեցիկ և փառքի ճանապարհի վրա դուրս բերելու համար։—

Թող տեր աստվածը ոգնի Ռուսաստանին։

ՆԻԿԱԼԱՅ

1917 թ. մարտի 2-ին ժամը յերեկվա 3. քաղ. Պսկով,

---

2. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ԵՏԱՊԸ.

Ա. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ—ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՆԻՖԵՍՏԸ

Ռուսաստացի բոլոր բանվորացիներին.

Պրոլետարներ բոլոր յերկրների միացեք.—

Քաղաքացիներ, ռուս ցարիզմի ամրությունները ընկան։ Ցարական ավազակախմբի բարորությունը, վոր կառուցված է ժողովրդի վոսկորների վրա՝ խորտակվեց։ Մայրաքաղաքը ամպստամբ ժողովրդի ձեռքին է։ Հեղափոխական զորքերի մասերն անցան ապստամբ ժողովրդի կողմը։ Հեղափոխական պրոլետարիատն ու հեղափոխական բանակը պետք է փրկեն յերկիրը վերջնական կորստից և կործանումից, վորը պատրաստել եր ցարական կառավարությունը։

Հսկայական ջանքերով, արյունով և զոհերով ռուս-ժողովուրդը թոթափեց դարավոր սարկությունը։

Բանվոր դասակարգի և հեղափոխական բանակի նպատակն է՝ ստեղծել մի ժամանակավոր հեղափոխական կառավարություն, վորը պետք է նոր նորածագ հանրապետական հասարակակարգի գլուխ անցնի։

Ժամանակավոր հեղափոխական կառավարությունը պետք է հանձն առնի՝ ստեղծել ժամանակավոր որենքներ, վորոնք պիտի պաշտպանեն ժողովրդի բոլոր իրավունքներն ու ազատությունները, բռնագրավել վանքապատկան, պամեշչիկական, կաբինետային, կայսերական տան պատկանող հողերը և այն հանձնի ժողովրդին, պետք է մտցնի 8—ժամյա բանվորական որ և սահմանադրական ժողով հրավիրի՝ ընդհանուր, ուղիղ, հավասար ընտրական իրավունքի և գաղտնի ձայնատվության հիմունքներով։

Ժամանակավոր հեղափոխական կառավարությունը պետք է հանձն առնի ժողովրդին ու բանակին անհապաղ պարհնավորելու ապահովության հարցի վճիռը, իսկ այդ նպատակի համար պետք է բռնագրավեան յենթարկվեն բոլոր ռազմական պաշարները, վոր ամբարվել էին նախկին կառավարության և քաղաքային ինքնավարության կողմից։

Բեակցիայի վիշապը կարող է դեռ իր գլուխը բարձրացնել։ Ժողովրդի և նրա հեղափոխական կառավարության նպատակն է՝ ճնշել ամեն տեսակի հակաժողովրդական, հակահեղափոխական ղիտավորությունները։

Ժամանակավոր հեղափոխական կառավարության անհապաղ և անհետաձգելի նպատակն է՝ հարաբերության մեջ մտնել պատերազմող յերկրների պրոլետարիատի հետ՝ այդ բոլոր յերկրների ժողովուրդների մեջ հեղափոխական պայքար կազմակերպելու ընդդեմ իրենց ճնշողների և սարկացնողների, ընդդեմ ցարական կառավարության և կապի-

տալիստական վոհմակի և անհապաղ վերջ տալ արյունահեղ մարդկային սպանդանոցին։

Ֆաբրիկանների և գործարանների բանվորները, նույնպես և ամբողջ շարքերը պետք է անհապաղ իրենց ներկայացուցիչներն ընտրեն ժամանակավոր հեղափոխ. կառավարության կազմի համար, վորը պետք է գումարվի ապստամբ հեղափոխական ժողովրդի և բանակի պատգամավորների տակ։

Քաղաքացիներ, զինվորներ, կանայք և մայրեր, բոլորդ էլ դեպի կռիվ։ Դեպի ազատ պայքարը ցարական իշխանության և նրա բանյակների դեմ։

Ամենուրեք ամբողջ Ռուսաստանում բարձրանում է ապստամբության կարմիր դրոշակը։ Ամենուրեք ամբողջ Ռուսաստանում ձեր ձեռքերը վերցրեք ազատության գործը, վայր գլորեցեք, տապալեցեք ցարական սատրաքարշներին, պայքարի կանչեցեք զինվորներին։

Ամենուրեք ամբողջ Ռուսաստանում՝ քաղաքներում և գյուղերում ստեղծեցեք հեղափոխական ժողովրդի կառավարություն։

Քաղաքացիներ, ապստամբների յեղբայրական, համերաշխ ջանքերով ինքնակալության փլատակների վրա՝ մենք կամրապնդենք ազատության նորածագ հասարակարգը։

Առաջ. չկա վերադարձ. անողոք պայքար։

Դեպի հեղափոխության կարմիր դրոշակը։

Կեցցե՛ դեմոկրատական հանրապետությունը։

Կեցցե՛ հեղափոխական բանվոր դասակարգը։

Կեցցե՛ հեղափոխական ժողովուրդն ու ապստամբ բանակը։

Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության կենտրոնական կոմիտե։

26 փետրվարի 1917 թ.

Բ. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Հին իշխանությունը յերկիրը հասցրեց կատարյալ քայքայման, իսկ ժողովրդին՝ սովի։ Անկարելի յե այլևս սպասել։ Պետրոգրադի բնակչությունը դուրս յեկավ փողոց, վոր հայտարարի յուր դժգոհությունը։ Նրան դիմավորեցին համազարկով։ Հացի փոխարեն ցարական կառավարությունը ժողովրդին արճիճ տվեց։

Սակայն զինվորները չցանկացան ժողովրդի հակառակ լինել և ապստամբեցին կառավարության դեմ։ Ժողովրդի հետ դաշնակցած՝ նրանք գրավեցին զենքերը, ռազմական պահեստներն ու մի շարք կարևոր կառավարական հիմնարկություններ։

Կռիվը դեռ շարունակվում է։ Նա պետք է մինչև վերջը տարվի։ Հին իշխանությունը պետք է վերջնականապես տապալվի և տեղը զիջի ժողովրդական կառավարությանը։

Սա յե Ռուսաստանի փրկությունը։

Գործերը հաջողությամբ վերջացնելու համար դեմոկրատիայի շահի տեսակետից ժողովուրդը պետք է ստեղծի յուր սեփական հզոր հավաքակերպությունը։

Յերեկ, փետրվարի 27-ին, մայրաքաղաքում կազմակերպվեց գործարանների և ֆաբրիկանների, ապստամբած զինվորական մասերի, նայելով դեմոկրատական և սոցիալիստական կուսակցությունների ու խմբակների ընտրած պատգամավորներից բանվորական պատգամավորների խորհուրդը։

Բանվորական պատգամավորական խորհուրդի, վորի նիստերը տեղի յեն ունենում Պետական դումայում, հիմնական նպատակներն են՝ ժողովրդական ուժերի կազմակերպումն ու Ռուսաստանի քաղաքական ազատության ու ժողովրդական կառավարության վերջնական ամրապնդման համար մղվող պայքարը։

Խորհուրդը շրջանային կոմիսարներ է նշանակել՝ Պետրոգրադի քաղաքամասերում ժողովրդական իշխանությունն հաստատելու համար։

Հրավիրում ենք մայրաքաղաքի ամբողջ ազգաբնակչությանը առանց հապաղելու համախմբվել խորհրդի շուրջը, կազմակերպել քաղաքամասերում տեղական կոմիտեներ և իրենց ձեռքը վերցնել բոլոր տեղական գործերի ղեկավարությունը։

Բոլորս միասին, ընդհանուր ուժերով պայքարենք հին կառավարության կատարյալ վոչնչացման ու ընդհանուր, հավասար, ուղիղ և գաղտնի ընտրական իրավունքի հիմքերով ընտրված Սահմանադիր Ժողովի գումարման համար։

Բանվորական Պատգամավորների Խորհուրդ

27 փետրվարի 1927 թ.

Գ. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

Ջտարվենք սին հույսերով,

Յեթե հեղափոխությունը հաղթեց այդպես շուտ և—արտաքուստ, առաջին ժամերեսային հայացքից—այդպես «հիմնավոր կերպով», ապա մեր այն պատճառով, վոր չափազանց արտասովոր պատմական սիտուացիայի շնորհիվ ձուլվեցին միմյանց հետ, և չափազանց «համաշխարհային կերպով» ձուլվեցին բոլորովին տարբեր հոսանքներ, բոլորովին տարբեր դասակարգային շահեր, բոլորովին հակադիր քաղաքական ու սոցիալական ձգտումներ. այն է՝ անգլո-ֆրանսիական իմպերիալիստական դավադրությունը, վոր դրդում էր Միլյուկովին և Գուչկովին ու Ընկ. իշխանությունն իրենց ձեռքը վերցնել, վորպեսզի շարունակվի

ի մպերիալիստական պատերազմը, վորպեսզի այդ պատերազմն ավելի կատաղությամբ ու համառությամբ մղվի, վորպեսզի նորից վոչնչանան միլիոնավոր ռուս բանվորներ ու գյուղացիներ, և այս ամենը նրա համար՝ վորպեսզի Կոստանդնուպոլիսն ստանան... Գուչկոֆները, Սիրիան... Ֆրանսիական, Միլյուկովը... անգլիական կապիտալիստները, և այլն։ Այս մի կողմից, իսկ մյուս կողմից—պրոլետարական և մասսայական-ժողովրդական (քաղաքների ու գյուղերի ամբողջ ամենաաղքատ բնակչությունը) հեղափոխական բնույթի շարժումը հանուն ճշի, հանուն խաղաղության յեվ հանուն իսկական ազատության։

Հեղափոխական բանվորները ու զինվորները հիմքից կործանեցին ցարական նողկալի միապետությունը, չհրճվելով և չվոտքվելով այն բանից, վոր վորոշ, կարճաժամ և ըստ կոնյուկտուրայի բացառիկ պատմական մոմենտներում նրանց ոգնության ե հասնում Բյուկենենի, Գուչկովի և Միլյուկովի ու Ընկ. պայքարը, վորոնց նպատակն ե մի միապետին փոխարինել մի ուրիշով։

Այսպես և միայն այսպես կարող ե իրականությունը տեսնել այն քաղաքագետը, վոր չի վախենում ճշմարտությունից, ղեպատորեն կշռում ե հեղափոխության հասարակական ուժերի հարաբերությունը, յուրաքանչյուր «ընթացիկ մոմենտ» գնահատում ե վոչ միայն նրա տվյալ որվա առանձնահատկության տեսակետից, այլ և ավելի խոր զսպանակների, ինչպես Ռուսաստանի, այնպես և ամբողջ աշխարհի պրոլետարիատի ու բուրժուազիայի շահերի ավելի խոր հարաբերության տեսակետից։

Պիտերի բանվորներն ու զինվորները, ինչպես և ամբողջ Ռուսաստանի բանվորներն ու զինվորները, անձնազոհությամբ կռվում էին ցարական միապետության դեմ, ազատության, հողը գյուղացիներին տալու, իմպերիալիստական սպանդանոցի փոխարեն խաղաղություն հաստատելու համար։ Անգլո—ֆրանսիական կապիտալը, այդ սպանդանոցը շարունակելու և ուժեղացնելու նպատակով, պալատական ինտրիգներ ե լարում, դավադրություններ ե սարքում, դրդում ու հուդաստրում ե Գուչկոֆներին ու Միլյուկոֆներին, ծածուկ կազմակերպում ե բոլորովին պատրաստ նոր կառավարություն, վորը և իբրև իր ձեռքը գցեց, հենց վոր պրոլետարական պայքարն առաջին հարվածները հասցրեց ցարիզմին։

Այդ կառավարությունը պատահական մարդկանց մի խմբակ չէ։

Այդ—Ռուսաստանի քաղաքական կյանքի բարձրացած նոր դասակարգի ներկայացուցիչներն են, կապիտալիստ կալվածատերերի ու բուրժուազիայի դասակարգի, վոր վաղուց կառավարում է մեր յերկիրը տնտեսապես և վորը, ինչպես 1905—1907 թ. թ. հակահեղափոխության, ու, վերջապես,—և այն ել մի առանձին արագությամբ,—1914—1917 թ. թ. պատերազմի ժամանակ կազմակերպվում ե քաղաքականապես, իր ձեռքը վերցնելով և տեղական ինքնավարությունը, և ժողովրդական կրթության գործը, և զանազան համագումարները, և Դուման, և ռազմարդյունաբերական կոմիտեները և այլն։ Այդ նոր դասակարգը հավարյա բոլորովին «իշխանության գլուխ ե անցել 1917 թ. նախորյակին, ուստի բավական էին ցարիզմին հասցրած առաջին հարվածները, վորպեսզի նա փլչեր, տեղ մաքրելով բուրժուազիայի համար։ Իմպերիալիստական պատերազմը, ուժերի չափազանց մեծ լարում պահանջելով, այնպես արագացրեց հետամնաց Ռուսաստանի զարգացման ընթացքը, վոր մենք «միանգամից» (իրականում—իբր թե միանգամից) հասանք Իտալիային, Անգլիային, հավարյա Ֆրանսիային, ստացանք «կոալիցիոն», «ազգային» (այսինքն՝ իմպերիալիստական սպանդանոցի գործը վարելու և ժողովրդին խաբելու ընդունակ) «պարլամենտական» կառավարություն։

Այդ կառավարության,—իրականում միլիարդատեր «Ֆիրմանների», այսինքն այս պատերազմի տեսակետից Անգլիայի ու Ֆրանսիայի հասարակ գործակատարի,—կողքին կազմվեց նոր, անպաշտոն, դեռ չզարգացած, համեմատաբար թույլ բանվորական կառավարություն, վորն արտահայտում ե պրոլետարիատի և քաղաքային ու գյուղական բնակչության ամբողջ ամենաաղքատ մասի շահերը։ Այդ—Պիտերի Բանվորների ու Զինվորների Պատգամավորների Խորհուրդն ե։

Այս ե իրական քաղաքական կացությունը, վորը մենք ամենից առաջ պետք ե աշխատենք բնորոշել ամենահնարավոր որյակիվ ճշտությամբ, վորպեսզի մարքսիստական տակտիկան հիմնենք այն միակ ամուր պատվանդանի վրա, վորի վրա նա պետք ե հիմնվի,—փաստերի պատվանդանի վրա։

Ցարական միապետությունը ջախջախված ե, բայց դեռ վոչընչացված չե։

Ակտյաբրիստական, կադետական, բուրժուական կառավարությունը, վոր ուզում ե իմպերիալիստական պատերազմը վարել «մինչև վերջը», իրականում «Անգլիա և Ֆրանսիա» ֆինանսական ֆիրմայի գործակատարն ե, վոր հարկադրված ե ժողովրդին խոստանալ մախմուռ ազատություններ ու վոգորմություն վորոնց փոխարեն այդ կառավարությունը շարունակի իշխել ժողովրդի վրա և հնարավորություն ունենա շարունակելու իմպերիալիստական սպանդանոցը։

Բանվորների ու Զինվորների Պատգամավորների Խորհուրդը վորպես բանվորական կառավարության սաղմ, ժողովրդի ամբողջ ամենաազքատ մասի՝ այսինքն՝ $^{9}/_{10}$ մասի շահերի ներկայացուցիչն ե, վոր ձգտում ե ձեռք բերել խաղաղություն, հաց, ազատություն։

Այդ յերկուք ուժերի պայքարը բնորոշում և ներկայացնում ստեղծված

այն կացութիւնը, որ հեղափոխութեան առաջին ետապից դեպի յետ-
բորդ ետապը տանող անցման շրջանն է հանդիսանում։

Ցարական միապետութեան դեմ իրական պայքար մղելու, ազա-
տութիւնը՝ ոչ միայն խոսքով, ոչ թե լիբերալ ճոռոմաբանների
խոստումներով, այլ իրապես ապահովելու համար, ոչ թե բանվորնե-
րը պետք է պաշտպանեն նոր կառավարութեանը, այլ այդ կառավա-
րութիւնը պետք է «պաշտպանի» բանվորներին, որովհետև ազատու-
թեան ու ցարիզմի վերջնական խորտակման միակ յերաշխիքը պրոլե-
տարիատին սպառազինելն է, Բանվորների ու Զինվորների Պատգամա-
տարիատին սպառազինելն է, Բանվորների ու Զինվորների Պատգամա-
նորների Սորհրդի դերի, նշանակութեան և ուժի ամրապնդումը, ըն-
դարձակումն ու զարգացումն է։

Մնացած բոլորը—ֆրազներ ու ստախոսութիւն է, լիբերալ ու
ռադիկալ բանակի պալիտիկանների ինքնանպաստ եյութիւն։

Ոչնեցնք բանվորների սպառազինման գործին, կամ գեթ մի
խանգարեք այդ գործին,—և ազատութիւնը Ռուսաստանում անհաղ-
թելի կլինի, միապետութիւնն՝ անվերականգնելի, հանրապետութիւնն՝
ապահովված։

Այլապես՝ ժողովուրդը խաբված կլինի։ Խոստումներն աժան են,
նրանք վոչինչ չարժեն. խոստումներով են կերակրել ժողովրդին և հի-
մարացրել բանվորներին բոլոր բուրժուական պալիտիկանները բոլոր
բուրժուական հեղափոխութիւնների ժամանակ։

Մեր հեղափոխութիւնը բուրժուական է,—ուստի բանվորները պետք
է պաշտպանեն բուրժուազիային, ասում են լիկվիդատորների բանակի
անպետք քաղաքագետները։

Մեր հեղափոխութիւնը բուրժուական է,—ասում ենք մենք,
մարքսիստներս, ուստի բանվորները պետք է բաց աչեն ժողովրդի
աչքերը, ցույց տան նրան բուրժուական պալիտիկանների խաբեբա-
յութիւնը, սովորեցնեն նրան չհավատալ խոսքերի, ապավինել միայն
իր ուժերին, իր կազմակերպութեանը, իր միութեանը, իր սպառազին-
մանը։

Ակտյաբրիստների ու կադետների, Գուչկովների ու Միլյուկովնե-
րի կառավարութիւնը չի կարող,—յեթե նույնիսկ անկեղծորեն ցան-
կանա,—վոչ խաղաղութիւն, վոչ հաց և վոչ էլ ազատութիւն տալ։

Խաղաղութիւն չի կարող տալ, վորովհետև նա պատերազմի կա-
ռավարութիւն է, իմպերիալիստական սպանդանոցը շարունակելու կա-
ռավարութիւն է, գավթումների կառավարութիւն է, քանի դեռ նա
վոչ մի ձայն չի հանել այն մասին, թե հրաժարվում է Հայաստանը,
Գալիցիան, Թյուրքիան գավթելու, Կոստանդնուպոլիսը խլելու, Լհհաս-
տանը, Կուռլանդիան Լիտվան և այլ յերկիրները կրկին նվաճելու ցա-
րական քաղաքականութիւնից։ Այդ կառավարութեան ձեռքն ու վոտ-

քը կապված, կաշկանդված է անգլո-ֆրանսիական իմպերիալիստական
կապիտալով։ Ռուսական կապիտալը միայն մի բաժանմունքն է այն
համաշխարհային «ֆիրմայի», վոր խաղում է հարյուրավոր միլիարդ
ռուբլիների հետ և վորը կրում է «Անգլիա և Ֆրանսիա» անունը։

Հաց չի կարող տալ, վորովհետև այդ կառավարութիւնը բուր-
ժուական է. լավագույն դեպքում նա ժողովրդին կտա այն, ինչ տվից
Գերմանիան,—«հանճարեղ կերպով կազմակերպված սով»։ Սակայն ժո-
ղովուրդը չի հանդուրժի սովը. նա կխմանա և, հավանականաբար, չուտով
կխմանա, վոր հաց կա և կստացվի, սակայն վոչ այլ կերպ, բայց յեթե
այնպիսի միջոցների կիրառմամբ, վորոնք չեն խոնարվի կապիտալի
յեվ հողատիրության սրբության առաջ։

Ազատութիւն չի կարող տալ. վորովհետև այդ կալվածատիրա-
կան-կապիտալիստական կառավարութիւն է, ժողովրդից վախեցող
կառավարութիւն է։

Այդ կառավարության հանդեպ բռնելիք մեր մոտակա ընթացքի
վերաբերյալ տաքտիկական խնդիրների մասին մենք կխոսենք ուրիշ հոդ-
վածում։ Այնտեղ մենք ցույց կտանք, թե վոնց և հեղափոխութեան
առաջին ետապից դեպի մյուսը տանող անցման շրջանի ընթացիկ մո-
մենտ յուրահատուկ բնույթը, թե ինչու այդ մոմենտում մեր լոզուն-
գը՝ «որվա անելիքը պետք է լինի, բանվորներ, դուք ցարիզմի դեմ
մղվող բաղաքացիական կռվում պրոլետարական, ժողովրդական հեռո-
սության հրաբիներ գործեցիք, դուք պետք է պրոլետարական յեվ համա-
ժողովրդական կազմակերպության հրաբիներ գործեք, վորպեսզի նախա-
պատրաստեք ձեր այն հաղթանակը, վոր տանելու յեք հեղափոխության
յերկրորդ ետապում։

Դ. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԸ

Նա յերկու դաշնակից ունի. առաջինը՝ Ռուսաստանի կիսապրո-
լետարական և, մասամբ, մանր գյուղացիական աղքարնակության ըն-
դարձակ, շատ տասնյակ միլիոնների հասնող, մասսան է, վոր ընդհա-
նուր աղքարնակության հսկայական մեծամասնությունն է կազմում։
Այդ մասսային անհրաժեշտ են խաղաղութիւն, հաց, ազատութիւն,
հող։ Այդ մասսան անխուսափելիորեն ընկնելու յեք բուրժուազիայի և
հակակապիտալիստական վորոշ աղդեցության տակ. այս վեր-
ջինին նա ամենից ավելի յեք մոտենում, ավելի յեք համապատասխա-
նում իր կյանքի պայմաններով, տատանվելով բուրժուազիայի ու պրո-
լետարիատի միջև։ Պատերազմի դաժան դասերը, վորոնք այնքան ա-
վելի դաժան կլինեն, վորքան Գուչկովները, Լվովները, Միլյուկովներն
ու Ընկ. ավելի յեռանդով կշարունակեն պատերազմը, անխուսափե-
լիորեն այդ մասսային կմղեն դեպի պրոլետարիատը, կստիպեն նրան

դնալ այդ պրոլետարիատի յետևից։ Այժմ մենք պետք է աշխատենք ամենից առաջ և ամենից շատ այդ մասսային լուսավորել ու կազմակերպել, ոգովելով նոր կարգերի ազատությունից և Բանվորների ու Զինվորների Պատգամավորների Խորհուրդներից։ Գյուղացիական պատգամավորների խորհուրդներ, գյուղատնտեսական բանվորների խորհուրդներ,—ահա մեր ամենահրատապ խնդիրներից մեկը։ Միմիայն մենք վոչ թե պետք է միայն աշխատենք, վոր գյուղատնտեսական բանվորներն ընտրեն իրենց առանձին խորհուրդները, այլև՝ վորպեսզի ընչազուրկ ու ամենաաղքատ գյուղացիները կազմակերպվեն ունևոր գյուղացիներից առանձին։ Այդ այժմ ամենահրատապ, ամենաանհրաժեշտ կազմակերպության հատուկ խնդիրների ու հատուկ ձևերի մասին—հաջորդ նամակում։

Յերկրորդ՝ ռուս պրոլետարիատի դաշնակիցն է բոլոր կովող և ընդհանրապես բոլոր յերկրների պրոլետարիատը. նա այժմ բավական ճնշված, ընկճված և պատերազմի պատճառով, և նրա անունից շատ հաճախ են խոսում բուրժուազիայի կողմն անցած սոցիալ-շովինիստները և՛ Յեվրոպայում և Ռուսաստանում, ինչպես՝ Պլեխանովը, Գվոզդիևը և Պոտրեսովը։ Սակայն պրոլետարիատն ազատվում է նրանց ազդեցությունից։ Պատերազմի յուրաքանչյուր ամիսն ավելի յե արագացնում այդ ազատագրման ընթացքը, իսկ ռուսական հեղափոխությունն անխուսափելիորեն հսկայական չափերով կարագացնի այդ պրոցեսը։

Այդ յերկու դաշնակցի հետ Ռուսաստանի պրոլետարիատը, ոգտագործելով այժմյան անցողական մոմենտի առանձնահատկությունները, կարող է ասպարեզ դուրս գալ և դուրս կգա նախ՝ դեմոկրատական հանրապետություն ձեռք բերելու և գյուղացիությանը լիակատար հաղթանակ տալու ընդդեմ կալվածատերերի, իսկ հետո դիմելու դեպի սոցիալիզմ, վորը միայն պատերազմից տանջված ժողովուրդներին կտա խաղաղություն, հաց յեվ ազատություն։

(«Պրավդա», № 14 և 15, 21, 22 մարտի 1917 թ. տպագրված է «Ն. Լենին»։

(Վ. Ի. Լենին։ «Նամակներ հեռվից», էջ 20—22)։

Ե. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՏԻՊԸ, ՎՈՐ ՍՏԵՂԾՎՈՒՄ Է ՄԵՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ.

Բանվորների, Զինվորների, Գյուղացիների և այլ պատգամավորների խորհրդները չեն ընդունված վոչ միայն այն տեսակետից, վոր մեծամասնության համար պարզ չեր նրանց դասակարգային նշանակությունը, նրանց դերը ռուսական հեղափոխության մեջ։ Նրանք չեն հասկացված նաև այն տեսակետից, վոր նրանք իրենց ներկայացնում են նոր ձևի, ավելի ճիշտ, նոր տիպի պետություն։

Բուրժուական պետությունների ամենակատարյալը, առաջավորը հանդիսանում է պարլամենտական դեմոկրատական հանրապետության տիպը։ Իշխանությունը պատկանում է պարլամենտին, պետական մեքենան, ապարատն ու կառավարչական մարմինը սովորականն է, մշտական բանակը, վոստիկանությունը, չինովնիկությունը, վորը փոստորեն անփոփոխելի յե, արտոնյալ, վոր ղրված է ժողովրդից վեր, նրա վրա։

Բայց սկսած 10-րդ դարի վերջերից հեղափոխական շրջանները առաջ են քաշում պետության բարձրագույն տիպը, այնպիսի պետություն, վորը վորոշ տեսակետներից դադարում է արդեն, ըստ ենգելսի, պետություն,—պետություն լինելուց, «պետություն չե բառահայտության,—պետություն լինելուց, «պետություն չե բառիս բուն իմաստով»։—Դա Փարիզյան Կոմունայի տիպի պետությունն է, վոր փոխարինում է ժողովրդից բաժան բանակն ու վոստիկանությունը հենց իրենց ժողովրդի ուղղակի ու անմիջական զինումով։ Ահա թյունը հենց իրենց ժողովրդի ուղղակի ու անմիջական զինումով։ Ահա այս է կոմունայի հյությունը, վորին բուրժուական գրողները բամբասելին և ատելին, վորին սխալմամբ, իմիջի այլոց, վերագրում եյին այն, թե նա մտադիր է անմիջապես «ժամնել» սոցիալիզմ։

Հենց այդ տիպի պետություն է, վոր ռուսական հեղափոխությունն սկսեց ստեղծել 1905 թ. և 1917 թվականներին։ Բանվորների, Զինվորների, Գյուղացիների և այլ պատգամավորների Խորհուրդների հանրապետություն, մեզանում ժողովրդական ներկայացուցիչների Համառուսական Հիմնադիր ժողովով կամ Խորհուրդների Խորհրդով և այլն։—Ահա թե ինչ է այժմ մեզ մոտ արդեն կյանքի մեջ մտնում, տվյալ ժամանակում, բազմամիլիոն ժողովրդի նախաձեռնությամբ, վորն ինքնագլուխ կերպով իր ձևով ստեղծում է դեմոկրատիա, առանց սպասելու, թե յերբ պ. պ. պրոֆեսոր—կադետները պարլամենտական բուրժուական հանրապետության համար կգրեն իրենք որենքների նախագծերը,—վոչ ել սպասելով նրան, թե յերբ մանր բուրժուական «սոցիալ դեմոկրատիայի» պեղանտներն ու ռուտինյորները,—Պլեխանովի և Կաուցկու նման, կհրաժարվեն պետության հարցի մասին մարքսիզմի ուսմունքը հեղաթյուրելուց։

Մարքսիզմն անարխիզմից նրանով է տարբերվում, վոր հեղափոխական շրջանում ընդհանրապես, և կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու շրջանում մասնավորապես, ընդունում է պետության և պետական իշխանության անհրաժեշտությունը։

Մարքսիզմը պ. Պլեխանովի, Կաուցկու և կամպանիայի մանր բուրժուական, ոպորտյունիստական «սոցիալ դեմոկրատիզմից» նրանով է տարբերվում, վոր ժամանակավոր շրջանների համար ընդունում է վոչ այնպիսի պետության անհրաժեշտություն, վորպիսին է սովորական պարլամենտական բուրժուական հանրապետությունը, այլ այն-

պիսի պետություն, ինչպիսին Փարիզի Կոմունան եր։ Այս վերջին տիպի պետության տարբերությունները հենց հետևյալներն են.

Վերադարձը պարլամենտական բուրժուական հանրապետությունից դեպի միապետությունը շատ հնար է (ինչպես այդ ապացուցեց պատմությունը), վորովհետև անձեռնմխելի չի մնում ճնշման անբողջ մեքենան՝ բանակը, վոստիկանությունը, չինովնիկությունը։ Կոմունան և Բանվորների, Զինվորների, Գյուղացիների ու այլ պատգամավորների խորհուրդը ջարդում եճ և վերացնում այդ մեքենան։

Պարլամենտական բուրժուական հանրապետությունը ճնշում, խեղաթյուրում է մասսաների ինքնուրույն քաղաքական կյանքը, նրանց անմիջական մասնակցությունը ամբողջ պետական կյանքի դեմոկրատական շինարարության մեջ վարից վեր։ Բանվորների և Զինվորների պատգամավորների խորհուրդները՝ ընդհակառակը՝

Վերջինս վերստեղծում է պետության այն տիպը, վորը մշակում եր Փարիզի Կոմունան և վորին Մարքսն անվանեց «վերջապես՝ մի բաց քաղաքական ձև, վորի մեջ կարող է տեղի ունենալ աշխատավորների տնտեսական ազատագրումը»։

Սովորաբար առարկում են, թե ռուս ժողովուրդը դեռ ևս պատրաստված չէ կոմունա «մտցնելու» համար։ Դա ճորտատերերի փաստն է, վորոնք ասում էին, թե գյուղացիները պատրաստված չեն ազատության համար։ Վոչ մի բարեփոխություն, վորոնք բացարձակորեն չեն հասունացել և տնտեսական իրականության մեջ և ժողովրդի ընդհանուր մեծամասնության դիդակցության մեջ—Կոմունան, այսինքն, Բանվորների և Գյուղացիների Պատգամավորների Խորհուրդները չեն «մըտցնում», մտադիր չեն «մտցնելու» և չպետք է մտցնեն։ Վորքան ավելի ուժեղ կլինի տնտեսական անանկությունը և պատերազմից ծնունդ առած հգնաժամը, այնքան ավելի հրամայական է դառնում, առավել կատարյալ քաղաքական ձևի անհրաժեշտությունը, վորը հեշտացնում է պատերազմից մարդկությանը հասած սոսկալի վերքերի բուժումը։

Վորքան քիչ է ռուս ժողովրդի կազմակերպչական փորձը, այնքան ավելի վճռականորեն պետք է ձեռք գարնել հենց իրեց, ժողովրդի կազմակերպչական շինարարության գործին, և վոչ թե միայն բուժական պոլիտիկոսների և «շահարեր» տեղեր ունեցող չինովնիկների։

Վորքան ավելի շուտ կենտենք մեզնից պ. Պլեխանովի, Կաուցկու և կամպանիայի խեղաթյուրած կեղծ—մարքսիզմի նախապաշարմունքները, վորքան ավելի յեռանդով մենք կսկսենք ոգնել ժողովրդին խուն և յեթ ամենուրեք կառուցելու Բանվորների և Գյուղացիների Պատգամավորների Խորհրդները, վերցնելու նրանց ձեռքը ամբողջ կյանքը,—Լվովները ու կամպանիան վորքան ավելի կճգճգեն Հիմնադիր ժողովի գումարումը,—ժողովրդի համար այնքան ավելի հեշտ կլինի (հիմ-

նադիր ժողովի միջնորդությամբ կամ առանց նրան (յեթե Լվովը դեռ յերկար ժամանակ չհրավիրի այն) ընտրությունն անել հողուտ Բանվորների, Գյուղացիների Պատգամավորների հանրապետության։ Սկզբում իրեն՝ ժողովրդի սխալները կազմակերպչական շինարարության մեջ անխուսափելի յեն, բայց ավելի լավ է սխալվել և առաջ գնալ, քան ապատել, թե չերը պ. Լվովի հրավիրած իրավագետ—պրոֆեսորները կգրեն որենքներ հիմնադիր ժողովի հրավիրման և պարլամենտական բուրժուական հանրապետության հավերժացման, Բանվորների և Գյուղացիների Պատգամավորների խորհուրդները խեղդելու մասին։

Յեթե մենք կազմակերպենք և շնորհքով պրոպագանդա ժենք, ապա վոչ միայն պրոլետարները, այլ և գյուղացիության ինն տասերորդը դեմ կլինի վոստիկանության վերականգնելուն, դեմ կլինի անփոփոխելի և արտոնյալ չինովնիկության, դեմ կլինի բանակը ժողովրդից բաժանելուն։ Յեվ միայն այդ է պետության նոր տիպի երյությունը։

(Լենին,—«Պրոլետարիատի խնդիրները մեր հեղափոխության մեջ» հոդվածից։ Գրված է 1917 թ. ապրելի 10-ին։ Յերկերի ժողովածու, հատ. 14, մաս 1. յերես 46, յերկրորդ տպրաժ)։

2. 1917 թ. ՀՈՒԼԻՍՅԱՆ ՈՐԵՐԸ

Բուրժուազիայի ակնհայտ ձգտումը՝ ձգձգելու պատերազմը և զենքի շառաչյունի տակ խեղտելու հեղափոխությունը, մենշևիկների և եսերների մասսաներին իրենց հետևից տանելու անընդունակությունը, զեկավար կուսակցությունների դավաճանությունը, բայլնիկներին հալածելը, ստոր բամբասանքը գերմանական փողերի մասին, սովը ճակատում և թիկունքում, պրոպագանդան և ագիտացիան, բայլնիկների կուսակցության ճիշտ և վճռական գործելակերպը՝ այդ բոլորն ստեղծում եր աշխատավոր ամենալայն մասսաների մեջ հակայական անբավականություն։

Բայլնիկների ռազմական կազմակերպության ժողովներում շատ բնական կարելի յեր լսել. «Ի՞նչ կարիք կա նրանց նայելու։ Պետք է ուժով ստիպել նրանց իշխանությունը Խորհրդներին հանձնելու»։ Առանձնապես հուզվում եր առաջին գնդացիրային գունդը Վիբորգյան կողմում։

Մենք առավոտից մինչև յերեկո կովում էինք նման ձգտումների դեմ։ Բայց հուլիսի 3-ին առաջին գնդացիրային գունդը վորոշեց դուրս գալ Տավրիկյան պալատի առաջ իշխանությունը Խորհուրդներին հանձնելու պահանջով։

Մասսաների ճնշման ատկ, և վորպեսզի բորբոքված շարժումը կազմակերպված ընթացակների մեջ դրվի, բայլնիկների կ. կ. հրամա-

յեց ռազմական կազմակերպությանն ու կուսակցությանն անցնել շարժման գլուխը։ Հուլիսի 3-ին յերեկոյան մեր ագիտացիայի ազդեցության տակ մասսաները վորոշեցին ցրվել։

Բայց հետևյալ առավոտը շարժման մասնակից բանվորներն ու զինվորները սկսեցին պատգամավորներ ուղարկել Կշեսինսկու պալատը, վորտեղ տեղավորված եյին բայշևիկական կենտրոնական կազմակերպությունները, պահանջելով ամբողջ Պետերբուրգը փողոց դուրս բերել։ Հենց այդ ժամանակ, 3-ից լույս 4-ի գիշերը, ժամանակավոր կառավարությունը փակեց բայշևիկական «Սալդատսկայա Պրավդա» թերթը և քար ու քանդ արեց մեր տպարանները։ Դուրս ժայթած բարկությունը բանվորներին փողոց հանեց. Ֆինլանդիայից յեկած Լենինը անկասկած զեմ եր յեղուլթին։ Պետք է հիշատակել, վոր հունիսի 18-ի ցույցից հետո կերենսկին, սպասելով բայշևիկների վճռական յեղուլթին, պատրաստել եր, վոր զեպի Պետերբուրգ շարժվեն կառավարությանն հավատարիմ զորքերն ու յունկերները։ Ըստ յերևույթին նրանք կարող եյին գալ միայն հուլիսի 5-ին։ Ցանկանալով ժամանակ շահել, շրջանային շտաբը մենշևիկական-եսերական Համառուսական կենտգործկոմի համաձայնությամբ բայշևիկների հետ բանակցություններ մեջ մտավ։

Սկզբում շրջանային շտաբը բոլոր զինուժներին ընդառաջ եր գնում. աննկարագրելի յեր հրամանատարի շփոթվածությունը։ Բայց հենց վոր տեղեկություններ ստացվեցին, թե զորքերը մոտենում են Պետերբուրգին՝ շտաբն ու կենտգործկոմը սկսեցին իրենց ավելի ու ավելի ամբարտավան պահել։ Նոր յեկած զորքերի ոգնությամբ կառավարությունը հուլիսի 5-ին ձեռնարկեց հարձակման։ Համաձայնության պայմանները խախտվեցին։

Բայշևիկյան կուսակցական կազմակերպությունները քար ու քանդ արվեցին։ Պետրապավլովսկի բերդն ու Կշեսինսկու պալատը՝ բայշևիզմի հենակետերը հանձնվեցին։

Կառավարությունը վորոշեց ոգտագործել ստեղծված դրությունը։ Բայշևիկական կազմակերպությունների ավերումը տարածվեց և դավառներում։ Գործարաններում տեղի եյին ունենում խուզարկություններ և ձերբակալություններ։ Պետերբուրգում ձերբակալվեցին լավագույն աշխատավորները, ի թիվս վորոնց և Տրոցկին, Կամենևը, Կրիլենկոն, Կոլանտայը, Լունաչարսկին։ Փակվեցին բայշևիկական 8 թերթ։

Հրատարակության մասին յեղած բամբասանքը, վոր այդ որերին կառավարությունը հրապարակ եր նետել, և բայշևիկների հալածանքը ուժեղանում եյին, տարածվելով ամբողջ Ռուսաստանում և արտասահմանում։ Բուրժուազիան ցնծում եր։ Թվում եր թե այդ հարվածը յերկար ժամանակով հնարավորություն չեր տա հեղափոխական ուժերին ուշքի գալու։

(Պադվոյսկի Ն. «Ինչպես 1917 թ. հոկտեմբերին բանվորները տապալեցին կապիտալիստներին և կալվածատերերին»։ «Բանվորա-գյուղացիական որացույց», 1922 թ. ռուսերեն. եջ. 94)։

Ը. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ.

Գալիս եր ռուսական սոսկալի ձմեռը։ Յես լսում եյի առևտրա-արդյունաբերական աշխարհի ներկայացուցիչներից.—«Ձմեռը միշտ ել յեղել է Ռուսաստանի ամենալավ բարեկամը։ Կարող է պատահել, վոր նա հիմա մեզ ազատի հեղափոխությունից»։ Սառցապատ ռազմաճանապարհները շարունակում եյին քաղցել ու մեռնել կատում դժբախտ բանակները առանց վոգևորության։ Յերկաթուղիները ավելի և ավելի տառապում եյին կազմալուծումից։ Կենսամթերքների քանակը գնալով կրճատվում եր, ձեռնարկությունները փակվում եյին։ Հուսահատված մասսաները աղաղակում եյին, վոր բուրժուազիան սաբոտաժի յե յենթարկում ժողովրդական գործը՝ պարտություն առաջացնելով ռազմաճակատում։ Ռիգան հանձնվել եր հենց անմիջապես նրանից հետո, յերբ զորավար Կարնիլովը հայտարարել եր իլուր հանրության.—«Պետք է արդյոք Ռիգան յերկրի պարտաճանաչության գալու գինը լինի»։ Ամերիկացիներին անհասկանալի յե թե ինչպես կարող է դասակարգային կռիվը սրանալ այդ աստիճանի։ Բայց հյուսիսային ռազմաճակատում յես հաճախ անձամբ հանդիպում եյի սպաների, վորոնք բացարձակ կերպով ռազմական պարտությունը գերադասում եյին զինվորական կոմիտեների հետ գործակցելուց։ Կադետական կուսակցության Պետրոգրադի կոմիտեի քարտուղարն ասաց ինձ, վոր յերկրի կործանումը մի մասն է այն արշավանքի, վոր տարվում է հեղափոխությունը վարկաբեկելու համար։ Անտանտի դիվլոմատներից մեկը, վորի անունը յես խոսք եմ տվել չհիշել, հաստատեց ինձ այդ իր սեփական տեղեկությունների հիման վրա։ Յես դիտեմ, վոր Խարկովի մոտ գտնվող հանքերից միքանիսը վառված և ջրով լցված են յեղել իրենց սեփականատերերի ձեռքով։

Յես դիտեմ տեքստիլ ձեռնարկություններ Մոսկվայում, ուր ինժիներներն անպետքացնում եյին մեքենաները, յերբ հեռանում եյին ձեռնարկություններից։ Յես գիտեմ փաստեր, վոր բանվորները բռնում եյին յերկաթուղային պաշտոնյաներին հենց չոգեմեքենաներ փչացնելու վայրկյանին։

Տիրող դասակարգերի նշանավոր մասը գերմանական ինտերվենցիան գերադասում եր նույնիսկ ժամանակավոր կառավարությունից և չեր վախենում այդ արտահայտել։ Ռուսական ընտանիքում, ուր յես ապրում եյի, համարյա թե միշտ ճաշի սեղանի շուրջը խոսակցության նյութ եր լինում գերմանացիների գալուստը, վոր բերելու եր մեզ կարգ ու կանոն։ Մի անգամ յերեկոյան յես յեղա մի մոսկվացի վաճառականի տանը։ Թեյի ժամանակ մենք հարցրինք 11 հոգու, վոր նստել

եին սեղանի շուրջը, ուր են նրանք գերազասում՝ Վիլհելմին, թե բալշևիկներին։ 10 հոգի արտահայտվեցին հոգուտ Վիլհելմի, մեկը-բայշևիկների։

Սպեկուլյանտները ոգտվում եին ընդհանուր կազմալուծումից, վերպետի հավաքեն չտեսնված կարողություններ և մեծին դրանք ֆանտաստիկ քեֆերի կամ պետական պաշտոնյաներին կաշառելու վրա։ Կենսամթերքների պահեստները և վառելիքը թագնվում եին կամ գաղանի ուկարկվում Շվեցիա։ Որինակ, հեղափոխության առաջին 4 ամիսների ընթացքում կենսամթերքների պաշարները համարյա բացամիսների ընթացքում կենսամթերքների պաշարները համարյա բացարձակ կերպով թալանվում եին Պետրոգրադի քաղաքային խոշոր մթերանոցներից, այնպես վոր հացահատիկների յերկու տարվա պաշարը կրճատվեց մի քանակության, վոր հազիվ բավականանար քաղաքը մի ամիս կերակրելու։ Ըստ ժամանակավոր կառավարության հայթհայթամիս կերակրելու։ Ըստ ժամանակավոր կառավարության հայթհայթման վերջին մինիստրի պաշտոնական տեղեկության՝ սուրճը մեծ քանակությամբ վլադիվոստոկում գնված եր ֆունտը 2 ռուբլիով, իսկ սպառնակությամբ վլադիվոստոկում գնված եր ֆունտը 2 ռուբլիով, իսկ սպառողները Պետրոգրադում վճարում եին ֆունտին 13 ռուբլի։ Մեծ քաղաքների բոլոր խանութներում տասնյակ փթերով պահվում եին հագուստներ ու մթերքներ, բայց ունևոր մարդը միայն կարող եր դրանք գնել։ Մի գավառական քաղաքում յես գիտեի մի վաճառականի ընտանիք, վորը զբաղվում եր սպեկուլյացիայով և հետո սկսեց թալանով զբաղվել։ Նրա յերեք վորդիները փողով ազատվեցին զինվորական ծառայությունից։ Մեկը կենսամթերքների սպեկուլյացիայով եր զբաղվում, մյուսը Լենայի հանքերից գաղտնի կերպով ձեռք բերված վոսկի յեր վաճառում Ֆինլանդացի խորհրդավոր գնորդներին, յերորդը ձեռք եր բերել ակցիաների մեծ մասը շոկոլադի մի գործարանի, վորը մատակարարում եր տեղական կոոպերատիվ միությունները, պայմանով, վոր վերջիններս կգանեն նրա համար այն ամենը, ինչի վոր նա կարիք ունենար։ Յեվ դրա համար ել այն ժամանակ, յերբ ժողովրդական մասսաները իրենց հացատոմսերով ստանում եին ¹/₄ ֆ. ծանր սև հաց—նրա մոտ կար մեծ քանակությամբ սպիտակ հաց, շաքար, թեյ, կանֆետ, յուղ։ Բայց և այնպես, յերբ զինվորները ռազմաճակատում ել չեին կարող կռվել քաղցից, ցրտից ու հյուծումից—ինչ զայրույթով այդ նույն մարդիկ աղաղակում եին—«վախկոտներ». ինչպես նրանք ամաչում եին ռուսներ լինելուց։ Յեվ յերբ, վերջապես, բայշևիկները գան և բևկվիզիցիայի յենթարկեցին դիզած կենսամթերքների հսկայական պահեստները—ինչպիսի կողոպտիչներ եին նրանք այդ նույն մարդկանց աչքերին...

Արտաքին այդ նեխվածության ներքո վխտում եին հին ռեժիմի գաղտնի ուժերը, վորոնք չեին փոխվել Նիկոլա II-ի անկումից հետո։ Որհրդավոր և չափազանց ակտիվ գործակալները հոչակավոր «Ախրանա» դեռևս աշխատում եին թեր և դեմ ցարիզմին, թեր և դեմ

Կերենսկուն, ով ել վոր նրանց վճարեր։ Ամեն տեսակի ընդհատակյա կազմակերպությունները, սև հարյուրակի նման, կուլիսների յետևը տենդոտ աշխատում եին ռեակցիան այս կամ այն ձևով վերականգնելու։

Ծախվածության, հրեշային կլսաճշմարտության այդ մթնոլորտում մի պարզ նոտա եր հնչում որստորև՝ բայշևիկների ավելի ու ավելի խորացող ձայնը.—«Ամբողջ իշխանությունը Որհուրդներին, ամբողջ իշխանությունը մլիոն և մլիոն շարքային բանվորների, զինվորների և գյուղացիների փաստացի ներկայացուցիչներին, հող, հաց, վերջ անիմաստ պատերազմին, վերջ սպեկուլյացիային և դավաճանությանը... Հեղափոխությունը վտանգի մեջ է և նրա հետ մեկտեղ—ժողովուրդի գործն ամբողջ աշխարհում»։

(Ջոն Ռիդ։ «Տասն որ վոր սասանեցրին աշխարհը», հայերեն եջ. 28—30)։

Թ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔԸ ՏՎՅԱԼ ՄՈՄԵՆՏՈՒՄ.

Սեպտեմբերին գեներալ Կորնիլովը արշավեց Պետրոգրադի վրա՝ Ռուսաստանի ռազմական դիկտատորը դառնալու նպատակով։ Նրա յետևից հանկարծ յերևաց բուրժուազիայի զրահավորված բռունցքը, վորը ցանկանում եր ճզմել հեղափոխությունը։ Կորնիլովյան դավադրության մեջ խառնված եին նաև միքանի սոցիալիստական մինիստրներ.—նույնիսկ Կերենսկին կասկածի տակ եր։ Սավինկովը, վոր հրաժարվեց եր սոցիալիստ-հեղափոխականների կենտրոնական կոմիտեն ներ.—նույնիսկ Կերենսկին կասկածի տակ եր։ Սավինկովը, վոր հրաժարվեց եր սոցիալիստ-հեղափոխականների կենտրոնական կոմիտեն վերված եր սոցիալիստ-հեղափոխականների կենտրոնական կոմիտեն բացատրություններ տալու համար, հրաժարվեց այդ անել և հեռացվեց կուսակցությունից։ Զինվորական կոմիտեները ձերբակալեցին Կորնիլովին, մի շարք զորավարներ հրաժարական ստացան, միքանի մինիստրներ կորցրին իրենց պորտֆելները, և կաբինետն ընկավ։

Կերենսկին փորձեց նոր կառավարություն կազմել, մտցնելով նաև կադետական բուրժուական կուսակցության ներկայացուցիչներին։ Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունը հրամայեց նրան կադետներին չընդունել։ Կերենսկին մերժեց հնազանդվել և սպառնում եր հրաժարական տալ, յեթե սոցիալիստները շարունակեն պնդել։ Բայց և այնպես ժողովրդի տրամադրությունն այնքան վորոշ եր, վոր միառժամանակ նա չհամարձակվեց նրանց դեմ գնալ, և կառավարությունը ստանձնեց զինվորական դիկտատուրան, կազմված նախկին հինգ մինիստրներից, Կերենսկու գլխավորությամբ, մինչև վոր հարցը վերջնականապես լուծվեր։

Կորնիլովշչինան բոլոր սոցիալիստական խմբակցություններին՝ «չափավորներին» և հեղափոխականներին—ինքնապաշտպանության բուռն ցանկությունով միացրեց։ Այլևս կորնիլովցիներ չպետք է լինեին։

Պետք է ստեղծել նոր կառավարություն, որը պատասխանատու լինի հեղափոխությունը պաշտպանող ելեմենտների առաջ։ Այդպես որոշեց Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և դրա համար հրավիրեց կազմակերպություններին՝ ներկայացուցիչներ տալ Պետրոգրադում սեպտեմբերին կայանալիք Դեմոկրատական կոնֆերենցիային։

Կենտրոնական Գործադիր Կոմիտեում միանգամից կազմվեց յոթնեք ֆրակցիա։ Բայշևիկները պահանջում էին անհապաղ Համառուսական Խորհուրդների Համագումար հրավիրել և իշխանությունը հանձնել Խորհուրդներին։ Սոցիալիստ-հեղափոխականների կենտրոնը Ջերնովի առաջնորդությամբ, ձախ սոցիալիստ-հեղափոխականների հետ միասին, Կամկովի և Սպիրիդոնովայի ղեկավարությամբ, մենշևիկ-ինտերնացիոնալիստները՝ Մարտովի գլխավորությամբ և մենշևիկների կենտրոնը հանձինս Բոգդանովի և Սկոբելևի միացման դուռ-սոցիալիստական կառավարության պահանջներով։ Ծերեթելին, Դանը և Լիբերը աջ-մենշևիկների գլուխն անցած, և աջ սոցիալիստ-հեղափոխականները՝ հանձինս Ավքսենտյեվի և Գոցի, կոալիցիոն մինիստրություն էին պահանջում։

Սրանից անմիջապես հետո բայշևիկները Պետրոգրադի Խորհրդում մեծացան մեծամասնություն. Մոսկվայի, Կիյևի և Ոդեսայի Խորհրդի ընտրությունները նույն հետևանքն ունեցան, ինչ որ Պետրոգրադի ընտրությունները։

Անհանգստացած այդ հանգամանքից Կենտրոնական Գործադիր Կոմիտեն, ղեկավարող մենշևիկները և սոցիալիստ հեղափոխականները որոշեցին,—որ այնուհանդերձ Լենինի կողմից սպասվող վտանգն ավելի էր սարսափելի, քան Կորնիլովյան վտանգը։ Նրանք նորից քննեցին ներկայացուցչության կարգը, Դեմոկրատական կոնֆերենցիայում մեծ տեղ տալով կոոպերատիվ ընկերություններին և ուրիշ պահպանողական կազմակերպությունների պատգամավորներին։ Մինչև անդամ այդ առանձնապես ջոկված ժողովը սկզբում ձայն էր տալիս հոգուտ կոալիցիոն կառավարության—առանց կադետների։ Միայն կերենսկու հրաժարական տալու սպառնալիքը և «չափավոր» սոցիալիստների ալլերմիստական կանչերը, թե հանրապետությունը վտանգի մեջ է, համոզեցին կոնֆերենցիային, որն աննշան մեծամասնությամբ արտահայտվեց բուրժուազիայի հետ կոալիցիա կազմելու օդտին և հաստատեց խորհրդակցական պարլամենտի նման ինչ որ մի հաստատություն՝ զուրկ որևէ դրական իրավունքից և անվանված Ռուսաստանի Հանրապետության ժամանակավոր Խորհուրդ։ Փաստորեն նոր մինիստրությունը ղեկավարում էին իշխող դասակարգերը, և Ռուսաստանի Հանրապետության Խորհրդում նրանց պատկանում էր շատ տեղ։

Փաստն այն էր, որ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն այլևս

չէր ներկայացնում իրենից Խորհուրդներ և ապորինի կերպով հրաժարվեց սեպտեմբերին նշանակված Համառուսական Խորհուրդների Համագումարը հավաքել։ Նա մտադրություն չուներ հրավիրելու այդ համագումարը կամ թե թույլ տալու, որ Համագումարը հավաքված լիներ։ Նրա պաշտոնական որգանը՝ «Իզվեստիան» արդեն սկսել էր ակնարկել, որ Խորհուրդների գործը ժամանում է իր վախճանին, և շուտով հնարավոր կլինի արձակել Խորհուրդները։ Հենց այդ ժամանակ նոր կառավարությունը հայտնեց, որ ինքը մտցնում է իր ծրագրի մեջ անպատասխանատու կազմակերպությունները՝ այսինքն Խորհուրդները լիկվիդացիայի ենթարկելու խնդիրը։

Բայշևիկները պատասխանեցին դրան Խորհուրդներին ուղղված կոչով—հավաքվել Պետրոգրադում նոյեմբերի 2-ին նոր տոմարով և իրենց ձեռքն առնել Ռուսաստանի կառավարությունը։ Միևնույն ժամանակ նրանք հեռացան Ռուսաստանի Հանրապետության Խորհրդից՝ հայտնելով, որ չեն ցանկանում մասնակցել այն կառավարության մեջ որը դավաճանել է ժողովրդին։

Բայշևիկների հեռանալը, սակայն, Խորհուրդների մինոլորտում խաղաղություն չմտցրեց։ Տիրապետող դասակարգը կառավարության գլուխն անցնելով՝ լրբացել էր։ Կադետները հայտարարեցին, որ կառավարությունը որևիցե իրավունք չունի Ռուսաստանը հանրապետություն հայտարարելու։ Նրանք պահանջեցին խիստ միջոցներ գործադրել զորքի և նավատորմի վերաբերմամբ՝ նպատակ ունենալով վոչնչացնել զինվորական և նավատորմական կոմիտեները, և հարձակում գործեցին Խորհուրդների վրա։ Մյուս կողմից, մենշևիկների կուսակցությունը, ինտերնացիոնալիստներն ու ձախ սոցիալիստ-հեղափոխականները պահանջում էին անմիջապես հաշտություն կնքել, հողը հանձնել գյուղացիներին և բանվորական հսկողություն նշանակել արտադրության վրա—բայշևիկյան ծրագրի փաստացի իրականացումը։

Ցես ներկա էի Մարտովի դասախոսությանը հոկտեմբերին։ Ամբիոնի վրա կորացած, մահամերձ հիվանդի նման, խոսելով ճռճռան ձայնով այնպես, որ հազիվ էր լսվում, նա ժամը թափ էր տալիս աջակողմյան աթոռների ուղղությամբ։

«Դուք մեզ անվանում եք պարտվողականներ, բայց իսկական պարտվողականները նրանք են, որոնք հարմար րոպեի չեն սպասում հաշտություն կնքելու, պնդում են հետաձգել հաշտությունը մինչև այն ժամանակ, երբ ռուսական զորքից վոչինչ չի մնա, երբ Ռուսաստանը զանազան իմպերիալիստական խմբավորումների առուծախի առարկա կդառնա։ Դուք փորձում եք ռուս ժողովրդի վզին փաթաթել այնպիսի քաղաքականություն, որը թելադրում են բուրժուազիայի շահերը։ Հաշտության հարցը պետք անհետաձգելիորեն դրվի։ Այն ժամանակ

դուք կտեսնեք, որ իսկույն չեր նրանց աշխատանքը, որոնց դուք անվանում եք գերմանական ագենտներ, այն ցիմմերվալդցիներին, որոնք բոլոր յերկրներում արթնացրել են դեմոկրատ մասսաների գիտակցությունը»:

Այս յերկու խմբերի միջև տատանվում էին մենշևիկները և սերները, որոնց մասսայի ճնշող զայրույթը վճռական կերպով հրում եր դեպի ձախ: Սորը թշնամությունը բաժանում եր պլատոր յերկու անհաշտ խմբերի:

Դրությունն այսպես եր, յերբ Փարիզի դաշնակցային կոնֆերենցիայի վաղուց սպասվող դեկլարացիան դրեց արտաքին քաղաքականության ցավոտ հարցը:

Տեսականորեն Ռուսաստանի բոլոր սոցիալիստական կուսակցությունները արտահայտվեցին դեմոկրական պայմաններով հնար յեղած ծին չափ շուտ կնքած հաշտության օգտին: Դեռ 1917 թվի մայիսին Պետրոգրադի Սորհուրդը, որն այն ժամանակ գտնվում եր մենշևիկների և սոցիալիստ-հեղափոխականների դեկավարության տակ, հայտարարում եր ռուսական հաշտության հայտնի պայմանները: Այդ պայմանները պահանջում էին դաշնակիցներին կոնֆերենցիայի հավաքվել՝ պատերազմի նպատակները քննելու համար: Այդպիսի մի կոնֆերենցիա խոստացված եր հավաքել օգոստոսին, հետո հետաձգվեց մինչև սեպտեմբեր, ապա մինչև հոկտեմբեր, և հիմա նշանակված է սեպտեմբերի 10-ին: Ժամանակավոր կառավարությունն առաջարկել եր ուղարկել յերկու ներկայացուցիչ—գեներալ Ալեքսեյևին՝ հետադիմական ռազմիկին և Տերեշչենկոյին՝ արտաքին գործոց մինիստրին: Սորհուրդները ներկայացուցիչ ընտրեցին Սկոբելևին և մշակեցին վոըոշ հրահանգ: Ժամանակավոր կառավարությունը դեմ արտահայտվեց Սկոբելևին պատգամավոր ուղարկելուն և հրահանգին: Դաշնակիցների դեսպանները բողոքեցին Սորհուրդի վորոշման դեմ, և վերջապես, Բոնար-Լոուն բրիտանական համայնքների Պալատում արված հարցապնդումին սառն կերպով պատասխանեց.—«Վորքան տեղյակ եմ, Փարիզյան կոնֆերենցիան պետք և վորոշի վոչ թե պատերազմի նպատակները, այլ միայն նրա միջոցներն ու այն վարելու ձևերը»:

Այս հանգամանքը բարձրացրեց ռուսաց պահպանողական մամուլի տրամադրությունը, իսկ բայլևիկներն այստեղից համապատասխան յեզրակացություն արին. «Նայեցեք, թե ուր և տանում ձեզ մենշևիկների և սոցիալիստ-հեղափոխականների կոմպրոմիսի տակտիկան»...

Հազար վերստանոց ֆրոնտում միլիոնավոր մարդիկ ռուսական դոքհերում՝ շարժվեցին, ինչպես ծովը մակընթացության հորձանքի ժամանակ, հարյուրավոր պատգամավորներ ուղարկելով՝ մայրաքաղաք հաշտության պահանջներով:

(Ջոն Ռիդ: «Տասն օր վոր սասանեցրին աշխարհը», էջ 37—41):

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒՅԵՐՈՐԴ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Փետրվարյան հեղափոխության յերկրորդ ետապում, հուլիսյան դեպքերից հետո, ավելի պարզորոշվում են և ավելի հատականում ռուս հասարակության զանազան խավերի վերաբերմունքը և դիրքը առաջ-ղրված հարցերի՝ պատերազմի, հաշտության, բանվորական, ագրարային և այլն միշտ կարևոր և հերթական հարցերի նկատմամբ:

Հուլիսյան դեպքերը թեպետ Պետրոգրադի բանվորության համար պարտությամբ վերջացան և ռեակցիան ուժեղացավ կերենսկու դեկավարությամբ, սակայն դրությունն ավելի պարզվեց. ժամանակավոր կառավարությունը վոչ միայն չի ցանկանում հեղափոխության պատճառով հրապարակ յեկած հերթական հարցերը վճռել, այլ և առանց քաշվելու հակահարձակվան և անցնում հեղափոխության նվաճումների դեմ, պրոլետարիատի դեմ, վորի համար ուժեղացնում է և կենտրոնացնում կատարում հակահեղափոխական բանակում, հատկապես զինվորական շրջաններում՝ հանձինս ցարական գեներալների, յունկերների և այլն:

Հուլիսյան դեպքերից հետո բայլևիկների ապարատը վորոշ ատիճանի թուլանում է՝ ձերբակալվում են միշտ պատասխանատու ընկերներ: Ընդհատակյա աշխատանքի յե անցնում ընկ. Լենինը, փակվում են բայլևիկյան տպարանները և թերթերը: Թվում եր, վոր հակահեղափոխությունը հաղթանակելու յեր: Սակայն այստեղ պարզվեց հատկապես ժամանակավոր կառավարության և մանր բուրժուական կուսակցությունների համար, վոր մասսաների ընդունակությունները և ուժի չափը թերագնահատել են:

Հակառակ ռեակցիայի՝ Պետրոգրատի բանվորության մեջ շարունակվում եր, և այն ել ավելի մեծ թափով, իշխանությունը գրավելու աշխատանքը: Հուլիսյան պարտությունն ավելի ուժեղացրեց և սրեց դասակարգային պայքարը և յերբեք չթուլացրեց բայլշևիկների մասսայական ագիտացիան և ուժերի խմբավորումները հեղափոխության պաշտպանության համար: Հատկապես Պետրոգրատի բանվորությունն ավելի մեծ թափով շարունակեց իր զինման և հեղափոխական ապահովման աշխատանքները:

Հակառակ հակահեղափոխական բանակի պատրաստման, խմբավորման և հեղափոխական զինվորական մասերի կազմալուծման յենթարկելու աշխատանքների՝ անհրաժեշտ եր իր սեփական միջոցները և ճակատը հակադրել։ Պետրոգրադի բանվորությունը մեծ յեռանդով սկսում է իր զինվորական մասերը կազմակերպել, զինվել, ռազմա-հեղափոխական կոմիտեներ հաստատել և սրանց յենթարկել տալ մայրաքաղաքի հեղափոխական զինական ուժը։ Այս շրջանում բառացի կերպով պայքար և տարվում հակահեղափոխական զինվորական շտաբի և ռազմահեղափոխական կոմիտեների միջև մայրաքաղաքի զինական ուժը այս կամ այն կողմը թեքելու համար, նրանց իրենց յենթարկելու և զինված բռունցք կազմելու համար։

Ահա այսպիսի պայքար եր տարվում հեղափոխության և հակահեղափոխության միջև, Պետրոգրադի բանվորության և ժամանակավոր կառավարության միջև։ Դրա հետ միասին շարժվում էին մյուս նահանգները և շրջանները։ Արդյունաբերական կենտրոնները՝ Մասկվան, Դոնի ավազանը, Բագուն, Նիժնի-Նովգորոդը, Ուրալը և այլն, նույնպիսի թափով աշխատանքներ էին տանում և նույն խմբավորումը կատարում, չնայած Պետրոգրադի հետ ունեցած կապի թուլության։

Շարժվում եր և գյուղացիությունը։ Ագրարային շարժումը քանի գնում ուժեղանում է։ Գյուղացիները հարձակումներ են գործում կալվածատիրական կալվածքների վրա, ավերում և վոչնչացնում հարստությունը՝ ինվենտարը, կալվածատիրոջ դիվանը, կահկարասիները և բնակարանները։ Ոգոստոսից սկսած հատկապես այդ շարժումներն այնքան են ուժեղանում, վոր համարյա բոլոր գավառներն են ընդգրկում՝ Քիշինեվ, Սարատով, Տագանրոգ, Տամբով, Վարոնեժ, Պենզա և այլն։ Այդ շարժումներն իրենց գագաթնակետին են հասնում սեպտեմբերի վերջերին և հոկտեմբեր ամսին։

Բայց ինչ դերք էին բռնում այդ շարժման հանդեպ ժամանակավոր կառավարությունը և մանր-բուրժուական կուսակցությունները՝ մենշևիկները, էսերները և այլն։ Ժամանակավոր կառավարությունը պատժիչ զորքեր եր ուղարկում ագրարային շարժումն իր բնում խեղտելու համար։ Բայց մասսայական շարժման դեմը չկարողացավ առնել և առանձին արդյունք չտվեց այդ քայլը։ Դեպքերի ազդեցության տակ և էսերների կուսակցության աջակցությամբ հողային ինսպեկտորության կից մի հանձնաժողով է ընտրվում և որինագիծ մշակվում, ըստ վորի հողային կոմիտեներ են կազմակերպվում վեճերը և հարցերը քննելու համար։ Բայց այդ աշխատանքը վոչ միայն ուշացած եր, այլ և զուրկ եր ոյալ բովանդակությունից, վորպեսզի գյուղացիական շարժումը կանգնեցներ։ Ռուս գյուղացին շարժվել եր և այնպես եր կուվում կալվածատիրության դեմ, վոր մանր-բուրժուական ծրագրերը

չեյին կարող շոշափելի արդյունք տալ։ Ռուս գյուղացին հող եր պահանջում և առանց սպասելու կառավարության թույլտվության՝ ինքն եր ձեռք բերում այդ հողը և ինքն եր իր ձեռքով ագրարային հարցը վճռում։

Արդեն բայշևիկների համառուսական ապրիլյան կոնֆերանսն ընդգծել եր պրոլետարիատի պայքարի ուղին, ինչպես և հողային հարցը։ Այդ կոնֆերանսը վորոշել եր զինված արստամբությամբ իշխանությունը գրավել։ Ինչպես եր պահանջում ընկ. Լենինը իշխանության գրավման անհրաժեշտությունը։ «Վորովհետև այն (ժամանակավոր կառավարությունը) ոլիգարխիական է, բուրժուական և վոչ համակավոր կառավարությունն է, մանր-բուրժուական, վոչ լիակատար ժողովրդական, նա չի կարող տալ վոչ խաղաղություն, վոչ լիակատար ազատություն» («Ցերկիշևսկանության մասին»)։ «Ընդհանրապես ժամանակի յուրահատուկ կողմն է՝ անցումն հեղափոխության առաջին շրջանից՝ հեղափոխության յերկրորդ շրջանին, վորն իշխանությունը պետք է հանձնի պրոլետարիատի և գյուղացիության չքավոր խավերի» (Ապրիլյան կոնֆերանսի բանաձևից)։ Ահա այս լոզունգի տակ և տարվում ամբողջ նախապատրաստական աշխատանքը։

Հերթական հարցերից մեկն էլ այն է, վոր բանվորական պատգամավորների խորհրդում հեղափոխական թևը՝ բայշևիկները մեծամասնությունը շահեն, վորովհետև խորհուրդները դեռ մանր բուրժուական կուսակցությունների ազդեցության տակ էին այն ժամանակ և նրանք տատանվող դերք էին բռնում։ Մանր-բուրժուական կուսակցությունները՝ սոց-դեմոկրատ մենշևիկները, էսերները և այլն, տատանվում են, խանգարում են պրոլետարիատի հեղափոխական աշխատանքները և աշակցում են, ոգնում ժամանակավոր կառավարությանը։ Նման պայմաններում դեռ անհրաժեշտ է մեծամասնություն շահել և աղատագրվել մանր-բուրժուական կուսակցությունների ազդեցությունից։

Այդ մեծամասնությունը բայշևիկները հետզհետե նվաճեցին, քանի հեղափոխությունը խորանում եր և ժամանակավոր կառավարության հեղափոխությունը խորտակել։ Արդեն սեպտեմբերին պատրաստվում եր հեղափոխությունը խորտակել։ Արդեն սեպտեմբերի ամսին ընկ. Լենինը իր նամակով Ռ. Ս. Դ. (բ) կենտկոմին տեսքեր ամսին ընկ. Լենինը իր նամակով Ռ. Ս. Դ. (բ) կենտկոմին և Մասկվայի կոմիտեին առաջարկում է իշխանությունը վերցնել, չսպասելով բայշևիկների մեծամասնություն ձեռք բերելու հանգամանքին։

Հոկտեմբերի յերկրորդ կեսին գրություն այնքան է լրջանում, վոր ընկ. Լենինը «ապառնացող կատաստրոֆ» է անվանում այդ շրջանը, վորովհետև գործազրկություն է, ապրանք, մթերքներ չկան, բանվորական ձեռքերի պակասություն է զգացվում, սով է տիրում, մոտենում ենք անտանելիության, բայց մյուս կողմից պատերազմը շա-

բունակվում և և քայքայում ժողովրդական տնտեսությունը, իսկ ժամանակավոր կառավարությունն իր կողմից միջոցների չի դիմում և անընդունակ և կատաստրոֆի առաջն առնելու։

Ժամանակավոր կառավարության վարկն ընկնում է մասսաների աչքում, նա անընդունակ է համարվում, մնում է, որ Բ. Գ. Խորհուրդը իր ձեռքը վերցնի իշխանության ղեկը։ Այսպիսի պայմաններում հենց հոկտեմբերի յերկրորդ կեսից սկսած սկսվում է իշխանության գրավման գործնական քայլերը զինված բանվորների և հեղափոխական զինվորական մասերի միջոցով՝ ղեկավար մարմին ընդունելով ռազմա-հեղափոխական կոմիտեները։

Բայլշևիկների հաջողության էական կողմն այն եր, որ նրանք ամենից լավ կարողացան ըմբռնել փետրվարյան հեղափոխության դասակարգային բնույթը, նրա բուրժուական-դեմոկրատական բնույթը և դրա հետ միասին նրանք ամենից լավ նյին կապված լայն մասսաների հետ, որի պատճառով և նրանց պահանջները, ձգտումները և տրամադրությունները բայլշևիկներին քաջ ծանոթ եյին և միակ ուժը՝ որ կարող է իրականացնել այդ բոլորը։ Մենշևիկներն իրենց քաղաքականությամբ ստրատեգիական սխալ գիծ եյին բռնել և չեյին էլ կարող նժան դիրք չգրավել, որովհետև հեղափոխության բնույթը և նրա շարժիչ ուժերը չեյին հասկանում։ Այդ պատճառով էլ, մինչդեռ փետրվարյան հեղափոխության սկզբին գերակշիռ դեր եյին խաղում, հետագայում նրանք իրենց դիրքերը հետզհետե զիջեցին բայլշևիկներին, որովհետև նրանք մասսաների տրամադրությունները չըմբռնեցին, իսկ այդ մասսաներն էլ իրենք՝ հանձինս մենշևիկների չտեսան գործող, ոյալ և հանուն իրենց պահանջների բավարարման համար պայքարող ուժ թե ժամանակավոր կառավարության դեմ և թե ընդհանրապես հակահեղափոխական ճակատի դեմ։ Մենշևիկները բոլոր հերթական հարցերը, ինչպես և մասսաների համար կենսական կարևորություն ունեցող հարցերը, անվերջ ձգձգելով և Հիմնադիր ժողովի հետ կապելով, կարվեցին իրենց պաշտպանող տարրերից

Բուրժուազիայի դիրքը վորոշ եր, և ժամանակավոր կառավարությունն էլ ամեն կերպ ձգտում եր այդ դիրքն ամրացնել և հաստատ գիծ տանել ինհաճո դաշնակիցների՝ պատերազմը շարունակել, ռեֆորմը հետաձգել, հեղափոխությունը խեղտել և մասսաները յենթարկել իրենց։ Մենշևիկներն այս գծի և բայլշևիկների գծի միջին, տատանվող և անհաստատ տեղն եյին գրավում։ Հենց այդ եր կարեվորը, վորի համար և ժամանակավոր կառավարության անկմամբ՝ ընկան և մենշևիկները և անցան հակահեղափոխականների կողմը, իրրեվ նրանց ընդհանուր ճակատի մի մասը։

Հոկտեմբերյան հեղափոխությունը վճռից բոլոր հիմնական և

մասսաներին կենսականորեն անհրաժեշտ հարցերը՝ պատերազմի, հաշտության, բանվորական, ագրարային և այլն։

Այսպիսով բայլշևիկներն այն միակ ոյալ ուժն եյին, վոր իրանության մեջ արդարացրեց բանվոր դասակարգի պատմականորեն նրա վրա դրված հույսերը։ Ռուսական պրոլետարիատի դասակարգային ստրատեգիական գիծը բայլշևիկները լավ ըմբռնեցին և ոյալ ընդգծում տվին, համապատասխան ձևով էլ մշակեցին իրենց տաքտիկան։

Այդ ճիշտ ըմբռնման հետևանքով եր, վոր հոկտեմբերյան հեղափոխությամբ Ռուսաստանում հնարավոր յեղավ պրոլետարիատի դիկտատուրան հաստատել։ Փետրվարյան հեղափոխությունը բուրժուական եր. թեպետ նա իր զարգացմամբ չհասավ բուրժուական-դեմոկրատական կարգերի վերջնական ձեվավորման, վորովհետև դեպքերի ընթացքը, անցումն փետրվարյան հեղափոխությունից Հոկտեմբերյանին, այնպիսի պայմաններում տեղի ունեցավ և այնպիսի կապակցությամբ, վոր նա չեր կարող նման վերջավորության հասնել։ Հոկտեմբերյան հեղափոխությունը սոցիալիստական եր, վորովհետև նա իր բնույթով և իր զարգացմամբ այդ եր ապացուցում։

Չի կարելի փետրվարյան հեղափոխությունը պատկերացնել իբրև Հոկտեմբերյան հեղափոխությունից կտրված մի յերեվույթ։ Ճիշտ է նա ավելի թույլ եր, ավելի սոլերային և հակահեղափոխության ուժ բուրժուազիայի աչքում ավելի պայծառ, ուժեղ, սակայն նա Հոկտեմբերյան հեղափոխության վորոշ և անհրաժեշտ ետապն եր, իր դիալեկտիկ զարգացումով և իր պատմականորեն անհրաժեշտ բնույթով և անցումով դեպի Հոկտեմբերյան հեղափոխությունը։—

ԿԱՋՄՈՂ.

1. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

Ա. ԱԳՐԱՐԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ.

Պարենավորման հոդի վրա ծագած խռովությունների փաստերի հետ մեկտեղ՝ գյուղում սկսվում է մի շարժում՝ ուղղված ագրարային հարցի ինքնագլուխ և անմիջականորեն լուծելու ոգին։

Այդպիսի ճանապարհի վրա չեն կանգնում գյուղացիական այն մասսաները, որոնք սկսում էին կորցնել իրենց հավատը, իրենց բուռն իղձերի իրականացման վերաբերյալ. անկազմակերպ ու խաղաղ մասսաները՝ զբաղված դաշտային աշխատանքների վերջանալով, գավառ-գավառի, նահանգ-նահանգի հետևից ընդգրկվում են ագրարային անկարգություններով, որոնք ընդունում են կալվածատիրական կալվածների ավերման, ինվենտարի վոչնչացման և հողերի բաժանման ձևեր։ Գյուղում սեպտեմբերն ու հոկտեմբերն անցնում են այդ «անարխիայի» նշանի տակ։ Պատժիչ զորախմբեր են ուղարկվում, որոնք շոշափելի արդյունքներ չեն տալիս։ Այդ հանգամանքի շնորհիվ սկսված կենդանությունը հողային մինիստրության մեջ միայն հոկտեմբերի կեսերին ստանում է վորոշ ձևավորում,—Մասլովի որինագիծը հողային կոմիտեների մասին,—սակայն գյուղի վիճակին եական ազդեցություն գործել դեռևս չի կարողանում։ Կառավարական հեռագրական գործակալության հաղորդած տեղեկությունները սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների վերաբերյալ, տալիս են այն դրության պատկերը, որի մեջ գտնվում եր գյուղը հոկտեմբերյան հեղաշրջման նախորյակին։

Բիշինև, սեպտեմբերի 13-ին։ Տեղերից ստացվող հաղորդագրությունները վկայում են, որ բոլոր գավառներում շարժումն աճում է։ Վտանգ կա, որ ժամանակին և հաջող կերպով աշնանացանը չի կատարվի։

Տամբով, սեպտեմբերի 14-ին։ Կազլովի գավառի անկարգությունների մասին ճիշտ տեղեկություններ դեռևս չեն ստացված։ Վորոշակի հայտնի չե, որ թալանված և մեկ և հրդեհված մասնավոր տերերի 25 կալվածքներ։ Բացի դրանից ջնջված են խուտորներում բնակվող շատ գյուղացիներ։

Տամբով, սեպտեմբերի 14-ին։ Անկարգությունները ճնշելու համար Մոսկվայից յեկավ մի եքսպեդիցիոն զորախումբ։ Ժամանեցին

նույնպես Մոսկվայի Բանվորների և Զինվորների պատգամավորների Խորհրդի ներկայացուցիչները։ Ըստ նրանց տված տեղեկությունների Կազլովի գավառում անկարգությունները շարունակվում են։ Կազլովից նրանց մեկնելու րոպեին անկարգություններ ծագեցին մի նոր կետում, Կազլովից 40 վերստի վրա։ Այրվում և կազլովկա գյուղը։

Տամբով, սեպտեմբերի 16-ին։ Կիրսանովի գավառի Սովինսկի գավառակում ագրարային շարժում սկսվեց։

Տագանրոգ, սեպտեմբերի 19-ին։ Տագանրոգի շրջանի գավառակ, Ներում սկսվեց ագրարային շարժում։ Գավառակները մեկնեցին շրջանային ուպրավայի և Բան. ու Զինվ. Պատգամավորների Խորհրդի ներկայացուցիչները։

Սարատով, սեպտեմբերի 25-ին։ Սերդոբի գավառում գյուղացիներն ավերեցին Բարոնուհի Չերկասովայի և Աղարևիչի կալվածքները։ Առաջարկված է Սերդոբի պահակապետին մի զորախումբ ուղարկել կարգը վերականգնելու համար։

Սարատով, սեպտեմբերի 27-ին։ Սերդոբի գավառի ագրարային անկարգությունները մեծ շրջան ընդգրկեցին։ Թալանում են անասունները, բաժանում հողը, անտառները և տանում են հացը։ Գավառական իշխանությունները ոգնության զորք են պահանջում։

Վախ կա, վոր կթալանեն պետական սպիրտի հսկայական պաշարը։ Գավառական գործադիր կոմիտեն առաջարկում է մասնավոր հողերը հանձնել հողային կոմիտեներին։ Անկարգություններն անցան Ատկարսկի գավառը։

Բիշինև, սեպտեմբերի 27-ին։ Բելեցկու գավառի Մեգուրա գյուղի գյուղացիները ագիտացիայի ազդեցության տակ սկսեցին բաժանել միմյանց մեջ հարևան կալվածքների հողերը և պալարիղենը։

Ոդեսսա, սեպտեմբերի 29-ին։ Հուզումնալից լուրեր են ստացվել Ակկերմանում և Որդեյեվում տիրող տրամադրությունների մասին, ինչպես նաև Բերյոզովում մութ ուժերի կողմից տարածվող ագիտացիայի մասին։ Սարակովսկի գավառում շարունակվում են ագրարային առանձին թյուրիմացություններ։

Ժիտոմիր, սեպտեմբերի 29-ին։ Նահանգի կոմիսարը տեղեկություններ է ստացել նահանգում սկսված խռովությունների մասին։ Վոչնչացնում են անտառներն ու ցանքսերը։ Հանգստացնելու համար զորքեր են ուղարկվում։

Սարատով, սեպտեմբերի 29-ին։ Սերդոբի գավառում խռովությունները աճում են։ Ավերված է Պավլովսկի պասադը։ Շատ վայրերում նկատվում են հրդեհներ։ Կոմիսարը պահանջում է զինվորական ուժեր ուղարկել։

Կորնեշտ, սեպտեմբերի 29 ին։ Որդեյեվի գավառում, բանվորների

բացակայության և ինքնագլուխ կերպով հողեր խլելու պատճառով աշնանացանը կատարվում է սպառնական դանդաղությամբ։ Կապալավարձի և հողերը խլելու դեմ միջոցներ մշակելու համար հրավիրված է գավառական պարենավորման կոմիտեյի և գինվորական ու հողային կոմիտեների խորհրդակցություն։

Կիյեվ, հոկտեմբերի 3-ին։ Ստացվածեն տեղեկություններ, որ Կրեմենեցկի գավառում ավերում են կալվածքները և անկարգություններ են տեղի ունենում։

Վորոնեժ, հոկտեմբերի 7-ին։ Զադոնսկի գավառի Ժիվոտինսկի գյուղի շրջանում գյուղացիները մասամբ ավերել են Չերկուվի և ուրիշ կալվածատերերի կալվածքները։ Այրված է ավելի քան 60,000 փութ ցորեն և ուրիշ հացահատիկներ։ Վոչնչացված է հին արժեքավոր կահկարասիք։

Տամբով, հոկտեմբերի 11-ին։ Կազլովի գավառի պագրոմից ստացված ջնասները հաշվում են միլիոններով։ Այսպես որինակ. միայն նահանգական զեմստվոն ստիպված է վճարելու զեմստվոյում ապահովագրված և հրդեհված կալվածքների համար կես միլլիոն ռուբլի։

Ժիտոմիր, հոկտեմբերի 11-ին։ Շրջագայությունից վերադարձած նահանգական կոմիսարի ոգնականը ներկայացրեց զեկուցում Վոլինի դրության մասին։ Ըստ զեկուցողի Վոլինը կատարյալ անարխիայի մեջ է գտնվում։

Շատ գավառներում անտառները իսպառ վոչնչացվում են և մասնատիրական հողերը գրավվում։ Հին Կոստանտինյան գավառում բոլշևիկներն իշխանությունն իրենց ձեռքն են առել։

Նիկոլաևսկ, Սամարայի նահանգ, հոկտեմբերի 11-ին։ Գործադիր կոմիտեն՝ վախենալով, որ գավառում մասսայական անկարգությունները կվոչնչացնեն արժեքավոր տնտեսությունները, բոլոր ժամանակավոր սեփականատիրական տնտեսությունները հայտարարեց ընդհանուր ժողովրդական սեփականություն։ Այդ նպատակի համար կազմել և հատուկ բյուրո, բաղկացած հողային, պարենավորման կոմիտեների և զեմստվոյական ուպրավայի, սոցիալիստական կուսակցությունների և արհմիությունների ներկայացուցիչներից, որին և հանձնարարված է բռնագրաված կալվածքների կառավարությունը։

Չերնիգով, հոկտեմբերի 13-ին։ Նահանգում անկարգությունները շարունակվում են։ Սոսնիցկա և Սուրաժկա գավառներում վոչնչացվում են անտառներն ու ցանքսերը։

Պենզա, հոկտեմբերի 13-ին։ Նորովչատի գավառում ավերված են 8 կալվածք։ Անկարգությունները լուծարքի չենթարկելու համար հեծելազորք է ուղարկված։ Կրասնոսլաբոդսկի գավառում թալանված է Լեբեդևայի կալվածքը, իսկ Ինսարսկի գավառում՝ Անդրոնովայի կալվածքը։

Սպասսկ, հոկտեմբերի 14-ին։ Պագրոմային ալիքը ընդգրկում է ամբողջ գավառը։ Ամբողջ գավառում տեղի չի ունենում անտառների մասսայական կոտորած և թալան։ Թալանված է և հրդեհված Շրեդերի կալվածքը։ Թալանված է Կոմս Գրաբբեյի կալվածքը, վոչնչացրված է արժեքավոր գրադարանը։

Նիժնի-Նովգորոդ, հոկտեմբերի 19-ին։ Ըստ վերջին հաղորդագրությունների, խռովություններն ընդգրկել են 6 գավառ, վորտեղ թալանված և այրված են շատ կալվածքներ։

Անկարգություններն ամենամեծ չափերի չեն հասել Լուկայանովսկի գավառում, վորտեղ ըստ կոմիսարի հաղորդագրության, վոչնչացված են այն բոլորը, ինչ արժեքավոր է և կուլտուրական։ Տարածված խըռովությունների առթիվ հրավիրված է գավառական կոմիտեների հանգական համագումար։

Պենզա, հոկտեմբերի 29-ին։ Սարանսկի գավառում կալվածքների ժասսայական ավերումներ սկսվեցին։ Պագրոմային շարժման ալիքները ժասսայական ավերումներ սկսվեցին։ Պագրոմային շարժման ալիքները ծավալվում և անցնում են ուրիշ գավառներ, վորի պատճառով և պահպանության ճգնաժամը բարդանում է։

Այսպիսով կուլտուրական ցածր մակարդակի պայմաններում մասսաների տարերային անբավականությունը պատրաստ է ընդունելու սպառնական և կործանիչ ձևեր։ Տեղական իշխանության ակումբը, վոր սովորաբար անընդունակ հանդիսացավ սեփական ուժերով կանխելու և լուծարքի չենթարկելու ծագած խռովությունները, արտացոլում եր միայն կենտրոնական իշխանության անզորությունը։

(Պապով, Ա. «Հոկտեմբերյան հեղաշրջումը», Ռուսերեն եջ. 80)։

Բ. ԲԱՆԱՋԵՎ. ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ.

Կալվածատիրական հողատիրության գոյությունը Ռուսաստանում նյութական հենարան է ճորտատեր—կալվածատերերի իշխանության և գրավական՝ միապետության վերականգնման։ Այդ հողատիրությունը Ռուսաստանի աղգաբնակության ճնշող մեծամասնության՝ գյուղացիության՝ անխուսափելիորեն դատապարտում է աղքատության, սարկության և մոռացվածության, իսկ ամբողջ յերկիրը՝ հետամնացության կյանքի բոլոր ասպարեզներում։

Ռուսաստանում գյուղացիական հողատիրությունը թե հողաբաժնային (համայնական և տնային) և թե մասնավոր (վարձակալված և գնված) վարից վեր, իր լայնքով ու յերկայնքով, խճճված և հին, կիսաճորտական կապերով և հարաբերություններով, գյուղացիներին կարգերի բաժանելով, վոր ժառանգված են ճորտական իրավունքի ժամանակներից, հողերի կտրվածությամբ և այլն և այլն։

Այդ բոլոր հնացած և ջլասակար ցանկապատերը քանդելու անհրաժեշտությունը, հողերը «ցանկապատերից ազատելու», հողատիրության ու հողագործության բոլոր հարաբերությունները համառուսական և համաշխարհային տնտեսության պայմանների համաձայն ինորոշ վերակառուցելու անհրաժեշտությունը նյութական հիմքն է գյուղացիության՝ պետության միջի բոլոր հողերն ազգայնացնելու ձգտումների։

Ինչ էլ վոր լինեն այն մանր բուրժուական ուտոպիանները, վորով բոլոր նարոդնիկական կուսակցություններն ու խմբակները պարուրում են գյուղացիական մասսաների պայքարն ընդդեմ ճորտատիրական վլալվածատիրական հողատիրության և ընդդեմ առհասարակ Ռուսաստանում գոյություն ունեցող ամբողջ հողատիրության հողագործման բոլոր ճորտատիրական կապանքների,—այդ պայքարն ինքնին լիովին մի բուրժուական—դեմոկրատական, անպայմանորեն՝ պրոգրեսիվ և տնտեսականորեն՝ անհրաժեշտ ձգտումն է վճռականորեն քանդելու այդ բոլոր կապանքները։

Հողի ազգայնացումը, լինելով բուրժուական միջոց, կապիտալիստական հասարակության մեջ դասակարգային պայքարի առավել հնարավոր և ժառանգելի ազատությունը և հողագործման վոչ բուրժուական բոլոր կցորդներից զերծ լինելն է նշանակում։ Բացի այդ, հողի ազգայնացումը, իբրև հողի մասնավոր սեփականության վերացումն, գործնականում կնշանակե՝ այնպիսի հզոր հարված ընդհանրապես արտադրության բոլոր միջոցների մասնավոր սեփականությանը, վոր պրոլետարիատի կուսակցությունը պետք է ամեն կերպ աջակցի նման բարենորոգմանը։

Մյուս կողմից, Ռուսաստանի ունևոր գյուղացիությունը վաղուց արդեն ստեղծել և գյուղացիական բուրժուազիայի տարրեր, և ստոլիպինյան հողային բարեփոխությունն, անկասկած, ուժեղացրել, բազմացրել և ամրացրել է այդ տարրերը։ Գյուղի մյուս բևեռում նույնչափ ուժեղացել, բազմացել են գյուղատնտեսական վարձու բանվորները, պրոլետարները և նրանց մոտ կիսապրոլետարական գյուղացիական մասսաները։

Վորքան ավելի վճռականորեն ու հեղափոխականորեն տեղի կունենան կալվածատիրական հողատիրության քայքայումն ու վերացումը, վորքան ավելի վճռականորեն ու հեղափոխականորեն կկատարվի բուրժուական-դեմոկրատական ազգային վերանորոգումը Ռուսաստանում ընդհանրապես, այնքան ավելի մեծ ուժով և արագությամբ կզարգանա գյուղատնտեսական պրոլետարիատի դասակարգային պայքարն ընդդեմ ունևոր գյուղացիության (գյուղացիական բուրժուազիայի)։

Նայած այն բանին, թե քաղաքի պրոլետարիատին կհաջողվի,

արդյոք, տանելու իր հետևից գյուղական պրոլետարիատին և գյուղի կիսապրոլետար մասսան նրանմիացնելու, թե այդ մասսան կգնա գյուղական բուրժուազիայի հետևից, վոր համամիտ է Գուչկովի, Միլյուկովի, կալիտալիստների և կալվածատերերի հետ և, ընդհանրապես, հակահեղափոխության հետ դաշնակցելու,—ահա այս բանից է կախված ռուսական հեղափոխության ճակատագիրն ու յելքը՝ քանի չեն Ցեվրոպայում սկսվող պրոլետարական հեղափոխությունն իր անմիջական, հզոր աղդեցությունը չի ցույց տա մեր յերկրի վրա։

Յելնելով դասակարգային այդպիսի դրությունից և ուժերի փոխհարաբերություններից՝ կոնֆերենցիան վորոշում է.—

1. Պրոլետարիատի կուսակցությունն իր բոլոր ուժերով կռվում է Ռուսաստանի բոլոր կալվածատիրական հողերի (նույնպես կալվածային, յեկեղեցական, կաբինետային և այլն) անմիջական և ամբողջական բռնագրավման համար։

2. Կուսակցությունը վճռականորեն հանդես է գալիս հոգուտ այն բանի, վոր բոլոր հողերն անմիջապես անցնեն այն գյուղացիության ձեռքը, վորը կազմակերպված է Գյուղացիական Պատգամավորների խորհրդի մեջ կամ մի այլ՝ իսկապես լիովին դեմոկրատիկ ձևով ընտրված, կալվածատերերից ու չինովնիկներից լիովին անկախ, տեղական ինքնավարության որգանների մեջ։

3. Պրոլետարիատի կուսակցությունը պահանջում է պետության բոլոր հողերի ազգայնացումը, բոլոր հողերի սեփականության իրավունքը պետության ձեռքն հանձնելը՝ ազգայնացումը, հողերի բաշխման իրավունքը հանձնում է տեղական դեմոկրատիկ հիմնարկությունների։

4. Կուսակցությունը պետք է վճռականորեն կռվի թե ժամանակավոր կառավարության դեմ, վորը և Շինգարյովի բերանով, և իր կոլեկտիվ յելույթներով գյուղացիների վրդն է տալիս «կամավոր հաշտության» կալվածատերերի հետ», այսինքն՝ իսկապես ռեֆորմների կալվածատիրական բնույթը, և պատիժներով է սպառնում գյուղացիներին «ինքնիրավության» համար, այսինքն՝ սպառնում է աղգաբնակության փոքրամասնության (կալվածատերերի և կապիտալիստների) կողմից բռնություն գործ դնել մեծամասնության դեմ և թե նարոդնիկների մեծամասնության և ս. դ. մենշևիկների մանր-բուրժուական տատանումների դեմ, վորոնք գյուղացիներին խորհուրդ են տալիս չվերցնել հողը մինչև Հիմնադիր Ժողով։

5 Կուսակցությունը գյուղացիներին խորհուրդ է տալիս հողը վերցնել կազմակերպված ձևով՝ թույլ չտալով գույքի և վոչ մի փչացում և հոգ տանել արտադրության ավելացման մասին։

6 Ընդհանրապես բոլոր հողային բարդ նորոգումները կարող են

հսկողություն ունենալ և ամուր լինել միայն ամբողջ պետության կատարյալ դեմոկրատացման դեպքում, այսինքն, մի կողմից՝ վոստիկանության մշտական բանակի և փաստորեն արտոնյալ չինովնիկության վոչնչացման, և մյուս կողմից՝ ամենալայն տեղական ինքնավարության դեպքում, վորը լիովին ազատ և իվերուստ գործադրվող հսկողությունից և խնամակալությունից։

7. Անհրաժեշտ և անմիջապես և ամեն տեղ ձեռնարկել և ինքնուրույն կերպով կազմակերպել գյուղատնտեսական պրոլետարիատին, թե գյուղատնտեսական բանվորների Պատգամավորների Խորհուրդների ձևով (նույնպես և կիսապրոլետարական գյուղացիության Պատգամավորների հատուկ Խորհուրդների) և թե գյուղացիական պատգամավորների ընդհանուր խորհուրդների մեջ պրոլետարական խմբակներ կամ ֆրակցիաներ կազմակերպելու ձևով՝ տեղական և հանրաքաղաքային վարչության բոլոր մարմիններում և այլն և այլն։

8. Կուսակցությունը պետք է աջակցի գյուղացիական այն կոմիտեների նախաձեռնությանը, վորոնք Ռուսաստանի մի շարք վայրերում կալվածատիրական կենդանի և մեռյալ ինվենտարը հանձնում են այդ կոմիտեներում կազմակերպված գյուղացիության ձեռքը՝ բոլոր հողերի մշակման համար, հասարակական կարգավորված ոգտագործման նպատակով։

9. Պրոլետարիատի կուսակցությունը պետք է խորհուրդ տա գյուղի պրոլետարներին և կիսապրոլետարներին, վորպեսզի նրանք յուրաքանչյուր կալվածատիրական կալվածքից աշխատեն բավականին խոշոր օրինակելի տնտեսություն կազմել, վոր տարվեր հասարակական հաշվով և գյուղատնտեսական Բանվորների Պատգամավորների Խորհուրդների կողմից, գյուղատնտեսների դեկավարությամբ և լավագույն տեխնիքական միջոցները գործադրելով։

(Բանաձև Ռ. Բ. Ս. Դ. կուսակցության (Բ) Համառուսական ապրիլյան կոնֆերենցիայի։ Լենին.—Յերկերի ժողովածու, հատ. 14, մաս 1-ին. յեր. 124, յերկրորդ տպրաժ)։

Գ. ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ.

Այդ շրջանն ընդգրկում է փետրվարյան (1917 թ.) հեղափոխությունից մինչև հեկտեմբերյան (1917 թ.) հեղափոխությունն ընկած շրջանը։ Այդ շրջանը համեմատաբար յերկար չէ,—ընդամենը՝ ութը ամիս, բայց այդ ութն ամիսները, մասսաների լուսավորման և դաստիարակման տեսակետից, համարձակորեն կարելի յե մի ժակարդակի վրա դնել սովորական սահմանադրական զարգացման տասնամյակի

հետ միասին, վորովհետև նրանք նշանակում են հեղափոխության ուժը ամիսներ։ Այդ շրջանի բնորոշ գիծը հանդիսանում է գյուղացիության հետագա հեղափոխականացումը, նրա թեքումը դեպի պրոլետարիատը՝ նրա շուրջը ուղղակի համախմբվելու համար, վորպես միակ և մինչև վերջը հեղափոխական ուժի, վորն ընդունակ է յերկիրը հասցնել խաղաղության։ Այդ շրջանի պատմությունն եսերների (մասնը-բուրժուական դեմոկրատիայի) և բայլշեվիկների (պրոլետարական դեմոկրատիայի) պայքարն է հանուն գյուղացիության, հանուն նրա մեծամասնության գրավելու։ Այդ պայքարի բախտը վճռեց կոալիցիոն շրջանը, կերենսկիականության շրջանը, մենշևիկների և եսերների հրաժարումը կալվածատիրական հողերը կոնֆիսկացիայի յենթարկելուց, մենշևիկների և եսերների պայքարը՝ պատերազմը շարունակելու համար, հուլիսյան հարձակումը ճակատում, մահվան պատիժը զինվորների համար, Կորնիլովի ապստամբությունը։

Յերեք առաջ, նախընթաց շրջանում, հեղափոխության հիմնական հարցը հանդիսանում եր ցարի և կալվածատերերի իշխանության տապալումը, ապա այժմ, հեռուներվարյան հեղափոխության շրջանում, յերբ ցարն այլևս չկար, իսկ անվախճան պատերազմը յերկրի տնտեսությունը կորստյան եր մատնում, վերջնականապես քայքայելով գյուղացիությանը,—հեղափոխության հիմնական հարցը դարձավ պատերազմը լիկվիդացիայի յենթարկելու հարցը, ծանրության կենտրոնը տեղափոխվեց դեպի պատերազմի հիմնական հարցը։ «Վերջացնել պատերազմը», «Դուրս գալ պատերազմից»,—այդ ուժասպառ յերկրի, և ամենից առաջ՝ գյուղացիության ազաղակն եր։

Բայց պատերազմից դուրս գալու համար պետք եր տապալել ժամանակավոր կառավարությունը, պետք եր տապալել բուրժուազիայի իշխանությունը, պետք եր տապալել մենշևիկների և եսերների իշխանությունը, վորովհետև նրանք եյին ձգձգում պատերազմը մինչև նրա «հաղթական վախճանը» հասցնելու նպատակով։ Պատերազմից դուրս գալու համար գործնական կյանքում բուրժուազիային տապալելուց բացի այլ ուղի չկար։

Դա նոր հեղափոխություն եր, պրոլետարական հեղափոխություն, վորովհետև նա իշխանությունից վանում եր իմպերիալիստական բուրժուազիայի վերջին, ծայրահեղ ձախ ֆրակցիան, եսերների և մենշևիկների կուսակցությունը, վորպեսզի ստեղծի նոր, պրոլետարական իշխանություն, խորհուրդների իշխանություն, վորպեսզի իշխանության գլխին կանգնեցնի հեղափոխական պրոլետարիատի կուսակցությունը, բայշևիկների կուսակցությունը՝ վոր իմպերիալիստական պատերազմի դեմ և հանուն դեմոկրատական խաղաղության պայքարող

հեղափոխական կուսակցությունն եր։ Դյուղացիության մեծամասնությունը պաշտպանեց բանվորներին նրանց վարած պայքարում խաղաղության և խորհրդային իշխանության համար։

Ուրիշ յելք դյուղացիության համար չկար։ Այլ յելք լինել էլ չեր կարող։

Այսպիսով կերենսկիականության շրջանը դյուղացիության աշխատավոր մասսաների համար առարկայական դասի շրջանն եր, վորովհետև նա ակնհայտ կերպով ցույց տվեց, վոր եսերների և մենշևիկների իշխանության ժամանակ յերկիրը պատերազմից ազատվել չի կարող, դյուղացիները հող և ազատություն չեն տեսնի, վոր մենշևիկները և եսերները կադետներից տարբերվում են միայն քաղցր ճառերով և խարդախ խոստումներով, իսկ փաստորեն վարում են նույն իմպերիալիստական կադետական քաղաքականությունը, վոր միակ իշխանությունը, վորը կարող է դուրս բերել յերկիրն այդ դրությունից —դա Խորհրդային իշխանությունն եր։ Պատերազմի հետագա ձգձգումը միայն ապացուցում եր այդ դասի ճշտությունը, ժողովի ուժով արագացնում հեղափոխությունը և մղում դյուղացիությունն ու զինվորների մի լիլոնավոր մասսաները դեպի պրոլետարիատի շուրջն ու ղ ղ ա կ ի հ ա մ ա խ մ բ վ ե լ ո ւ ն։ Եսերների և մենշևիկների չեզոքացումը դարձավ անխախտելի փաստ։ Առանց կոալիցիոն շրջանի տեսանելի դասերի պրոլետարիատի դիկտատուրան անհնարին կլիներ։

Այդպես եյին այն պայմանները, վորոնք հեշտացրին բուրժուական հեղափոխությունը պրոլետարական հեղափոխության վերածվելու պրոցեսը։

Այսպես ստեղծվեց պրոլետարիատի դիկտատուրան Ռուսաստանում։

(Ի. Ստալին։ «Լենինի և լենինիզմի մասին», եջ 106—109)։

---

2. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ՑԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՅԵՐԿԻՇԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մեր հեղափոխության վերին աստիճանի նշանավոր յուրահատուկ կողմն այն է, վոր նա յերկիշխանություն ստեղծեց։ Ի՞նչ է յերկիշխանությունը։ Այն, վոր ժամանակավոր կառավարության, բուրժուազիայի կառավարության կողքին կազմակերպվել է թույլ, սաղմնային, բայց և այնպես, անկասկածորեն, իրապես գոյություն ունեցող և աճող մի ուրիշ կառավարություն,—Բանվորների և Զինվորների խորհուրդները։ Վորքան այդ խորհուրդները գոյություն ունեն, վորքան վոր նրանք

իշխանություն են, այնքան էլ Ռուսաստանում գոյություն ունի փաբիզյան կոմունայի տիպի պետություն։

Դա միայն սաղմային պետություն է։ Նա ինքն ուղղակի համաձայնության գալով բուրժուական ժամանակավոր կառավարության հետ, և մի շարք փաստական զիջումներ անելով, իր դիրքերը հանձնեց և հանձնում է բուրժուազիային։

Այն հարցին, թե պետք է արդյոք տապալել ժամանակավոր կառավարությունը,—պատասխանում են. 1) այն պետք է տապալել, վորովհետև նա ոլիգարխիական է, բուրժուական և վոչ համաժողովրդական. նա չի կարող տալ վոչ խաղաղություն, վոչ հաց, վոչ էլ լիակատար ազատություն։ 2) Այն չի կարելի հիմա տապալել, վորովհետև նա պահպանվում է Բանվորական Պատգամավորների Խորհրդի և նրա առաջ Գլխավոր խորհրդի՝ Պետերի Խորհրդի՝ հետ ուղղակի և անուղղակի, ձեվական և փաստական համաձայնությամբ։ 3) Այն ընդհանրապես չի կարելի տապալել սովորական յեղանակով, վորովհետև նա հենվում է յերկրորդ կառավարության՝ Բանվորական Պատգամավորների Խորհրդի կողմից բուրժուազիային ցույց տված աջակցության վրա, իսկ այդ կառավարությունը միակ հնարավոր հեղափոխական կառավարությունն է, վորն ուղղակի արտահայտում է բանվորների և գյուղացիների մեծամասնության կամքն ու գիտակցությունը։

Այդպիսի կառավարությունից բարձր (և ավելին) տիպի կառավարություն, ինչպիսին են Բանվորների, Բատրակների, Դյուղացիների, Զինվորների Խորհուրդները, մարդկությունը չի մշակել և մենք մինչև այժմ դեռևս չըգիտենք։

Վորպեսզի իշխանության տեր դառնան՝ գիտակից բանվորները պետք է մեծամասնությունն իրենց կողմը քաշեն. քանի դեռ չկա բռնություն մասսաների վրա՝ դեպի իշխանություն ընթանալու այլ ճանապար չկա։

Բուրժուազիան բուրժուազիայի միասնական իշխանության կողմն է։

Գիտակից բանվորները՝ Բ. Բ. Դ։ Պատգ. Խորհրդի միասնական իշխանության կողմն են, վորը նախապատրաստվելու յե պրոլետարական դիտակցության, ավելի ու ավելի պարզվելով, բուրժուազիայի ազդեցությունից ազատվելով, և վոչ թե ավանտյուրաներով։

Մանր-բուրժուազիան,—սոց. դեմ-մենշևիկները, եսերները և այլն, տատանվում են, խանգարելով այդ պարզվելուն, այդ ազատագրմանը։

Վորովհետև ամեն մի հեղափոխության ժամանակ արմատական հարցը պետության մեջ իշխանություն ձեռք բերելու հարցն է։

(Լենին։ «Պրավդա», ապրելի 9, 1917 թ.)։

Բ. ՅԵՐԿԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓԵՏՐՎԱՐԻՑ ՀԵՏՈ ՑԵՎ ՆՐԱ ՀԱՍՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մեր հեղափոխության ամենագլխավոր առանձնահատկությունը, մի առանձնահատկություն, որն առավել անհրաժեշտությամբ խոհուն վերաբերմունք և պահանջում իր նկատմամբ, դա հեղափոխության հաղթանակի առաջին իսկ որից հետո ստեղծված յերկիշխանությունն է։

Այդ յերկիշխանությունն արտահայտվում է յերկու կառավարությունների գոյության մեջ. գլխավորը, իսկականը, իրականը բուրժուազիայի կառավարությունն է, Լվովի և ընկ. «ժամանակավոր կառավարությունը», որն իր ձեռքին և պահում իշխանության բոլոր որգանները, լրացուցիչը, ոժանդակը, «վերահսկողը»—բանվորների և Զինվորների Պատգամավորների Պետրոգրադի Խորհուրդն է, որն իր ձեռքին չունի պետական իշխանության որգանները, բայց անմիջականորեն կրթնում է ժողովրդի անվերապահորեն ակնհայտնի մեծամասնության՝ զինված բանվորների և զինվորների վրա։

Այդ յերկիշխանության դասակարգային աղբյուրը և դասակարգային նշանակությունը կայանում է նրանում, որ 1917 թվականի մարտի ռուսական հեղափոխությունը վոչ միայն սրբեց ամբողջ ցարական միապետությունը, վոչ միայն իշխանությունը բուրժուազիային հանձնեց, այլև ընդհուպ հասավ պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրային։ Հայտնապես նման դիկտատուրա յե (այսինքն իշխանություն, որը կրթնում է չե թե օրենքի, այլ բնակչության զինված մասսաների անմիջական ուժի վրա) և հայտնապես հիշված դասակարգերի դիկտատուրա յեն հանդիսանում Պետրոգրադի և ուրիշ վայրերի բանվորների ու զինվորների պատգամավորների խորհուրդները։

Ռուսական հեղափոխության հետևյալ խիստ կարևոր առանձնահատկությունն այն է հանդիսանում, որ Բանվորների ու Զինվորների Պատգամավորների Պետրոգրադի Խորհուրդը, որը՝ ըստ ամենայնի դատելով՝ վայելում է տեղական Խորհուրդների մեծամասնության վստահությունը, հոժարակամ հանձնում է պետական իշխանությունը բուրժուազիային և նրա ժամանակավոր կառավարությանը, հոժարակամ գիջում է նրան առաջնությունը, նրա հետ համաձայնություն կնքելով նրան պաշտպանելու համար, սահմանափակվում է դիտողի դերով՝ հիմնադիր ժողովի հրավիրման համար (որի հրավիրման ժամկետը ժամանակավոր կառավարությունը մինչև որս նույնիսկ չի հրապարակել)։

Այդ անչափ ինքնորինակ, պատմության մեջ այդ ձևով չտեսնված հանգամանքն ստեղծել է յերկու դիկտատուրայի ի մի հյուսելը,—բուրժուազիայի դիկտատուրայի (վորովհետև Լվովի և ընկ. կառավարությունը դիկտատուրա յե, այսինքն մի իշխանություն, որը կրթնում է չե թե օրենքի և ժողովրդի կանխորեն արտահայտած կամքի, այլ ուժով զավթածի վրա, ըստ որում այդ զավթումն իրագործված է վորոշ դասակարգի, հայտնապես բուրժուազիայի կողմից) և պրոլետարիատի ու գյուղացիության դիկտատուրայի (Բանվորների և Զինվորների Պատգամավորների Խորհուրդ)։

Նվազագույն իսկ տարակուսանք չկա, թե այդ «հյուսվածքն» ի վիճակի չե յերկար դիմանալու։ Պետության մեջ յերկու իշխանություն չի լինում։ Նրանցից մեկը պիտի չքանա, և Ռուսաստանի ամբողջ բուրժուազիան բոլոր ուժով, ամեն մի յեղանակով, ամենուրեք արդեն աշխատանք և թափում վերացնելու և անուժ դարձնելու բանվորների ու զինվորների պատգամավորների խորհուրդները, բուրժուազիայի միահեծան իշխանություն ստեղծելու։

Յերկիշխանությունն արտահայտում է միայն հեղափոխության զարգացման մեջ փոխանցման մոմենտը, յերբ նա առաջ է անցել սովորական բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից, բայց դեռ չի հասել պրոլետարիատի և գյուղացիության «ղուտ» դիկտատուրային։

(Վ. Ի. Լենին. «Աշխ. ժող.» հ. XIV մ. I, եջ. 39—40, ռուսերեն)։ (Տրիշին, եջ 367—369)։

Գ. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՏՎՅԱԼ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ.

1. Մեր վերաբերմունքի մեջ դեպի պատերազմը՝ որ Ռուսաստանի կողմից Լվովի և ընկ. նոր կառավարության ժամանակ ևս ՝ծում է անփոփոխ, իմպերիալիստական պատերազմ, շնորհիվ այդ կառավարության կապիտալիստական բնույթի՝ չպետք է թույլ տրվի մի փոքրիկ դիջում անգամ «հեղափոխական պաշտպանողականության»։

Հեղափոխական պատերազմի համար, որին իրոք կարող պարագաներ հեղափոխական պաշտպանողականությունը, գիտակից պրոլետարիատը կարող է իր համաձայնությունը տալ միայն հետևյալ պայմանով.—ա) որ իշխանությունն անցնի պրոլետարիատի յեվ նրան միացած չքավոր գյուղացիության ձեռքը, բ) որ բոլոր անեքսիաներից, գործով և վոչ խոսքով, հրաժարվեն, գ) որ կապիտալի բոլոր շահերից իրոք լիովին բոլոր կապերը խզվեն։

Ի նկատի ունենալով, որ հեղափոխական պաշտպանողականության ժասսայական ներկայացուցիչների լայն խավերը անկասկածելիորեն բարնխիճ են, որոնք պատերազմն ընդունում են միայն անհրաժեշտությունից ղրդված և վոչ թե նվաճումների համար, ի նկատի ու-

նենալով, որ նրանք խաբված են բուրժուազիայի կողմից, հատուկ անհրաժեշտ է մանրամասնությամբ, համառատակամությամբ, համբերությամբ բացատրել նրանց իրենց սխալը, պարզաբանել կապիտալի և իմպերիալիստական պատերազմի անքակտելի կապը, ապացուցել, որ անկարելի է առանց կապիտալի տապալման պատերազմը ղուտ-դեմոկրատականորեն վոչ բռնի և խաղաղությամբ ավարտել։

Կազմակերպել այդ հայացքի ամենալայն պրոպագանդը գործող բանակում։

Ցեղբայրացում,

2. Ընթացիկ մոմենտի յուրահատուկ կողմն Ռուսաստանում այն անցումն է հեղափոխության առաջին շրջանից, որ պրոլետարիատը անբավարար գիտակցականության և կազմակերպվածության պատճառով իշխանությունը հանձնեց բուրժուազիային—հեղափոխության յերկրորդ շրջանին, որն իշխանությունը պետք է հանձնի պրոլետարիատի և գյուղացիության չքավոր խավերի ձեռքը։ Այդ անցումը բնորոշում է մի կողմից՝ առավելագույն լեգալությամբ (Ռուսաստանն այժմ պատերազմող յերկրներից ամենաազատն է ամբողջ աշխարհում), իսկ մյուս կողմից՝ մասսաների վրա բռնության բացակայությամբ, վերջապես, նրանց վստահ-անգիտակից վերաբերմունքով դեպի խաղաղության և սոցիալիզմի վաճառագույն թշնամի կապիտալիստների կառավարությունը։

3. Վոչ մի աջակցություն ժամանակավոր կառավարության, պարզել նրա բոլոր խոստումների, մանավանդ, աննկսիաններից հրաժարվելու մասին արած խոստումների ստությունը։

Մերկացնել՝ փոխանակ անթույլատրելի, պատրանք տարածող «պահանջի», վորպեսզի այդ կառավարությունը, կապիտալիստների կառավարությունը, դադարի իմպերիալիստական լինելուց։

4. Ընդունել այն փաստը, վոր Խորհուրդների մեծ մասում մեր կուսակցությունը կազմում է փոքրամասնություն և առայժմ թույլ փոքրամասնություն՝ բոլոր մանր-բուրժուական տարրերի բլոկի հանդեպ։ Բացատրել մասսաներին, վոր բանվորական պատգամավորների Խորհուրդները հեղափոխական կառավարության միակ հնարավոր ձևն է և վոր այդ պատճառով, քանի վոր այդ կառավարությունը յենթարկվում է բուրժուազիայի ազդեցությանը, մեր խնդիրը կարող է լինել միայն համբերությամբ, սիստեմատիկ կերպով, համառությամբ, վոր առանձնապես հարմարվում է մասսաների պրակտիկ պահանջներին, բացատրել սխալներն ու գործնակաները։

Քանի դեռ մենք փոքրամասնության մեջ ենք, մենք տանում ենք քննադատական և սխալներ յերևան հանելու աշխատանք, վերամանակ քարոզելով ամբողջ պետական իշխանությունը Բանվորական Պատ-

գամավորների Խորհուրդներին անցնելու անհրաժեշտությունը, վորպեսզի մասսաները փորձով ազատվեն իրենց սխալներից։

5. Վոչ թե պարլամենտական հանրապետություն,—Բ. Պ. Խորհուրդների դարձը դեպի այն՝ կլիներ մի քայլ դեպի յետ,—այլ ամբողջ յերկրում Բանվորների, Բատրակների, և Գյուղացիական Պատգամավորների Խորհուրդների Հանրապետություն, վարից վեր։

Վերացումն վոստիկանության, բանակի պաշտոնության (այսինքն՝ մշտական զորքը փոխարինել ժողովրդի ընդհանուր զինումով)։ Բոլոր պաշտոնյաներին, նրանց ընտրովի լինելու և ուզած ժամանակ ուրիշով փոխարինելու դեպքում՝ վարձատրել լավ՝ բանվորների միջին վարձից վոչ բարձր։

6. Ագրարային ծրագրում ծանրության կենտրոնը Բատրակների Պատգամավորների Խորհուրդը դարձնել։ Բռնագրավել կալվածատիրական բոլոր հողերը։

Ազգայնացնել յերկրի բոլոր հողերը, հողը գտնվում է Բատրակների և Գյուղացիների տեղական Խորհրդի տրամադրության տակ։ Պատգամավորների խորհուրդները կազմակերպել չքավոր գյուղացիներից։ Բատրակների Պատգամավորների հսկողության տակ և հասարակական հաշվով ամեն մի խոշոր կալվածքից ստեղծել որինակելի տնտեսություն։

7. Անմիջապես ձուլել յերկրի բոլոր բանկերը մի ընդհանուր ազգային բանկի մեջ և Բանվորների Պատգամավորների Խորհուրդների կողմից նրան վրա հսկողություն նշանակել։

8. Վոչ թե սոցիալիզմ «ժամնել», իբրև մեր անմիջական խնդիրը, այլ անմիջապես անցնել մթերքների հասարակական արտադրության և բաշխման վրա Բ. Պ. Խ-դի կողմից հսկողություն սահմանելուն։

9. Կուսակցական խնդիրներ.

ա. անմիջապես հրավիրել կուսակցական համագումար։

բ. փոփոխել կուսակցության ծրագիրը, գլխավորապես։

1. իմպերիալիզմի և իմպերիալիստական պատերազմի մասին,

2. վերաբերմունք դեպի պետությունը և «պետություն-կոմունա» մեր պահանջը (այսինքն, այնպիսի պետության, վորի նախատիպը տվել և Փարիզի կոմունան).

3. Ուղղել հետաձգ նվազագույն-ծրագիրը։

գ. Փոխել կուսակցության անունը. փոխանակ «սոցիալ-դեմոկրատների», վորի պաշտոնական առաջնորդներն ամբողջ աշխարհում կրատիայի», վորի պաշտոնական առաջնորդներն ամբողջ աշխարհում դավաճանեցին սոցիալիզմին, անցնելով բուրժուազիայի կողմը («պաշտպանողականներ», ոտատանվող «կաուցկիականներ»)—պետք է կոչել կոմունիստական կուսակցություն։

10 Ինտերնացիոնալի վերանորոգումը։

Նախաձեռնել ստեղծելու հեղափոխական Ինտերնացիոնալ, Ինտերնացիոնալ ընդդեմ սոցիալ-շովինիստների և ընդդեմ կենտրոնի։

(Ընկ. Լենինի 1917 թ. ապրիլի 4-ի թեզիսները՝ Ռուսաստան գալուց հետո նրա առաջին յելույթի ժամանակ)։

Դ. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

... Հիմա, վորո՞նք են հեղափոխական պրոլետարիատի խնդիրները։

Սոցիալիստների բոլոր դիտողությունների գլխավոր պակասությունն ու գլխավոր սխալն այն է, վոր հարցը չափազանց ընդհանուր կերպով է դրվում՝ անցումն դեպի սոցիալիզմը։ Այն ինչ պետք է խոսել կոնկրետ քայլերի և միջոցների մասին։ Ներանցից մի քանիսը հասել կոնկրետ քայլերի, մյուսները դեռ վոչ։ Այժմս մենք ապրում ենք անցողական շրջանում։ Մենք պարզ կերպով առաջադրել ենք ձևեր, վորոնք նման չեն բուրժուական պետությունների ձևերին։ Բանվորների և Զինվորների Պատգամավորների Խորհուրդները պետության այնպիսի ձև են, վորը չկա վոչ մի պետության մեջ և չի յեղել։ Դա այնպիսի մի ձև է, վորն իրենից ներկայացնում է դեպի սոցիալիզմը տանող առաջին քայլերը, և դա սոցիալիստական հասարակության սկզբին անխուսափելի յե։ Այդ փաստը վճռական է՝ ռուսական հեղափոխությունն ստեղծեց խորհուրդները։

Աշխարհիս բուրժուական վոչ մի յերկրում այդպիսի պետական հիմնարկություններ չկան և չեն կարող լինել, վոչ մի սոցիալիստական հեղափոխություն չի կարող գործել և վոչ մի իշխանության հետ, բացի այդ իշխանությունից։ Խորհուրդները պիտի վերցնեն իշխանությունը, վոչ թե նրա համար, վոր ստեղծեն սովորական բուրժուական հանրապետություն կամ անմիջապես սոցիալիզմին անցնեն։ Այդ չի կարող լինել։ Հապա ել ինչի՞ համար։ Նրանց իշխանությունը պիտի վերցնեն նրա համար, վորպեսզի այդ անցման համար կատարեն առաջին կոնկրետ քայլերը, վորը կարելի յե և պետք է անել։ Այդ տասակետից վախը գլխավոր թշնամին է։

Մասսաներին անհրաժեշտ և քարոզել, վոր այդ քայլերը պետք է հենց այժմ անել, հակառակ դեպքում Բ. Զ. Պատգամավորների Խորհրդի իշխանությունը միտք չի ունենա և ժողովրդին վոչինչ չի տա։

Յես կփորձեմ պատասխանել թե ինչ կոնկրետ քայլեր մենք կարող ենք ժողովրդին առաջարկել անելու, առանց հակասելու մարքսիստական համոզմունքներին։

Ինչո՞ւ համար ենք մենք ուզում, վոր իշխանությունն ընկնի Բանվորների և Զինվորների Պատգամավորների Խորհուրդների ձեռքը։—

Առաջին միջոցը, վոր խորհուրդները պիտի իրականացնեն, դա հողի ազգայնացումն է։ Դրա մասին են խոսում բոլոր ժողովուրդները։ Ասում են, վոր այդ միջոցն ամենից ուտոպիականն է և, սակայն, բոլորն ել դեպի այն են գնում, հենց նրա համար, վոր ռուսական հողի սեփականությունն այն աստիճան խառնված է, վոր ամբողջ հողը ցանկապատերից ազատելուց և այն պետական սեփականություն դարձնե-

լուց բացի ուրիշ յելք չկա։ Հողի մասնավոր սեփականությունը պիտի վերացնել։ Դա այն խնդիրն է, վոր կանգնած է մեր առաջ, վորովհետև ժողովրդի մեծամասնությունը նրա կողմն է։ Իսկ դրա համար մեզ հարկավոր են Խորհուրդները։ Այդ միջոցը անկարելի յե անցկացնել հին պետական չինովնիկության միջոցով։

Յերկրորդ միջոց։ Մենք չենք կարող կողմնակից լինել այն բանին, վորպեսզի սոցիալիզմ «մտցնենք», դա ամենամեծ անհեթեթությունը կլիներ։

Մենք սոցիալիզմ պետք է քարոզենք։

Ռուսաստանի աղգարնակության մեծամասնությունը գյուղացիները են, մանր տերեր, վորոնք սոցիալիզմի մասին մտածել անգամ չեն կարող։ Բայց նրանք լինչ կարող են ասել այն բանի դեմ, վոր ամեն մի գյուղում լինի բանկ, վորն իրենց հնարավորություն կտա տնտեսությունը բարելավելու։

Դրա դեմ նրանք վոչինչ ասել չեն կարող։

Այդ գործնական միջոցները մենք պետք է քարոզենք գյուղացիներին և ամրացնենք դրանց անհրաժեշտության գիտակցությունը։

Այլ բան է շաքարի գործարանատերերի սինդիկատը։ Այստեղ մեր առաջարկությունն անմիջականորեն գործնական պիտի լինի. ահա հենց այդ հասունացած սինդիկատները պետք է դարձվեն պետության սեփականություն։ Յեթե Խորհուրդներն ուզում են իշխանությունն առնել, ապա միմիայն այդպիսի նպատակների համար, ել ուրիշ նպատակ չկա, վորի համար կարելի լինի իշխանությունը վերցնել։ Հարցը այսպես է դրված. կամ Խորհուրդների հետագա զարգացումը, կամ նրանք կվեհանեն անփառունակ մահով, ինչպես Փարիզյան կոմունայի ժամանակ յեղավ։ Յեթե բուրժուական հանրապետություն է հարկավոր, ապա այդ կազմակերպներն ել կարող են անել...

(Համառուսական ապրիլյան կոնֆերենցիայում Լենինի զեկուցումը ընթացիկ մոմենտի մասին)։

---

3. ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԸ ՏՎՅԱԼ ՄՈՄԵՆՏՈՒՄ

Ա. ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՎԵՐՑՆԵՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նամակ ուղղված Ռ. Ս.-Դ. Կ. (Բայլշեվիկների) Կենտկոմին յեվ Մոսկվ. Կոմիտեին*)

Զույգ մայրաքաղաքների Բանվորների և Զինվորների Պատգամավորների խորհուրդներում մեծամասնություն ստանալով, բայլշեվիկները կարող են և պարտավոր են պետական իշխանությունն իրենց ձեռքն առնել։

---

* Գրված է 1917 թ. սեպտեմբերին՝ Կերենսկու կառավարության հրավիրած այսպես կոչված «դեմոկրատական խորհրդակցության» օրերին։

Կարող են, վորովհետև զուտ մայրաքաղաքների ժողովրդի հեղափոխական տարրերի գործոն մեծամասնությունը բավական է վորպեսզի իր չտեսից տանի մասսաները, խորտակի հակառակորդների դիմադրությունը, գրավի ու պահի իշխանությունը։ Վորովհետև ամբողջապես դեմոկրատական հաղթություն առաջարկելով, իսկույն և եթ հողը գյուղացիությանը տալով, վերականգնելով կերենսկու արորած ու խորտակած դեմոկրատական հիմնարկներն ու ազատությունը, բայշեվիկները այնպիսի կառավարություն կկազմեն, վորը վոչ-վոքի չի տապալի։

Ժողովրդի մեծ մասը մեր կողմն է։ Այդ ցույց տվեց մայիսի 6 ից մինչև ոգոստոսի 31-ը և սեպտեմբերի 12-ը անցած չորկար ու դժվարին ճամփան. մայրաքաղաքների խորհուրդներում մեր ունեցած մեծամասնությունն արդյունք է ժողովրդի մեր կողմն անցնելուն։ Նույնն են ցույց տալիս և հա-հերների ու մենշևիկների տատանումները և ինտերնացիոնալիստների ուժեղանալը նրանց մեջ։

Դեմոկրատական խորհրդակցությունը հեղափոխական ժողովրդի մեծամասնությունը չի ներկայացնում, այլ միայն համաձայնողական մանր-բուրժուական վերին խավերը։ Զգետք է խաբվել ընտրությունների թվերով,—խնդիրն ընտրությունների մեջ չէ. համեմատեցեք Պիտերի և Մոսկվայի քաղաքային ինքնավարության և խորհուրդների ընտրությունները։ Համեմատեցեք Մոսկվայի ընտրությունները և ոգոստոս 12 ի գործադուլը,—ահա մասսաները իրենց չտեսից տանող հեղափոխական տարրերի մեծամասնության օբյեկտիվ ավյալները։

Դեմոկրատական խորհրդակցությունը խաբում է գյուղացությանը, չտալով նրան վոչ խաղաղություն, վոչ հող։

Բայշևիկյան կուսակցությունը միայն կբավարարի գյուղացությանը։

Ինչու՞ պետք է բայշևիկներն իշխանությունը վերցնեն հատկապես այժմ։

Վորովհետև Պիտերի առաջիկա հանձնումը մեր շանսերը 100%-ով կիջեցնեն։

Իսկ չեթե զորքի գլուխ կանգնած մեզ նկերենսկին և ընկ., Պիտերի հանձնումն արգելելու ուժ չենք ունենա մենք։

Չի կարելի «սպասել» նաև Հիմնադիր ժողովին, վորովհետև Պետրոգրադի հանձնումով կերենսկին և ընկ. միշտ էլ կարող են խափանել այն։ Միայն մեր կուսակցությունն իշխանությունը վերցնելով, կարող է ապահովել Հիմնադիր ժողովի հրավիրումը և, իշխանությունն իր ձեռքն առնելով, նա մյուս կուսակցություններին կարող է ստիպել ձգձգման մեջ և հաստատել նրանց հանցանքը։

Անգլիական և գերմանական իմպերիալիստների սեպարատ հաշտություն կնքելը պիտի խանգարել և այդ հնարավոր է միայն արագ գործելով։

Ժողովուրդը հոգնել է մենշևիկների և հա-երների տատանումներից։ Մայրաքաղաքներում տարած մեր հաղթանակով միայն գյուղացությանը կտանենք մեր չտեսից։

Խնդիրն ապստամբության «որվան», նեղ իմաստով՝ նրա «մոմենտն», չի վերաբերում։ Այդ կվճռի միայն նրանց ընդհանուր քվեն, ովքեր աջընտրություն ունեն բանվորների և զինվորների զանգվածների հետ։

Խնդիրն այն է, վոր մեր կուսակցությունն այժմ դեմոկրատական խորհրդակցության մեջ փաստորեն ունի իր համագումարը, և այդ համագումարը պետք է վորոշի (ուզի-չուզի, բայց պարտավոր է վորոշել) հեղափոխության վիճակը։

Հարցն այն է, վոր կուսակցության համար խնդիրը պարզվի. որակարգում դրվի գինված ապստամբությունը Պիտերում և Մոսկվայում (շրջանով), իշխանության գրավումը, կառավարության տապալումը։ Մորհանք, թե ինչպե՞ս ագիտացիա մղենք այդ մասին՝ առանց մամուլում արտահայտվելու։

Հիշենք և ըմբռնենք Մարքսի խոսքերն ապստամբության մասին.—«Ապստամբությունն արվեստ է»և այլն։

Միամտություն կլինի սպասել բայշևիկների «ձևական» մեծամասնություն կազմելուն, վոչ մի հեղափոխություն դրան չի սպասում։ Կերենսկին և ընկ. ևս դրան չեն սպասում, այլ պատրաստում են Պիտերի հանձնումը։ «Դեմոկրատական խորհրդակցության» հենց այդ վողորմելի տատանումները պիտի սպառեն և սպառում են Պիտերի ու Մոսկվայի բանվորների համբերությունը։ Պատմությունը մեզ չի նեղի, չեթե այժմ մենք իշխանությունը չվերցնենք։

Ապարամ չկա։ Ապարատ կա.—Սորհուրդը և դեմոկրատական կազմակերպությունները։ Մի ջազգային դրությունը հատկապես այժմ, անգլիացիների և գերմանացիների անջատ հաշտության նախորյակին, մեր կողմն է։ Ժողովուրդներին հաշտություն առաջարկել հենց այժմ,—կնշանակի հաղթել։

Մի անգամից վերցնելով իշխանությունը և՛ Պիտերում, և՛ Մոսկվայում (կարևոր չէ թե մի կսկսի, նույնիսկ կարող է Մոսկվան սկսել), մենք անպայման յեվ անտարակույս կհաղթենք։

Ն. ԼԵՆԻՆ

(«Մարքսիստական քրեստոմատիա», եջ 52—53)։

Բ. ՊԵՏՔ Է ՎԵՐԱՑՆԵԼ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ.—

(Ն. Լենինի ճամակը)

Ընկերներ,

Այս տողերը յես գրում եմ 24-ի յերեկոյան. դրությունն անասելիորեն կրիտիկական է։

Պարզից էլ պարզ է, վոր այժմ արդեն իսկապես վոր ապստամբության դանդաղեցումը հավասար է մահվան։

Ամբողջ ուժով համոզում եմ ընկերներին, որ այժմ ամեն ինչ ժողովից և կախված, որ հերթի չեն դրված հարցեր, որոնք ոչ թե խորհրդակցություններով են որոշվում, ոչ թե համագումարներով (թեկուզ նույնիսկ խորհուրդների համագումարով), այլ բացառապես ժողովուրդներով, մասսաներով, մասսաների զինված կռվով։

Կորնիլովցիների բուրժուական գրոհը, Վերխովսկու հեռացումը ցույց են տալիս, որ այլևս սպասել անկարելի չե։ Պետք է՝ ինչ կերպ էլ լինի՝ այսոր չերեկոյան, այս գիշեր, յունկերներին զինաթափ անելով (հաղթելով նրանց, եթե կդիմադրեն), կառավարությունը ձերբակալել և այլն։

Սպասել չի կարելի։ Ամեն ինչ կարելի չե կորցնել։

Իշխանությունն իսկույն խլելու արժեքը՝ ժողովրդի (ոչ թե համագումարի, այլ առաջին հերթին ժողովրդի, բանակի և գյուղացիների) պաշտպանությունն է կորնիլովյան կառավարությունից, որը վանդից Վերխովսկուն և կազմեց չերկրորդ կորնիլովյան դավադրություն։

Ո՞վ պետք է իշխանությունը վերցնի։

Այս րոպեիս դա կարևոր չե. թող վերցնի Ռազմա-Հեղափոխական կոմիտեն, «կամ մի ուրիշ հիմնարկություն», որը կհայտարարի, թե իշխանությունը կհանձնի միայն ժողովրդի շահերի, բանակի շահերի, (իսկույն և եթե խաղաղություն կառաջարկի), գյուղացիների շահերի (հողն իսկույն և եթե պետք է խլվի, վերացվի մասնավոր սեփականությունը), սովածների շահերի իսկական ներկայացուցիչներին։

Պետք է, որ իսկույն և եթե զորակոչի չենթարկվեն բոլոր ռայոնները, բոլոր գնդերը, բոլոր ուժերը և անմիջապես պատգամավորություններ ուղարկվեն Ռազմա-Հեղափոխական կոմիտեն, բոլշևիկների կենտկոմ հրամայականորեն պահանջելով՝ որ մի դեպքում իշխանությունից բենսկու և կոմպանիայի ձեռքում չթողնել մինչև 25-ը, որ մի դեպքում,—գործն այսոր անպայման պետք է լուծվի՝ չերեկոյան կամ գիշերը։

Պատմությունը չի ների այն հեղափոխականներին իրենց դանդաղեցման համար, որոնք այսոր կարող եյին հաղթել (և այսոր հասատապես կհաղթեն), վաղը գնալով վաղը շատ բան, վաղը գնալով կորցնել ամեն բան։ Իշխանությունն առնելով այսոր, մենք այդ անում ենք ոչ թե խորհրդների դեմ, այլ նրանց համար։

Իշխանությունն առնելը ապստամբության գործն է. նրա քաղաքական նպատակը կպարզվի իշխանությունն առնելուց հետո։

Կործանում կամ ձեռականություն կլիներ սպասել հոկտեմբերի 25-ի հատանվող քվեյարկությանը. ժողովուրդն իրավունք ունի և պարտավոր է նման հարցեր լուծել ոչ թե քվեարկությամբ, այլ ուժով.

հեղափոխության ճգնաժամային մոմենտներին ժողովուրդն իրավունք ունի և պարտավոր է ուղղություն տալ իր ներկայացուցիչներին, նույնիսկ իր լավագույն ներկայացուցիչներին, և ոչ թե սպասել նրանց։

Այդ է սպացուցել հեղափոխությունների պատմությունը և անշափ կլիներ հեղափոխականների վոճրագործությունը, յեթե նրանք բաց կթողնեն մոմենտը, խմանալով, որ իրենցից է կախված հեղափոխության փրկությունը, խաղաղության առաջարկությունը, պիտերի փրկությունը, փրկությունը սովից, հողը գյուղացիներին հանձնելը։

Կառավարությունը տատանվում է։ Պետք է նրան ամեն գնով վերջնականապես վոչնչացնել։

Ցելոյեի ուշացումը հավասար է մահվան։

Գ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ.

Ռուսաստանին անխուսափելիորեն կատաստրոֆ է սպառնում։ Ցերկաթուղային փոխադրությունը անընդհատ քայքայված է և քայքայվում է ել ավելի։ Ցերկաթուղին կկանգնի։ Կղզադարի հում նյութերի և ածուխի մատակարարումը գործարաններին։ Կղզադարի հացի մատակարարումը։ Կապիտալիստները դիտմամբ և համառորեն սաբոտաժի յեն յենթարկում (փչացնում են, ղաղարեցնում, քանդում, խոչնդոտ հանդիսանում) արտադրությունը՝ հուսալով, որ անլուր կատաստրոֆը կսանկցնի հանրապետությունը և Սորհուրդների դեմոկրատիզմը և, ընդհանրապես, պրոլետարական և գյուղացիական միությունները՝ հիշատակելով վերադարձը դեպի միապետությունը և բուրժուազիայի ու կապիտալիստների ամենակարող իշխանությունը։

Անխուսափելիորեն սպառնում է չտեսնված չափերի կատաստրոֆ և սով։ Բոլորն ընդունում են, որ կատաստրոֆն անխուսափելի յե, և սով։ Բոլորն ընդունում են, որ նա բոլորովին մոտ է, որ անհրաժեշտ է կատաղի պայքար, անհրաժեշտ է ժողովրդի «հերոսական» ճիգերը՝ կործանումը կանխելու համար և այլն։

Այդ բոլորն ասում են։ Բոլորն այդ ընդունում են։ Բոլորը վորոշել են այդ։ Ցեվ վոչինչ չեն անում։

Հեղափոխության կես տարին անցավ։ Կատաստրոֆն ել ավելի մոտեցավ։ Հասավ մասսայական գործադրկությունը։ Մտածեցեք. յերկրում ապրանք չկա, յերկիրը կորստյան է մատնվում մթերքների պակասությունից, բանվորական ձեռքերի պակասությունից և այդպիսի յերկրում, այդ տեսակ ճգնաժամային մոմենտում աճել է մասսայական գործադրկությունը։

Ել ինչ սպացույց է պետք, որ հեղափոխության կես տարվա ընթացքում, յերբ դեմոկրատական հանրապետությունն է, յերբ միությունների, մարմինների, հիմնարկությունների առատություն կա,

վորոնք այդպիսի հպարտությամբ իրենց «հեղափոխական-դեմոկրատական» են անվանում, փաստորեն կատաստրոֆի դեմ, սովի դեմ վոչինչ չի արված։ Մենք արագությամբ անանկության ենք մատնում, վորովհետև պատերազմը չի սպասում, և ժողովրդական ամբողջ կյանքում նրա առաջացրած քայքայումը քանի գնում ուժեղանում է։

Աժենուր տեղի ունի սիստեմատիք և համառ սաբոտաժ յուրաքանչյուր կանտրոլի, հսկողության և հաշվառքի պետության՝ այդ կարգավորելու ամեն մի փորձի նկատմամբ։ Ցավ անհավատալի միամտություն և պետք՝ չհասկանալու, վերին աստիճանի կեղծավորություն և պետք՝ իրեն չհասկացող ցույց տալու, թե այդ սաբոտաժը վորտեղից և գալիս, ինչ միջոցներով և նա առաջ բերվում։ Վորովհետև բանկիրների և կապիտալիստների այդ սաբոտաժը նրանց՝ ամեն մի կոնտրոլի հաշվառման հսկողության այդ խանգարումը հարմարեցվում է դեմոկրատական հանրապետության պետական ձևերին, հարմարեցվում է «հեղափոխական դեմոկրատական» հիմնարկությունների գոյությանը։

Աժեն տեսակ կանտրոլի, հաշվառման, հսկողության դեմ ուղղված ժամանակակից, նորագույն հանրապետական դեմոկրատական սաբոտաժն այն է, վոր կապիտալիստները խոսքով «ջերմորեն» ընդունում են կանտրոլի «սկզբունքը» և նրա անհրաժեշտությունը (ինչպես և բոլոր մենշևիկները, եսերները, ինքն ըստ ինքյան հասկանալի յե), բայց միայն պնդում են, թե այդ կանտրոլն «աստիճանաբար» պլանաչափ, «պետականորեն կարգավորված» ձևով պիտի մտցնել։

Անկասկած, Ռուսաստանում հեղափոխության թեքման շրջանն է։ Դյուզոգիական մի յերկրում, հեղափոխական—հանրապետական կառավարության ժամանակ, վորն ոգտվում է եսերների և մենշևիկների կուսակցության աջակցությամբ, աճում և դյուզոգիական ապստամբությունը։ Դա անհավատալի յե, բայց փաստ է։

(Ղենին. «Սպառնացող կատաստրոֆ և թե ինչպես պետք է նրա դեմ կռվել»։ Սեպտեմբերի 1917 թ. Ցերկերի ժողվածու, հատոր 14, մաս 2, յերես 177 և հետևյալը, յերկրորդ տիրաժ)։

---

1. ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ.

Ա. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՆԱԽՈՐՅԱԿԸ.—

Կազմակերպչական աշխատանքների հետ մեկտեղ ընթանում եր փոթորկալից ագիտացիան։ Դա գործարաններում, «Մոդերն» և «Զինիզելլի» կրկեսներում, ակումբներում, զորանոցներում կայացող անընդհատ միտինգների ժամանակամիջոցն եր։ Բոլոր միտինգների ու

ֆնսոզների մթնոլորտը հագեցած եր ելեքտրականությամբ։ Ապստամբության մասին ամեն մի հիշեցումը դիմավորվում եր փոթորկալի ծափահարություններով և հիացմունքի աղաղակներով։ Բուրժուական մամուլն ավելի յեր խորացնում ընդհանուր հուզմունքի տրամադրությունը։ Կարմիր գվարդիային հինգ հազար հրացան բաց թողնելու մասին Սեսորոշեցին զինագործարանին իմ ստորագրած որդերը բուրժուական շրջանները առաջացրեց աննկարագրելի պանիկա։ Ամենուրեք խոսում և գրում եյին պատրաստվող ընդհանուր կոտորածի մասին։ Յերկու կողմերի համար ել պարզվում եր, վոր ճգնաժամը պետք և վորոշվի մոտակա որերի ընթացքում։

Այդ ժամանակամիջոցում Սմոլնի շենքն արդեն ամբողջովին պահվում եր Պետրոգրադի Խորհրդի և մեր կուսակցության տրամադրության տակ։ Մենշևիկներն ու սոցիալիստ-հեղափոխականներն իրենց հեղափոխական գործունեությունը տեղափոխեցին Մարինսկի պալատը, ուր նոր ծնունդ առած նախապարլամենտն ապրում եր իր վերջին որերը։ Կերենսկին հանդես յեկավ նախապարլամենտում մի մեծ ճառով, վորի մեջ, բուրժուական թևի փոթորկալի ծափահարության տակ, փորձեց ձեռք եր աղմկալի սպառնալիքներով ծածկել իր անզորությունը։ Շտաբն ընդդիմության վերջին փորձն արեց։ Նա հրավեր ուղարկեց քաղաքային զորքի բոլոր մասերին յուրաքանչյուր մասից յերկուական պատգամավոր ուղարկելու՝ մայրաքաղաքից զորքը հանելու առթիվ խորհրդակցելու համար։ Խորհրդակցությունը նշանակված եր հոկտեմբերի 22-ի ցերեկվա ժամի 1-ին։ Գնդերից մեզ անմիջապես հայտնեցին այդ հրավերի մասին։ Առավոտվա ժամը 11-ին հեռախոսով մենք հրավիրեցինք հակայական խորհրդակցություն։ Պատգամավորների մի մասն համենայն դեպս ընկավ շտաբ, սակայն միայն նրա համար, վորպեսզի հայտնեն, թե առանց Պետրոգրադի Խորհրդի վորոշման նրանք իրենց տեղից չեն շարժվի... Շտաբի փորձը միայն պարզ կերպով յերևան բերեց, վոր մեր վոտների տակ ամուր հող կա։ Առաջին շարքում կանգնած եր Վալինսկի գունդը, նա, վորը հուլիսի 4-ի գիշերը իր նվագախմբի հնչյունների տակ մտավ Տավրիկյան պալատը բայց շևիկներին խաղաղացնելու համար։

Հոկտեմբերի 22-ի որը դարձավ պրոլետարական բանակի զորատեսի որ։ Նա բոլոր կողմերով անցավ հրաշալի... Ժողովրդական մասսաներն ալիքանման թափվում եյին Պետրոգրադի Խորհրդի միտինգները... Հասարակական բոլոր շենքերը լիքն եյին։ Միտինգներն ընթանում եյին միքանի ժամ անընդհատ։ Հանդես եյին գալիս մեր կուսակցության հռետորները, Խորհուրդների համագումարին յեկած պատգամավորները, զորաճակատի ներկայացուցիչները, ձախ. սոց. հեղափոխականները և անարխիստները...

Տասնյակ հազար ժողովուրդը վողողում էր Ժողովրդական Տան շենքը, թափվում միջանցքները, լցնում դահլիճները։ Ցերկաթյա այուենների վրա կախված էին մարդկային գլխների, ձեռների հսկայական ծաղկեպսակ շղթաներ, ինչպես խաղողի վողկույզներ։ Ողում թագավորում էր ելեքտրական այն լարվածությունը, վորն իմաց է տալիս հեղափոխության ամենի կրիտիկական մոմենտները։ «Կորչի կերենսկու կառավարությունը, կորչի պատերազմը, ամբողջ իշխանությունը Սովետներին»։ Նախկին խորհրդային կուսակցությունների միջից վոչ վոք արդեն չէր համարձակվում դուրս գալ այդ վիթխարի բազմության առաջ առարկության խոսքերով։ Պետրոգրադի Սովետուրդն իշխում էր անքակտելիորեն։ Կամպանիան ըստ էության հաջողությամբ էր պսակվել։ Մնում էր ցնորական իշխանությանը հասցնել ռազմական վերջին հարվածը...

Սմոլնին դարձրած էր բերդ։ Տանիքի մեջ, վորպես ժառանգություն հին կենտրոնական կոմիտեից, կային յերկու տասնյակ գնդացիրներ—սակայն նրանք անուշադրության էին մատնված։ Մեր կողմից Սմոլնի յեր կանչված գնդացիրային լրացուցիչ ջոկատ։ Առավոտը վաղ Սմոլնու լայն ու կիսախավար միջանցքների քարյա հատակները զինվորները դղրդյունով քաշում էին իրենց գնդացիրները։ Դռներից դուրս էին ցցված Սմոլնիում գեռևս մնացած փոքրաթիվ սոց. հեղ. և մենշևիկների վարանոտ ու վախեցած դեմքերը...

Սմոլնու յերրորդ հարկում անկյունային փոքր սենյակում անընդհատ նիստ էր Ռազմա-Հեղափոխական կոմիտեն։ Այնտեղ էին կենտրոնում զորքի շարժման, զինվորների և բանվորների տրամադրության, զորանոցներում ագիտացիայի։ ավերիչների դուրս գալու, բուժական քաղաքագետների խորհրդակցությունների, Ձմեռային պալատի կյանքի, նախկին խորհրդային կուսակցությունների մտադրությունների մասին ստացվող բոլոր տեղեկությունները։ Տեղեկացնողները հայտնվում էին բոլոր կողմերից։ Գալիս էին բանվորներ, սպաներ, դրոնապաններ, սոցիալիստ-յունկերներ, ծառաներ, տիկիններ։ Շատերը բերում էին մաքրագույն անմտություն, մյուսները տալիս էին լուրջ և արժեքավոր ցուցմունքներ։ Առաջանում էր վճռական րոպեն։ Պարզ էր, վոր հետ վերադարձ չկա։

Հոկտեմբերի 24-ին յերեկոյան կերենսկին ներկայացավ նախապարլամենտ և պահանջից բայշևիկների դեմ ուղղեսիվ միջոցների հաստատում։ Սակայն նախապարլամենտը գտնվում էր խղճուկ ինքնակորույս և ամբողջովին ընկճված դրության մեջ։ Կադետները համաձայնություն էին աջ սոց.-հեղ. ընդունելու վճռահության բանաձևը, աջ սոց.-հեղ. ճնշում էին կենտրոնի վրա, կենտրոնը տատանվում էր, «ձախ» թևը պարզամիտական ոպոզիցիայի քաղաքականություն էր վարում։

Սորհրդակցություններից, վհճերից, տատանումներից հետո անցավ ձախ թևի բանաձևը, վորի մեջ մեղադրվում էր Սորհրդի խոռվարար շարժումը. սակայն շարժման պատասխանատվությունն ընկնում է կառավարության հակահեղափոխական քաղաքականության վրա...

Ամենահուզ-մնալիցն էր հոկտեմբերի 24-ի լուսա 25-ի գիշերը։

Պավլովսկուց մեզ հայտնեցին, վոր կառավարությունն այնտեղից կանչում է թնդանոթաձիգներին, Պետերհոֆից—պրապորշչիկների դպրոցը։ Կերենսկու կողմից Ձմեռային պալատ էին խնդրված յունկերները, սպաներն ու հարվածողները։ Մենք կարգադրեցինք Պետրոգրադ տանող բոլոր ճանապարհներին կանգնեցնել զինվորական վստահելի արգելքամբեր և կառավարության կողմից կանչված զորամասերի հանդեպ ագիտատորներ ուղարկել։ Խոսքերով չկանգնեցնելու դեպքում—ընթացք տալ զենքին...

Այս վճռական գիշերվա ընթացքում քաղաքի կարևորագույն բոլոր կետերն անցան մեր ձեռքը—համարյա առանց ընդդիմության, առանց կռվի, առանց զոհի...

(Լ. Տրոցկի—«Հոկտեմբերյան հեղափոխությունը»)։

Բ. ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆՐԱՆՔ ԳՆԱՑԻՆ ՄԵՌՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Քաղաքային դուման վառ լուսավորված էր։ Նրա յետևում մենք հաղիվ նկատեցինք ժողովրդի մութ զանգվածն ու ծովային զինվորների զորաշղթան, վորոնք գոռալով հրամայում էին մեզ կանգ առնել։ Մեքենան դանդաղեցրեց իր ընթացքը, կանգ առավ, և մենք իջանք։

Զարմանալի մի տեսարան եր այդ։ Հենց ցեկատերինինսկի ջրանցքի անկյունում, ելեքտրական մեծ լապտերի տակ, զինված ծովային զինվորների զորաշղթան ձգվել էր նեվսկու լայնությամբ՝ կըտրելով ամբողջ ճանապարհը, վոր մեծ շարքով՝ չորս հոգի ամեն մի շարքում, դուրս էր յեկել փողոց։

Դեմոնստրացիային մասնակցում էին 300-ից մինչև 400 հոգի այուրատուկով տղամարդիկ, լավ հագնված կանայք և ամեն տեսակի սպաներ։ Նրանց մեջ նկատեցինք համագումարի պատգամավորներից շատերին՝ մենշևիկների և սոցիալիստ-հեղափոխականների ղեկավարներին՝ Ավքսենտյեվին—Գյուղացիական Սորհրդի նիհար և շիկամորուք նախագահին. Սարոկինին՝ կերենսկու մերձավոր խորհրդակցին, Խինչուկին, Աբրամովիչին, Պետրոգրադի քաղաքագլուխ ալեհեր ծերունի Շրեյդերին, ժամանակավոր կառավարության հայթայթման մինիստր Պրակոպովիչի գլխավորությամբ, վորին այս առավոտ ձերբակալել էին և ազատ արձակել։

Տեսա «Ռուսկիա Վեդոմոստի» ռեպարտյոր Մալկինին։

— Գնում ենք Ձմեռային պալատ՝ մեռնելու,—ուրախ կանչեց նա։

Բազմությունը չէր շարժվում։ Բայց նրա առաջին շարքերում տաք վիճաբանություն էր տեղի ունենում։ Շրեյդերը և Պրակոպովիչը գոռում էին՝ դիմելով բարձրահասակ նավաստուն, վորն ըստ յերևույթին, ղեկավարում էր զորախումբը։

— Մենք պահանջում ենք, վոր մեզ թողնեք։ Տեսեք, այս ընկերները Խորհուրդների Համագումարից են գալիս։ Նայեցեք նրանց տոմսերը։ Մենք գնում ենք Ձմեռային պալատ։

Նավաստին, ինչպես յերևում էր, նեղն էր ընկել։ Ականջին ձեռքով նա քորեց գլուխը և հոնքերը կիտեց։

— Յես կոմիտեյից հրաման ունեմ՝ վոչ վոքի չթողնել Ձմեռային պալատ,—մրթմրթաց նա։—Բայց յես ընկերներիս կուղարկեմ՝ հեռախոսելու Սմոլնու հետ...

— Մենք պահանջում ենք, վոր մեզ թողնեք։ Մենք զինված չենք. կթողնեք դուք թե վոչ,—մենք կերթանք,—ազաղակում էր ծերուկ Շրեյդերը ծայր աստիճան հուզված,

— Յես հրաման ունեմ,—անբավական կրկնում էր զինվորը։

— Նրակեցեք մեզ վրա, յեթե ուզում եք։ Մենք կգնանք։ Մենք պատրաստ ենք մեռնելու, յեթե դուք հավարձակություն կունենաք կրակելու ռուսների և ընկերների վրա։ Մենք մեր կրծքերը դեմ կդնենք ձեր գնդակներին։

— Վոչ,—հաստատ պատասխանեց նավաստին,—յես ձեզ չեմ կարող թողնել։

— Իսկ յեթե մենք առաջ ացնենք—պիտի կրակե՞ք։

— Վոչ, յես մտադիր չեմ կրակել հասարակության վրա, վորը մի հատիկ զենք չունի։ Մենք անզեն ռուսների վրա չենք կրակի...

— Մենք առաջ կանցնենք։ Ի՞նչ կարող եք անել մեզ։

— Մի բան կանենք,—պատասխանեց նավաստին, ինչպես յերեվում էր տարակուսած։—Մենք թույլ չենք տա ձեզ անցնելու։ Մի բան կանենք։

— Բայց ի՞նչ, ի՞նչ պիտի անեք։

Մոտեցավ մի ուրիշ նավաստի չափազանց բարձր տրամադրությամբ։

— Մենք ջարդ ու փշուր կանենք ձեզ,—բացականչեց նա յեռանդուն։—Յեթե անհրաժեշտ լինի կարող ենք և կրակել։ Հեռացեք ձեր տները և հանգիստ թողեք մեզ։

Դրան իպատասխան, հետևեցին ամբոխի զայրագին բացականչությունները։

Պրակոպովիչը ինչ-վոր մի արկղի վրա բարձրացավ և իր հովանոցը ցնցելով՝ դիմեց ցուցարարներին։

— Ընկերներ և քաղաքացիներ։ Մեր դեմ ուժ է գործադրվում։ Մենք չենք կարող. մեր անմեղ արյունով արատավորել այս տգեղ մարդկանց ձեռքերը։ Մեզ պատիվ չի բերում գնդակահարվել այստեղ փողոցում, այս սոբելոչնիկների ձեռքով։

Թե ինչ էր ուզում ասել նա «սոբելոչնիկ» խոսքով, յես այնպես էլ յերբեք չկարողացա հասկանալ։

— Վերադառնանք դումա և խորհրդակցենք յերկիրն ու հեղափոխությունը փրկելու միջոցների մասին։

Ցավ պատշաճ լռությամբ թափորը ջրջվեց ու վերադարձավ Նեվսկով՝ պահպանելով իր նախկին կարգը։

(Ջոն Ռիդ։ «Տասն որ վոր ցնցեցին աշխարհը». եջ 123—124)։

Գ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑԱՎ.

Լենինի ճառը, արտասանած Պետերբուրգի Բ. և Զ. Պ. խորհրդում 1917 թվի հոկտ. 26-ին.

Ընկերներ, բանվորական և գյուղացիական հեղափոխությունը, վորի անհրաժեշտության մասին շարունակ խոսում էին բոլշևիկները,—իրականացավ։

Ի՞նչ նշանակություն ունի բանվորական և գյուղացիական այդ հեղափոխությունը։ Ամենից առաջ այդ հեղաշրջման նշանակությունը կայանում է նրանում, վոր մենք կունենանք Խորհրդային իշխանություն, կառավարության մեր սեփական մարմինը, առանց բուրժուազիայի վորևե մասնակցության։ Ճնշված մասսաներն իրենք են իշխանություն ստեղծում։ Պետական հին ապարատը հիմքից պետք է կործանվի և ստեղծվի վարչական նոր ապարատը։ Հանձինս խորհրդային կազմակերպությունների։

Այսուհետև Ռուսաստանի պատմության մեջ նոր շերտ է առաջանում, և ռուսական տվյալ յերրորդ հեղափոխությունը վերջին հաշվով պետք է հանգի սոցիալիզմի հաղթանակին։

Մեր հերթական խնդիրներից մեկն այժմ հանդիսանում է պատերազմի շուտափույթ լիկվիդացիան։ Սակայն, վորպեսզի վերջ տանք կապիտալիստական այժմյան իրավակարգի հետ սերտ կերպով կապված պատերազմին, բոլորիս պարզ է, վոր դրա համար անհրաժեշտ է նվաճել հենց կապիտալը։

Այս գործում մեզ կոգնի համաշխարհային բանվորական այն շարժումը, վորն արդեն սկսում է ծավալվել Իտալիայում, Անգլիայում և Գերմանիայում։

Մեր կողմից միջազգային դեմոկրատիային առաջարկված իրավացի, անհապաղ խաղաղությունն ամենուրեք միջազգային պրոլետարական մասսաների միջև ջերմ արձագանք կգտնի։

Պրոլետարիատի վստահությունն ամրապնդելու համար անհրաժեշտ է անհապաղ հրապարակել բոլոր գաղտնի պայմանագրերը։

Ռուսաստանի ներսում գյուղացիության մեծամասնությունն ասել է՝ բավական է կապիտալիստների հետ ունեցած խաղը, մենք կգնանք բանվորների հետ։ Մենք գյուղացիների վստահությունը կշահենք մի դեկրետով, որը կվոչնչացնի կալվածատիրական սեփականությունը։ Գյուղացիները կհասկանան, որ միայն բանվորների հետ միանալով կփրկվի գյուղացիությունը։ Մենք կսահմանենք զուտ բանվորական հսկողություն արդյունաբերության վրա։ Այժմ մենք սովորեցինք աշխատել համերաշխ։ Սրա մասին վկայում է հենց նոր կատարված հեղափոխությունը։ Մենք ունենք մասսայական կազմակերպության ուժ, որն ամեն ինչ հաղթահարելով՝ պրոլետարիատին կհասցնի մինչև համաշխարհային հեղափոխությունը։

Մենք հենց այժմյանից պետք է սկսենք Ռուսաստանում կառուցել պրոլետարական սոցիալիստական պետությունը։

Կեցցե համաշխարհային սոցիալիստական հեղափոխությունը։—

(Ժողովածու «25 лет РКП (Большевиков)—1898—1923 г. г. ռուսերեն)։

Ե. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՒՍ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿՈՉԸ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ։

«Բանվորներին, զինվորներին և գյուղացիներին.

«Բանվորական և Զինվորական Պատգամավորների Խորհուրդների Յերկրորդ Համառուսական Համագումարը բացվեց։ Այնտեղ ներկայացված է Խորհուրդների խոշոր մեծամասնությունը։ Համագումարին ներկա յեն նաև Գյուղացիական Խորհուրդների ուղարկած մի շարք պատգամավորներ։ Համաձայնական կենտրոնական Գործադիր Կոմիտեյի լիազորությունները վերջացան։ Հենվելով բանվորների, զինվորների և գյուղացիների խոշոր մեծամասնության կամքի վրա, հենվելով Պետրոգրադում տեղի ունեցած բանվորների և քաղաքապահ զորքի հաղթական ապստամբության վրա՝ Համագումարն իշխանությունն առնում է իր ձեռքը։

«Ժամանակավոր կառավարությունը տապալվել է։ Ժամանակավոր կառավարության անդամների մեծամասնությունն արդեն ձերբակալված է։ Խորհրդային իշխանությունը բոլոր ժողովուրդներին կառաջարկի դեմոկրատական հաշտություն և անհապաղ զինադադար՝ բոլոր ռազմաճակատներում։ Համագումարը ապահովում և կալվածատիրական և վանքապատկան հողերի անվճար հանձնումը գյուղացիական կոմիտեներին, կպաշտպանի զինվորի իրավունքները՝ լիակատար դեմոկրատիզացիա մտցնելով բանակում, բանվորական հսկողություն

կհնշանակի արտադրության վրա, կապահովի Հիմնադիր Ժողովը ժամանակին հրավիրելու գործը, կհոգա քաղաքին հաց և գյուղին՝ անհրաժեշտ մթերքներ մատակարարելու, կապահովի Ռուսաստանում ապրող բոլոր ազգերի ինքնորոշման իսկական իրավունքը։

«Համագումարը վորոշում է՝ տեղերում իշխանությունն անցնում է Բանվորական, Զինվորական և Գյուղացիական Պատգամավորների Խորհուրդներին, վորոնք և պետք է ապահովեն իսկական հեղափոխական կարգը։

«Համագումարը կոչ է անում խրամատների զինվորներին աչալուրջ և տակուն լինել։ Խորհուրդների Համագումարը համոզված է, վոր հեղափոխական բանակը կկարողանա պաշտպանել հեղափոխությունը իմպերիալիզմի բոլոր վտանգավորություններից, մինչև վոր նոր կառավարությունը բոլոր ժողովուրդներին կառաջարկի և նրանց հետ կկնքի դեմոկրատիկ հաշտություն։

«Նոր կառավարությունը ամեն միջոց ձեռք կառնի, վոր հեղափոխական բանակը ապահովվի ռեկվիզիցիա անելու և ունևոր դասակարգերի վրա հարկ դնելու վճռական քաղաքականությամբ, նույնպես և կբարելավի զինվորների ընտանիքների դրությունը։

«Կորնիլովի կողմնակիցները—Կերենսկին, Կալեդինը և ուրիշները—փորձեր են անում զորքեր ուղարկել Պետրոգրադի վրա։ Մի քանի գումարտակ, վորոնց խաբեությամբ ուղարկել եր Կերենսկին, անցան ապստամբած ժողովրդի կողմը։

«Զինվորներ, ակտիվ դիմադրություն ցույց տվեք Կորնիլովի կողմնակից Կերենսկուն։ Աչալուրջ յեղեք։

«Յերկաթուղային ծառայողներ, կանգնեցրեք Կերենսկու կողմից Պետրոգրադ ուղարկված բոլոր զորամասերը։

«Զինվորներ, բանվորներ և ծառայողներ, ձեր ձեռքում է գործը հեղափոխության և դեմոկրատական հաշտության բախտը։

«Կեցցե հեղափոխությունը։

Բանվորական և Գյուղացիական Պատգամավորների Խորհուրդների Համառուսական Համագումար։

Գյուղացիական Խորհրդի Պատգամավորներ»։

(Ջոն Ռիդ։ «Տասն որ վոր ցնցեցին աշխարհը», եջ 134—136)։

Զ. ԼԵՆԻՆԻ ՆԱՄԱԿԸ ՌՍԴ (Բ.) ԿԿ ՊԵՏՐՈԳՐԱԴԻ ՅԵՎ ՄՈՍԿՎԱՅԻ ԿՈՄԻՏԵՆԵՐԻՆ

Թանկագին ընկերներ։

Անցքերն այնքան պարզ են առաջադրում մեզ մեր անելիքը, վոր հապազելը կատարյալ վոճրագործության է հավասար։

Ագրարային շարժումը գնալով աճում է, կառավարությունը դիմում է վայրենի ռեպրեսիաների։ Զորքն որեց որ ավելի մեծ չափերով

և համակրում մեզ (Մոսկվայի զինվորների 99 տոկոսը մեր կողմն է, ֆինլանդական զորքերն ու նավատորմը կառավարության դեմ են։— Դուբասովի վկայությունը՝ ընդհանրապես ճակատի մասին)։

Պարզ կերպով յերևում է, վոր Գերմանիայում, հատկապես նավաստիների զնդակահարությունից հետո, հեղափոխությունն սկսվել է։ Մոսկվայի ընտրությունները, վորի ժամանակ բայլշևիկները շահեցին ձայների 47 տոկոսը, հսկայական մի հաղթանակ է։ Ձախ-եսերների հետ միասին մենք այժմ յերկրի մեծամասնությունն ենք շահում։

Յերկաթուղային և փոստային ծառայողները լրիված հարաբերության մեջ են գտնվում կառավարության հետ։

Լիբերդանները հոկտեմբ. 20 ին համագումարի փոխարեն խոսում են արդեն հոկտեմբերի վերջերի համագումարի մասին և այլն և այլն։

Այս պայմաններում «սպասելը»—հանցագործություն է։

Բայլշևիկները իրավունք չունեն սպասելու Խորհուրդների համագումարին, նրանք պետք է իշխանությունը գրավեն հենց այժմ։ Դրանով նրանք փրկում են և համաշխարհային հեղափոխությունը (վորովհետև այլ կերպ բոլոր յերկրների իմպերիալիստների պայմանավորվելու վտանգն է սպառնում, վորոնք Գերմանիայի զնդակահարություններից հետո, զիջող են գտնվելու իրար նկատմամբ և մեր դեմ են համախմբվելու), և ռուսական հեղափոխությունը (այլ կերպ՝ այժմյան անարխիայի ալիքը կարող է ավելի ուժեղանալ, քան մենք ենք), և պատերազմում գտնվող հարյուր հազարավոր մարդկանց կյանքը։

Հապաղելը—վոճրագործություն է։ Խորհուրդների համագումարին սպասելը—ձևականության յերեխայական խաղ է, ձևականության խայտառակ խաղ, հեղափոխության դավաճանություն։

Յեթե չի կարելի առանց ապստամբության իշխանությունը գրավել, ապա պետք է իսկույն և եթ ապստամբվել։ Շատ հնարավոր է, վոր իշխանությունը հենց այժմ կարելի չե առանց ապստամբության գրավել. որինակ, յեթե Մոսկվայի Խորհուրդն այժմ իսկույն ևեթ իշխանությունը գրավեր և իրեն (Պետերի Խորհրդի հետ միասին) կառավարություն հայտարարեր։ Մոսկվայում հաղթանակն ապահովված է և կվող չի լինի։ Պետերում կարելի չե դեռևս սպասել։ կառավարությունը վոչինչ չի կարող անել և նրա համար փրկություն չկա, նա անձնատուր կլինի։

Վորովհետև Մոսկվայի Խորհուրդը, գրավելով իշխանությունը, բանկերը, գործարանները, «Ռուսսկոյե Սլովո»-ն, հսկայական բազա և ուժ է ստանում—ամբողջ Ռուսաստանի առաջ՝ ապիտացիա մղելով և հարցն այսպես դնելով. մենք հաստատություն կառաջարկենք Վաղը՝ յեթե բոնապարտիստ կերենսկին անձնատուր լինի (իսկ յեթե անձնատուր չլինի, մենք նրան կատպալենք)։ Հողը գյուղացիներին իսկույն և յեթե,

զինվորներ յերկաթուղայիններին և փոստային ծառայողներին՝ իսկույն և եթ և այլն։

Անպայման պետք չե Պետերից «սկսել»։ Յեթե Մոսկվան առանց արյունհեղության «սկսի», նրան անշուշտ կաջակցեն. 1)բանակը ճակատում համակրանքով 2)գյուղացիները ամենուրեք, 3)նավատորմը և ֆինլանդական զորքերը Պետերի վրա արշավելով։

Յեթե կերենսկին Պետերի տակ նույնիսկ 1—2 կորպուս ձիավոր զորք ունենա, այնուամենայնիվ նա ստիպված է անձնատուր լինել։ Պետերի Խորհուրդը կարող է սպասել պատեհ առիթի, ագիտացիա մղելով Մոսկվայի խորհրդային կառավարության օգտին։ Որվա լոզունգն է՝ Մոսկվայի խորհրդային կառավարության իշխանությունը խորհուրդներին, հողը գյուղացիներին, խաղաղություն ժողովուրդներին, հաց քաղցածներին։

Հաղթանակն ապահովված է և 9/10 շանսեր կան, վոր անարյուն կանցնի։

Սպասելը—վոճրագործություն է հեղափոխության հանդեպ։

Վոզնեսյն՝

Ն. ԼԵՆԻՆ.

(Գրված է 1917 թ. հոկտեմբերի սկզբին։ Ռ.կ.կ. կենտկոմի արխիվից)։

Ջ. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՅԵՎ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ

(Խորհուրդների 2-րդ համագումարի վորոշումները, 1917 թ. հոկտեմբեր. 26-ին)։

1. Ժողովրդական կոմիսարների Խորհրդի հիմնարկման մասին։

Յերկիրը կառավարելու համար կազմել բանվորական և գյուղացիական կառավարություն, վորը կկոչվի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ։ Պետական կյանքի առանձին ճյուղերի կառավարումը հանձնարարվում է հանձնաժողովներին, վորոնց կազմը պետք է ապահովի համագումարի հայտարարած ծրագրի կյանքում կերառելը, սերտ միություն հաստատելով բանվորների, բանվորուհիների, զինվորների, գյուղացիների և ծառայողների մասսայական կազմակերպություններին հետ։ Կառավարական իշխանությունը պատկանում է այդ հանձնաժողովների նախագահների կոլլեգիային՝ այսինքն Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին։

Ժողովրդական Կոմիսարների գործունեության վերահսկողությունը և նրանց հեռացնելու իրավունքը պատկանում է Բանվորական, Գյուղացիական և Զինվորական Պատգամավորների խորհուրդներին, Գյուղացիական և Զինվորական Պատգամավորների խորհուրդների Համագումարին և նրա կենտրոնական Գործադիր կոմիտեին։

Այժմ ժողովրդական կոմիսարների Խորհուրդը կազմվում է հետեվյալ անձերից.— ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ— Վլադիմիր Ուլյանով (Լենին), ժողովրդական կոմիսարներ՝ ներքին գործերի—Ա. Ի. Ռիկով, հողագործության՝ Վ. Պ. Միլյուտին, աշխատանքի՝ Ա. Գ. Շլյապնիկով, զինվորական և ծովային գործերի—կոմիտե հետևյալ կազմով՝ Վ. Տ. Ովսեենկո (Անտոնով), Ն. Վ. Կրիլենկո և Ֆ. Մ. Դիբենկո, առևտրի և արդյունաբերության գործերի—Վ. Պ. Նոգին, ժողովրդական Լուսավորության Ա. Վ. Լունաչարսկի, Ֆինանսների—Ի. Ի Սկվորցով (Ստեպանով), արտաքին գործոց—Լ. Դ. Բրոնշտեյն (Տրոցկի), արդարադատության—Գ. Ի. Ոպպոկով (Լոմով), Պրեսի գործերի—Ի. Ա. Տեոդորովիչ, փոստ-հեռագրական—Ն. Պ. Ավիլով (Գլեբով), ազգությունների գործերի—Ի. Վ. Ջուղաշվիլի (Ստալին):

2. ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բանվորական և Գյուղացիական կառավարությունը՝ հիմնված հոկտեմբերի 24—25-ի հեղափոխությամբ և հենված Բանվորական, Զինվորական և Գյուղացիական պատգամավորների Խորհուրդների վրա՝ առաջարկում է բոլոր կռվող ժողովուրդներին և նրանց կառավարություններին անհապաղ բանակցություններ սկսել դեմոկրատական արդարացի հաշտություն կնքելու համար:

Արդարացի և դեմոկրատական հաշտությունը, որին ծարավի է բոլոր կռվող յերկրների բանվորների և աշխատավորների պատերազմներից ուժասպառների, չարչարվածների և քայքայվածների ճնշող մեծամասնությունը, հաշտությունը, որն ամենավորոշակի ու հաստատակամությամբ պահանջում եյին ռուս բանվորներն ու գյուղացիները ցարական միապետության տապալումից հետո,—այդպիսի հաշտությունը կառավարությունը համարում է անհապաղ խաղաղություն առանց աննեկսիայի (այսինքն՝ առանց ուրիշների հողերը գրավելու, առանց ուրիշ ժողովուրդներին բռնությամբ միացնելու) և առանց կոնտրիբուցիայի:

Ռուսաստանի կառավարությունը կռվող բոլոր ժողովուրդներին առաջարկում է անհապաղ կնքել այդպիսի հաշտություն՝ պատրաստակամություն յուցաբերելով՝ նախքան բոլոր յերկրների և բոլոր ազգությունների ժողովուրդների լիազորների կողմից այդպիսի հաշտության բոլոր պայմանների վերջնական հաստատումը՝ առանց նվազագույն ձգձգումների անմիջապես կատարել վճռական բոլոր քայլերը...

Շարունակել այս պատերազմը միմիայն նրա համար, թե ինչպես բաժանել ուժեղ և հարուստ ժողովուրդների միջև նրանց գրաված թույլ ժողովուրդները,—կառավարությունը համարում է ամենամեծ

հանցանքը մարդկության հանդեպ և հանդիսավոր կերպով հայտարարում է իր վճռականությունն անմիջապես ստորագրելու հաշտության պայմանները, վոր մատնանշված ձևով ընդհատում է այս պատերազմը առանց ժողովուրդներ գրավելու, բոլորի համար հավասարապես արդարացի պայմաններով:

Սրա հետ միասին կառավարությունը հայտնում է, վոր նա հաշտության վերոհիշյալ պայմանները յերբեք էլ չի համարում ուլտիմատիվային. ասինքն՝ համաձայնվում է քննել հաշտության նաև այլ պայմանները, պնդելով միայն, վոր նրանք հնար յեղածին չափ արագորեն առաջարկվեն կռվող վորևե կողմից և վոր դրանք հաշտության պայմաններն առաջարկելիս լինեն չափազանց պարզ, անպայման առանց վորևե յերկմտության և գաղտնիքի:

Կառավարությունը վերացնում է գաղտնի դիվանագիտությունը՝ իր կողմից հաստատապես մտադրվելով բոլոր բանակցություններն ամբողջ ժողովրդի առաջ տանել միանգամայն բաց կերպով, անհապաղ անցնելով կալվածատերերի ու կապիտալիստների կառավարության 1917 թ. փետրվարից մինչև հոկտեմբերի 25-ը հաստատած կամ կայացրած գաղտնի պայմանագրերի լրիվ հրատարակման: Այդ գաղտնի պայմանագրերի ամբողջ բովանդակությունը վոր չափով, վոր նա ուղղված է, ինչպես շատ դեպքերում լինում եր, ռուս կալվածատերերի ու կապիտալիստների համար շահ ու արտոնություն ձեռք բերելուն, վերիկառուսների աննեկսիան պահելուն ու մեծացնելուն, կառավարությունը հայտարարում է անպայման ու անհապաղ վոչնչացած...

Կառավարությունը կռվող բոլոր յերկրների բոլոր կառավարություններին ու ժողովուրդներին առաջարկում է շուտափույթ կերպով ղլնադադար կնքել, ըստ վորում իր կողմից ցանկալի է համարում, վոր այդ ղլնադադարը կնքված լինի յերեք ամսից վոչ պակաս ժամանակով. այսինքն՝ մի ժամանակամիջոց, վորի ընթացքում միանգամայն հնարավոր է, ինչպես վերջացնել հաշտության բանակցությունները՝ մասնակցությամբ բոլոր ներկայացուցիչների, առանց ժողովուրդների ու ազգերի բացառության, վորոնք մտել են պատերազմ կամ ստիպված մասնակցել նրան, նույնպես և բոլոր յերկրների ժողովրդական ներկայացուցիչների լիազորված ժողովներ հրավիրելը հաշտության պայմանները վերջնականապես հաստատելու համար:

Հաշտության այս առաջարկով դիմելով բոլոր յերկրների կառավարություններին ու ժողովուրդներին՝ Ռուսաստանի Բանվորական ու Գյուղացիական ժամանակավոր կառավարությունը միաժամանակ առանձնապես դիմում է մարդկության ամենաառաջնակարգ յերեք ազգերի և սույն պատերազմում մասնակցող ամենախոշոր պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի ու Գերմանիայի գիտակից բանվորների՝

ըին։ Այդ յերկրների բանվորները ամենամեծ ծառայությունը մատուցին առաջադիմության և սոցիալիզմի գործին... Մասնանշած յերկրների բանվորները կհասկանան պատերազմի սարսափներից և նրա հետեվանքներից մարդկությունն ազատելու իրենց վրա ընկած խնդիրները... և իրենց անսահման եներգիկ գործունեությամբ կոգնեն մեզ հաջողությամբ տանելու հաշտության գործը, սրա հետ նաև ազգաբնակության աշխատավոր ու շահագործվող մասսաների ամեն տեսակի սարկության ու ամեն տեսակի շահագործումից ազատելու գործը։

Ը. ԱՇԽԱՏԱՎՈՐ ՅԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԵԿԼԱՐԱՑԻԱՆ.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.

1. Ռուսաստանը հայտարարվում է Բանվորների, Զինվորների և Գյուղացիների Պատգամավորների Խորհուրդների Հանրապետություն։ Ամբողջ իշխանությունը կենտրոնում և տեղերում պատկանում է այդ Խորհուրդներին։

2. Ռուսաստանի Խորհրդային Հանրապետությունը հաստատվում է ազատ ազգությունների ազատ միության հիմունքով, իբրև Խորհրդային ազգային հանրապետությունների ֆեդերացիա։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

3. Իր հիմնական նպատակը համարելով վոչնչացնել մարդու ամեն մի շահագործում մարդու միջոցով, լիակատար կերպով վերացնել հասարակության բաժանումը դասակարգերի, շահագործողների անխնա ճնշումը, հասարակության սոցիալիստական կազմակերպության հաստատումը և սոցիալիզմի հաղթանակը բոլոր յերկրներում, Բանվորների, Զինվորների և Գյուղացիների Պատգամավորների Խորհուրդների III Համառուսական Համագումարը վորոշում է նաև։

ա. Հողի սոցիալիզացիան իրականացնելու համար՝ վերացվում է հողի մասնավոր սեփականությունը, և ամբողջ հողային ֆոնդը հայտարարվում է համաժողովրդական սեփականություն և տրվում է աշխատավորներին առանց վորևե վճարի, հավասարեցուցիչ հողագործման սկզբունքներով։

բ. Բոլոր համապետական նշանակություն ունեցող անտառները, հողի ընտներքն ու ջրերը, այլ և ամբողջ կենդանի և անշունչ ինվենտարը որինակելի կալվածքները (поместья) և գյուղատնտեսական ձեռնարկությունները հայտարարվում են ազգային սեփականություն։

գ. Իբրև առաջին քայլ ֆաբրիկանները, գործարանները հանքերը յերկաթուղինները և արտադրության ու տրանսպորտի մյուս միջոցները

բան.—Գյուղացիական Խորհրդային Հանրապետության լիակատար սեփականությունը դարձնելու՝ հաստատվում է խորհրդային որենքը բանվորական վերահսկողության և ժողովրդական Տնտեսության Բարձրագույն Խորհրդի մասին, աշխատավորների իշխանությունը շահագործողների վրա ապահովելու համար։

դ. Խորհուրդների III Համառուսական Համագումարը միջազգային բանկային, ֆինանսական կապիտալին տրված առաջին հարվածը համարում է ցարի, կալվածատերերի և բուրժուազիայի կառավարության կնքած փոխառությունները վոչնչացնելու խորհրդային որենքը, վստահ լինելով, վոր խորհրդային իշխանությունը հաստատապես կընթանա այդ ուղիով մինչև միջազգային բանվորական ապստամբության լիակատար հաղթանակը կապիտալի դեմ։

ե. Հաստատվում է բոլոր բանկերի բանվորա-գյուղացիական պետության սեփականություն դառնալը, իբրև աշխատավոր մասսաների կապիտալի լծից ազատվելու պայմաններից մեկը։

զ. Հասարակության մանրաբուծական շերտերը վոչնչացնելու և անտեսությունը կազմակերպելու նպատակով՝ մուծվում է ընդհանուր աշխատանքի տարապարտակ։

Ը. Իշխանության ամբողջ լրությունը աշխատավոր մասսաներին ապահովելու և շահագործողների իշխանության վերականգնման ամեն կարելիություն վերացնելու դիտումով՝ դեկրետով սահմանվում է աշխատավորների զինումը, բանվորների և գյուղացիների սոցիալիստական կարմիր բանակի կազմակերպումը և ունևոր դասակարգերի լիակատար զինաթափումը։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.

4. Արտահայտելով անհողդողդ վճռականություն մարդկությունը կորզելու ֆինանսական կապիտալի և իմպերիալիզմի ճանկերից, վորոնք յերկիրն արյունով լցրին ներկա բոլոր պատերազմներից ավելի սոսկալի պատերազմում, Խորհուրդների III Համառուսական Համագումարն ամբողջովին միանում և Խորհրդային Իշխանության անցկացրած քաղաքականությանը՝ պատուելու գաղտնի դաշնագրերը, կազմակերպելու ամենաընդարձակ չափերով յեղբայրացումն (братание) ներկայումս միմյանց դեմ կռվող զորքերի բանվորների և գյուղացիների հետ և հասնելու, ինչպես ել լինի, հեղափոխական միջոցներով աշխատավորների դեմոկրատական հաշտության՝ առանց աննեկսիաների և պատերազմական տուգանքների, ազգերի ազատ ինքնորոշման հիմունքով։

*5. Միևնույն նպատակներով՝ Խորհուրդների III Համառուսական Համագումարը պնդում է բուրժուական քաղաքակրթության բարբարոսական քաղաքականության լիակատար վերացման վրա, վոր միքանի

ընտրյալ ազգերի շահագործողների բարորութիւնը կառուցանում եր Սահայի, առհասարակ գաղութների և մանր յերկրների բազմամիլիոն աշխատավորների սորկացման վրա։

6. Խորհուրդների III Համառուսական Համագումարը վողջունում է ժողովրդական կոմիսարների քաղաքականութիւնը, վոր հրատարակել է Ֆինլանդիայի լիակատար անկախութիւնը, սկսել է Պարսկաստանից զորքերը դուրս հանել և հայտարարել է Հայաստանի ինքնորոշման ազատութիւնը։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ.

7. Բանվորների, Զինվորների և Գյուղացիների Պատգամավորների Խորհուրդների III Համառուսական Համագումարը գտնում է, վոր այժմ, պրոլետարիատի վճռական կռվի ժամին իր շահագործողների դեմ, շահագործողները տեղ չեն կարող ունենալ իշխանութեան և վոչ մի որգանի մեջ։ Իշխանութիւնն ամբողջութեամբ և բացառապես պետք է պատկանի աշխատավոր մասսաներին և նրանց լիազոր ներկայացուցչութեանը՝ Բանվորների, Զինվորների և Գյուղացիների Պատգամավորական Խորհուրդներին։

8. Միևնույն ժամանակ, ձգտելով ստեղծել Ռուսաստանի բոլոր ազգերի աշխատավոր դասակարգերի իսկապես ազատ և կամավոր, հետևաբար ուրեմն՝ ել ավելի լրիվ և հաստատուն միութիւն, Խորհուրդների III Համագումարը սահմանափակվում է Ռուսաստանի Խորհրդային Հանրապետութիւնների Ֆեդերացիայի հիմնական սկզբունքների հաստատութեամբ, վերապահելով յուրաքանչյուր ազգի բանվորներին և գյուղացիներին իրենց սեփական լիազոր Խորհրդային Համագումարներում ինքնուրույն կերպով վճռելու, թե կամենում են նրանք և ինչ հիմունքներով մասնակցել դաշնակցական կառավարութեան և մյուս դաշնակցական խորհրդային հիմնարկութիւնների մեջ։

Թ. ԴԵԿՐԵՏ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ.

«1. Կալվածատիրական հողային սեփականութիւնն անմիջապես վերացվում է, առանց վորևե վճարի։

2. Կալվածատիրական կալվածքները, ինչպես և կայսերական, վանական, յեկեղեցական հողերն իրենց շինվոր և անշունչ բոլոր առարկաներով, շինութիւններով և բոլոր կարասիներով անցնում են տեղական հողային կոմիտեների և գավառական գյուղացիական Պատգամավորների Խորհրդի տրամադրութեան տակ, մինչև Հիմնադիր Ժողովը։

3. Գրավման յենթարկված և այսուհետև ամբողջ ժողովրդին

պատկանող գույքի փչացումը հայտարարվում է ծանր հանցագործութիւն, վորը կպատժվի հեղափոխական դատարանով։ Գյուղացիական պատգամավորների գավառական Խորհուրդները կալվածատիրական կալվածքները գրավելիս պետք է բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք առնեն՝ խիստ կարգ պահպանելու. վորոշելու համար, թե վորչափ հողամասեր և վորոնք են կոնֆիսկացիայի յենթարկվելու, գրավված կայքի ճիշտ ցուցակը կազմելու և հեղափոխական խիստ հսկողութիւն նշանակելու ժողովրդին անցած անտեսութեան վրա՝ նրա բոլոր շինութիւններով, պարագաներով, կենդանիներով, մթերքների պաշարով և այլն։

4. Հողային մեծ բարեփոխութիւններն իրագործելու համար, մինչև Հիմնադիր Ժողովը դրան կլուծի վերջնականապես, ամենուրեք, վորպես ուղղեցույց, պիտի ծառայի գյուղացիական հետևյալ հրահանգը, վոր կազմված է տեղերի գյուղացիական այն 242 հրահանգների հման վրա, վոր կազմել է «Известия Всероссийск. Совета Крест. Депутатов»-ի խմբագրութիւնը և հրապարակված է «Известия»-ի 88 համարում, (Պետրոգրադ, № 88, ոգոստ. 19, 1917 թ.)։

5. Շարքային կազակների և գյուղացիների հողերը գրավման չեն յենթարկվում։

Հողի մասին։

Հողի հարցն իր ամբողջ ծավալով կարող է լուծել միայն Համաժողովրդական Հիմնադիր Ժողովը։

Հողային հարցի ամենաարդար լուծումը այսպես պետք է լինի։

1. Հողի մասնավոր սեփականութեան իրավունքը ընդմիշտ վերացվում է. հողը չի կարելի վոչ ծախել, վոչ գնել, վոչ կապալով տալ, վոչ գրավ դնել և վոչ ել վորևե այլ միջոցով ոտարացվել։ Ամբողջ հողը, լինի՝ պետական, վանական, յեկեղեցական, թագավորապատկան, իշխանապատկան, մայորատական, մասնատիրական, հասարակական կամ գյուղացիական, վերցվում է անվարձ, անտրիտուր, դառնում է համաժողովրդական սեփականութիւն և ոգտագործվում է այդ հողի վրա աշխատողների կողմից։

Գույքային այս հեղաշրջումից ելնող կալվածները իրավունք ունեն միայն հասարակական ոգնութիւն ստանալու, միառժամանակ, մինչև հարմարվեն գոյութեան նոր պայմաններին։

2. Ընդհանուր պետական նշանակութիւն ունեցող հողի մեջ յեղած բոլոր հարստութիւնները՝ հանքը, նավթը, ածուխը աղը և այլն, նույնպես և անտառն ու ջուրը, ոգտագործվում են բացառապես կառավարութեան կողմից։ Բոլոր մանր գետերը, լճերը, անտառները և այլն անցնում են համայնքներին՝ ոգտագործելու, պայմանով, վոր նրանց հսկեն տեղային ինքնավարութեան մարմինները։

3. Բարձր կուլտուրանների տնտեսությամբ հարուստ հողամասերը, այգինները, ջերմոցները, տնկարանները և այլն, չեն բաժանվում, այլ պահում են ցուցադրական վայրեր և անցնում են բացառապես պետության կամ տեղի հասարակի օգտագործմանը, համաձայն նրանց չափի և նշանակության։

Կալվածային, քաղաքային կամ գյուղական հողը, տնային այգիներով և բանջարանոցներով, ինում և իսկական տիրոջ ձեռքին, ընդ վորում հողամասի չափը և նրանից օգտվելու համար նշանակված հարկի քանակը վորոշվում է որենադրական կարգով։

4. Ջիաբուծարանները, արքունական թե մասնավոր աղնվացեղ անասնապահությունն ու թռչնաբուծությունը և այլն, չենթարկվում են գրավման և պահում են ժողովրդական սեփականություն ու անցնում են կամ պետության կամ համայնքի օգտագործմանը՝ համաձայն իրենց մեծության և ունեցած նշանակության։

Հողը չետ գնելու խնդիրը չենթակա չե Հիմնադիր Ժողովի քննության։

5. Գրավման չենթարկված հողերի ամբողջ տնտեսավարական ինվենտարը՝ շնչավոր թե անշունչ, առանց փրկանքի (выкупа) անցնում է պետության կամ համայնքի օգտագործման, նայած իրենց մեծության և նշանակության։

Ինվենտարի գրավումը սակավահող գյուղացիներին չի վերաբերում։

6. Հողից օգտվելու իրավունք ստանում են Ռուսաստանի բոլոր քաղաքացիները, (առանց սեռի տարբերության) ով ուզում է մշակել այն իր աշխատանքով, ընտանիքի օգնությամբ կամ ընկերովի, բայց մինչև այն ժամանակ, քանի նրանք ուժ կունենան այն մշակելու։ Վարձու աշխատանք չի թույլատրվում։

Գյուղական համայնքի անդամներից վորևե մեկի անկարության դեպքում՝ գյուղական համայնքը պարտավորվում է 2 տարվա ընթացքում, մինչև նրա ուժերի վերականգնումը, նրան օգնության հասնել, համայնորեն մշակելով նրա բաժին հողը։

Այն հողագործները, վորոնք ծերության կամ հաշմանդամության հետևանքով ընդմիշտ զրկվում են հողն անձամբ մշակելու հնարավորությունից, կորցնում են հողից օգտվելու իրավունքը, բայց դրա փոխարեն պետությունից ստանում են կենսաթոշակ։

7. Հողից օգտվելը պետք է հավասարաչափ լինի, այսինքն հողը բաժանվում է բոլոր աշխատավորների միջև, նայած տեղական պայմաններին, ըստ աշխատանքային կամ սպառողական նորմայի։

Հողից օգտվելու ձևերը բոլորովին ազատ պիտի լինեն—տնային, ագարակային, համայնական, արտելային, ինչպես վոր կվորոշվի առանձին շրջաններում և գյուղերում։

8. Ամբողջ հողը ոտարացվելուն պես մտնում է համաժողովրդական հողային ֆոնդը։ Այդ հողը աշխատավորներին բաժանում են տեղական և կենտրոնական ինքնավարությունները՝ սկսած կազմակերպված անդասակարգ գյուղական և քաղաքային համայնքից մինչև շրջանային հիմնարկները։

Հողային ֆոնդը սիստեմատիկ փոփոխությունների չե ենթարկվում ազգաբնակության աճման և արտադրության ու գյուղատնտեսական կուլտուրայի զարգացման համեմատ։

Հողաբաժնի սահմանների փոփոխման դեպքում՝ հողաբաժնի հիմնական մասը պետք է անձեռնմխելի մնա։

Հեռացող անդամների հողը վերստին հողային ֆոնդին է անցնում, ընդ վորում այդ հողամասերն ստանալու իրավունք են ունենում հեռացող անձանց ամենամոտ աղգականները և հեռացողի մատնանշած մարդիկ։

Հողի պարարտացման և մելիորացիայի (արմատական բարելավման) արժեքը, եթե հողաբաժինը հողային ֆոնդին չետ հանձնելու դեպքում այն օգտագործված չէ, պետք է վճարվի։

Ցեթե առանձին վայրերում չեղած հողային ֆոնդը չի բավարարում տեղական բնակչության, այն ժամանակ պետք է բնակչության ավել մասը տեղափոխել։

Տեղափոխության կազմակերպումը, ինչպես և տեղափոխության ծախսը, տեղափոխվողներին ինվենտար հայթհայթելու գործը և այլն, պետությունն իր վրա չե վերցնում,

Տեղափոխությունը կատարվում է հետևյալ կարգով. ցանկացող հողազուրկ գյուղացիները, ապա համայնքի արատավոր անդամները, դասալիքները և այլն, և, վերջապես, կամ համաձայնությամբ կամ վիճակ ձգելով»։

(Ջոն Ռիդ։ Նույն գրքում, եջ 161—164)։

Ժ. ԼԵՆԻՆԸ ՅԵՐԵՔ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Մեր հեղափոխությունը բուրժուական է, քանի դեռ մենք գնում ենք գյուղացիության, իբրև մի ամբողջության՝ հետ։ Այս մենք պարզից էլ պարզ էինք գիտակցում, 1905 թ. իվեր հարյուրավոր ու հազարավոր անգամ ասում էինք, վոր յերբեք պատմական պրոցեսի այդ անհրաժեշտ աստիճանից վոչ կարելի չե ցատկել-անցնել, վոչ էլ դեկրետներով վերացնել այն։

Բայց 1917 թ. ապրիլ ամսից, հոկտեմբերյան հեղափոխությունից, մեր կողմից իշխանության գրավումից շատ առաջ, մենք հայտնապես ասում էինք և պարզաբանում ժողովրդին, թե հեղափոխու-

թյունը չի կարող կանգ առնել դրա վրա, վորովհետև յերկիրն առաջ է գնացել, կապիտալիզմն առաջ է քայլել, չտեսնված չափերի յև հասել քայքայումը, վորը կպահանջի (ուղղակի է այդ, արդյոք վորևե, մեկը, թե վոչ, այդ միևնույն է), կպահանջի մի քանի քայլ առաջ, դեպի սոցիալիզմ։ Վորովհետև չի կարելի այլ կերպ առաջ գնալ, այլ կերպ փրկել պատերազմից հոշոտված յերկիրը, այլ կերպ թեթեվացնել աշխատավորների ու շահագործվողների տանջանքները։

Հենց այնպես էլ յեղավ, ինչպես մենք ասում էինք։ Հեղափոխության ընթացքը հաստատեց մեր դատողության ճշմարտությունը։ Սկզբում «ամբողջ» դյուղացիության հետ միասին միապետության դեմ, կալվածատերերի դեմ, միջնադարի դեմ (և այդքանով հեղափոխությունը մնում է բուրժուական, բուրժուա-դեմոկրատական)։ Ապա—ամենաաղքատ դյուղացիության հետ միասին կիսապրոլետարիատի հետ միասին, բոլոր շահագործվողների հետ միասին, կապիտալիզմի դեմ, դրանց թվում դյուղական հարուստների, կուլակների, սպեկուլյանտների դեմ, և այդքանով հեղափոխությունը սոցիալիստական է դառնում։ Փորձել արհեստական չինական պատ քաշել մեկի ու մյուսի միջև, նրանց իրարից ինչ-վոր այլ բանով անջատել, բացի պրոլետարիատի նախապատրաստության աստիճանից և նրա միավորման աստիճանից դյուղական չքավորության հետ, այդ մարքսիզմի մեծագույն խեղաթյուրումն է, նրա դեհնկացումը, լիբերալիզմով փոխարինումը...։

Վերջացնելով բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը դյուղացիության հետ ընդհանրապես, Ռուսաստանի պրոլետարիատը վերջնականապես անցավ սոցիալիստական հեղափոխության, յերբ նրան հաջողվեց պառակտել դյուղը, իրեն միացնել նրա պրոլետարներին ու կիսապրոլետարներին, նրանց միացնել կուլակների ու բուրժուազիայի դեմ։

(Վ. Ի. Լենին. Աշխ. ժող. 1 հրատ. հ. XV, եջ 508, 509 և 512 Արեղհատուզ և Պրոտասով։ «Կուս. պրոպիտություն», II մաս, եջ 281—282)

Ի. ԹԵԶԻՍՆԵՐ ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ.

1. Հիմնադիր ժողովի գումարման պահանջը լիովին օրինականորեն մտել է հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ծրագրի մեջ, վորովհետև բուրժուական հանրապետության մեջ Հիմնադիր ժողովը հանդիսանում է դեմոկրատիզմի բարձրագույն ձևը, և վորովհետև իմպերիալիստական հանրապետությունը կերտնսկու գլխավորությամբ հորինեղով պարլամենտ՝ ընտրությունների կեղծիք էր պատրաստում դեմոկրատիզմի մի շարք խախտումների հետ միասին։

2. Առաջադրելով Հիմնադիր ժողովի գումարման պահանջը՝ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան 1917 թ. հեղափոխության հենց

սկզբից հաճախակի ընդգծել է, վոր Խորհուրդների հանրապետությունը հանդիսանում է դեմոկրատիզմի ավելի բարձր ձևը, քան սովորական բուրժուական հանրապետությունը՝ հանդերձ Հիմնադիր ժողովով։

3. Բուրժուական կարգից սոցիալիստականին անցնելու համար, պրոլետարիատի դիկտատուրայի համար, Բանվորական, Զինվորական ու Դյուղացիական Պատգամավորների Խորհուրդների Հանրապետությունը հանդիսանում է դեմոկրատիկ հիմնարկների վրչ միայն ավելի բարձր ձևը (համեմատած սովորական բուրժուական հանրապետության հետ՝ Հիմնադիր ժողովի ժամանակ, վորը նրա պսակն է), այլ և միակ ձևը, վոր ընդունակ է ապահովելու ամենից անցավագին անցումն դեպի սոցիալիզմ։

4. Հիմնադիր ժողովի գումարումը մեր հեղափոխության մեջ այն ցուցակներով, վորոնք առաջադրված են 1916 թվի հոկտեմբերի կեսին, տեղի ունեցան այնպիսի պայմաններում, վորոնք բացառում են այդ Հիմնադիր ժողովի ընտրություններով ընդհանրապես ժողովրդի և մասնավորապես աշխատավոր մասսաների կամքի ճիշտ արտահայտման հնարավորությունը։

5. Նախ՝ ընտրությունների համեմատական սիստեմը ժողովրդի կամքի ճշմարիտ արտահայտություն տալիս է միայն այն ժամանակ, յերբ կուսակցական ցուցակները համապատասխանում են ժողովրդի ունեցած բաժանումին, իսկապես այն կուսակցական խմբավորումներին, վորոնք արտացոլել են այդ ցուցակներում։ Իսկ մեզ մոտ, ինչպես հայտնի յև, կուսակցությունը, վոր ուներ մայիսից մինչև հոկտեմբերը ամենից շատ կողմնակիցներ ժողովրդի և առանձնապես գյուղացիության մեջ, սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունը, տվել է միասնական ցուցակներ Հիմնադիր ժողովի համար 1917 թվի հոկտեմբերի կեսին, բայց պառակտվել է Հիմնադիր ժողովի ընտրություններից հետո, մինչև նրա գումարումը։

Դրա հետևանքով՝ մինչև անգամ ձևականապես, ընտրողների մասսայի կամքի ու Հիմնադիր ժողովի համար ընտրվածների կազմի միջև համապատասխանություն չկա և չի կարող լինել։

6. Յերկրորդ՝ էլ ավելի կարևոր, վրչ ձևական, վրչ իրավաբանական, այլ իրրև հասարակական-տնտեսական, դասակարգային աղբյուր հանդիսանում է այն հավգամանքը, վոր մի կողմից ժողովրդի և առանձնապես աշխատավոր դասակարգերի և մյուս կողմից Հիմնադիր ժողովի կազմի միջև համաձայնություն չկա, վորովհետև Հիմնադիր ժողովի ընտրությունները տեղի ունեցան այն ժամանակ, յերբ ժողովրդի ճնշող մեծամասնությունը չէր կարող դեռ իմանալ հոկտեմբերյան, խորհրդային, պրոլետարական-դյուղացիական հեղափոխության ամբողջ ծավալն ու նշանակությունը, հեղափոխություն, վոր սկսվեց

1917 թվի հոկտեմբերի 25-ին, այսինքն Հիմնադիր ժողովի թեկնածուների ցուցակները ներկայացնելուց հետո:

7. Հոկտեմբերյան հեղափոխությունը, որ նվաճել է իշխանություն Սովետներին համար, կորզելով քաղաքական տերապետությունը բուրժուազիայի ձեռքերից և հանձնելով այն պրոլետարիատի և ամենաառաջատ գյուղացիության ձեռքը, մեր աչքերի առաջ վերապրում է իր զարգացման հաջորդական ետապները:

8. Նա սկսվել է մայրաքաղաքի հոկտեմբերի 24—25 հաղթանակից, երբ Բանվորական և Զինվորական Պատգամավորների Սովետների 2-րդ Համառուսական համագումարը, պրոլետարների ու գյուղացիության ամենից շատ քաղաքականորեն զործոն մասի ավանգարդը, գերակշռություն տվեց բալշևիկների կուսակցությանը և նրան իշխանության գլուխ կարգեց:

9. Հեղափոխությունն այնուհետև ընդգրկեց նոյեմբերի ու դեկտեմբերի ընթացքում բանակի ու գյուղացիության վողջ մասսան, արտահայտվելով ամենից առաջ պաշտոնանկ անելով ու կրկին ընտրելով հին վերնագույն կազմակերպությունները (բանակային կոմիտեներ, նահանգական, գյուղացիական կոմիտեներ, Գյուղացիական Պատգամավորների Համառուսական Սովետի կենտրոնական Գործադիր Կոմիտեն, և այլն), որոնք արտահայտում էին հեղափոխության ապրած-վերջացրած, համաձայնական շրջանը, նրա բուրժուական և մոլ Թե պրոլետարական ետապը, և որոնք անվուսափելիորեն այդ պատճառով պետք է ասպարեզից քշվեին ավելի խորունկ ու ավելի լայն ժողովրդական մասսաների ճնշման տակ:

10. Շահագործվող մասսաների այդ հզոր շարժումը՝ վերանորոգելու իրենց կազմակերպությունների դեկավար որգանները՝ ավարտված չե դեռ մինչև այժմ էլ, 1917 թվի դեկտեմբերի կեսին, և չվերջացած բերկաթուղային համագումարը նրա ետապներից մեկն է հանդիսանում:

11. 1917 թվի նոյեմբերին և դեկտեմբերին Ռուսաստանի դասակարգային ուժերի խմբավորումներն իրենց դասակարգային կուվի մեջ՝ իրականում, հետևապես, դասավորվում են սկզբունքորեն այլ կերպ, քան այն, որ կարող եր իր արտահայտությունը գտնել 1917 թվի հոկտեմբերի կեսին Հիմնադիր ժողովի թեկնածուների կուսակցական ցուցակներում:

12. Ուկրաինայի վերջին անցքերը (մասամբ նույնպես Ֆինլանդիայում ու Բելոռուսիայում, ինչպես և Կովկասում) հավասարապես ցույց են տալիս դասակարգային ուժերի այն նոր խմբավորումը, որ կուվի պրոցեսի մեջ ընթանում է մի կողմից՝ ուկրաինական Ռադայի, Ֆինլանդական Սեյմի, և այլ բուրժուական նացիոնալիզմի և մյուս կողմից՝ Սովետային իշխանության, այդ ազգային հանրապետությունների յուրաքանչյուրի պրոլետարական-գյուղացիական հեղափոխության միջև:

13. Վերջապես, քաղաքացիական պատերազմը, որ ծայր է առել կադետական-կալեդինյան հակահեղափոխական ապստամբությամբ ընդդեմ խորհրդային իշխանությունների, ընդդեմ բանվորական ու գյուղացիական կառավարության, վերջնականապես սրել է դասակարգային կուվը և վերացրել է ամեն մի հնարավորություն ձևական-դեմոկրատիկ ուղիով լուծելու ամենասուր խնդիրները, որոնց պատմությունը դրել է Ռուսաստանի ժողովուրդների առջև և առաջին հերթին նրա բանվոր դասակարգի ու գյուղացիության առջև:

14. Բանվորների ու գյուղացիների միայն լիակատար հաղթանակը բուրժուական ու կալվածատիրական ապստամբության դեմ (որ գտել է իր արտահայտությունը կադետական-կալեդինյան շարժման մեջ), սորկատերերի այդ ապստամբության, միայն անխնա ռազմական ճնշումն է ընդունակ իրականում ապահովելու բանվորական-գյուղացիական հեղափոխությունը: Անցքերի ընթացքը և դասակարգային կուվի զարգացումն հեղափոխության մեջ՝ բերել հասցրել են այն բանին, որ «վողջ իշխանությունը Հիմնադիր ժողովին» լոզունգը, որը հաշվի չե առնում բանվորա-գյուղացիական հեղափոխության նվաճումները, հաշվի չե առնում Սովետային իշխանությունը, հաշվի չե առնում Բանվորական ու Զինվորական Պատգամավորների Համառուսական Ցերկրորդ Համագումարի վորոշումը, Գյուղացիական Պատգամավորների Համառուսական Ցերկրորդ Համագումարի վորոշումը, և այլն, այդպիսի լոզունգն իրականում դարձել է կադետների ու կալեդինյանների և նրանց համարդների լոզունգը: Ամբողջ ժողովրդի համար պարզվում է, որ այդ լոզունգը փաստապես նշանակում է կուվ Սովետային իշխանությունը վերացնելու համար, և որ Սահմանադիր ժողովը, յեթե վոր նա ներհակվի Սովետային իշխանության հետ, պիտի վոր անխուսափելիորեն դառապարտվի քաղաքական մահվան:

15. Ժողովրդական կյանքի առանձնապես սուր խնդիրների թվին պատկանում է հաշտության խնդիրը: Ռուսաստանում իսկական հեղափոխական պայքար հաշտության համար սկսված է յեղել միայն հոկտեմբերի 25-ի հեղափոխության հաղթանակից հետո, և այդ հաղթանակը տվել է առաջին պտուղները՝ հրատարակելով գաղտնի դաշնագրերը, վինադադար կնքելով, և սկսել է հրապարակային բանակցություններ առանց աննեկսիաների ու առանց կոնտրիբուցիաների հանուր հաշտության համար:

Լայն ժողովրդական մասսաները միայն այժմ, իրականում, լիովին ու բացահայտ հնար են ձեռք բերում հաշտության համար հեղա-

վոխական պայքարի քաղաքականությունը դիտելու և նրա հետևանքները ուսումնասիրելու։

Հիմնադիր ժողովի ընտրությունների ժամանակ ժողովրդական մասսաները զուրկ էին այդ հնարավորությունից։

Պարզ է, որ գործի այդ կողմից էլ՝ Հիմնադիր ժողովի ընտրությունների կազմի ու ժողովրդի իսկական կամքի միջև՝ պատերազմը վերջացնելու խնդրում, անհամաձայնությունն անխուսափելի էր։

16. Վերը բացատրած հանգամանքների գումարն այն հետևանքն է տալիս, որ Հիմնադիր ժողովը, գումարված լինելով մինչև պրոլետարական-գյուղացիական հեղափոխությունը գոյություն ունեցող կուսակցությունների ցուցակներով, բուրժուազիայի տիրապետության պայմաններում, անխուսափելիորեն հանդում է ընդհարման աշխատավոր ու շահագործվող դասակարգերի կամքի ու շահերի հետ, դասակարգերի, որ հոկտեմբերի 25-ին սոցիալիստական հեղափոխություն են սկսել ընդդեմ բուրժուազիայի։ Բնական է, որ այդ հեղափոխության շահերն ավելի բարձր են կանգնած Հիմնադիր ժողովի ձևական իրավունքներից, եթե որ մինչև անգամ այդ ձևական իրավունքները խախտված էլ չլինեին Հիմնադիր ժողովի որևէ մեջ—որ չի ճանաչում ժողովրդի իրավունքը՝ ուզած ժամանակ իր պատգամավորներին վերընտրելու։

17. Յուրաքանչյուր փորձ, ուղղակի կամ անուղղակի, քննության առնելու Հիմնադիր ժողովի խնդիրը ձևական, իրավաբանական կողմից սովորական բուրժուական դեմոկրատիայի շրջանակներում, առանց հաշվի առնելու դասակարգային կռիվն ու քաղաքացիական պատերազմը, դավաճանություն է հանդիսանում պրոլետարիատի գործին ու անցումն է բուրժուազիայի տեսակետին։ Նախազգուշացնել բոլորին ու ամեն մեկին այդ սխալից, որի մեջ ընկնում են բայշևիկմի վերին խավերից շատերը, որոնք չեն կարողանում գնահատել Հոկտեմբերյան հեղափոխությունն ու պրոլետարիատի դիկտատուրայի անելիքները, հեղափոխական սոց.-դեմոկրատիայի անպայման պարտականությունն է։

18. Միակ շանսը անցավագին լուծելու կրիզիսը, որ ստեղծվել է Հիմնադիր ժողովի ընտրությունների և ժողովրդի կամքի, ինչպես և աշխատավոր ու շահագործվող դասակարգերի շահերի անհամաձայնության հետևանքով, հանդիսանում է ժողովրդի՝ Հիմնադիր ժողովի անդամների վերընտրության իրավունքի հնարավորին չափ ավելի լայն ու արագ իրականացումը, իրեն՝ Հիմնադիր ժողովի միացումը կենտրոնական Գործադիր Կոմիտեյի օրենքին այդ վերընտրությունների մասին և Հիմնադիր ժողովի անվերապահ հայտարարությունը, որ ընդունում է Խորհրդային իշխանությունը, խորհրդային հեղափոխությունը, նրա քաղաքականությունը հաշտության խնդրում, հողի մասին ու բանվորական վերահսկողության մասին, Հիմնադիր ժողովի վճռական մերժումը կադետո-կալեդինյան հակահեղափոխության հավակնորդների բանակին։

19. Այդ պայմաններից դուրս՝ Հիմնադիր ժողովի հետ կապված կրիզիսը կարող է լուծվել միայն հեղափոխական ճանապարհով,—Խորհրդային իշխանության կողմից ամենից յեռանդուն, արագ, ամուր և վճռական հեղափոխական միջոցների ուղիով ընդդեմ կադետո-կալեդինյան հակահեղափոխության, ինչպիսի յել լողունգներով ու հիմնարկներով (թեկուզ և Հիմնադիր ժողովի անդամությամբ) այդ հակահեղափոխությունը չքողարկվի։ Ամեն մի փորձ այդ կռվի մեջ՝ կաշկանդելու Խորհրդային իշխանության ձեռքերը՝ կլիներ ոճանդակություն հակահեղափոխությանը։

(«Правда», 1917 թիվ, դեկտեմբերի 26-ին։ Վ. Ի. Լենին։ «Պրոլետարական հեղափոխությունը և ռենեգատ Կաուցկին». հայերեն, եջ 95—99)։

Ի. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ռուսաստանի հեղափոխության անմիջական և վերձավոր խնդիրը բուրժուական-դեմոկրատական հետևյալ հարցն էր,—տապալել միջնադարյան շրջանի մնացորդները, իսպառ վոչնչացնել նրանց և մաքրել Ռուսաստանն այդ բարբարոսությունից, մեր յիրկրի կուլտուրային և հառաջադիմությանը խոչընդոտ հանդիսացող այդ ամենամեծ արգելակից։

Ցեվ մենք իրավունք ունենք պարծենալու, որ այդ մաքրումը, ժողովրդական մասսաների, նրա ամենալայն խավերի վրա ներգործելու տեսակետից, ավելի վճռական, արագ, համարձակ, հաջող, լայն ու խոր կերպով ենք կատարել, քան ֆրանսիական մեծ հեղափոխությունը սրանից ավելի քան 125 տարի առաջ։

Ցեվ անարխիստները, և՛ մանր-բուրժուական դեմոկրատները (այսինքն՝ մենշևիկներն ու եսերները, որպես միջազգային սոցիալական այդ տիպի ռուսական ներկայացուցիչները), շփոթելով բուրժուական-դեմոկրատական և սոցիալիստական (այսինքն՝ պրոլետարական) հեղափոխությունները, շատ անհեթեթություններ են ասել ու այժմ էլ ասում են այդ առթիվ։ Այս կետում մարքսիզմի մեր ըմբռնման, նաև՝ մեր հեղափոխությունների փորձի մեր հաշվառման ճշտությունը հաստատվեց ամբողջ չորս տարվա ընթացքում։ Մենք բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունն ավարտեցինք այնպես, ինչպես վոչ վոք։ Մենք միանգամայն գիտակցաբար, հաստատ ու անշեղ առաջ ենք ընթանում դեպի սոցիալիստական հեղափոխությունը, իմանալով, որ

նա բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունից չինական պատերազմով չի բաժանված, իմանալով, որ միայն պայքարը կվորոշի, թե վերջին հաշվով մեզ վրա չափով կհաջողվի առաջ ընթանալ, թե անսահման բարձր խնդրի վրա մասը մենք կիրագործենք, թե մեր հաղթանակների վրա մասը մենք ընդմիշտ մերը կդարձնենք։

Կապրենք—կտեսնենք։ Սակայն հենց այժմ էլ մենք տեսնում ենք արդեն, որ հասարակությանը սոցիալիստականորեն վերակազմակերպելու գործում մեր ավերված, բզկտված և հետամնաց յերկրի համար չափազանց շատ բան է արված։

ԼԵՆԻՆ

(Գրված է 1921 թ. հոկտեմբերի 14-ին։ Տպված է «Պրավդա»-յում համ. 234, 1921 թ. հոկտեմբերի 18-ին)։

Լ. ԻՆՉՈՒ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՑԵՂԱՎ։

Ինչու՞ հենց Ռուսաստանը Լենինիզմի ոջախը, պրոլետարական հեղափոխության թեորիայի և տակտիկայի հայրենիքը դարձավ։

Վորովհետև Ռուսաստանը իմպերիալիզմի բոլոր հակասությունների հանգույցակետն եր։

Վորովհետև Ռուսաստանը հղի յեր հեղափոխությամբ ավելի, քան մի վորևե ուրիշ յերկիր, և միայն նա յեր իվիճակի հեղափոխական ճանապարհով լուծել այդ հակասությունները։

Սկսել նրանից, վոր Ռուսաստանը բուն եր ամեն տեսակի ճնշման,—և՛ կապիտալիստական, և՛ դաղութային, և դինվորական,—վոչ մարդկային ու բարբարոսական ձևերով. սակայն ում հայտնի չե, վոր Ռուսաստանում կապիտալի ամենակարողությունը ձուլվում եր յարիզմի դեսպոտիզմի հետ, ռուս նացիոնալիզմի ագրեսիվ քաղաքականությունը՝ յարի դահճության հետ՝ վոչ ռուս ժողովուրդների նկատմամբ, ամբողջ շրջանների շահագործումը՝ Տաճկաստանի, Պարսկաստանի, Չինաստանի—այդ շրջանների նվաճումի հետ, պատերազմի հետ՝ նվաճումների համար։ Լենինը իրավացի յեր, ասելով, թե յարիզմը—«դինվորա-ֆեոդալական իմպերիալիզմ եր»։ Յարիզմը իմպերիալիզմի ամենահակասական կողմերի հավաքակետն եր՝ քառակուսի աստիճանի։

Գնանք առաջ։ Յարական Ռուսաստանը արևմտյան իմպերիալիզմի ամենահակայական ռեզերվն եր, վոչ միայն այն ժամով, վոր նա ազատ մուտք եր տալիս արտասահմանյան կապիտալին, վորն իր ձեռքն եր պահում ժողովրդական տնտեսության այնպիսի վճռական դեր խաղացող ճյուղեր, ինչպիսին են—վառելիքը և մետաղագործությունը, այլև այն իմաստով, վոր նա հոգուտ արևմտյան իմպերիալիստների կարող եր միլիոնավոր դինվորներ ժամանակարարել։ Հիշեցեք

տասնյակ միլիոնանոց ռուսական բանակը, վոր իմպերիալիստական ճակատներում արյուն եր թափում անգլո-ֆրանսիական կապիտալիստների վիթխարի շահերը ապահովելու համար։

Ապա, յարիզմը՝ վոչ միայն իմպերիալիզմի պահապան շուն եր Յեվրոպայի արևելյան մասում, այլև արևմտյան իմպերիալիզմի ագենտուրան եր՝ ժողովրդից դուրս կորզելու համար այն փոխառությունների հարյուր միլիոնավոր տոկոսները, վոր նա ստանում եր Փարիզում, Լոնդոնում, Բելգիայում և Բրյուսսելում։

Վերջապես, յարիզմը Տաճկաստանի, Պարսկաստանի, Չինաստանի և այլ յերկրների բաժանման գործում արևմտյան իմպերիալիզմի հավատարիմ դաշնակիցն եր։ Ո՞ւմ հայտնի չե, վոր յարիզմը իմպերիալիստական պատերազմը մղում եր Անտանտայի իմպերիալիզմի հետ դաշն կապած, և վոր Ռուսաստանը հանդիսանում եր այդ պատերազմի ամենաէական տարրը։

Ահա թե ինչու արևմտյան իմպերիալիզմի և յարիզմի շահերը հյուսվում էին միմյանց և իվերջո ձուլվում էին իմպերիալիզմի շահերի մի ընդհանուր կծիկում։ Կարող եր արդյոք արևմտյան իմպերիալիզմը հաշտվել այդպիսի կարող նեցուկի կորստյան հետ Արևելքում և ուժերով ու միջոցներով հարուստ այնպիսի մի շտեմարանի կորստյան հետ, ինչպիսին եր հին, յարական, բուրժուական Ռուսաստանը։ Չփորձելով իր բոլոր ուժերը Ռուսաստանի հեղափոխության հետ մահացու պայքարի մեջ մտնելու՝ յարիզմը վերականգնելու և պաշտպանելու համար։

Իհարկե—վոչ։

Սրանից հետևում է, վոր նա, ով ուզում եր հարվածել յարիզմին ձեռք եր բարձրացնում և իմպերիալիզմի վրա, ով վոր ապստամբվել եր յարիզմի դեմ, նա պետք եր վոր ապստամբվեր և իմպերիալիզմի դեմ, վորովհետև ով վոր խորտակում եր յարիզմը, պետք է վոր խորտակեր և իմպերիալիզմը, յեթե նա իսկապես մտածում եր վոչ միայն փշրել յարիզմը, այլ վոչնչացնել այն առանց հետադարձների։ Այսպիսով, հեղափոխությունը յարիզմի դեմ մոտենում եր և պետք է վոր վերածվեր իմպերիալիզմի դեմ ուղղված հեղափոխության, պրոլետարական հեղափոխության։

Մինչդեռ, Ռուսաստանում ուռճանում եր ամենամեծ ժողովրդական հեղափոխությունը, վորի գլուխ եր կանգնած աշխարհի ամենահեղափոխական պրոլետարիատը, վորն ուներ իր տրամադրության տակ այնպիսի մի դաշնակից, ինչպիսին եր Ռուսաստանի հեղափոխական գյուղացիությունը։ Հիմք, կա արդյոք, ապացուցելու, վոր այդպիսի հեղափոխությունը չեր կարող կանգ առնել կես ճանապարհին, վոր նա հաջողության դեպքում պետք է վոր առաջ գնար, ապստամբության դրոշ բարձրացնելով իմպերիալիզմի դեմ։

Ահա թե ինչու Ռուսաստանը պետք է դառնար իմպերիալիզմի հակասությունների հանգուցակետը, վոչ միայն այն մտքով, վոր այդ հակասությունները ամենից հեշտ դրսևորվեցին հենց Ռուսաստանում, նրանց ավելի այլանդակ և անտանելի բնույթի պատճառով, և վոչ թե միայն նրա համար, վոր Ռուսաստանը արևմտյան իմպերիալիզմի ամենաթույլ օղակն էր, վոր կապում էր արևմտյան ֆինանսական կապիտալը արևելյան գաղութների հետ,—այլև նրա համար, վոր միայն Ռուսաստանում գոյություն ուներ այն ռեյալ ուժը, վորը կարող էր լուծել իմպերիալիզմի հակասությունները հեղափոխական ճանապարհով։

Իսկ սրանից հետևում է, վոր հեղափոխությունը Ռուսաստանում չէր կարող պրոլետարական չլինել, վոր նա իր զարգացման առաջին իսկ որերից չէր կարող միջազգային բնույթ չստանալ, վոր նա չէր կարող, այդպիսով, չցնցել համաշխարհային իմպերիալիզմի հիմունքները։

Կարող էին, արդյոք, ռուս կոմմունիստները այդպիսի պայմաններում սահմանափակվել իրենց աշխատանքում ռուսական հեղափոխության նեղ ազգային շրջանակներով։ Ինարկե, վոչ։

Ընդհակառակը, ամբողջ դրությունը, ինչպես ներքին (խոր հեղափոխական կրիզիսը), այնպես էլ արտաքին (պատերազմը), դրդում էր նրանց իրենց աշխատանքում դուրս գալ այդ շրջանակներից, տեղափոխել պայքարը միջազգային ասպարեզ, բացել իմպերիալիզմի խոցերը, ապացուցել կապիտալիզմի անկման անխուսափելիությունը, ջախջախել սոցիալ-պատրիոտիզմը և սոցիալ-շովինիզմը, վերջապես տապալել իրենց յերկրում կապիտալիզմը և կոփել պրոլետարիատի համար պայքարի նոր զենք, պրոլետարական հեղափոխության թեորիան և տակտիկան, այդպիսով հեշտացնել բոլոր յերկրների պրոլետարների համար կապիտալիզմի կործանման գործը։ Ռուս կոմունիստներն այլ կերպ էլ վարվել չէին կարող, վորովհետև նրանք միայն այդ ճանապարհով կարող էին ապահովել միջազգային դրության վորոշ փոփոխությունների, վորոնք կարող էին ապահովել Ռուսաստանը բուրժուական կարգերի լիակատար վերացումից։

Ահա թե ինչու Ռուսաստանը դարձավ լենինիզմի ոջախը, իսկ ռուս կոմունիստների առաջնորդը՝ Լենինը—նրա ստեղծագործողը։

Ռուսաստանի և Լենինի հետ այստեղ մոտավորապես «պատահեց» այն, ինչ վոր անցյալ դարի քառասնական թվականներին Մարքսի ու Ենգելսի և Գերմանիայի—հետ։

Գերմանիան այն ժամանակ, ինչպես և Ռուսաստանը XX դարի սկզբներում, հղի էր բուրժուական հեղափոխությամբ։ Մարքսը «Կոմունիստական Մանիֆեստում» այն ժամանակ գրում էր թե՝

«Կոմունիստներն իրենց ուշքը գլխավորապես Գերմանիայի վրա յեն ուղղում, վորովհետև Գերմանիան բուրժուական հեղափոխության նախորյակին է կանգնած, և վորովհետև այդ հեղաշրջումը տեղի պիտի ունենա ընդհանուր յեվրոպական քաղաքակրթության ավելի առաջադեմ պայմաններում և գլուխ բերվի շատ ավելի զարգացած պրոլետարիատի ձեռքով, քան XVII դարում Անգլիայում և XVIII դարում՝ Ֆրանսիայում, ուստի և գերմանական բուրժուական հեղափոխությունը կարող է պրոլետարական հեղափոխության անմիջական նախերգանքը դառնալ։

Այլ կերպ ասած՝ հեղափոխական շարժման կենտրոնը տեղափոխվեց Գերմանիա։

Դժվար թե կարելի լինի կասկածել, հենց այն հանգամանքը, վոր նկատել է Մարքսը վերը բերած ցիտատում—հավանական պատճառ է ծառայել այն բանի, վոր Գերմանիան դարձավ գիտական սոցիալիզմի հայրենիքը, իսկ գերմանական պրոլետարիատի ղեկավարները՝ Մարքսը և Ենգելսը—նրա ստեղծագործողները։

Նույնը պետք է ասել նաև, բայց ավելի մեծ չափով, XX դարի սկզբի Ռուսաստանի մասին։ Ռուսաստանը այդ ժամանակաշրջանում գտնվում էր բուրժուական հեղափոխության նախորյակին, նա պետք է իրականացներ այդ հեղափոխությունը Յեվրոպայում յեղած ավելի արագ դրեսսիվ պայմաններում և ավելի զարգացած պրոլետարիատով, քան Գերմանիան էր (չխոսելով արդեն Անգլիայի և Ֆրանսիայի մասին), ըստ վորում բոլոր տվյալներն ասում էին, վոր այդ հեղափոխությունը պետք է լինի պրոլետարական հեղափոխության նախերգանքը։ Չի կարելի պատահականություն համարել այն փաստը, վոր 1902 թվին, յերբ ռուսական հեղափոխությունը մեկ սկիզբ էր առնում՝ Լենինը գրում էր «Ի՞նչ անել» աշխատության մեջ իր մարգարեական խոսքերն այն մասին, վոր «պատմությունը ռուս մարքսիստների առաջ դրել է ամենամոտ մի խնդիր, վորն հանդիսանում է բոլոր յերկրների պրոլետարիատի ամենամոտակա խնդիրներից ամենահեղափոխականը, վոր այդ խնդրի իրականացումը՝ և վոչ միայն յեվրոպական, այլև ասիական ամենառեակցիոն պատվարի խորտակումը, ռուս պրոլետարիատին կդարձնի միջազգային պրոլետարիատի ավանգարդը»։

Այլ կերպ ասած՝ հեղափոխական շարժման կենտրոնը պետք է տեղափոխվեր Ռուսաստան։

Հայտնի է, վոր հեղափոխության ընթացքը Ռուսաստանում Լենինի այդ նախագուշակումը ավելի քան արդարացրեց։

Դրանից հետո զարմանալի՞ է, արդյոք, վոր մի յերկիր, վորը կատարեց այդպիսի հեղափոխություն, ունենալով այդպիսի պրոլետարիատ—պրոլետարական թեորիայի և տակտիկայի հեղափոխական հայրենիքը դարձավ։

Զարմանալի չե, արդյոք, վոր այդ պրոլետարիատի առաջնորդը՝ Լենինը, դարձավ միևնույն ժամանակ այդ թեորիայի և տակտիկայի ստեղծագործողը ու միջազգային պրոլետարիատի առաջնորդը։

(Ի. Ստալին։ «Լենինի և Լենինիզմի մասին», էջ. 32—38)

Ե. ԻՆՉՈՒ ՌՈՒՍԱԿԱՆ ՑԵՐԿՐՈՐԴ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԴԱՌՆԱՐ

Ի՞նչ բան է սոցիալիստական հեղափոխությունը։

Սա ըստ էության նշանակում է՝ արտադրության անցումը բանվորների ձեռքը։ Ռուսական հեղափոխության ամբողջ իմաստը կայանում է նրանում, վոր պրոլետարիատը դուրս չեկավ պատերազմի պատճառով քայքայվող ռուսական ժողովրդական տնտեսությունը պաշտպանելու։ Բայց նրանից հանդես չեկավ սոցիալիստական հեղափոխության փաստը, հանդես չեկավ օբյեկտիվորեն։ Սոցիալիստական հեղափոխությունը Լենինը չբերից իր գլխով արտասահմանից։ Բանը բոլորովին կոնկրետ եր, քան թե կարող եր լինել։ Ահա 1917 թ. մայիսի 30-ին գործարանային կոմիտեի առաջին կոնֆերանսում մի պատգամավորի արտասանած ճառից մի քաղվածք։ «Փետրվարյան և մարտյան օրերին,— ասաց բանվոր Վորոնովը,— բանվորները թողին իրենց դյուզդյահները և դուրս չեկան, վորպեսզի միանգամ ընդմիշտ վերջ տան բազմագլխյան ոճ ցարիզմին։ Գործարանները կանգ առան։ Հետո մի երկու շաբաթ անց բանվորական մասսան նորից վերադարձավ գործարանները։ Ցնկան և տեսան, վոր վարչական մարմինները շատ ձեռնարկություններ բախտի քմահաճույքին են թողել։ Պետք չեղավ այդ գործարաններում աշխատանքները սկսել առաց վարչական մարմինների։ Բայց ինչպես։ Ցնվ այդտեղ գործարաններն անմիջապես անցան գործարանային կոմիտեների ընտրությունների, վորոնց ոգնությամբ գործարաններում սկսվեց նորմալ կյանք հաստատվել»։

«Հետո հեղափոխությունը իր հունի մեջ մտավ և ավելի հանգիստ անցավ։ Փախստականները տեսան, վոր բանվորները արդեն այնքան էլ արյունռուշտ չեն։ Ճնվ սկսեցին վերադառնալ։ Նրանցից մի մասին, մի չնչին մասին, անհաւսալի հետադիմականներին՝ բանվորները աշխատանքի չթողին։ Մնացածներին թույլատրեցին, բայց հենց այդ տեղ գործարանային կոմիտեի անդամներից նրանց ոգնականներ նշանակեցին։ Ցնվ այսպիսով փաստացի կանտրոլ հաստատվեց այն բոլորի նկատմամբ, ինչ վոր գործարանում կատարվում եր»։

Արտադրության անցումը բանվորական մասսաների կանտրոլին սկզբում տարերային կերպով տեղի ունեցավ. վորովհետև գործարանները կանգնում եյին, իսկ բանվորները չեյին ուզում, վոր նրանք կանգ առնեն։ Սա մի դեպք չեր, սա յերկարատև պայքար եր, յերկարատև պրոցեսս եր 17 թվականի ամբողջ ամառվա ընթացքում։ Գործարանատերերը նախատեսել եյին պատերազմի վերջը, տեսան, վոր պատերազմը տարերային կերպով վերջանում է, իսկ պատերազմը, ինչպես գիտեք, վաճառման գլխավոր շուկան է։ Դրա համար էլ նրանք աշխատում են արտադրությունը կրճատել և գործարանները կոնսերվացիայի յենթարկել, վորպեսզի ավելի լավ որեր գան և հետո նորից ամբողջ ընթացքով սկսեն արտադրել, յերբ, այսպես ասած, ամեն ինչ կարգի կընկնի, այսինքն՝ ըստ իրենց հասկացողության, յերբ հեղափոխությունը կդադարի։ Ցնվ բանվորները ստիպված յեղան նորից մեջ մտնելու, վորպեսզի արտադրությունը շարունակվի, վորպեսզի գործարանատիրոջ խանգարեն արտադրությունը դադարեցնելու։

Այսպիսով Փետրվարյան հեղափոխությունը վոչ միայն բանվորական հեղափոխություն եր, վոչ միայն պրոլետարական հեղափոխությունն եր ըստ այն մասսայի կազմի, վորը ինքնակալությունը տապալեց և փաստացի իշխանության գլուխն անցավ, այլ և անխուսափելիորեն սոցիալիստական հեղափոխություն եր, կատարյալ օբյեկտիվություն։ Կրկնում եմ, վոչ թե Լենինը իր գլխուժն ունենալով այդ սոցիալիստական հեղափոխությունը արտասահմանից բերեց, այլ Լենինի հանճարեղ գլուխը միայն ավելի լավ և բոլորից շուտ ըմբռնեց դրությունը, հասկացավ, վոր նման պայմաններում, բացի ամբողջ տնտեսական պրոցեսը պրոլետարիատի ձեռքն անցնելուց, այսինքն սոցիալիստական հեղափոխությունից, ինչպես մենք այդ հասկանում ենք, ուրիշ բան լինել չեր կարող և ուրիշ մի բան անել չեր կարելի, վոր ժամանակի օբյեկտիվ պայմանները թելադրում են հենց այդ սոցիալիստական հեղափոխությունը։ Ցնվ Լենինը պետք և պայքար մղեր այդ հեղափոխության ոգտին, վոչ թե ինչ վոր մասսաների դեմ (այդ մասսաները գտնվեցին բավական ժամանակ հետո մեր կուլակային ծայրամասերում, ինչպես Դոնի շրջանում, Կուբանում, Սիբիրում և այլն), այլ պետք և մղեր ինտերվենցիայի դեմ, վորն սկզբում Միլյուկովին եր ինտրունիզեր անում, իսկ յերբ Միլյուկովը տապալվեց, սկսեց միևնույն տեղում կանգնած ճնալ. ինքը չեր ուզում նստել, ուրիշին էլ թույլ չեր տալիս։ Մի շատ բնորոշ դեպք տեղի ունեցավ. յերբ մենշևիկները առաջին գումարման կենտրոնական Գործադիր Կոմիտեում մեծամասնություն ստացան, իշխանությունը չվերցրին, այլ կեռենսկու գլխավորությամբ կառավարություն կազմեցին։ Այդ փաստը, յերբ մարդիկ մեծամասնություն ունենալով հանդերձ չհամարձակվեցին իշխանությունը վերցնել, չափազանց բնորոշ և և նշանակալից այդ հեղափոխայի համար։ Պարզ և, վոր մի ուրիշ իշխանություն պետք և գար,

վորն իր վրա կվերցներ կատարվող դեպքերի ամբողջ պատասխանատվությունը, վորը կհամարձակվեր անվանելու այն, ինչ վոր յերկրում տեղի յե ունենում, այսինքն սոցիալիստական հեղափոխություն։ Այդ իշխանությունը իրականացրեց հենց մեր կոմունիստական կուսակցությունը։

(Մ. Գալկովսկի—«19 և 20-րդ դարերի հեղափոխ. շարժման պատմությունը», ուրվագծեր», 1924 թ. էջ 221—223)։

«ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲՈԼՈՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ, ԱՌԱՆՑ ԱԶԳՈՒԹՅԱՆ ԽՏՐՈՒԹՅԱՆ—ԹՈՒՐՔԵՐԻՆ, ՀԱՅԵՐԻՆ, ՎՐԱՑԻՆԵՐԻՆ ՅԵՎ ՌՈՒՍՆԵՐԻՆ—ԲԱԳՎԻ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԿՈՂՄԻՑ.

(Բագվի ժողովրդական կոմիսարների կոչը)

Ընկեր բանվորներ և գյուղացիներ.

Տասնևհինգ ամիս առաջ սկսվեց ռուսական հեղափոխությունը։ Սկզբի շրջանում ամբողջ Ռուսաստանում իշխանությունն ընկավ կալվածատերերի ու բուրժուազիայի ձեռքը, վորոնք շարունակում եյին ցարական հին քաղաքականությունը։ Սրանց ոգնում եյին կեղծ սոցիալիստները, կերենսկիները, Ծերեթելիները, Չխեյձեները և ուրիշները։

Սակայն Ռուսաստանում բանվորներն ու գյուղացիները շուտով ճանաչեցին իրենց թշնամիներին ու ձգեցին նոր շղթաները, վորոնցով դրանց պատել եյին հանուն ազատության Ռուսաստանից արտաքսված վրաց ազնվականներ Ծերեթելին, Չխեյձեն, Չխենկելին հատատավեցին Անդրկովկասում և միանալով Թուրք բեգերի ու խաների, նաև հայ ազգայնականների՝ դաշնակցականների հետ՝ դատապարտելի ու դավաճանական քաղաքականություն սկսեցին տանել Անդրկովկասի աշխատավոր զասակարգերի նկատմամբ։

Գյուղացիներին հող տալու փոխարեն՝ իրենց համար զինված ուժեր, ազգային գնդեր կազմակերպեցին և ուղարկեցին դրանց գյուղացիներին ճնշելու։ Բանվորների դրությունը բարելավելու փոխարեն՝ դրանք Թիֆլիսում գնդակահարում եյին նրանց խաղաղ միտինգները։

Անդրկովկասում սեյմ կազմակերպվեց, վորը նույն դավաճան ու խայտառակ քաղաքականությունն սկսեց գործադրել բոլոր ազգերի աշխատավորության վերաբերյալ։ Այս քաղաքականության հետևանքով Անդրկովկասում իշխանության գլուխն անցան Թուրք բեյակցիոն բեգերն ու նրանց արժանի յեղբայրակից Չխենկելին։ Վերջապես այդ քաղաքականության հետևանքով Անդրկովկասը բաժանվեց Ռուսաստանից, և յերկիրն ընկավ տաճիկների ձեռքը։ Իրենց սոցիալիստ հորջորջող մենշևիկները՝ փոխարեն իրենց բեգերի դեմ ապստամբող Թուրք գյուղացիության հետ կապվելու, այդ իսկ բեգերի հետ համաձայնու-

թյուն կնքեցին, զինեցին և ուժեղացրին դրանց ու նրանց հետ միասին Անդրկովկասը ծախեցին տաճիկ փաշաներին։ Անդրկովկասից բաժանվելու խայտառակ արարքին մասնակցեցին նաև դաշնակցականները, բացատրելով իրենց այդ դավաճանությունը նրանով, թե իբր նրանց յերկյուղ եր պատճառում հայ ժողովրդի ապագան։ Այո, մենշևիկները վախենում եյին ուսաֆաթիստներից, դաշնակցականները՝ մենշևիկներից, իսկ ուսաֆաթիստները՝ դաշնակցականներից... Այդպես են նրանք իրենց արդարացնում։

Բայց թվում է թե վոչ սա, վոչ մյուս, վոչ յերրորդը չեն վախենում ժողովրդի բարկությունից, Անդրկովկասի բանվորներից, գյուղացիներից, վորոնց դրանք ծախեցին Տաճկաստանին։

Բագվի պրոլետարիատը առաջինը հայտարարեց իր համերաշխ լինելը Հոկտեմբերյան բանվորա-գյուղացիական հեղափոխության հետ և դեմ գնաց Անդրկովկասի կոմիսարիատին ու Սեյմին։ Բագվի պրոլետարիատը այժմ ևս բարձր է պահում Խորհրդային իշխանության դրոշակը և պատրաստ է կռվել ամբողջ Անդրկովկասի բանվորների ու գյուղացիության ազատության ու բախտավորության համար։

Ահա թե ինչու յեն այդքան ատում Բագվի պրոլետարիատին Թուրք բեգերն ու խաները և վրացի իշխանները Չխենկելիի և Չխեյձեյի գլխավարությամբ։ Ահա թե ինչու, յերբ Բաթումում սկսվեցին բանակցությունները Տաճիկ-Գերմանի ավազակների հետ, առաջին իսկ արտասանած խոսքը Բագվին վերաբերվեց։

Թուրք, հայ, վրացի, ռուս գյուղացի յեղբայրներ,—Անդրկովկասի բանվոր ընկերներ։ Մենք կոչ ենք անում ձեզ, քանի դեռ ուշ չե, ապստամբվեցեք Ձեր կեղեքիչների ու դավաճանների դեմ,—դուրս յեկեք Ձեր խաների ու բեգերի դեմ, նրանց լակեյների՝ մենշևիկների և դաշնակցության դեմ, վորը հայ գյուղացիության ամենակրիտիկական րոպեին այնքան ստոր կերպով հանձնեց իր դիրքերը։

Յեղբայրներ և ընկերներ.

Բագվի բանվորները առանց ազգի խտրության—ռուս, հայ, Թուրք, վրացի, պատրաստ են մեռնել զենքը ձեռքերին, բայց պետք է կռվեն իրենց ներքին և արտաքին կեղեքիչների դեմ, պետք է պաշտպանեն բանվորների և գյուղացիների ազատությունը։

Գյուղացի յեղբայրնե՛ր և մասնավորապես Թուրք գյուղացիներ։ Ձեզ ենք ուղղում մենք մեր խոսքը։ Ձեզ մոլորեցնում են ձեր բեգերն ու խաները և նրանց լակեյները՝ նրանց ազնվական մենշևիկները, իբր թե Բագվի բանվորները Թուրք ժողովրդի թշնամիներն են։ Այո, մենք ձեր բեգերի ու խաների, ինչպես և մեր ռուս կալվածատերերի ու կապիտալիստների թշնամիներն ենք,—սակայն դուք, գյուղացիներդ, մեզ համար յեղբայրներ եք։ Ձիշտ է, Բագվում Թուրք չքավորներից զոհեր

են յեղել, բայց դրանք այն մութ մասսաներն են, վորոնց բեգերն ու խաները ժողովրդության մեջ գցելով, դուրս եյին բերել բանվորների խորհրդային իշխանության դեմ։ Մի հավասար այդ խաբեբաներին — մուսաֆթխաններին ու ժենշևիկներին, վորոնք հատոդում են ձեզ, թե տաճիկ զորքերին աջակցում են Բագու մտնել թուրք գյուղացիության պաշտպանելու։ Ինչո՞ւ յեն այդքան փափագում տաճիկների գալուն ձեր բեգերն ու խաները և վրացի իշխանները. չկարծեք թե այդպիսով նրանք կամենում են բարելավել թուրք և վրացի գյուղացիության վիճակը. ամենևին։ Տաճիկների տիրապետությունը կարող է միայն կալվածատերերին ոգտակար լինել, վորովհետև տաճիկները դրանց կաջակցեն նորից հետ խլելու հողը գյուղացիներից ու կսկսեն առաջվա պես ճնշել ու կեղեքել աշխատավոր ժողովրդին։ Տաճիկների տիրապետությունը — դա Անդրկովկասի կալվածատերերի հաղթանակն է լինելու ու միաժամանակ գյուղացիների ու բանվորների անկումը։

Բագվի պրոլետարիատը ձգտում է Անդրկովկասում նոր կառավարություն ստեղծել, ուր չեն լինելու վոչ բեգեր, վոչ իշխաններ և վոչ էլ հայ ազգայնականներ. դա լինելու յե բանվորների ու գյուղացինների խորհուրդների կառավարությունը։ Այդ կառավարությունը՝ ձեռք-ձեռքի տված Ռուսաստանի պրոլետարիատի ու գյուղացիության հետ՝ հնարավորություն կունենա պաշտպանել Անդրկովկասի և Ռուսաստանի միությունը, կջախջախի բոլոր ազգությունների կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը և յեղբայրություն կհաստատի Անդրկովկասի բանվորության ու գյուղացիության մեջ։

Դա ձեռնտու չեր, իհարկե, արյունարբու կալվածատերերին, և ահա նրանք կանչեցին տաճիկներին, բաժանեցին Անդրկովկասը հեղափոխական Ռուսաստանից, անխուսափելի դարձրին ազգամիջյան կոտորածը, կորստի սպառնալիքի տակ դրին ժողովրդին։

Գյուղացի յեղբայրներ ու ընկեր բանվորներ։

Թշնամին պինված գալիս է մեր դեմ. մենք կոչ ենք անում կեղեքիչների, բեգերի, իշխանների, վաճառականների միությանը հակադրել բոլոր ճնշված ազգությունների միությունը. վոտքի յելեք ձեր արյունարբու կեղեքիչների դեմ։

Ցեթե մենք ցրենք դավաճաններին և մեր ուժերը ժողովելով՝ յեղբայրական միություն հաստատենք, այլևս մեզ չի սարսափեցնի արտաքին թշնամին։

Դեպի զենք, թուրք, վրացի գյուղացի ընկերներ։ Դեպի զենք հայ գյուղացիներ.— դուք մի լսեք ձեր նախկին առաջնորդներին, վորոնք տագնապի ժամին դավաճանել են ձեզ և իրենց դատապարտելի քաղաքականությամբ կորստի յեն մատնել ամբողջ հայ ժողովուրդը։

Բագվի խորհրդի դեմ, Անդրկովկասի միակ ազատ անկյունի դեմ

վոտքի յեն կանգնել բոլոր մութ ուժերը։ Բագվի խորհրդի դրոշակը աշխատավորների ազատության ու յեղբայրության դրոշակն է. անցեք այդ դրոշակի տակ։

Կորչի Անդրկովկասի իշխանությունը.

Կորչեն բեգերը, խաները, իշխանները, կապիտալիստները։

Կեցցե բոլոր ազգությունների բանվորների ու գյուղացիների յեղբայրությունը։

Ամբողջ հողը գյուղացիներին, ամբողջ իշխանությունը աշխատավորներին։

Կորչի տաճկական լուծը, կեցցե միությունը Հեղափոխական Ռուսաստանի հետ։

1918 թ. վայիս։

(Ս. Շահումյան, «Ցերկերի ժողովածու», եջ 218—221)։

Կ.—ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲԱՅԼՇԵՎԻԿԱԿԱՆ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵԿԼԱՐԱՑԻԱ

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն հայտարարելու մասին.

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք.—

Հայաստանի Աշխատավորության.—

Ընկերներ.

Հայաստանի ապստամբ աշխատավոր ժողովրդի կամքով ու ցանկությամբ՝ Հայաստանի Կոմունիստական (բայլշևիկական) կուսակցությունը այսորվանից Հայաստանը հայտարարում է Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն։ Այսորվանից Խորհրդային Հայաստանի կարվիր դրոշակը պաշտպանելու յե նրա աշխատավոր ժողովրդին ճնշողների դարավոր լծից։ Անսահման ծանր է այն ժառանգությունը, վոր ծնում է հավիտենապես անհետացող ցարական կառավարությունից ազատագրված Հայաստանում։ Իր վոճրագործ քաղաքականությամբ նա յերեք տարվա ընթացքում վոչ միայն անընդհատ գանվեց յերկիրը խաղաղ վիճակի հասցնելու, վոչ միայն ժողովրդին չազատեց աղքատությունից ու կորուստից, այլ դեռևս ցարի քաղաքականության տասնյակ հազարավոր զոհերի թվին ավելացրեց անօթևան հայերի անթիվ անհամար գնդեր, վորոնք հուսահատ դրության հասած՝ չորս դին մահ ու անեծք եյին տարածում։ Քաղաքները ավեր, շենները ամայի ու անմարդաբնակ, յերկաթուղինները քարուքանդ, կանգ առած, ժողովրդի լավագույն զավակները սահմանավեճերի ու

ազգամիջյան ընդհարումների արդյունք անմիտ ու քմահաճ պատերազմներում սրախողխող, այն պատերազմներում, վորոնցով սնում ու անվում եր դաշնակցական կառավարությունը։ Վողբ ու կական, աղի արցունքներ են, վոր լսվում ու հոսում են Հայաստանի մի ծայրից մյուսը։ Ու այժմ, իրեն խնամակալ Անտանտայից աչքաթող, յերեսը ձգած Դաշնակցությունը, անարգ վախկոտությամբ, համարյա առանց կռվի ամբողջ յերկիրը հանձնելուց հետո, մի յերկու խղճուկ եսերնեջի ու եսդեկների միջոցով և ուզում փրկել իր որհասական դրությունը. Նա պատրաստ է ինչ գնով էլ լինի հաշտություն կնքել, միայն թե իր կաշին ազատել կարողանա։ Պարզ է, վոր հաշտությունը ժողովրդի, յերկրի շահերից չի բղխում։ Դաշնակցությունն է, վոր ուզում է, վիրապատ Հայաստանում իր իշխանության առյերևույթ տեսքը սեփական ձեռքերում պահել։ Բայց այդ իշխանությունն արդեն խլված է Դաշնակցությունից ապստամբ ժողովրդի կամքովը ու ցանկությամբ և նրան վերադարձ չկա։ Անհամար է ժողովրդի, բանվորության ու գյուղացիության շահերի դեմ կատարած վոճիրների թիվը. վորպիսի թավով են նրանք վառել աշխատավորության բուրժուա—նացիոնալիստական բնազդները, վորպիսի լպիրշ, բնույթ է կրել նրանց՝ Անտանտայի իմպերիալիստական ծրագրեերին աջակցելը։ Վորքան սրեր են ճոճել հարևանների հասցեին, ազգամիջյան կռիվներ առաջացնելով՝ Հայաստանի ժողովրդի արյունը քամել։

Յեվ վորքան ավանտյուրիստական և յեղել դաշնակցական Հայաստանի արտաքին քաղաքականությունը՝ վորն իր ապիկարությամբ ու վայրենի արտահայտություններով յերկիրը ամայացրել և, ավեր դարձրել։

Բոլոր ճնշված ժողովուրդների պաշտպանը—Ռուսաստանի Խորհրդային Իշխանությունը շատ անգամ և ցանկացել ազդել դաշնակցական կուսակցության վրա. նրան խլել Անտանտայի գիշատիչներից և այդպիսով հնարավորություն տալ դաշնակցականներից դիվահար բազմատանջ Հայաստանի աշխատավոր ժողովրդին ազատ շունչ քաշելու։ Բայց փոխանակ ցանկալի հետևանքների հասնելու, մենք տեսել ենք վոմանխատների նկատմամբ գործ դրած խաղությունների, կախաղանների ու գնդակահարությունների նորանոր քրքիջներ։ Ժողովրդական ցասման բռնկումը, որ մայիսին սասցավ համաժողովրդական ապստամբության բնավորություն, խեղդվեց արյան այն հեղեղներում, վորոնցից չեյին կշտանում գազանացած մասուզերիստները։ Մեր այդ ուրբնակը չունեցող կռվին, վոր մենք վարում եյինք, Հայաստանի կառավարիչներն Անտանտայի թելադրումով պատասխանեցին մի անասելի վակխանալիայով, վորի դեմ Խորհրդային Ռուսաստանը մինչև այժմ գալի աջակցություն չկարողացավ ցույց տալ, վորովհետև զբաղված

եր քաղաքացիական կռվի կարևոր ճակատներում. նրանք կլանում եյին նրա բոլոր ուժերը։ Լենտաստանի հետ կնքած հաշտությունը և ցարական վերջին գեներալ Վրանգելի աննման պարտությունը, այժմ ազատում են կարմիր բանակը։ Խորհրդային Ռուսաստանը այժմ ապրատամբ ժողովրդի հրավերով հնարավորություն ունի յեղբայրական ոգնություն ցույց տալու նրան ու Հայաստանը Անտանտայի գործակալների—դաշնակցական կառավարությունից փրկելու։

Նա այժմ հնարավորություն ունի յերկրի առողջ ուժերը հավաքելու, վերակենդանացնելու և Խորհրդային Հայաստանի խաղաղ աշխատանքի հիմքը դնելու։ Ազատ Խորհրդային Հայաստանի կարմիր դրոշակը հուսահատության ու. զառնությունների անդունդից դուրս կբերե նրա աշխատավոր զավակներին։ Հաղթական Ինտերնացիոնալի առաջին հնչյունների հետ ընդմիշտ կանհետանա Հայաստանում գոյություն ունեցող ցեղական ու ազգային պատակտումների ուրվականը և տեղի կտա ժողովուրդների յեղբայրության նրանց առորյա կյանքում։ Հայաստանի գյուղացիությունն իր ձեռքը կառնի ամբողջ հողը, վոր պատկանում եր մելիքներին՝ ու ինչպես և վանքապատկան, յեկեղեցապատկան ու մզկիթների սեփականություն համարվող հողերը։ Ժողովրդի ձեռքը կանցնեն անտառների հարստությունը, ջրերը, լճերն ու հանքերը—Հայաստանի աշխատավոր ազգաբնակության կարիքները բավարարելու համար։ Նույն նպատակով Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության սեփականություն կհայտարարվեն ավելի կամ պակաս ծավալի գործարաններ, վորոնց ստեղծող բանվորները կտիրանան ազատ աշխատանքի։ Մազութի պակասության պատճառով կանգ առած Հայաստանի յերկաթուղիները նորից կգործեն Ադրբեջանի Խորհրդային Իշխանության ոգնությամբ և կրկին կվերականգնվի ազատագրված Հայաստանի ընդհատված կապը։

Խորհրդային Ռուսաստանը մեզ յեղբայրական ոգնություն ցույց կտա հնարավոր չափով հաց ու ճոթեղեն հասցնելով։ Աշխատավոր ինտելլիգենցիան Խորհրդային Հայաստանին, նրա շինարարական գործին իր վորձով, ժամավոր ունակություններով աջակցություն, ժամանակցություն ցույց տալու կատարյալ հնարավորություն կստանա, անհապաղ ի չիք կհայտարարվեն Հայաստանի բոլոր պետական պարտքերը, Անտանտայի (մասնավորապես Ամերիկայի) պարտքերը, վոր դաշնակցական կառավարությունն ուզում եր քամել Հայաստանի բանվորից ու գյուղացուց։

Խորհրդային Հայաստանի Հեղափոխական Կոմիտեն ապահովված և յեղբայրական Խորհրդային Ադրբեջանի յերաշխիքով և խորապես հավատում է, վոր Հայաստանում Խորհրդային իշխանություն հաստատելով, ընդմիշտ վերանալու յեն այն վիճելի հարցերը, վորոնք պատճառ

են դարձել յերկու յերկրների բանվորների ու գյուղացիների արյան հեղեղներ թափվելուն։ Այս համոզմունքով մենք մեր հեղափոխական վողջույնն ենք ուղարկում Ադրբեջանի աշխատավոր ժողովրդին, Բագվի պրոլետարիատին, իբր Անդրկովկասի Սոցիալիստական Հեղափոխական առաջապահ գնդի, վողջույններ ենք ուղարկում նաև Ադրբեջանի Հեղափոխական Կոմիտեին։

Հայաստանի Հեղափոխական Կոմիտեն լի յե հավատով, վոր նա վայելելու յե նաև Տաճկաստանի աշխատավորության համակրանքը, այն ժողովրդի, վորն արդեն հասկացել է Անտանտայի դարավոր լծից ազատվելու անհրաժեշտությունը և վորը կոչված է Արևելքի հեղափոխականացման մեջ խոշոր դեր կատարելու։ Հավատում ենք, վոր իմպերիալիստական լծից ազատագրվող ժողովրդական Տաճկաստանը, մեզ ևս իր հետ Սևրի դաշնագրի հակառակորդ համարելով, մեզ յեղբայրական ձեռք և մեկնելու այժմ, յերբ մենք տապալեցինք մեր թշնամուն և նրա հետ միասին կռիվ ենք մղում Անտանտայի գիշատիչների դեմ։ Մենք համոզված ենք նաև, վոր վոչ թե հաղթողի սուրն է թելադրելու Խորհրդային Հայաստանի ու աշխատավորական Տաճկաստանի միջև կայանալիք հաշտության պայմանները, այլ Խորհրդային Հայաստանի ու աշխատավորական Տաճկաստանի ազատ ժողովուրդների յեղբայրական համերաշխությունն ու համաձայնությունը։

Ներկա ծանր պայմաններում ու լուրջ րոպեին ընդունելով իշխանության ամբողջ պատասխանատվությունը, մենք Հայաստանի ժողովրդական ուժերին կոչ ենք անում մեզ աջակցել բանվորա-գյուղացիական իշխանության թշնամիների դեմ կռվելու և կանչում Խորհրդային անդուլ ստեղծագործական աշխատանքի։

Կեցցե Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը։

Կեցցե յեղբայրական Խորհրդային Ադրբեջանը։

Կեցցե Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ, Խորհրդային Հանրապետությունը։

Կեցցե Կոմունիստական Յերրորդ Ինտերնացիոնալը։

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Հեղափոխական Կոմիտեյի Նախագահ՝ Ս. Կասյան։

ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա վ ե ս
Բեկզադյան Աղեքսանդր
Դովլաթյան Իսահակ
Մռավյան Ասքանազ
Տեր-Գաբրիելյան Իսահակ

1920 թ. նոյեմբեր 29
Ղազախ-Քարվանսարա։

Հ. ԲԱՑԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՏԱՔՏԻԿԱՆ.

Հեղափոխության ետապները յեվ ստրատեգիան։ Ստրատեգիան պրոլետարիատի գլխավոր հարվածի ուղղության վորոշումն է հեղափոխության տվյալ ետապի հիման վրա. նա հեղափոխական ուժերի (գլխավոր և յերկրորդական բեզերիների) դասավորման համապատասխան ծրագրի մշակումն է, այդ ծրագրի իրագործման համար մղվող պայքարն է հեղափոխության տվյալ ետապի ամբողջ ընթացքում։

Մեր հեղափոխությունն արդեն ապրել է յերկու ետապ և Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո թևակոխել է յերրորդ ետապը։ Դրա համար էլ փոխվում էր ստրատեգիան։

Առաջին ետապը։ *1903 թ.-մինչև 1917 թ. փետրվարը։* Նպատակն է՝ խորտակել ցարիզմը, ամբողջապես լիկվիդացիայի յենթարկել միջնադարի մնացորդները։ Հեղափոխության հիմնական ուժն է—պրոլետարիատը։ Մոտակա բեզերվը—գյուղացիությունն է։ Հիմնական հարվածի ուղղությունն՝ չեզոքացումը լիբերալ միապետական բուրժուազիայի, վոր աշխատում է տիրել գյուղացիությանը և լիկվիդացիայի յենթարկել հեղափոխությունը, համաձայնության գալով ցարիզմի հետ։ Ուժերի դասավորման ծրագիրը՝ բանվոր դասակարգի միությունն էր գյուղացիության հետ։ «Պրոլետարիատը մինչև վերջը պետք է հասցնի դեմոկրատական հեղաշրջումը, մրացնելով իրեն գյուղացիական մասսան, վորպեսզի ուժով խորտակի միապետության պիմադրությունը և չլսատի բուրժուազիայի անկայունությունը»։ (տես «Յերկու տակտիկա»)։

Յերկրորդ ետապ։ *1917 թ. մարտից մինչև 1917 թ. հոկտեմբերը։* Նպատակն է՝ խորտակել իմպերիալիզմը Ռուսաստանում և դուրս գալ իմպերիալիստական պատերազմից։ Հեղափոխական հիմնական ուժն է պրոլետարիատը։ Մոտակա բեզերվը՝ ամենաաղքատ գյուղացիությունը։ Հարևան յերկրների պրոլետարիատը՝ վորպես հավանական բեզերվ։ Յերկարացած պատերազմը և իմպերիալիզմի կրիզիսը՝ վորպես բարենպաստ մոմենտ։ Հիմնական հարվածի ուղղությունը չեզոքացումն է մանր բուրժուական դեմոկրատիայի (մենշևիկներ, եսերներ), վորն աշխատում էր գրավել գյուղացիության աշխատավոր մասսաները և վերջացնել հեղափոխությունը՝ իմպերիալիզմի հետ համաձայնության կնքելով։ Ուժերի դասավորման ծրագիրը պրոլետարիատի միությունն է ամենաաղքատ գյուղացիության հետ. «Պրոլետարիատը պետք է իրագործի սոցիալիստական հեղաշրջումը, միացնելով իրեն գյուղի կիսապրոլետարական տարրերի մասսան, վորպեսզի ուժով խորտակի բուրժուազիայի դիմադրությունը և չլսատի գյուղացիության և մանր բուրժուազիայի անկայունությունը»։ (տես նույն տեղը)։

Յերրորդ ետապ։ Նա սկսվեց Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո։

Նպատակն էր՝ ամրապնդել պրոլետարիատի դիկտատուրան մի յերկրում, ոգտագործելով նրան վորպես հենակետ՝ բոլոր յերկրների իմպերիալիզմի խորտակման համար։ Հեղափոխությունը դուրս է գալիս մի յերկրի սահմաններից, սկսվում է համաշխարհային հեղափոխության եպոխան։ Հեղափոխական հիմնական ուժերն են՝ պրոլետարիատի դիկտատուրան մի յերկրում, պրոլետարիատի հեղափոխական շարժումը մյուս յերկրներում։ Գլխավոր ըեզերվները՝ կիսապրոլետարական և մանրը-գյուղացիական մասսաներն են զարգացած յերկրներում, ազատագրական շարժումը գաղութային և կախում ունեցող յերկրներում։ Հիմնական հարվածն ուղղությունը չեզոքացումն է մանր-բուրժուական դեմոկրատիայի, II Ինտերնացիոնալի կուսակցություններին, վոր հանդիսանում են իմպերիալիզմի հետ համաձայնության կնքելու քաղաքականության հիմքը։ Ուժերի դասավորման ծրագիրը պրոլետարական հեղափոխության միությունն է գաղութների և կախում ունեցող յերկրների ազատագրական շարժումների հետ։

Ստրատեգիան գործ ունի հեղափոխության հիմնական ուժերի և նրա ըեզերվների հետ։ Նա փոխվում է համաձայն հեղափոխության անցմանը մի ետապից մի ուրիշը, բայց ես միայն անփոփոխ ելյալ ետապի ամբողջ ընթացքում։

Շարժման մակընթացությունն ու տեղատվությունը յեվ տակտիկան։ Տակտիկան պրոլետարիատի վարքագծի վորոշումն է շարժման մակընթացության կամ տեղատվության, հեղափոխության վերելքի կամ անկման համեմատաբար կարճ շրջանում. նա այդ վարքագծի իրականացման համար մղվող պայքարն է, պայքարի հին ձևերը և կազմակերպությունները, հին լոզունգները նորերով փոխարինելու միջոցով, այդ ձևերը զուգորդելու միջոցով և այլն։ Յեթե ստրատեգիան նպատակն է, ասենք, ցարիզմի կամ բուրժուազիայի դեմ վարած պատերազմից հաղթող դուրս գալը, ցարիզմի կամ բուրժուազիայի դեմ ժողած պայքարը մինչև վերջ տանելը, ապա, տակտիկան իր առջև է դնում ավելի պակաս ելական նպատակներ, քանի վոր աշխատում է վոչ թե շահել պատերազմն ամբողջապես, այլ այս կամ այն ճակատամարտը, այս կամ այն ընձեռումը, հաջողակ կերպով իրագործել այս այս կամ այն կռիվը, այս կամ այն յելույթը, վոր համապատասխանում է կոնկրետ պայմաններին հեղափոխության ելյալ վերելքի կամ անկման շրջանում։ Տակտիկան ստրատեգիայի մի մասն է, վոր յենթակա է նրան և ոժանդակում է նրան։

Տակտիկան փոխվում է ըստ մակընթացության և տեղատվության։ Այն ժամանակ, յերբ հեղափոխության առաջին ետապի շրջանում (1903—17 փետրվար) ստրատեգիական պլանը մնաց անփոփոխ, տակտիկան փոփոխվեց մի քանի անգամ։ 1903—1905 թ. շրջանում

կուսակցության տակտիկան հարձակողական եր, վորովհետև հեղափոխության մակընթացություն կար, շարժումը դեպի վեր եր բարձրանում և տակտիկան այդ փաստից էլ պետք է յելներ։ Դրա համապատասխան պայքարի ձևերը հեղափոխական էին և համապատասխանում էին հեղափոխության մակընթացության պահանջներին։ Տեղական քաղաքական գործադուլներ, քաղաքական ցույցեր, ընդհանուր քաղաքական գործադուլ, դումայի բոյկոտ, ապստամբության հեղափոխական-մարտական լոզունգներ—այդպես էին իրար հաջորդող այդ շրջանի պայքարի ձևերը։ Պայքարի ձևերի համեմատ այն ժամանակ փոփոխվեցին և կազմակերպության ձևերը։ Ֆարբրիկա-գործարանային կոմիտեներ, գյուղացիական հեղափոխական կոմիտեներ, գործադուլային կոմիտեներ, բանվորական ներկայացուցիչների խորհուրդներ, քիչ թե շատ բացահայտ բանվորական կուսակցություն—ահա այսպես էին այդ շրջանի կազմակերպության ձևերը։ 1907—1912 թվականների շրջանում կուսակցությունն ստիպված եր դիմել նահանջի տակտիկային, քանի վոր մենք այն ժամանակ ականատես էինք հեղափոխական շարժման անկմանը—տեղատվությանը, և տակտիկան չեր կարող հաշվի չառնել այդ փաստը։ Դրան համապատասխան փոխվեցին նաև պայքարի ձևերը։ Դումայի բոյկոտի փոխարեն՝—մասնակցություն դումայում, բացարձակ արտադումայական հեղափոխական յելույթների փոխարեն—դումայական յելույթներ և դումայական աշխատանք, ընդհանուր քաղաքական գործադուլների փոխարեն—մասնավոր տնտեսական գործադուլներ, կամ թե ավելի պարզ, ժամանակավոր դադար։ Հասկանալի յե, վոր կուսակցությունն այդ շրջանում պետք է ընդհատակ անցներ, իսկ մասսայական հեղափոխական կազմակերպությունները փոխարկվեին քաղ-լուսավորական, կոոպերատիվ, ապահովագրական և այլ օրինական կազմակերպությունների։

Նույնը պետք է ասել նաև հեղափոխության յերկրորդ և յերրորդ ետապների մասին, վորոնց ընթացքում տակտիկան փոխվեց միքանի ետապյակ անգամ, այն ինչ ստրատեգիական ծրագիրները մնացին անփոփոխ։

Տակտիկան գործ ունի պայքարի ձևերի և պրոլետարիատի կազմակերպությունների հետ. նրանց փոփոխման, նրանց զուգորդության հետ։ Ելյալ ետապի հիման վրա տակտիկան կարող է փոխվել միքանի անգամ՝ հեղափոխության մակընթացության ու տեղատվության, վերվերելքի և անկման համաձայն։

(Ստալին. «Լենին և Լենինիզմի մասին». եջ. 135—140)։

Զ. ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՑՎՈՒՄ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Դիկտատուրան իրագործում է խորհուրդներում կազմակերպված պրոլետարիատը, որին ղեկավարում է բայլշևիկների կոմունիստական կուսակցությունը... Մեր հանրապետության մեջ ոչ մի կարևոր քաղաքական կամ կազմակերպչական հարց չի վճռվում որևէ պետական հիմնարկի կողմից առանց կուսակցության ԿԿ ղեկավարող ցուցմունքների։

Կուսակցությունն իր աշխատանքի մեջ անմիջականորեն հենվում է արհեստակցական միությունների վրա, որոնք վերջին համագումարի (1920, IV) տվյալներով ունենք 4 միլիոնից ավելի անդամ և անկուսակցական են ձևականորեն։ Փաստորեն միությունների խոշորագույն մասի և առաջին հերթին, իհարկե, համառուսական ընդհանուր արհեստակցական կենտրոնի կամ բյուրոյի (ՀԱՄԿԽ—Համառուսական Արհեստակցական Միությունների Կենտրոնական Խորհուրդ) ղեկավար հիմնարկները բաղկացած են կոմունիստներից և անց են կացնում կուսակցության բոլոր դիրեկտիվները։ Ընդհանուրի և ամբողջի մեջ ոռացվում է ձևականորեն ոչ-կոմունիստական, ճկուն և համեմատաբար լայն, գերազանցորեն հզոր պրոլետարական ապպարատ, որի միջոցով կուսակցությունը սերտորեն կապված է դասակարգի ու մասսայի հետ, և որի միջոցով կուսակցության ղեկավարությամբ իրագործվում է դասակարգի դիկտատուրան։ Առանց արհեստակցական միությունների հետ ունեցած սերտ կապի, առանց նրանց ջերմ աջակցության, առանց նրանց ինքնազոհ աշխատանքի ոչ միայն տնտեսական, այլև ռազմական շինարարության մեջ, մենք, հարկավ, կառավարել կերկիրը և իրագործել դիկտատուրան չէինք կարող չե՛ք կերկու տարվա, այլ կերկու ամսվա ընթացքում...*

Մենք հերիք չենք համարում արհմիությունների միջոցով կապը «մասսաների» հետ։ Հեղափոխության ընթացքում գործնականը մեզ մոտ ստեղծել է, և մենք չանում ենք պաշտպանել, զարգացնել, ընդարձակել մի այնպիսի հաստատություն, որպիսին են բանվորական ու գյուղացիական անկուսակցական կոնֆերենցիաները, որպեսզի հաճախենք մասսաների տրամադրություններին, մոտենանք նրանց, պատասխանենք նրանց պահանջներին, նրանցից լավագույն աշխատավորներին առաջ քաշենք պետական պաշտոնի և այլն...

Հասկանալի է ապա, որ կուսակցության ողջ աշխատանքն ընթանում է խորհուրդների միջոցով, որոնք առանց զբաղմունքի խտրության միացնում են աշխատավոր մասսաները։ Խորհուրդների

* *Այժմ (1926 թ.) արհեստակցական միությունները մոտ 8 միլիոն անդամ ունեն։*

պալատական համագումարներն այնպիսի ռամկավար հաստատություններ են հանդիսանում, որոնց նմանը չեն տեսել բուրժուական աշխարհի ռամկավար հանրապետություններից լավագույնները, և այդ համագումարների միջոցով (որոնց կուսակցությունը չանում է խնամել ըստ հնարավորին ավելի ուշադիր), այլ և գիտակից բանվորներին զանազան պաշտոններով աշխատակից գյուղը գործուղելով, իրագործվում է պրոլետարիատի ղեկավարող դերը գյուղացիության նկատմամբ, իրագործվում է քաղաքի պրոլետարիատի դիկտատուրան, սիստեմատիկ պայքարն ընդդեմ հարուստ, բուրժուական, շահագործող և շահադետ (սպեկուլյատիվ) գյուղացիության և այլն։

Այդպիսին է պրոլետարական պետական իշխանության ընդհանուր մեխանիզմը, յեթե դիտելու լինենք «վերից», դիկտատուրայի իրագործման գործնականի տեսակետից։

(Վ. Ի. Լենին։ Ցերկերի ժողովածու, հ. XVII, եջ 138—140)։

Դ. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ՑԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Անցնում եմ հակասությունների հինգերորդ շարքին—այն հակասություններին, որ կան Խորհրդային Միության և կապիտալիստական աշխարհի միջև։ Հիմնականը այս բնագավառում նրա մեջ է կայանում, որ այլևս համապարփակ կապիտալիզմ չկա ամբողջ աշխարհում։ Նրանից հետո, ինչ լուսս աշխարհ է ընկել Խորհրդային յերկիրը, նրանից հետո, ինչ հին Ռուսաստանը Խորհրդային Միություն է դարձել—դրանից հետո ամբողջ աշխարհում համապարփակ կապիտալիզմ չկա։ Աշխարհը կիսվել է յերկու բանակի—իմպերիալիզմի բանակ և պայքարի բանակ իմպերիալիզմի դեմ։ Սա առաջինն է, ինչ պետք է նշել։

Յերկրորդը, ինչ պիտի յես նշեմ այդ բնագավառում, հանգում է նրան, որ կապիտալիզմի յերկրներին գլուխ են կանգնում յերկու հիմնական յերկիր—Անգլիան ու Ամերիկան—իրրև անգլո-ամերիկական միություն։ Դժգոհներին ու իմպերիալիզմի հետ ժահու պայքար մղողներին գլուխ է կանգնում մեր յերկիրը—Խորհրդային Միությունը։

Յերրորդը, ինչ յես պիտի նշեմ,—դա այն է, որ ստեղծվում են ձգողության յերկու հիմնական, բայց հակադիր կենտրոններ և համապատասխան դրան ամբողջ աշխարհում ձգողության յերկու ուղղություն դեպի այդ կենտրոնները՝ Անգլո-Ամերիկա—բուրժուական կառավարությունների համար և Խորհրդային Միություն—Արևմուտքի բանվորների և Արևելքի հեղափոխականների համար։ Անգլիան ու Ամերիկան գրավում են իրանց հարստությամբ, նրանցից կարելի յե վարկեր ստանալ։ Խորհրդային Միությունը գրավում է իր հեղափոխա-

կան փորձով, վոր կուտակել և բանվորներին կապիտալիզմից ու հաբատահարված ժողովուրդներին իմպերիալիզմից ազատագրելու պայքարի մեջ։ Ցես խոսում եմ Ցեվրոպայի բանվորների և Արևելքի հեղափոխականների մեր յերկրին նկատմամբ տածած ձգողության մասին։ Դուք գիտեք, թե ինչ և նշանակում յեվրոպական բանվորի կամ հարստահարված յերկրների հեղափոխականի համար այցելություն տալ մեզ, ինչպես են նրանք ուխտի գալիս մեզ մոտ, և ամբողջ աշխարհում բոլոր շիտակ ու հեղափոխական տարրերն ինչպիսի ձգողություն ունեն դեպի մեր յերկիրը։ Ցերկու բանակ, ձգողության յերկու կենտրոն։

Չորրորդը, դա այն է, վոր այդ բանակում, կապիտալիզմի բանակում, շահերի ու ձուլվածության միասնականություն չկա, վոր այնտեղ թագավորում է շահերի պայքար, փլուզում, պայքար հաղթողների ու պարտվողների միջև, պայքար բուն իսկ հաղթողների միջև, պայքար բոլոր իմպերիալիստական յերկրների միջև գաղութների համար, շահույթի համար,—և վոր այս բոլորի հանդեպ այդ բանակում ստաբիլիզացիան չի կարող ամուր լինել։ Ցեվ այն ժամանակ, յերբ մեր յերկրում ընթանում է առողջ ու զորացող ստաբիլիզացիան, մեր տնտեսության աճումը, մեր սոցիալիստական շինարարության աճումը, մեր ամբողջ բանակում մեր յերկրի պրոլետարիատի շուրջը տեղի ունի թե Արևմուտքի և թե Արևելքի բոլոր դժգոհ տարրերի ու շերտերի աստիճանական, անշեղ համախմբումը. նրանց համախմբումը Խորհրդային Միության շուրջը,—այնտեղ, կապիտալիզմի բանակում, անհամաձայնություն ու կազմալուծում է տիրում։ Այստեղ սոցիալիզմի բանակում, կուռ միություն և շահերի որավուր աճող միասնականություն ընդդեմ ընդհանուր թշնամու—ընդդեմ իմպերիալիզմի։

Ահա այն հիմնական փաստերը, վորոնք յես կամեցա նշել հինգերորդ շարքի հակասությունների բնագավառից—հակասություններ կապիտալիզմի աշխարհի ու խորհուրդների աշխարհի միջև։

(Ի. Ստալին.—կդ. քաղաքական հաշվետվությունը Համկ (բ) XIV համագումարին)։

ԾՐԱԳԻՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ (19 ՅԵՎ 20-ՐԴ ԴԱՐԵՐ)

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.

Ռուսաստանն արդյունաբերական կապիտալիզմի զարգացման նախորյակին.

1. Ազնվական դասակարգի տիրապետող դերը։
2. Ազնվականության իրավունքը գյուղում և գյուղացիության դրությունն այդ տիրապետության պայմաններում։
3. Ֆեոդալիզմի քայքայման սաղմերը։
4. Առևտրական կապիտալի զարգացման ուղին։
5. Ռոմանովների իշխանությունը և առևտրական կապիտալը։
6. Գյուղացիական շարժումներն առևտրական կապիտալիզմի ծաղկման պայմաններում։
7. Ստեփան Ռազինի ապստամբությունը և պատճառները։
8. Պուգաչովշչինա։ Գյուղացիության դրությունը 18-րդ դարի վերջերին։
9. Պուգաչովի ապստամբության սոցիալական հիմքը։
10. Ապստամբության անհաջողությունը և դրա պատճառները։ Պարտության հետևանքները։

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ.

Արդյունաբերության զարգացումը և ազնվական-բուրժուական ռեակցիան 19-րդ դարի առաջին կեսին։

1. Արդյունաբերական կապիտալիզմի զարգացման առաջին քայլերը։
2. Արդյունաբերական հեղաշրջումն Անգլիայում և նրա ազդեցությունը Ռուսաստանում։
3. Արդյունաբերության դրությունը 19-րդ դարի առաջին կեսին։
4. Գյուղացիական խռովություններն 19-րդ դարի կեսին։
5. Ազնվական-բուրժուական ռեակցիան. դեկաբրիստներ։
6. Ինտելիգենցիան և բուրժուազիան։ Ինտելիգենցիայի սպառնալիքները։
7. Դեկաբրիստների աշխարահայացքը և տակտիկան։
8. 1825 թ. դեկտեմբերի 14 ը
9. Անհաջողության պատճառները։
10. Նիկիտա Մուրավյովի և Պ. Ի. Պեստելի առաջադրած ծրագրերը։

ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ.

Կապիտալիզմի զարգացումը գյուղացիական ռեֆորմից հետո։

1. Գյուղացիությունը 1871 թ. փետրվարի 19-ի ռեֆորմից հետո։
2. Ռեֆորմի եությունը։ Նրա դասակարգային բնույթը։
3. Գյուղացիության շերտավորումը և ագրարային հարցի եությունը ռեֆորմից հետո։
4. Կապիտալիզմը հողագործության մեջ։

5. արդյունաբերության զարգացումը գյուղացիական ռեֆորմից հետո։ Ցերկաթուղային և գործարանային շինարարություն։
6. Ճորտատիրական պետությունը կապիտալիզմի զարգացման պայմաններում։
7. Ցարական կառավարությունը յեվ բուրժուազիան։
8. Ցարական կառավարության արտաքին քաղաքականությունն իրեվ արտահայտություն ցարիզմի և բուրժուազիայի միության։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ.

Հեղափոխական նարոդնիկություն.

1. Մանր-բուրժուական հեղափոխական շարժումները 1860—1870. ական թվականներին։
2. Ինտելիգենցիայի տրամադրությունը 60-ական թվականներին։
3. Մանր-բուրժուական սոցիալիզմ և նրա հիմնական կողմերը։
4. «Վելիկոռուս» և «Կոլոկոլ»։
5. «Յերիտասարդ Ռուսաստանի» տնտեսական և քաղաքական ծրագիրը։
6. Նարոդնիկության հյությունը և «Նարոդնայա-Վոլիայի» գործադիր կոմիտեյի ծրագիրը։
7. Բունտարական շարժումը 70-ական թվականներին։
8. Բակունինի դերը ռուսական հեղափոխության մեջ։
9. «Ժողովրդի մեջ մտնելը»։
10. 70-ական թվականների նարոդնիկական շարժման բնութագիրը։—

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

Ռուսաստանի բանվոր դասակարգի պայքարը 70-ական թվականներին և նրա առաջին հեղափոխական-քաղաքական կազմակերպությունները։

1. 70-ական թվականների ընդհանուր բնութագիրը։
2. Բանվորների դրությունն արդյունաբերության զարգացման պայմաններում։
3. Բանվորական շարժումներ։ Արդյունաբերական կրիզիս։
4. 70-ական թվականների գործադուլները։
5. «Կազանի» ցույցը, այդ շարժման բնույթը։
6. Բանվոր դասակարգի առաջին կազմակերպությունները։
7. «Հարավ-Ռուսական բանվորական միությունը». նրա ծրագիրը։
8. «Ռուսական բանվորների հյուսիսային միությունը»։
9. 1870-ական թվականների բանվորական շարժման բնութագիրը։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ.

Մարքսիստական պրոպագանդայի սկիզբը Ռուսաստանում և առաջին մարքսիստական խմբակները։

1. Արդյունաբերական կրիզիսը 80-ական թվականներին և հետեվանքները։

2. Մարոզովյան ստաչկան իրրև կազմակերպված բանվորության շարժում։
3. Առաջին մարքսիստական խմբակները։
4. Մարքսիզմի հիմնական հարցերը, նրա տարածման պայմանները 19-րդ դարի վերջերին։
5. «Աշխատանքի ազատագրում» խմբակը, նրա ծրագիրը։
6. Գ. վ. Պլեխանովի կյանքն ու գործունեությունը։
7. Նարոդնիկություն թե մարքսիզմ։
8. 90-ական թվականների արդյունաբերական վերելքը։
9. Պրոլետարիատի հեղափոխական կազմակերպությունների աճումը։
10. Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միությունները։
11. Վ. Ի. Լենինի կյանքն ու գործունեությունը։
12. Բանվորական շարժման բնույթը 90-ական թվականներին և «Միություններին» դերն այդ պայմաններում։
13. Ռ. Ս. Դ. Բ. Կ. առաջին համագումարը և վորոշումները։

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ.

Ռուսաստանն առաջին հեղափոխության նախորյակին։

1. 20 րդ դարի սկզբի արդյունաբերական կրիզիսը։
2. Գործադուլային շարժման նոր վերելքը և կառավարության փորձերն իր ձեռքը վերցնելու բանվորական շարժումը։
3. Ռուս հասարակության քաղաքական ոպոզիցիայի աճումը միապետության դեմ։
4. Զուբատովշչինա։
5. Ռուս—յապոնական պատերազմը և նրա տնտեսական քաղաքական բնույթը։
6. 1905 թ. հունվարի 9-ը։
7. Ռ. Ս. Դ. Բ. Կ. բռնած դիրքը հունվարյան շարժումներին։
8. Ռ. Ս. Դ. Բ. Կ. յերկրորդ համագումարը և տարաձայնությունները համագումարում։
9. «Իսկրան» և եկոնոմիզմը։
10. Վ. Ի. Լենինի դերը պրոլետարիատի կուսակցության կազմակերպման և հեղափոխության նախապատրաստման գործում։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ.

Ռուսական առաջին հեղափոխությունը։

(Հեղափոխության առաջին հատվածը)

1. Գործադուլները առաջին հեղափոխության ժամանակ.
2. Գյուղացիական շարժումները 1905 թ. հեղափոխության ժամանակ և նրանց բնույթը։
3. Հեղափոխական շարժումը նավատորմում։
4. Ցարական կառավարության քաղաքականությունը հանդեպ զարգացող դեպքերի։

5. «Բուլիգինյան» դումայի և քաղաքական կուսակցությունների դիրքը այդ խնդրում։
6. Հոկտեմբերի 17-ի մանիֆեստի էությունը։
7. Առաջին բանվորական պատգամավորների խորհուրդները, նրանց դերը հեղափոխության խորացման պայմաններում։
8. Բայլշևիկների դերը և տաքտիկան հեղափոխության առաջին ետապի ժամանակ.
9. Կուսակցության յերրորդ համագումարի վորոշումները.
10. Ջինված ապստամբություն և հեղափոխական կառավարություն կազմելու հարցադրումը։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ.

1905 թ. հեղափոխության յերկրորդ ետապը

1. Հեղափոխության առաջին հաղթանակը։
2. Համառուսական քաղաքական գործադուլը։
3. Դեկտեմբերյան ապստամբությունը Մոսկվայում և դասերը։
4. Կառավարության հակահարձակումը և ռեյակցիան ամբողջ գծով։
5. 1905 թ. հեղափոխության պարտության պատճառները և դասերը։
6. 1905 թ. հեղափոխությունը և Լենինը։
7. Ընկ. Տրոցկու դիրքը 1905 թ. հեղափոխության ժամանակ. պերմանենտ հեղափոխության թեորիան։
8. «Պերմանենտ հեղափոխության» թեորիայի գնահատականը և ընկ. Լենինի պայքարն ընդդեմ այդ թեորիայի։
9. 1905 թ. հեղափոխությունն Անդրկովկասում։

ԳԼՈՒԽ ՏԱՍԵՐՈՐԴ.

Ռուսաստանը 1905 թ. հեղափոխությունից հետո։

1. Արդյունաբերության զարգացումը 1905 թ. հեղափոխությունից հետո։
2. Ստալիպինյան քաղաքականության դասակարգային բնույթը։
3. Կապիտալիզմի նորագույն ետապի՝ իմպերիալիզմի ժամանակաշրջանի բնութագիրը։
4. Ռուսական իմպերիալիզմը և նրա բնորոշ կողմերը։
5. Բանվորական շարժումը 1905 թ. հեղափոխությունից հետո։
6. Մենշևիկյան լիկվիդատորության հիմնավորումը, իբրև հետևանք ռեյակցիայի։
7. Ռ. Ս. Դ. (բ) Կ. խնդիրները ռեյակցիայի տարիներին։
8. Բանվորական շարժման նոր վերելքը։
9. Լենայի ցույցերը և նրա տպավորությունը մյուս շրջաններում։
10. Իմպերիալիզմը և համաշխարհային պատերազմը։
11. Պատերազմը և յերկրորդ ինտերնացիոնալը։ Ցիմմերվալդյան «ձախը»։
12. Համաշխարհային պատերազմից դեպի քաղաքացիական պատերազմ։ Բայլշևիկները տվյալ մոմենտում։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ.

Ռուսաստանի յերկրորդ (փետրվարյան) հեղափոխությունը։

1. Բանվորական շարժումը և մասսաների տրամադրությունը Պետրոգրադում հեղափոխության նախորյակին։
2. Պատերազմի և ցարական կառավարության քաղաքականության հետևանքները Ռուսաստանում։ Արտադրական ուժերի քայքայում։
3. Փետրվարյան հեղափոխության դեպքերը և հեղափոխության պատճառները։
4. Ռուսաստանի նոր կառավարությունը և պրոլետարիատի խնդիրները։
5. Բանվորական պատգամավորների խորհրդի կազմն ըստ կուսակցությունների և նրա գիծը հեղափոխության առաջացրած հարցերի նկատմամբ։
6. Հուլիսյան օրերը և դասերը։
7. Ժամանակավոր կառավարության սոցիալ-քաղաքական ծրագիրը։
8. Կորնիլովի ապստամբությունը և զինվորական ռեյակցիա։
9. Կուսակցությունների դիրքը տվյալ մոմենտում։
10. Բայլշևիկների տաքտիկան և ընկ. Լենինի դերը։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ.

Հոկտեմբերյան հեղափոխությունը.

1. Ագրարային շարժում և գյուղացիության սպասելիքները տվյալ հեղափոխությունից։
2. Ռ. Ս. Դ. Բ. Կ. (բ) համառուսական ապրիլյան կոնֆերանսի բանաձևերը և վորոշումները հեղափոխության բնույթի և տաքտիկայի տեսակետից։
3. Յերկիշխանությունը և նրա դասակարգային նշանակությունը։
4. Խորհուրդների խնդիրները տվյալ մոմենտում և մենշևիկների դիրքը։
5. Բայլշևիկների դերը տվյալ մոմենտում և ընկ. Լենինի դերը իշխանության գրավման խնդրում։
6. Հոկտեմբերի նախորյակին, հեղափոխության հետագա ընթացքը։
7. Մանր-բուրժուական կուսակցությունները և ժամանակավոր կառավարությունը։ Հակահեղափոխական հարձակում։
8. Պրոլետարական հեղափոխության իրականացման պայմանները։ Հոկտեմբերի 25-ի ապստամբությունը և իշխանության կազմակերպումը։
9. Հեղափոխության սոցիալիստական բնույթը և պրոլետարական դիկտատուրայի ըմբռնումը։
10. Բայլշևիզմի պատմական դերը։
11. Հոկտեմբերի գնահատականը և սոցիալիզմի կառուցման ուղիները Ռուսաստանում։
12. Կապիտալիստական աշխարհը և Խորհրդային Իշխանությունը։
13. Կոմինտերնի կազմակերպչական ձևավորումը։
14. Կոմինտերնի և II-ի ինտերնացիոնալի հիմնական տարբերությունները։
15. Կոմինտերնի դերը համաշխարհային բանվորական շարժման համախմբման գործում և միջազգային հեղափոխությունը։

Գ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐ ՊՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Մ. ՊԱԿՐՈՎՍԿԻ։—«Ռուսաց պատմություն», կրճատը 6-րդ հրատ. Ա. Բ. և Գ. մասերը, հայերեն։
2. ՎՈՅԼՖՈՒՆ։—«Հասարակագիտություն», ռուսերեն։
3. ԲԱԼԱԲԱՆՈՎ։—«Ռուսաստանի հեղափոխական շարժման պատմությունը», Ուկրաինայի պետհրատ, ռուսերեն։
4. Գ. Վ. ՊԼԵԽԱՆՈՎ։—«1825 թ. դեկտեմբերի 14-ը», Մոսկվա, 1925 թ. հայերեն։
5. Յե. ՅԱՐՈՍԼԱՎՍԿԻ և ուրիշ.—«Հ. Կկ. (բ) պատմությունը». հատ. 1-ին, ռուսերեն։
6. ՑՈՒ. ԼԱՐԻՆ։ «Գյուղացիական հարցեր և Ս. Դ.», ռուսերեն։
7. «Առաջին հեղափոխության շարժիչ ուժերը», քրեստոմատիա, հայերեն։
8. ԼՅԱՇՉԵՆԿՈ։—«Ուրվագծեր Ռուսաստանի ագրարային էվոլյուցիայից», հատ. 1-ն, ռուսերեն։
9. ՎԱԼ. ՖԵՅԴԵՐ.—«Դասակարգային պայքարի պատմության քրեստոմատիա»։ Հրատ. «Պրիբոյ», 1924 թ. ռուսերեն։
10. Բ. Պ. ԿՈԶՄԻՆ ՅԵՎ ՇԵՍՏԱԿՈՎ.—«Պատմա-հեղափոխական քրեստոմատիա». 1923 թ.. Մոսկվա, ռուսերեն։
11. ԿՐԱՊՈՏԿԻՆ.—«Հեղափոխականի հուշեր», մասն 4-րդ, ռուսերեն։
12. Մ. Ն. ՊԱԿՐՈՎՍԿԻ.—«19 և 20-րդ դարերի հեղափոխական շարժման պատմությունը Ռուսաստանում», ռուսերեն։
13. Վ. Ի. ԼԵՆԻՆ։—«Տուգանքների մասին», ռուսերեն։
14. Վ. Ի. ԼԵՆԻՆ։—«Յերկ. ժողովածու», ոգտագործել բոլոր հատորները, համաձայն քրեստոմատիայում հիշվա ծպլուխների։ Ռուսերեն։
15. ԼԵՇՉԻՆՍԿԱՅԱ.—«Ստեփան Խալտուրինի կյանքը», հայերեն։
16. Վ. Ի. ԼԵՆԻՆ։—«Մարքսի և Մարքսիզմի մասին». Մոսկվա, հայերեն, 1924 թ.
17. Կ. ՄԱՐՔՍ և Ֆ. ԵՆԳԵԼՍ։—«Կոմունիստական մանիֆեստ», հայերեն
18. Դ. ՌՅԱԶԱՆՈՎ.—«Գ. Վ. Պլեխանովը և «Աշխատանքի ազատագրում խմբակը», ռուսերեն։
19. Վ. ՎԱՐՈՎՍԿԻ.—«Ռուսաստանի մարքսիզմի պատմության առթիվ», ռուսերեն։
20. «ԼԵՆԻՆՅԱՆ ԲՐԵՍՏՈՄԱՏԻԱ», ժողովածու, 1926 թ. պետհրատ՝ հայերեն։

21. Ն. Ն. ՊԱՊՈՎ և ՅԱԿ. Ա. ՅԱԿՈՎԼԵՎ.—«Լենին և լենինիզմ», հայերեն։
22. Գ. ԶԻՆՈՎՅԵՎ.—«Ռ. Կ. (բ). կուսակցության պատմությունը», հայերեն։
23. Լ. ՄԱՐՏՈՎ.—«Խոշոր արդյունաբերության զարգացումը և բանվորական շարժումը Ռուսաստանում»։ Հրատ. Ուկրաինայի պետհրատ, ռուսերեն։
24. ԲԵԼՈՈՒՍՈՎ։—«1905 թ. հեղափոխությունը, քրեստոմատիա», պետհրատ, հայերեն։
25. Վ. Ի. ԼԵՆԻՆ.—«Հունվարի 9-ը». հրատ. Հ. Կ. Կ. Կ. Ագիտ-բաժնի, Յերեվան 1926 թ. հայերեն։
26. Վ. Ի. ԼԵՆԻՆ։—«1905 թվի մասին», պետհրատ, 1905 թ. հայերեն։
27. ԲՈՒԽԱՐԻՆ։—«Ռուսաստանի Սոցիալ. դեմոկրատիայի պատմությունը», ուրվագիծ, 1922 թ., ռուսերեն։
28. Վ. Ի. ԼԵՆԻՆ.—«1905 թվի հեղափոխության մասին», հայերեն։
29. Ի. ՍՏԱԼԻՆ։—«Լենինի և լենինիզմի մասին», Մոսկվա, պետհրատ, հայերեն, 24 թ.
30. Յե. ՄԵԼԻՔ-ՅՈԼՉՅԱՆ.—«Հայաստանի բանվորական շարժման պատմությունը», Յերեվան, 1924 թ. հայերեն։
31. ՇԱՀՈՒՄՅԱՆ։ «Յերկերի ժողովածու», հ. 1-ին, հայերեն։
32. Վ. Ի. ԼԵՆԻՆ։ «Իմպերիալիզմն իբրև կապիտալիզմի նորագույն ետապ», հայերեն։
33. Վ. Ի. ԼԵՆԻՆ։ «Ազգային հարցը», ժողովածու, հայերեն։
34. ՈՑԼՄԻՆՍԿԻ։ «Զվեզդայի» և «Պրավդայի» եպոխայից, ռուսերեն։
35. ՇԼՅԱՊՆԻԿՈՎ։ «Տասնյոթերորդ տարին», ռուսերեն։
36. Վ. Ի. ԼԵՆԻՆ.—«Նամակներ հեռվից», Յերեվան, 1925 թ., հայերեն։
37. ՋՈՆ ՌԻԴ։ «Տասն որ, վոր ցնցեցին աշխարհը», Մոսկվա, հայերեն, 1925 թ.
38. Լ. ՏՐՈՑԿԻ։—«Հոկտեմբերյան հեղափոխություն», ռուսերեն։
39. Վ. Ի. ԼԵՆԻՆ։ Պետություն և հեղափոխություն», հայերեն։
40. « « «Պրոլետարական հեղափոխությունը և ռենեգատ Կաուցկին», հայերեն։
41. « « «Ձախության մանկական հիվանդությունը», հայերեն։
42. Ն. Ն. ՊԱՊՈՎ։ «Հ. Կ. (բ). Կ. պատմությունը», ռուսերեն, յերկրորդ հրատ...։
43. ԿՐԻՎՑՈՎ և այլն։ «Դասակարգային պայքարի պատմության քրեստոմատիա», ռուսերեն։
44. Ռ. Կ. (բ) կուսակցությունն իր հավագումարների և կոնֆերանսների բանաձևերում. յերկրորդ հրատ., ռուսերեն։
45. Գ. Վ. ՊԼԵԽԱՆՈՎ։ «Յերկերի ժողովածու», առաջին մի քանի հատորները, ռուսերեն։

ՅԱՆԿ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ԳԼՈՒԽ ՏԱՍԵՐՈՐԴ.— Ռուսաստանը 1905 թ. հեղափոխությունից հետո:

1. *ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1905 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ:*

Եր.

ա. Արդյունաբերության զարգացումը 1905 թ. հեղափոխությունից հետո, ... 1
բ. Ռուսաստանի արդյունաբերական զարգացումը 1905 թ. հեղափոխությունից հետո, ... 4
գ. Ստոլիպինականությունն իբրև ցարական միապետության կյանքի պայմանների արտահայտութ. ռեակցիայի տարիներին, ... 8

2. *ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՆՈՐԱԴՈՒՅՑ ԵՏԱՓԸ*

ա. Իմպերիալիզմի իբրև կապիտալիզմի հատուկ փուլստադիա), 9
բ. Կապիտալիզմի պարազիտիզմ ու փթումը . . . 11
գ. Իմպերիալիզմի պատմական տեղը 17
դ. Ռուսական իմպերիալիզմը 20
ե. Թեզիսներ իմպերիալիզմի և ազգային ճնշման մասին . 22
զ. Իմպերիալիզմը ժահացող կապիտալիզմ . . . 27

3. *ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ 1905 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ*

ա. Մոմենտի բնորոշումը 29
բ. Ռեակցիայի հաղթանակը, կուսակցության ճգնաժամը . 32
գ. Մենշևիկների լիկվիդատորութ. ռեակցիայի տարիներին 36
դ. Թարս լիկվիդատորությունը բայշևիկների մեջ և կուսակցության խնդիրները ռեակցիայի տարիներին . 38
ե. Բանվորական շարժում 39
զ. Լենայի ցույցերը 41
ը. Կուսակցության վերածնությունը 42

4. *ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ II-ՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ*

ա. Իմպերիալիզմը և համաշխարհային պատերազմը . 46
բ. Ռ. Ս. Դ. Բ. Կ. կենտկոմի մանիֆեստը . . . 50
գ. Ի՞նչի համար է կռվում Ռուսաստանը . . . 57
դ. Ո՞վ ոգովեց 1914 թվի պատերազմից . . . 58
ե. Պատերազմը և կուսակցությունը 60
զ. Բայշևիզմի տաքտիկան Ռուսաստանում պատերազմի ժամանակ 64
ը. Նորից պատերազմի և սոցիալ-դավաճանների մասին . 66

թ. 2-րդ ինտերնացիոնալի սնանկացումը . . . 71
ժ. Իմպերիալիստական պատերազմից դեպի քաղաքացիական պատերազմ 72

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ.— Ռուսաստանի երկրորդ (փետրվարյան) հեղափոխությունը:

1. *ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՏԱՓԸ:*

Ներածական ակնարկ-փետրվարյան հեղափոխության դասակարգային բնույթը 75
ա. Բանվորական շարժումը և մասսաների տրամադրությունը Պետրոգրադում փետրվարյան հեղափոխության նախորյակին 78
բ. Փետրվարյան հեղափոխությունը 82
գ. Փետրվարյան հեղափոխության պատճառները . . 86
դ. Հրաժարման ակտ 90

2. *ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ԵՏԱՓԸ*

ա. Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության մանիֆեստը 92
բ. Բանվորական պատգամավորական խորհրդից . . 93
գ. Ռուսաստանի նոր կառավարությունը և պրոլետարիատի խնդիրները 94
դ. Պրոլետարիատի դաշնակիցները 98
ե. Պետության նոր տիպը, որ ստեղծվում է մեր հեղափոխության մեջ 99
զ. 1917 թ. հուլիսյան օրերը 102
ը. Ժամանակավոր կառավարության գործունեության հետևանքները 104
թ. Կուսակցությունների դիրքը ամյալ ժամենտում . . 106

ԳԼՈՒԽ ՏԱՍՅԵՐԿՈՒՅԵՐՈՐԴ: Հոկտեմբերյան հեղափոխությունը:

Ներածական ակնարկ 110

1. *ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ*

ա. Ագրարային շարժումը 115
բ. Բանաձև հողային հարցի մասին 118
գ. Դյուղացիությունը պրոլետարական հեղափոխության ժամանակ 121

2. *ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ՅԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ*

ա. Յերկիշխանության մասին 123
բ. Յերկիշխանությունը փետրվարից հետո և նրա դասակարգային նշանակությունը 125

գ. Պրոլետարիատի խնդիրները ավյալ հեղափոխության մեջ 129
դ. Խորհուրդների խնդիրները 1
3. ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԸ ՏՎՅԱԼ ՄՈՄԵՆՏԻՄ
ա. Բայլշևիկները պետք է վերցնեն 130
բ. Պետք է վերցնել իշխանությունը 132
գ. Հոկտեմբերի նախորյակին 134
4. ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ
ա. Հոկտեմբերի նախորյակը 135
բ. Թե ինչպես նրանք գնացին մեռնելու ժամանակավոր կառավարության համար 138
գ. Հեղափոխությունն իրականացավ 140
դ. Լենինի նամակը ՌՍԴ (բ) Պետրոգրադի և Մոսկվայի կոմիտեներին 141
ե. Խորհուրդների համառուս. համագումարի կոչը իշխանության հաստատման մասին 142
զ. Իշխանության կազմակերպում և հաշտություն . . 144
ը. Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիան 147
թ. Դեկրետ հողային հարցի մասին 149
ժ. Լենինը յերեք հեղափոխության բնույթի մասին . . 152
ի. Թեզիսներ հիմնադիր ժողովի մասին . . . 153
լ. Հոկտեմբերի գնահատականը 158
խ. Ի՞նչու հեղափոխությունը Ռուսաստանում պրոլետարական յեղավ 159
ց. Ի՞նչու ռուսական յերկրորդ հեղափոխութ. պետք է սոցիալիստական դառնար 163
կ. Անդրկովկասի բոլոր բանվորներին ու գյուղացիներին (բագվի ժողովրդ. կոմիսարների կոչը) . . . 165
հ. Հայաստանի կոմմունիստական (բայլշևիկական) կուսակցության դեկլարացիան 168
ճ. Բայլշևիկների տաքտիկան 172
ղ. Ինչպես և կառուցվում պրոլետարական պետական իշխանությունը 175
ճ. կապիտալիստական աշխարհը և խորհրդ. Միությունը 176

Գրականություն բոլոր պրակների համար . . . 178
Ծրագիր Ռուսաստանի դասակարգ. պայքարի պատմության 180

ՀՀ Ազգային գրադարան
NL0415165

ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ